Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՍՏԻՄԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի ՊԷՏՍ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ի Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԷ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ

յԱզգային Ուսումնական Խորհրդոյ

Կեդրոնական Վարչութեան

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐ. ԱՐԱՄԵԱՆ

1866

1711

10 9.52

[illegible]

1192

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ.ՊՈԼՍՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Կ.ՊՈԼԻՍ — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Ուզուն-Չարշը, փող. Շէրիֆ-փաշա խան թիւ 13.

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի ՊԷՏՍ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ի Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԷ

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ

յԱզգային Ուսումնական Խորհրդոյ

Կեդրոնական Վարչութեան

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ԱՐԱՄԵԱՆ

1866

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Համառօտ աշխարհագրութեան առաջին տպագրութիւնն՝ իբր ժամանակէն սպառելով այս երկրորդ տպագրութիւնը կը հրատարակեմ, ազգայիններէն ոմանց առաջարկութեանը համեմատ Համառօտ *Ուսումնական* եւ *բնական* աշխարհագրութեանց հետ աշխարհիս Տէրութեանց եւ երեւելի Քաղաքաց վրայ մասնաւոր ծանօթութիւններ պարունակող բաւական ընդարձակ մաս մ'ալ աւելցունելով, որոյ մէջ նշանակուեցան իւրաքանչիւր տէրութեանց տարածութիւնը, բնակչաց թիւը, անոնց կրօնքը, երկրին օդը, բերքը եւայլն եւայլն. ի վերջոյ հին աշխար-

հագրութեան եւ հրէաստանի աշխարհագրութեան համառօտութիւնն ալ կցելով :

Այս համառօտ գործիս մէջ մասնաւորապէս հետեւեցանք Աշիլ Մէիսա եւ Քորթամպէր Գաղղիացի երեւելի հեղինակաց դասագրքերուն, որոց առաջինը մինչեւ ցայսօր 45 երորդ տպագրութեան հասած է կը յուսամք որ այս ալ գոնէ անոր կէս բաղդին կարժանանայ :

ՅԱՆԿ

Նախագիտելիք.......... 1

ՄԱՍՆ Ա.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սահման, հաստատուն եւ շարժուն աստեղք մոլորակ, արբանեակ, գիսաւոր 1
Ձեւ երկրի, հորիզոն, կողմունք երկրի, շարժումն երկրի 7
Երկրիս մտացածին գծերը, կէտերը եւ շրջանակները առանցք եւ բեւեռք 11
Լայնութեան, երկայնութեան աստիճանք, բեւեռական աստեղք, շրջաբնակ, հակաբնակ, հակոտնեայ 17
Գօտիք, դիրք գնտոյ 21
Լուսին, երեւոյթ լուսնի, խաւարումն ... 24
Աշխարհացոյց տախտակք 26
Արուեստական երկրագունտ կամ երկնագունտ 28
Երկրագնտին վրայ առաջարկութիւններ .. 32
Երկնագնտին » » 36

ՄԱՍՆ Բ.

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցամաք 39
Ջուր 43
Օդ եւ օդերեւոյթք 49
Օդեղէն մեւեորայք 50
Ջրեղէն » 52
Լուսեղէն » 53
Հրեղէն » 55
Գուշակութիւն օդոց 57
Ցեղ մարդոյ, ազգ, աշխատութիւն կառավարութիւն, կրօնք եւ լեզու 62
Կենդանիք, հանք, բոյսք 72

ՄԱՍՆ Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Համառօտ տեսութիւն երկրի

Եւրոպա եւ իր աշխարհները 81
» » ծովերը 82
» » նեղուցները 83
» » ծոցք եւ կղզիք 84
» » թերակղզիք 85

Պարանոցք, հրուանդանք, լերինք 86
Հրաբուղխք, լիճք, գետք 87
Վտակք 88
Ասիա եւ իր աշխարհները 92
» ծովերը, նեղուցները, ծոցերը ... 93
» կղզիները, թերակղզիները 94
» հրուանդանք, լերինք 95
» լիճք, գետք 96
» վտակք 97
Աֆրիկէ եւ իր աշխարհները .... —
» ծովերը 98
» ծոցերը, կղզիք, հրուանդանք ... 99
« լերինք, լիճք, գետք 100
Ամերիկա եւ իր աշխարհները 101
» ծովք, նեղուցք, ծոցք 102
» կղզիք 103
» թերակղզիք, հրուանդանք 104
» լերինք, հրաբուղխք, լիճք 105
» գետք, վտակք 106
Ովկիանիա եւ իր բաժանմունքը 107
Նողազիա .... —
Աւստրալիա .... —
Պօլինեզիա 108

Բ. Մասնաւոր ծանօթութիւնք

Ի վերայ տէրութեանց հինգ մասանց աշխարհի

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԵՒՐՈՊԻՈՅ

Բրիտանիա	109
Տանիմարքա	113
Շուէտ	114
Ռուսիա	116
Գաղղիա	118
Պելճիքա	121
Հոլանտա	122
Զուիցերի	124
Աւստրիա	125
Բրուսիա	128
Գերմանիա	130
Բորթուգալ	136
Սպանիա	138
Իտալիա	140
Տանկաստան	144
Յունաստան	148

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՍԻՈՅ

Ռուսի Ասիա 150

Հայաստան 152

Սահման Հայաստանի. — Մեծութիւն նորա եւ բազմամարդութիւն. — Լերինք, գետք, վտակք, լիճք, օդ, հող եւ բերք Հայաստանի 153էն 157

Բաժանումն հին Հայաստանի: Ա. Մեծ Հայք եւ իր նահանգները: Բ. Փոքր: Գ. Անոր միացած նահանգները........... 158էն 166

Բաժանումն Նոր Հայաստանի: Ա. Օսմանեան: Բ. Ռուսիոյ: Գ. Պարսից.... 168էն 172

Տանկի Ասիա 172

Արաբիա 175

Պարսկաստան 177

Աֆղանիստան, Պելուճիստան 178

Թուրքաստան 179

Հնդկաստան 180

Չին 185

Ճաբոն 188

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՓՐԻԿԷԻ

Եգիպտոս	190
Պերպերիստան	192
Սահրա	194
Սենեկամպիա	—
Հիւսիսային Կուինէա	195
Նիկրիտիա	196
Նուպիա	—
Եթովպիա	197
Այան, Ատել	—
Հարաւային Կուինէա	168
Օդենդացոց երկիրը	199
Գլուխ Բարեյուսոյ	—
Քաֆրաստան	200
Մոնոմոդաբա	—
Մոզամպիք	201
Զանկեպար	—
Անծանօթ երկիր	—
Կղզիք Ափրիկէի	202

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՄԵՐԻԿՈՅ

Ռուսի Ամերիկա	204
Կրենլանտիա	205

Նոր Բրիտանիա . . . . —
Միացեալ նահանգք 206
Մեքսիկոյ 207
Կուաթեմալա 208
Գոլոմպիա 209
Կույանա 210
Պրազիլ 211
Բերու 211
Պոլիվիա 212
Բարակուայ 213
Լաբլադա . . . . —
Ուրուկուա 214
Քիլի . . . . —
Բադակոնիա . . . . —
Անգղիեան կղզիք 215
Ովկիանիա 217

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Եւրոպա 225
Ասիա 228
Ափրիկէ 230

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՐԷԱՍՏԱՆԻ

Անուանք, սահմանք 231
Տեղք, նահանգք 232
Գետք 233
Լերինք, ձորք, դաշտք 234
Քաղաքք 235

ՀԱՄԱՌՕՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ *երկրիս ստորագրութիւնն է, որ կը սորվեցնէ երկրիս ձևը, մեծութիւնը, շարժումը, ու իր բնական և քաղաքական բաժանմունքը:*

2. *Աշխարհագրութիւնը երեք մաս կը բաժնուի,* Ուսումնական, Բնական, Քաղաքական:

Ա.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սահման, հաստատուն եւ շարժուն աստեղք, մոլորակ, արբանեակ եւ գիսաւոր:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ *կը սորվեցնէ աշխարհիս դիրքը և երկնային մարմնոց հետ ունեցած վերաբերութիւնը:*

4. *Երկնային մարմին ըսելով կը հասկնանք արեւը,*

լուսինը և աստղերը: Երկիրս, երկիրները և իրենց մէջ եղած ամէն բաները ի միասին առնելով տիեզերք կըսուի:

Աստղերը կըլլան երկու տեսակ հաստատուն և շարժուն:

5. Հաստատուն են այն աստղերը որ արեւուն պէս իրենցմէ լոյս ունին, և մեզի կերևան թէ չեն շարժիր և իրենց դիրքը չեն փոխեր: Հաստատուն աստեղաց թիւը անհուն է:

Աստղաբաշխք երկնից հաստատուն աստղերը որոշելու համար համաստեղութեանց եւ կարգերու բաժնած են: Քանի մը խոշոր աստղեր խումբ խումբ առած՝ մարդու կենդանիի եւ գործիքի անուն դրած են, որոնց կըսուի համաստեղութիւն: Երկնից երեսը մեծ ու պզտիկ 117 համաստեղութիւն կայ, գլխաւորները 77 հատ են, 30ը հիւսիսային կողմը, 12 Զոդիակոսին վրայ եւ 35 ալ հարաւային դին: Հասարակածին հիւսիսային 30 համաստեղութիւններն են, Մեծ արջ կամ Սայլ, Փոքր արջ, Վիշապ, Կեփէոս, Եզող, Պսակ հիւսիսային: Վահագն կամ Հերակլէս, Քնար, Կարապ, Կասիոպէ, Պերսէոս, Անդրոմէտ, Եռանկիւն հիւսիսային, Կառավար, Պեգասոս կամ Մեծ խաչ, Փոքր ձի, Դելփին, Նետ, Արծիւ, Օձակալ, Օձ, Բերինիկեան գէս, Ընձուղտ, Աղուէս, Փոքր առիւծ, Ճանճ, Մողէզ, Վահան, Փոքր եռանկիւն. Կերբէրոս:

Զոդիակոսին 12 համաստեղութիւններն են խոյ,

Ցուլ, Երկուոր, Խեցգետին, Առիւծ, Կոյս, Կը-շիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Ջրհոս, Ձուկն:

Հարաւային 35 համաստեղութիւններն են Անտինոոս, Կէտ, Երիդանոս, Նապաստակ, Հայկ կամ Որիոն, Մեծ շուն, Փոքր շուն, Նաւ արգիացւոց, Հիդրա, Ըմպանակ, Ագռաւ, Ձիացուլ, Գայլ, Սեղան, Պսակ հարաւային, Ձուկն հարաւային, Փիւնիկ, Կռունկն, Սիրամարգ, Հնդիկ, Դրախտահաւ, Եռանկիւն հարաւային, Ճանճիռն, Գետնառիւծ, Ձուկն թռչական, Տուքան կամ Սագ Ամերիկոյ, Արու հիդրա, Տորատ կամ Թրաձուկն, Մեծ ամպ, Փոքր ամպ, Նոյի աղաւնի, Միեղջերու, Տարանկիւն, Աքաղաղ, Խաչ:

Աստղերը իրենց մեծութեանը նայելով 16 կարգ կը բաժնուին, մինչեւ 6 երորդ կարգի աստղերը աչքով կերեւան, ու միւսները դիտակով: Առաջին կարգի մեծ աստղերը 23 հատ են, չորսը Հիւսիւսային դին, եօթը Զոդիակոսին վրայ, տասներկուքն ալ Հարաւային դին:

Հիւսիւսային չորս մեծ աստղերն են, Արքտուրոս' Եզող համաստեղութեան վրայ. Էլ դայիր' Բնար համաստեղութեան վրայ. α *այծա* գիրը' Կարապի պոչին վրայ:

Զոդիակոսի վրայի մեծ աստղերն են, Ալտեպարան' Ցուլին ճակտին վրայ. Կաստոր ու Պոլիտեւկիս' Երկուորին վրայ. Հռեգիւլոս' Առիւծին վրայ. β *մէրա*' Առիւծին պոչին վրայ Կուսին հասկը.

Անդարէս՝ Կարինին վրայ, Թոմալիոս՝ Ջրհոսին վրայ :

Հարաւային 12 մեծ աստղերն են, Բինել կամ Հոիգել՝ Հայկին ձախ ոտքին վրայ. α *մըրֆա*՝ Հայկին ուսին վրայ. Հիդրային սիրտը. Սիրիոս՝ մեծ շունին վրայ. Պրոկիոն՝ Փոքր շունին վրայ. Աքառնար՝ Երիդանոսին վրայ. Կանոպոս՝ Արգիացւոց նաւուն վրայ. β *միրա*՝ Արգիացւոց նաւուն վրայ. Ձիացուլին ոտքը. Ձիացուլին սրունքը. Խաչին ոտքը. Սիրամարգին աչքը :

6. *Շարժուն են այն աստղերը, որ իրենցմէ լոյս չունին, արեգակէն կառնեն իրենց լոյսը, և իրենց դիրքը կը փոխեն ու արեգակին շուրջը կը դառնան: շարժուն աստղերը երեք տեսակ կըլլան* մոլորակ, արբանեակ, գիսաւոր :

7. *Մոլորակ են այն շարժուն աստղերը, որ արեգակին շուրջը կը դառնան և անկէ կառնեն իրենց լոյսը ու տաքութիւնը: Երկիրս ալ մոլորակ մ'է: Մինչև 1865 ութսուն և եօթը մոլորակ յայտնուած է, որոց գլխաւորներն են արեգակէն ունեցած հեռաւորութեանց կարգովը,*

Ա. Փայլածու, *որ* 3 *ամիսէն արեգակին շուրջը կը դառնայ*
Բ. Արուսեակ, » $7\frac{1}{2}$ » » » »
Գ. Երկիր, » 12 » » » »
Դ. Հրատ, » 18 » » » »
Ե. Լուսնթագ, » 12 *տարիէն* » » »
Զ. Երեւակ, » 30 » » » »
Է. Ուրանոս, » 84 » » » »
Ը. Նեպտոն, » 165 » » » »

8. *Արբանեակ կըսուին, որ մոլորակաց շուրջը կը պտըտին, և անոնց հետ արեգական շուրջը: Լուսինը երկրիս արբանեակն է: Մինչև 1865 քսան երկու արբանեակ յայտնուած է:*

Երկիրս	1	*արբանեակ*	*ունի որ է լուսինը*	
Լուսնթագը	4	»	»	
Երեւակը	8	»	»	*և մէկ* մանեակ
Ուրանոս	8	»	»	
Նեպտոն	1	»	»	

9. *Գիսաւոր են այն շարժուն աստղերը, որ ետևնին գէսի պէս լուսաւոր պոչ մ'ունին, ասոնք ալ արևուն շուրջը կը դառնան և անկէ կառնեն իրենց լոյսը.*

Մինչև հիմա 100 էն աւելի գիսաւոր տեսնուած է:

10. *Արեգակը, մոլորակները, արբանեակները և գիսաւորները ամէնքը ի միասին* արեգակնային *կամ* մոլորակային դրութիւն *կըսուի:*

Արեգակը մոլորակային դրութեան կեդրոնն է, իր շուրջը կը դառնան բոլոր մոլորակները արբանեակները և գիսաւորները:

Արեգակը երկրէս 1,407,000 անգամ աւելի մեծ է և երկրէն ունեցած հեռաւորութիւնն է 153,000,000 քիլոմէթր:

Արեգակը իր առանցքին վրայ կը դառնայ 25 օրուան 15 ժամու մէջ, որ իր վրայի բիծերէն հասկըցուած է: Արևը հաստատուն աստղ է. բայց աստ-

ղաբաշխններէն կարծիք ընող կայ, որ անալ իր մոլորակներով մէկտեղ ուրիշ կեդրոնի մը վրայ կ՚պըտըտի:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. Ինչ՞ է աշխարհագրութիւնը. ինչ կը սովրեցընէ·

2. Աշխարհագրութիւնը քանի՞ մասի կը բաժնուի:

3. Ուսումնական աշխարհագրութիւնը ինչ կը սովրեցնէ:

4. Երկնային մարմին ըսելով ինչ կը հասկցուի. Տիեզերքը ինչ է: Աստղերը քանի՞ տեսակ կըլլան:

5. Հաստատուն աստղերը ո՞րն են: Որչափ են: Աստղաբաշխք ինչպէս կորոշեն: Համաստեղութիւնը ինչ է: Քանի՞ համաստեղութիւն կայ, ու անոնց ո՞րչափին երեւելի են: Անոնց անունները կրնա՞ս ըսել: Աստղերը ընդ ամէնը քանի՞ կարգի բաժնըւած է: Մինչեւ ո՞ր կարգի աստղերը աչքով կը տեսնուին: Առաջին կարգի աստղերը քանի՞ հատ են, եւ անոնց անունները գիտե՞ս:

6. Շարժուն աստղերը ո՞րն են. քանի՞ տեսակ են:

7. Մոլորակ ինչ բանի կըսուի. քանի՞ հատ են: Երկնից երեսի մոլորակները եւ հաստատուն աստղերը ինչպէս կը ճանչցուին: Որո՞նք են գլխաւոր մոլորակները:

8. Արբանեակները ո՞րն են:

9. Գիսաւորները ո՞րն են, եւ քանի՞ հատ տեսնը-

ւած է մինչեւ հիմայ : Երկիրս եւ լուսինը աստղերուն մի տեսակէն են :

10, Արեգականային կամ մոլորակային դրութիւն ըսելով ինչ կը հասկցուի : Գծագրէ արեգականային դրութիւնը գլխաւոր մոլորակներուն, արբանեակներուն եւ գիսաւորի մը շրջանովը : Արեգակը երկրէս որչափ մեծ է, եւ որչափ հեռու է : Արեգակը բոլորովին անշարժ է .

Ձեւ երկրի, Հորիզոն, Կողմունք երկրի, Շարժումն երկրի .

11. *Երկիրս կլոր է, վասն զի, մարդ մը ընդարձակ դաշտի մը կամ ծովու մը վրայ գտնուած ատեն հեռուն գտնուած շէնքերուն, լեռներուն, նաւերուն միայն բարձր մասերը կը տեսնայ :*

12. *Մէկը ընդարձակ դաշտի կամ ծովու վրայ գտնուած ատեն կը տեսնայ որ իր չորս կողմէն շըրջանակի պէս երկինքը երկրիս հետ կպած է, որուն կեդրոնն է իր կեցած տեղը, այս շրջանակը կ'ըսուի* հորիզոն :

13. *Ամէն շրջանակ* 360 *հաւասար մասի կը բաժնուի, և մէկ մասին կըսուի* աստիճան : *Մէկ*

աստիճանը 60 մանրամասի և մէկ մանրամասն ալ 60 մանրերկրորդի կը բաժնուի:

25°. 36′, 12″, կը կարդացուի 25 աստիճան, 36 մանրամաս, 12 մանրերկրորդ:

Ուղիղ գիծ մը որ կեդրոնին վրայէն անցնելով երկու ծայրը շրջանակին կը դպի կ՚ըսուի տրամագիծ. որ շրջանակը երկու հաւասար կիսաշրջանակի կը բաժնէ: Մի և նոյն շրջանակի մէջ քաշուած ամէն տրամագիծ երկու շառաւիղ ըլլալով իրարու հաւասար են:

14. Ինչպէս նարնջին վրայի խորտ ու բորտ անդուանքը նարնջին կլորութիւնը չեն աւրեր, անանկ ալ լեռները և ձորերը երկրիս կլորութիւնը չեն աւրեր, վասնզի, անոնց բարձրութիւնը և խորունկութիւնը երկրիս ընդարձակութեանը նայելով բան մը չեն: Երկրիս շուրջը 40,000 քիլօմէթրի չափ է (մէկ քիլօմէթրը գրեթէ 1,320 Կ. Պօլսոյ մէյմար արշինի հաւասար է): Երկրիս տրամագիծը կամ հաստութիւնը 13,000 քիլօմէթրի չափ է, քանի որ ամէնէն բարձր լեռը 8 կամ 9 քիլօմէթրէն աւելի բարձրութիւն չունի:

15. Հովերու ուղղութիւնը և զանազան քաղաքաց իրարու նայելով ունեցած դիրքը որոշելու համար հորիզոնին վրայ չորս գլխաւոր կէտ կը մտածուի, որ կ՚ըսուին գլխաւոր կողմանք երկրի, և են Արեւելք, Արեւմուտք, Հիւսիւս, Հարաւ:

16. Արեւելք կ՚ըսուի հորիզոնին այն կողմը ուրկէց արեւը կը ծագի (մարտ 9 ին), Արեւմուտք՝ ուր

արևը կը մտնայ, և ճիշդ Արևելքին դիմացն է։

Երբոր երեսդ Արևելքին դարձնես ձախ կողմդ Հիւսիս և աջ կողմդ Հարաւ է։

Այս չորս գլխաւոր կէտերուն մէջ ուրիշ չորս կէտեր ալ կը մտածուի, որ կըսուին։

Արևելեան հիւսիս, որ Արևելքին և Հիւսիսին մէջ տեղն է։

Արևմտեան հիւսիս, որ Արևմուտքին և Հիւսիսին մէջ տեղն է։

Արևելեան հարաւ, որ Արևելքին և Հարաւին մէջ տեղն է։

Արևմտեան հարաւ, որ Արևմուտքին և Հարաւին մէջ տեղն է։

Այս ութը կէտերուն մէջ դարձեալ և դարձեալ բաժնելով ընդ ամենը 32 կողմ կըլլայ, և այս կողմերը ցուցընող աղիւսակին կ'ըսուի հողմնացոյց կամ կողմնացոյց, որ մէջ տեղը շարժական սլաք մը ունի, որուն մագնիսացեալ ծայրը միշտ դէպ ի հիւսիս կը նայի։

17. Երկիրս երկու կերպ շարժում ունի, մէկ մը իր օրական Թաւալումը որ իր առանցքին վրայ արևմուտքէն դէպ ի արևելք կը դառնայ 24 ժամու մէջ, իր մակերևոյթին ամէն կէտերը յաջորդաբար արեգակին դիմացը գալով գիշեր ցերեկ, առտու երեկոյ, կէս օր և կէս գիշեր՝ վերջապէս օրուան բոլոր զանազան ժամերը յառաջ կուգան. որով մենք կը տեսնենք Թէ արևը, լուսինը և բոլոր աստղերը 24 ժամու մէջ երկրիս շուրջը կը դառնան։

Մէկ մ'ալ իր տարեկան շարժումը, որ է արեգակին շուրջը մէկ տարուան միջոցին մէջ դառնալը, ամէն օր իր հետքին վրայ մէյմէկ աստիճան յառաջ երթալով, որով գիշերուան և ցերեկուան անհաւասարութիւնը և չորս եղանակաց կանոնաւոր փոփոխութիւնները յառաջ կուգան:

18. Երկիրս արեգակին շուրջը կը դառնայ 365 օրուան 6 ժամու մէջ: Հասարակ տարին 365 օր է, 6 ժամը որ ետ կը ձգուի 4 տարուան մէջ 24 ժամ կամ ամբողջ օր մը ըլլալով՝ ամէն չորրորդ տարին 366 օր հաշուելու սովորութիւն եղած է, որուն կըսուի Նահանջ տարի, որովհետև փետրուար ամիսը հասարակ տարին 28 օր ըլլալով նահանջ տարին 29 օր է, մարտ ամսուն Ա. օրը՝ օր մը ետ կը մնայ. և նահանջ՝ ետ մնալ կը նշանակէ:

Տարին 12 ամիսներու կը բաժնուի, երկրիս արեգական շուրջը մէկ անգամ դարձած ատենը լուսինը երկրիս շուրջը 12 անգամ դառնալուն պատճառաւը:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

11. Երկիրս քանի ձեւ ունի: Երկրիս կլոր ըլլալը ինչէն կը հասկցուի:

12. Հորիզոնը ինչ է:

13. Ասֆհանը ինչ է, քանի մասերու կը բաժ-

նուի, եւ ինչ կըսուի: Աստիճանը, մանրամասը եւ մանրերկրորդը ինչպէս կը նշանակուի: Շառաւիղը ինչ է: Տրամագիծը ինչ է: Միեւնոյն շրջանակի մէջ քաշուած շառաւիղները եւ տրամագծերը իրարու հետ ինչպէս են:

14. Լեռները երկրիս կլորութիւնը չեն աւրէր: Երկրիս շրջապատը որչափ է: Երկրիս տրամագիծը որչափ է:

15. Երկրիս գլխաւոր կողմերը քանի՞ են:

16. Երկրիս չորս գլխաւոր կողմերը ինչպէս կորոշուին. միւս կողմերը որն են: Հողմնացոյցն ինչ է:

17 Երկիրս քանի՞ կերպ շարժում ունի: Երկրիս վրայ գիշեր ցերէկ ինչպէս կըլլայ: Երկրիս թաւալումը մենք կը տեսնանք: Եղանակաց փոփոխութիւնը ինչէն յառաջ կուգայ.

18. Տարին քանի՞ օր է, նահանջն ինչ է եւ ինչ կը նշանակէ:

Երկրիս մտացածին Գծերը, Կէտերը, Շրջանակները

19. *Աստեղաբաշխք աստղերուն ելլալու ու մըտնալու ժամանակները և վրայի քաղաքներուն տեղերը ցըցնելու համար թէ երկրիս և թէ երկնից վրայ մտացածին գծեր, կէտեր և շրջանակներ կերևակայեն, որք են;* առանցք, բևեռք, *մեծ և փոքր* շրջանակներ:

20. Առանցք *կըսուի երկրիս կեդրոնին վրայէն*

անցած գիծը որուն երկու ծայրը երկրիս մակերևոյթը հասած է, և կը մտածուի որ երկրիս օրական Թաւալումը անոր վրայ դառնալով կըլլայ: Առանցքին երկու ծայրը բևեռ կըսուին: Առանցքը երկու ծայր ունենալով երկու ալ բևեռ կայ, Հիւսիւսային բևեռ, Հարաւային բևեռ:

21. Երկրիս վրայ ութը գլխաւոր շրջանակ կը մտածուի, չորսը մեծ, և չորսը պզտիկ: Չորս մեծ շրջանակներն են, Հորիզոն, Հասարակած, Միջօրեայ, Ծիր խաւարման. ասոնք մեծ շրջանակ կըսուին, վասն զի գունտը երկու հաւասար կիսագնտերու կը բաժնեն:

22. Հորիզոնը երկու տեսակ է, Զգալի հորիզոն, Իմանալի հորիզոն:

Զգալի հորիզոն կըսուի, մարդու մը կեցած տեղին շուրջը երկինքը երկրիս հետ կպածի պէս երևցած կլոր շրջանակը:

Իմանալի հորիզոն կըսուի, մարդու մը կեցած տեղին ամէն կողմէն 90° հեռու եղած շրջանակը, որ զգալի հորիզոնին զուգահեռական է, և գունտը երկու հաւասար մասերու կը բաժնէ, վերին և ստորին կիսագունդ անունով:

Իմանալի հորիզոնը արեգակին լուսնին և աստեղաց ելլալու ու մտնալու Սահմանն է: Իմանալի հորիզոնին երկու բևեռներն են Զենիթ կամ Գագաթնակէտ, Նադիր կամ Սուզակէտ:

Զենիթը ուղղակի մեր գագաթին վրայ երկնից մէջ գտնուած կէտն է: Նատիր կըսուի Զենիթին ուղղու-

Թեամբը մեր ոտքին տակէն անցած վարի կիսագնտին մէջ եղած կէտը :

23. Հասարակած կըսուի այն շրջանակը, որ երկու բեւեռներէն իննսունական աստիճան հեռու՝ Արեւելքէն դէպ ի Արեւմուտք ձգուած է, ու գունտը երկու հաւասար կտոր կը բաժնէ, Հիւսիւսային և Հարաւային կիսագունտ : Հասարակած կըսուի այս շրջանակը, վասն զի ասոր տակի բնակիչներուն գիշերն եւ ցորեկը գրեթէ հաւասար է :

Գիշերահաւասար կ'ըսուին հասարակածին այն կէտերը, որ ծիր խաւարմանը կը կտրեն, վասն զի արեւը աս կէտերուն վրայ հասնելուն պէս՝ երկրիս ամէն կողմը գիշեր ցերէկ հաւասար կըլլայ :

24. Արուեստական երկրագնտին և աշխարհացոյց տախտակներուն վրայ հասարակածին զուգահեռական շրջանակներ քաշուած է, իրարմէ 1° էն մինչև 15° բացութեամբ, որ քանի բեւեռ կերթան կը պզտիկնան :

25. Միջօրեայ կըսուի այն շրջանակը, որ բեւեռէ բեւեռ ձգուելով՝ հասարակածը կը կտրէ, ու գունտը երկու հաւասար կտոր կը բաժնէ, Արեւելեան և Արեւմտեան կիսագունտ: Միջօրայ կըսուի, վասն զի, արեւը վրան հասնելուն պէս՝ իր տակը եղած քաղաքներուն կէս օր կըլլայ :

Արուեստական երկրագնտին և աշխարհացոյց տախտակներուն վրայ շատ մը միջօրէական գծեր քաշուած են իրարմէ 1° էն մինչև 15° բացութեամբ :

26. Ծիր խաւարման կ'ըսուի այն շրջանակը, որ

երկիրս արեգակին շուրջը ըրած տարեկան շրջանը անոր վրայ կընէ, և հասարակածը 23½ աստիճան անկիւնով մը կը կտրէ: Ծիր խաւարման կ'ըսուի, վասն զի, արևուն և լուսնի խաւարումները աս գծին վրայ կըլլան:

Ծիր խաւարմանը Զոդիակոս ըսուած կամարին մէջ տեղը ձգուած է, որուն վրայ դրուած են 12 կենդանակերպները, որ ամէն մէկուն մէջ երկիրս կամ մեզի երևցածի պէս արեգակը մէյ մէկ ամիս կը կենայ:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՔ		
Խոյ	Մարտ	9
Ցուլ	Ապրիլ	9
Երկաւոր	Մայիս	9
ԱՄԱՌՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՔ		
Խեցգետին	Յունիս	10
Առիւծ	Յուլիս	11
Կոյս	Օգոստոս	11
ԱՇՆԱՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՔ		
Կշիռ	Սեպտեմբեր	11
Կարին	Հոկտեմբեր	11
Աղեղնաւոր	Նոյեմբեր	10
ՁՄԵՌՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՔ		
Այծեղջիւր	Դեկտեմբեր	10
Ջրհոս	Յունվար	8
Ձուկն	Փետրվար	6

27. Գնտին գլխաւոր փոքր շրջանակները չորս են, երկու արևադարձ, երկու բևեռական շրջանակ,

այսինքն, Արեւադարձ խեցգետնի *կամ* Հիւսիսային, Արեւադարձ այծեղջեր կամ Հարաւային. Հիւսիսային կամ արջային բեւեռական շրջանակ, Հարաւային կամ հակարջային բեւեռական շրջանակ :

28. Արեւադարձ խեցգետնի *կ'ըսուի հասարակածէն դէպ ի Հիւսիս $23\frac{1}{2}$ աստիճան հեռու եղած շրջանակը, որ արեւը իր տարեկան շրջանին վրայ հոս հասածին պէս դէպ ի Հարաւ կը դառնայ*:

Արեւադարձ այծեղջեր *կ'ըսուի հասարակածէն դէպ ի Հարաւ $23\frac{1}{2}$ աստիճան հեռու եղած շրջանակը, որ արեւը իր տարեկան շրջանովը հոս հասածին պէս դէպ ի Հիւսիս կը դառնայ*:

Բեւեռային շրջանակ *կ'ըսուին, բեւեռներէն $23\frac{1}{2}$ աստիճան հեռու եղած շրջանակները, որ արեգակը արեւադարձներուն վրայ եկած ատենը մէյմը մէկը՝ մէյմը միւսը արեւ չեն տեսներ: Հիւսիսային բեւեռական շրջանակին* արջային շրջանակ, *իսկ Հարաւային բեւեռական շրջանակին* հակարջային շրջանակ *ալ կ'ըսուի*:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

19. Երկրիս վրայի մտացածին շրջանակները կէտերը եւ գծերը որոնք են: Ինչ՞ բանի համար հնարուած են :

20. Առանցքն ի՞նչ է: Բեւեռն ի՞նչ է: Քանի՞ բեւեռ կայ:

21. Երկրիս վրայ քանի՞ գլխաւոր շրջանակ կը մտածուի. ասոնց ո՞րքանը մեծ եւ ո՞րքանը փոքր են: Մեծ շրջանակները ո՞րոնք են: Ինչո՞ւ մեծ շրջանակ ըսուած են.

22. Հորիզոնը քանի՞ տեսակ է: Զգալի հորիզոնը ո՞րն է: Իմանալի հորիզոնը ո՞րն է: Իմանալի հորիզոնով ի՞նչ կիմացուի: Իմանալի հորիզոնին բեւեռը ո՞րն է: Զէնիթն ի՞նչ է, Նատիրն ի՞նչ է:

23. Հասարակածն ի՞նչ է: Ինչո՞ւ հասարակած ըսուած է: Գիշերահաւասարի կէտերը ո՞րն են: Ո՞ր շրջանակով երկիրս վերին եւ ստորին կիսագնտերու եւ ո՞ր շրջանակով Հիւսիսային եւ Հարաւային կիսագնտերու կը բաժնուի:

24. Զուգահեռական շրջանակներն ի՞նչ են:

25. Միջօրէական շրջանակն ի՞նչ է. ինչո՞ւ միջօրեայ կըսուի: Գնտին վրայ ո՞րչափ միջօրեայ կայ, ո՞րչափ հասարակած, ո՞րչափ հորիզոն:

26. Ծիր խաւարմանը ո՞րն է: Զոդիակոսը ի՞նչ է: Կենդանակերպ կամ համաստեղութիւնն ի՞նչ է: 12 Կենդանակերպներուն ո՞րը գարնանային, ո՞րը ամառնային, ո՞րը աշնանային, եւ ո՞րը ձմեռնային է:

27. Գնտին փոքր շրջանակները ո՞րն են:

28. Արեւադարձ ըսելով ի՞նչ կը հասկցուի: Բեւեռական շրջանակները ո՞րն են:

Լայնութեան, երկայնութեան աստիճանք, բևեռական աստղ, շրջաբևեռակ, հակաբևեռակ, հակոտնեայ.

29. Երկու տեղերուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը որոշելու համար երկու տեսակ աստիճան հնարուած է, լայնութեան և երկայնութեան աստիճանք:

Լայնութեան աստիճանները միջօրէականին վրայ նշանակուած են. հասարակածէն սկսեալ մինչև բևեռ 90° է, որով երկու կերպ լայնութեան աստիճան կայ հիւսիսային լայնութիւն և հարաւային լայնութիւն: Լայնութեան աստիճաններով կը հասկցուի որ տեղ մը հասարակածէն դէպ ի հիւսիւս կամ դէպ ի հարաւ քանի աստիճան հեռու է, կամ երկու տեղ իրարմէ հարաւէն դէպ ի հիւսիւս քանի աստիճան հեռաւորութիւն ունին:

Երկայնութեան աստիճանները հասարակածին վրայ նշանակուած են, առաջին միջօրէին արևելեան արևմտեան կողմերէն սկսեալ մինչև 180°, կամ առաջին միջօրէին արևելեան կողմէն սկսեալ մինչև 360°: Երկայնութեան աստիճաններով կը հասկցուի, որ տեղ մը առաջին միջօրէէն քանի աստիճան հեռու է, կամ երկու տեղ իրարմէ արևելքէն դէպ ի արևմուտք քանի աստիճան հեռաւորութիւն ունի:

Երկայնութեան առաջին աստիճանը սկսած կէտին վրայէն անցած միջօրէականը առաջին միջօրեայ կըսուի: Ամէն ազգ իր դիտարանին միջօրեան Ա. մի-

1711

ջրեւայ կը բռնէ. ինչպէս Գաղղիացիք Փարիզինը, և Անգղիացիք Գրինիչինը առաջին միջօրեայ կը բռնեն:

Հիները Երկաթի կղզոյն միջօրեան առաջին միջօրեայ կը բռնէին : Կոստանդնուպօլիս $41^{\circ}\ 1'$ հիւսիւսային լայնութեան $26^{\circ}\ 36'$ արեւելեան երկայնութեան տակ է ըսելով կը հասկցուի որ Կ. Պօլիս հասարակածէն $41^{\circ}\ 1'$ դէպ ի հիւսիս և Փարիզէն $26^{\circ}\ 36'$ դէպ ի արեւելք է:

30. Երկրիս արեւմուտքէն դէպ ի արեւելք օրական թաւալմամբը կը տեսնուի որ աստղերը արեգակը ամէն օր երկրիս շուրջը կը դառնան, բայց երկրիս ամէն կողմը մի և նոյն շրջանով չի դառնար. հասարակածը մեծ շրջանով կը դառնայ . իսկ քանի բեւեռ երթայ այնքան փոքր շրջանով կը դառնայ . և բեւեռները ամենեւին չեն դառնար: Բեւեռներուն դիմացը եղած աստղերը կը տեսնուի որ ամենեւին չեն դառնար . որոնք կըսուին բեւեռական աստղ . հիւսիւսային բեւեռին դիմացի աստղը , որ փոքր արջ համաստեղութեան պոչին վրայ է, կ'ըսուի արջային բեւեռական աստղ , և հարաւային բեւեռին դիմացի աստղն ալ կ'ըսուի հակարջային բեւեռական աստղ:

31. Մէկը հասարակածին վրայ գտնուած ատենը բեւեռական աստղը հորիզոնին վրայ կը տեսնայ , և քանի որ դէպ ի բեւեռ երթայ բեւեռական աստղն ալ հորիզոնէն այնքան վեր բարձրացած կ'երեւայ : Հասարակածէն 25° հեռու տեղէ մը բեւեռական աստղը յորիզոնէն 25° վեր բարձրացած կը տեսնուի :

Ուստի տեղի մը լայնութեան աստիճանը կրնայ

որոշուիլ, նոյն տեղէն բեւեռական աստղին հորիզոնէն ունեցած բարձրութիւնը գտնալով:

32. Արեգակը 24 ժամու մէջ երկրիս շուրջը դառնալով 360° տեղ կառնէ. ըսել է 1 ժամու մէջ 15°, և 1° ալ 4 վայրկենի մէջ, եթէ երկու քաղաքներուն ժամերուն տարբերութիւնը գիտնանք, անոնց արեւելքէն դէպ ի արեւմուտք ունեցած հեռաւորութիւննին աստիճանով կրնանք որոշել. ուստի Ա. միջօրեայ համարուած տեղին վրայ լարուած ժամացոյց մը ունենալով, բոլոր տեղերուն երկայնութեան աստիճանը կրնայ գտնուիլ: Տեղի մը ժամը Ա. միջօրէին ժամէն $2\frac{1}{2}$ առաւել առաջ ըլլայ, նոյն տեղին արեւելեան երկայնութիւնը կըլլայ $2\frac{1}{2}$ անգամ 15°, այսինքն, 37° 30′

33. Երկրագնտին այն բնակիչները, որոնք մի և նոյն զուգահեռական շրջանակի վրայ՝ բայց իրարմէ 180° հեռու են, շրջաբնակ կըսուին, որոց եղանակն ու օրուան երկայնութիւնը ու կարճութիւնը իրարու հետ նոյն է, միայն մէկուն կէս օր եղած ատենը միւսին կէս գիշեր կըլլայ:

Այն բնակիչները որ նոյն լայնութեան աստիճանը ունին մի և նոյն միջօրէականի տակ, բայց հակառակ բեւեռի մէջ, կըսուին հակաբնակ, որոնց կէս օրն ու կէս գիշերը մի և նոյն ատենի մէջ կըլլայ բայց եղանակնին հակառակ է. մէկուն ամառ եղած ատեն միւսին ձմեռ, մէկուն գարուն եղած ՝ատենը միւսին աշուն կըլլայ:

Այն բնակիչները, որ նոյն լայնութեան աստիճանը

ունին հակառակ բևեռի մէջ և միջօրէականին ալ հակառակ ,իրարմէ 180° հեռու, կըսուին հակոտնեայ, *որ եղանակնին հակառակ ըլլալով մէկուն կէս օր եղած ատենը միւսին կէս գիշեր կըլլայ, և ոտքերնին ճիշտ դէմէդէմ կուգայ :*

ՀԱՐՑՄՈՒՆՔ

29. Քանի՞ տեսակ աստիճան կայ : Լայնութեան աստիճանները ինչ են եւ ինչ կորոշեն: Երկայնութեան աստիճանները ինչ են եւ ինչ կորոշեն : Առաջին միջօրեան ինչ է:

30. Ինչ՞ է բեւեռական աստղը:

31 Տեղի մը լայնութեան աստիճանը ինչպէս կը գտնուի:

32. Տեղի մը երկայնութեան աստիճանը ինչպէս կը գտնուի :

33. Շրջաբնակն ինչ է: Հակաբնակն ինչ է: Հակոտնեան ինչ է:

Գօտիք, Դիրք գօտոյ.

34. Երկու արեւադարձները և երկու բեւեռական շրջանակները երկրագունտը հինգ գօտիներու կը բաժնեն, մէկ այրեցեալ գօտի, երկու բարեխառն գօտի, երկու ցրտային գօտի :

35. Երկու արեւադարձներուն միջոցը որ 47° լայնութիւն ունի, այրեցեալ գօտի կըսուի : Արեգակին ճառագայթները այս գօտոյս վրայ գրեթէ ուղղահայեաց զարնելով սաստիկ տաք կըլլայ: Այս տեղի բնակիչները միայն երկու եղանակ կունենան, մէկը սաստիկ ու չոր տաք, միւսը անձրեւային : Ցերէկ ատեն իրենց ձգած շուքին նայելով երկասուերք կըսուին . արեգակը իրենց հարաւային կողմը եղած ատենը շուքերնին դէպ ի Հիւսիս կը ձգեն, և Հիւսիսային կողմը եղած ատենն ալ իրենց շուքը դէպ ի Հարաւ կը ձգեն: Տարին երկու օր ալ արեգակը իրենց գլխուն վրայ գտնուելով ամենեւին շուք չեն ձգեր, և կ՚ըսուին անսուերք :

36. Արեւադարձներուն ու բեւեռական շրջանակներուն միջոցները, որ 43° լայնութիւն ունին, են երկու բարեխառն գօտիները, մէկը կըսուի Հիւսիսային բարեխառն գօտի, միւսը Հարաւային բարեխառն գօտի : Արեգակին ճառագայթները այս գօտիներուս վրայ գրեթէ խոտորնակ զարնելով, բարեխառն տաքութիւն մը յառաջ կուգայ, և տարւոյն չորս եղանակները կանոնաւոր կերպով իրար կը յաջորդեն: Այս գօտիներուն բնակիչները միասուերք կ՚ըսուին.

Որովհետև ցերէկ ատեն իրենց շուքը միշտ դէպ ի բևեռ կը ձգեն :

Հասարակածին վրայ միշտ գիշեր ցերէկ հաւասար կըլլայ, հասարակածէն մինչև բևեռական շըրջանակները եղած տեղերուն միշտ գիշերն ու ցերէկը անհաւասար է :

37. Բևեռական շրջանակներուն ու բևեռներուն միջոցը եղած տեղերը, որ 23$\frac{1}{2}$ական աստիճան լայնութիւն ունին, կ'ըսուին ցրտային գօտի :

Այս գօտիներուն վրայ արեգակին շառաւիղները բոլորովին խոտորնակ զարնելով ամբողջ տարին սաստիկ ցուրտ կըլլայ, և ամէն տեղ մշտնջենաւոր սառոյցներով պատած է. և տարին միայն մէկ եղանակ ունին, այն է, յաւիտենական ձմեռ: Այս գօտիներուս բնակիչները շրջաստուերք կ'ըսուին վասն զի արեգակը իրենց հորիզոնէն 23$\frac{1}{2}$ աստիճանէն աւելի չի բարձրանալով գրեթէ իրենց չորս դին կ'պտըտի, և շուքերնին ալ իրենց շուրջը կ'դառնայ: Բևեռական շրջանակներուն վրայ մէկ ամիս ցերէկ, մէկ ամիս գիշեր, և անկէ անդին երկու ամիս ցերէկ, երկու ամիս գիշեր, և ասանկ մինչև բևեռին վրայ վեց ամիս ցերէկ վեց ամիս գիշեր կըլլայ : Բևեռին վրայ երկարատև գիշերուան ատեն 3$\frac{1}{2}$ ամիսի չափ արշալոյս և վերջալոյս կ'ըլլայ, և ամիսէն աւելի ալ լուսին կը տեսնան, և խիստ մութ եղած ատենն ալ Հիւսիսայգ կըլլայ :

38. Երկրագունտն երեք դիրքով կը տեսնուի, Ուղիղ, Խոտոր և Զուգահեռական :

Գնտին ուղիղ դիրքն ան է, որ երկու բեւեռները ճիշդ հորիզոնին վրայ կ'ըլլան:

Հասարակածին տակի բնակիչները ուղիղ դիրք ունին, որով երկնից ամէն աստղերը կը տեսնան:

Խոտոր դիրք գնտոյ կըսուի, որ բեւեռներուն մէկը հորիզոնէն վեր կը բարձրանայ, իսկ միւսը վար կը մնայ:

Հասարակածէն ու բեւեռներէն դուրս եղած բնակիչները զունտը այս դիրքով կը տեսնան:

Զուգահեռական կըսուի գնտին այն դիրքը, որ հասարակածը հորիզոնին զուգահեռական է, բեւեռներուն մէկը դէպ ի զէնիթ, և միւսը նատիր շտկուած է:

Այս դիրքով կը տեսնան երկու բեւեռներուն բնակիչները:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

34. Գօտին ի՞նչ է, քանի՞ գօտի կայ:

35. Այրեցեալ գօտին ո՞րն է, ինչո՞ւ այրեցեալ գօտի կըսուի, իրենց ձգած շուքին նայելով ինչ անուն կունենան:

36. Բարեխառն գօտին ո՞րն է: Քանի՞ աստիճան լայնութիւն ունին: Քանի՞ հատ են: Բնակիչները իրենց ձգած շուքին նայելով ինչ անուն կունենան: Քանի՞ եղանակ ունին: Իրենց ցերեկուան ու գիշերուան երկայնութիւնը ինչպէս է: Աշխարհիս ո՞ր

տեղի բնակիչներուն գիշերն ու ցերեկը միշտ հաւասար է:

37. Ցրտային գօտին ո՞րն է: Ինչո՞ւ ցրտային գօտի կ'ըսուի: Քանի՞ աստիճան լայնութիւն ունի: Բնակիչք իրենց ձգած շուքին նայելով ի՞նչ անուն կունենան: Գիշերուան եւ ցերեկուան երկարութիւննին ի՞նչպէս է:

38. Երկիրս քանի՞ դիրք ունի. ո՞րն է ուղիղ դիրքը եւ ո՞ր տեղի բնակիչները այս դիրքով կը տեսնան: Խոտոր դիրքը ո՞րն է, եւ որո՞նք կը տեսնան այս դիրքով: Զուգահեռական դիրքը ո՞րն է, եւ ո՞վ կը տեսնայ այս դիրքով:

Լուսին, Երեւոյթք լուսնի, եւ Խաւարում

39. *Լուսինը երկրիս արբանեակն է, անկէ 49 անգամ փոքր է և անոր շուրջը կը դառնայ 29 ½ օրուան մէջ այսինքն գրեթէ մէկ ամսուան մէջ: Լուսինը երբեմն երկրիս կը մօտենայ և երբեմն կը հեռանայ, բայց անկէ ունեցած միջին հեռաւորութիւնն է 381,000 քիլոմէթր, իր լոյսը երկրիս պէս արեգակէն կառնէ, և մեզի կ'երեւայ տարբեր կերպերով որ կ'ըսուի* Երեւոյթք լուսնի:

40. *Երբոր լուսինը արեւուն և երկրին մէջ գըտ-*

նուի, իր մութ երեսը մեզի դարձած ըլլալով չենք տեսնար, և կ'ըսուի Նոր լուսին կամ ծնունդ լուսնի:

Եօթն ու կէս օր ետքը իր լուսաւոր մասին միայն կէսը մեզի կ'երևայ, որ կ'ըսուի առաջին քառորդ:

Տասնևհինգ օր ետքը երկիրս արեգակին ու լուսնին մէջ գտնուելով լուսնին լուսաւոր մասը ամբողջ մեզի դարձած կըլլայ, որ կըսուի լրումն լուսնի:

Անկէ ետքը քիչ քիչ իր լուսաւոր մասը մեզնէ ծածկուելով, քսանևերկու երորդ օրը իր լուսաւոր մասին դարձեալ կէսը կը տեսնանք, որ կ'ըսուի վերջին քառորդ:

Վերջապէս լուսինը դարձեալ իր լուսաւոր մասը բոլորովին արեգակին դարձնելով կը լմնցնէ իր շրջանը և կ'ըլլայ Նոր լուսին:

38. Երբեմն Նոր լուսնի ատեն արեգակը, երկիրս և լուսինը մէկ ուղղութեան մէջ կիյնան, որով արեգակին լոյսը մեզնէ ծածկուելով, կ'ըսուի խաւարումն արեգական:

Լուսնի լրման ատեն ալ երբեմն կը պատահի որ արեգակը, երկիրս, լուսինը մէկ ուղղութեան մէջ իյնան, որով երկիրս արգելք կ'ըլլայ լուսինը արեգակէն լուսաւորուելու՝ որ կ'ըսուի խաւարումն լուսնի:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

39. Լուսինը ինչ է, իր երևոյթները ինչ են:

40. Նոր լուսինը երբ կըլլայ: Լուսնի առա-

չին քառորդը ինչ է: Լրումն լուսնի ինչ ըսել է: Վերջին քառորդը ինչ է:

41. Արեգական խաւարումը երբ կըլլայ: Լուսնի խաւարումը երբ կըլլայ:

Աշխարհացոյց տախտակ.

42. Աշխարհացոյց տախտակ *կըսուին այն թղթերը կամ տախտակները, որոց վրայ գծագրեալ են երկրիս մակերեւոյթը կամ իր մէկ մասը:*

Այն աշխարհացոյցները որ ամբողջ երկրիս մակերեւոյթը կը ցըցնեն կըսուին համատարած. *երբոր երկրիս կլոր դիրքը թղթի վրայ ցըցնենք՝ ան ատեն համատարածը երկու կիսագնտերու կը բաժնուի. կիսագնտերուն շուրջը կը դրուին լայնութեան աստիճանները ճիշտ զուգահեռական շրջանակներուն ծայրերուն վրայ և երկայնութեան աստիճանները հասարակածին վրայ կը նշանակուին որոնց վրայէն կանցնին միջօրէականները, որոնք բեւեռներուն վրայ իրար կը միանան: Երբոր երկրիս մակերեւոյթը մակարդակ կերպով ցըցնենք առանց անոր կլոր ձեւ մը տալու, ան ատեն համատարածը քառակուսի ձեւ մը կառնէ որոյ աջ և ձախ կողմերը լայնութեան աստիճանները կը դրուին միշտ զուգահեռական շրջանակներուն ծայրերը. վերի ու վարի կողմերն*

ալ երկայնութեան աստիճանները կը նշանակուին միջօրէականաց ծայրերուն վրայ: Երկրիս միայն մէկ մասը ցըցնող աշխարհացոյցներուն վրայ լայնութեան և երկայնութեան աստիճանները ճիշդ այս կերպով կը նշանակուին. Թէպէտև այս վերջի աշխարհացոյցները շատ անգամ կլոր համատարածներուն հաշւովը շինուած են:

43. Ընդհանրապէս ամէն աշխարհացոյցերուն մէկ կողմը պզտի չափ մը դրուած է մասնացոյց անունով, որոյ միջոցաւ նոյն աշխարհացոյցներուն վրայ տեղերու հեռաւորութիւնը կրնայ որոշուիլ հազարամէթրով, Գաղղիոյ հասարակ փարսախով, Տաճկի, Անգղիոյ և Գերմանիոյ մղոններով ևայլն: Լայնութեան մէկ աստիճանը հաւասար է 25 Գաղղիոյ հասարակ փարսախի, կամ 111 $^1/_8$ հազարամէթրի, 66½ Տաճկի մղոնի, 69 $^1/_4$ Անգղիական մղոնի, 60 Իտալական աշխարհագրական կամ ծովային մղոնի, 15 Գերմանական մղոնի:

44. Ամէն աշխարհացոյցերուն վերի կողմը հիւսիս, վարի կողմը հարաւ, աջ կողմը արևելք և ձախ կողմը արևմուտք է:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

42. Ինչ՞ է աշխարհացոյց տախտակը: Համատարածն ինչ է: Շինէ համատարած մը միայն միջօրէականներով եւ զուգահեռական շրջանակնե-

ռով, եւ դիր երկայնութեան ու լայնութեան աստիճանները: Գտի՛ր առոր մէջ *Տաճկաստանի* տեղը եւ սահմանները ցըցուր: Սեւ ծովին տեղը ցըցուր, եւ գծագրէ: Մակարդակ հաւասարած մը շինէ, եւ առոր երկայնութեան ու լայնութեան աստիճաններուն տեղերը նշանակէ եւ քաշէ միջօրէական եւ զուգահեռական շրջանակները: Առոր վրայ Գաղղիոյ տեղը գտի՛ր, եւ սահմանները գծէ, եւ անոր մէկ քանի քաղաքներուն տեղը նշանակէ: Գտի՛ր Կոստանդնուպոլիս, գտի՛ր Կարին, Վան քաղաքներուն տեղերը:

43. Ինչ՞ է մասնացոյցը: Լայնութեան մէկ աստիճանը քանի՞ Փարսախի կամ մղոնի հաւասար է: Գտի՛ր Կ. Պոլիս Փարիզէն քանի՞ Գերմանական մղոն հեռու է: Պետրսպուրկ Լօնտրայէն քանի՞ Անգղիական մղոն հեռու է: Անդրիանուպօլիս Թահիրէէն քանի՞ Տաճկի մղոն հեռու է:

44. Աշխարհացոյցերուն կողմերը ինչպէ՞ս որոշելու է:

Արուեստական Երկրագունդ եւ Երկնագունդ.

45. Երկրագունդը *երկրիս բնական ձեւը կը ցըցնէ, որուն վրայ մտացածին շրջանակները իրօք քաշուած են: Երկրիս հասարակածին կողմը ուռեցած և բեւեռներուն կողմը տափակցած է, անանկ*

որ բևեռային տրամագիծը հասարակածին տրամագծէն 24 մղոն կարճ է :

46. Երկնագունտ կը ներկայացնէ երկինքը, որուն վրայ գրուած են հաստատուն աստղերը իրենց վերաբերական դիրքով :

47. Արուեստական գունտը երկու կերպով կը դառնայ, մէկ մը՝ Արևելքէն Արևմուտք կամ Արևմուտքէն Արևելք կը Թաւալի իր առանցքին վրայ, որուն բևեռները հաստատուած է ընդհանուր կամ պղնձէ միջօրէականին, և մէկ մ'ալ՝ Հարաւէն Հիւսիս կամ Հիւսիսէն հարաւ ընդհանուր հորիզոնին վրայ :

48. Պղնձէ միջօրէականը 4 անգամ 90 աստիճանի, այսինքն, 360 աստիճանի բաժնուած է, վերին երկու 90 աստիճանները հասարակածէն կ'սկըսին մինչև բևեռ կ'երթան, վարի երկու 90 աստիճանները բևեռներէն կ'ըսկսին մինչև հասարակած կ'երթան. այս միջօրէականին աստիճանները պէտք է որ նայողին աջ կողմը ըլլայ :

49. Ընդհանուր հորիզոնը լայն մակարդակ շըրջանակ մ'է, որուն վրայ նշանակուած է, Առաջին՝ երկու շրջանակ 4 անգամ 90 աստիճանի բաժնուած, մէկ շրջանակին մէջի աստիճանները բևեռներէն կըսկըսին մինչև հասարակած կ'երթան, և միւս շրջանակին մէջ հասարակածէն սկսելով մինչև բևեռ կը համրուին, Երկրորդ՝ երկու շրջանակ ալ կայ, որոց մէկուն վրայ Զոդիակոսին 12 կենդանակերպները նշանակուած է 30ական աստիճանի բաժնուած ,

իրենց նշաններովը անուններովը և պատկերներովը, և միւսին վրայ նոյն կենդանակերպներուն համապատասխանող 12 ամիսները նշանակուած է իրենց օրերովը. ամիսներուն օրերը նոր տոմարի համեմատ գրուած է: Հին տոմարը նոր տոմարին հաւասարցընելու համար 12 աւելցնելու է: Երրորդ՝ շրջանակ մ'ալ կայ 32ի բաժնուած երկրիս կողմերը ցըցընելու համար:

50. Հիւսիւսային բևեռին վրայ ժամացոյց մ'ալ հաստատուած է, գնտի գործածութեանը համար: Շատ գնտի վրայ կողմնացոյց ալ կըլլայ երկրիս դիրքը համեմատ գունտը չխոկելու համար:

51. Երկնագնտին վրայ երկրագնտին շրջանակներէն զատ նաև կան ուրիշ շրջանակներ՝ ինչպէս Զօդիակոս, Ազիմութ, Բարձրութեան քառորդ:

Զօդիակոսը լայն կամար մ'է, որ հասարակածին վրայէն ծռտի կանցնի ու 12 ամիսներուն թուովը 12 կտոր բաժնուած է, որոնց վրայ գրուած են 12 կենդանակերպները երեսնական աստիճանի բաժնուած:

Ազիմութ կըսուի ան շրջանակը, որ Զէնիթէն ու Նատիրէն անցնելով հորիզոնը երկու հաւասար կտոր կը կտրէ, ասով կիմացուի թէ աստղ մը միջօրէէն որչափ հեռու է:

Բարձրութեան քառորդը այն պղնձէ բարակ շըրջանակն է, որ գնտին վրայ հեռաւորութիւններ չափելու կը գործածուի, մէկ ուղղութեան վրայ 0 էն մինչև 90° նշանակուած է և միւս ուղղութեան վրայ 0 էն մինչև 18°:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

45. Ինչ՞ է արուեստական երկրագունտը: Երկիրս ճիշդ գո՛ւնտ է: Բեւեռային տրամագիծը հասարակածին տրամագծէն ո՛րչափ կարճ է: Ցցո՛ւր գնտին վրայ հասարակածը, միջօրէականը, զուգահեռական շրջանակները, եւ այլն:

46. Երկնագունտն ինչ կը ցըցընէ:

47. Արուեստական գնտերը քանի՞ կերպով կը դառնան:

48. Պղնձէ միջօրէականը ինչ կը ցըյընէ, եւ ինչ կերպով աստիճաններու բաժնուած է:

49. Գնտին ընդհանուր հորիզոնը ո՛րն է, ինչ բանի պէտք կըլլայ. վրան ինչ շրջանակներ եւ ինչ աստիճաններ կան: Նոր տոմարի ամսուն օրերը հին տոմարի ամսուն օրերէն ինչ տարբերութիւն ունի: Մեր ամսուն օրերը ո՛ր տոմարի նայելով է: Նոր տոմարի ամսուն օրերը ո՛րն են:

50. Գնտի վրայ ուրիշ ինչ գործիք կայ:

51. Երկնագնտին վրայ գտնուած շրջանակները ո՛րն են: Զոդիակոսը ո՛րն է: Ազիմութը ինչ է: Բարձրութեան քառորդն ինչ է:

Երկրագնդին գործածութեամբ լուծելիք առաջարկութիւններ.

52. Ա. Գնդին միջոցաւ քաղաքի մը կամ տեղի մը լայնութիւնը ու երկայնութիւնը գտնալ:

Այն քաղաքը միջօրէականին տակը բերել, վրայի աստիճանը լայնութիւնն է, միջօրէականէն կարած հասարակածին վրայ եղած աստիճանն ալ երկայնութիւնն է: Թէ որ Կ. Պօլիս պղնձէ միջօրէականին տակը բերեմ, կը գտնամ որ 41° լայնութիւն և 26° 38′ *երկայնութիւն ունի:*

Բ. Տեղի մը լայնութեան եւ երկայնութեան աստիճանները գիտնալով նոյն տեղը գնդին վրայ գտնալ:

Երկայնութեան աստիճանը հասարակածին վրայ գտնալով կը բերեմ նոյն կէտը պղնձէ միջօրէականին տակը, և միջօրէականին վրայ եղած լայնութեան աստիճանին ճիշտ տակն է նոյն տեղը:

Գ. Երկու տեղերու հեռաւորութիւնը գտնալ: *Կարկինով կառնեմ անոնց բացութիւնը, հասարակածին վրայ նոյն լայնութիւնը քանի աստիճան կը պարունակէ, նոյն տեղերուն հեռաւորութիւնն ալ այնքան աստիճան է: Եթէ ուզեմ նոյն աստիճանաց թիւը մղոն կամ փարսախ կ՚ընեմ բազմապատկելով 25 ով, 60 ով և այլն* (Թ. 43).

Բարձրութեան քառորդն ալ տեղերու հեռաւորութեանը աստիճանները կրնայ որոշուիլ:

Դ. Տեղի մը լայնութեան աստիճանին համեմատ գօտին ճշդել: *Լայնութեան աստիճանին չա-*

փոքր բեւեռը հորիզոնէն վեր կը բարձրացնեմ:

Ե. Տեղի մը ժամը գիտնալով ուրիշ տեղի մը նոյն ատենը ժամը քանին ըլլալը գտնալ: *Առաջին տեղը կը բերեմ պղնձէ միջօրէականին տակը և ժամացոյցին սլաքն ալ ծանօթ ժամուն վրայ կը դնեմ, ետքը գունտը կը դարձնեմ մինչև որ միւս տեղն ալ պղնձէ միջօրէականին տակը գայ, սլաքին նշանակած ժամն է խնդրածս:*

Զ. Որոշեալ օր մը ծիր խաւարմանին վրայ արեգակին գտնուած տեղը, եւ իր խոտորումը կամ հասարակածէն ունեցած հեռաւորութիւնը, եւ նոյն օրը արեգակը ո՛ր տեղերուն վրայ ուղղահայեաց գտնուիլը որոշել: *Նախ կը գտնամ ըստ Նոր տոմարի հորիզոնին վրայ ամսուն օրը, որոյ դիմացը գրուած է կենդանակերպը և իր աստիճանը, նոյն կենդանակերպը և աստիճանը ծիր խաւարմանին վրայ կը գտնամ, որ է նոյն օրուան արեգակին տեղը. այս տեղը միջօրէականին տակը կը բերեմ, և անոր վրայ եղած աստիճանը կը ցըցնէ արեգակին խոտորումը, հասարակածէն ունեցած հեռաւորութիւնը. և գունտը կը դարձնեմ, միջօրէականին այս աստիճանին տակէն անցած քաղաքներուն՝ արեգակը նոյն օրը կէս օրուան ատեն գագաթնահայեաց կըլլայ:*

Է. Տեղի մը օրը եւ ժամը գիտնալով, արեգակը ո՛ր տեղերուն վրայ գագաթնահայեաց ըլլալը որոշել: *Կը գտնամ նոյն օրուան համեմատ արեգակին խոտորումը, և առաջարկեալ տեղը միջօրէականին*

տակ բերելով ժամացոյցին սլաքը կը դնեմ առաջարկեալ ժամուն վրայ, և կը դարձնեմ գունտը մինչև սլաքը կէս օրուան վրայ, 12-ին վրայ գայ, (եթէ առաջարկեալ ժամը արևելեան է, պէտք է Եւրոպական ժամու վերածել, կամ սլաքը արևելեան կէս օրին վրայ բերել. արևելեան կէս օրերը օրացոյցներուն մէջ նշանակուած են). միջօրէականին նոյն օրուան խոտորման աստիճանին տակը գտնուած կէտն է, պահանջեալ տեղը, ուր նոյն օրը նոյն ժամուն արեգակը գագաթնահայեաց կըլլայ:

Ը. Որոշեալ օր մը տեղի մը արեգակին ծագելու եւ մտնալու ժամերը, ցերեկուան եւ գիշերուան երկարութիւնը որոշել: Նախ գունտը կը շտկեմ նոյն տեղին լայնութեան աստիճանին համեմատ, ետքը կը գտնամ արեգակին նոյն օրուան տեղը ծիր խաւարմանին վրայ, այս կէտը միջօրէականին տակը բերելով կը դնեմ ժամացոյցին սլաքը 12 ին վրայ, և նոյն կէտը արևելեան հորիզոնին վրայ բերելով դիմացը կը գտնամ հորիզոնէն ելած կէտը և աստիճանը և ժամացոյցին վրայ ալ ծագելու ժամը, և նոյն կէտը արևմտեան հորիզոնին վրայ տանելով, մտնալու տեղը պիտի գտնամ և ժամացոյցին րայ ալ արևը մարը մտնալու ժամը: Թէ որ արևը ծագելու ժամը կրկնեմ գիշերուան երկարութիւնը, և արևը մարը մտնալու ժամը կրկնեմ ցերէկուան երկարութիւնը կը գտնամ:

Եւ թէ որ արևուն ծիր խաւարմանին վրայ գըտնուած կէտը արևելեան և արևմտեան հորիզոններ-

րէն 18° վար իջեցնեմ, ժամացոյցին սլաքը նոյն օրուան արշալոյսը սկսելուն և վերջալոյսը վերջանալուն ժամերը պիտի ցըցնէ։ Այս կերպը Եւրոպական ժամերով է։ Իսկ Թէ որ արևելեան ժամերով յիշեալ գործողուԹիւնը կատարել ուզուի, ծիր խաւարմանին վրայ արևուն գտնուած կէտը նախապէս արևմտեան հորիզոնին վրայ տանելով ժամացոյցին սլաքը 12 ին վրայ դնելու է, և ետքը գունտը դարձնելով նոյն կէտը միջօրէականին տակը բերելով սլաքը պիտի ցըցընէ կէս օրուան ժամը, և նոյն կէտը արևելեան հորիզոնին վրայ բերելով սլաքը պիտի ցըցընէ արևուն ծագման ժամը, արևելեան կէս օրուան ժամը կրկնելով նոյն օրուան գիշերուան երկարուԹիւնը կիմացուի։

Թ. Քաղաքի մը կամ տեղի մը օրը եւ ժամը գիտնալով, որոշել ուրիշ այն ամէն տեղերը, ուր արեգակը կը ծագի եւ մարը կը մտնայ, ու կէս օր եւ կէս գիշեր կըլլայ։ Նախ կը գտնամ ծիր խաւարմանին վրայ այն օրուան արեգակին եղած կէտը և կը բերեմ պղնձէ միջօրէականին տակը և որով կորոշեմ խոտորումը, նոյն խոտորման համեմատ բևեռը կը բարձրացնեմ, ետքը նոյն քաղաքը պղնձէ միջօրէականին տակը բերելով սլաքը որոշեալ ժամուն վրայ կը դնեմ և կը դարձնեմ գունտը մինչև սլաքը 12 ին վրայ գայ, ահա այն տեղերը՝ որ պղնձէ միջօրէականին վերի մասին տակն են՝ կէս օր է, վարի կէս մասին տակը եղած տեղերուն վրայ ալ կէս գիշեր է, արևելեան հո

րիզոնին վրայ գտնուած տեղերին ալ առաւօտ և արևմտեան հորիզոնին վրայ գտնուած տեղերն ալ երեկոյ է. ևայլն:

Երկնագնդին վրայ առաջարկութիւններ

53. Ա. Արեգակին կամ աստղի մը ուղիղ ելքը եւ խոտորումը գտնալ: *Արեգակին կամ աստղին տեղը պղնձէ միջօրէականին տակը բերելու է, միջօրէականին տակը եղած հասարակածին աստիճանը ուղիղ ելքն է, և միջօրէականին աստիճանն ալ, որ արեգական կամ աստղին վրայ է, խոտորումը կը ցըցնէ:*

Բ. Գտնալ քաղաքի մը որոշեալ օրուան մէջ աստղ մը երբ կելլայ, երբ միջօրէականին վրայ կուգայ, եւ երբ կը մտնայ: *Նոյն քաղաքին լայնութեանը համեմատ բևեռը կը բարձրացնեմ, և ծիր խաւարմանին վրայ արեգակին տեղը գտնալով կը բերեմ պղնձէ միջօրէականին տակը և ժամացոյցին սլաքն ալ 12ին վրայ, և անկէ ետքը աստղը արևելեան և արևմտեան հորիզոններուն վրայ և պղնձէ միջօրէականին տակը բերելով՝ սլաքը պիտի ցըցնէ աստղին ելլալու, մտնալու և միջօրէականին վրայ գալու ժամերը:*

Գ. Տեղը եւ ժամը որոշեալ ըլլալով գտնալ երկնից երեսը, այնանկ որ նոյն ժամուն երկնից երեսը տեսանելի աստղերը երեւան ելլան: *Գունդը երկնից դիրքը համեմատ կը շինեմ, և կը բարձրացնեմ բևեռը տեղոյն լայնութեան համեմատ, և նոյն օրուան արեգակին տեղը պղնձէ միջօրէա-*

կանխին տակը կը բերեմ և ժամացոյցին սլաքն ալ 12 ին վրայ, Թէ որ որոշեալ ժամը կէս օրէն առաջ է գունտը դէպ ի արևելք կը դարձնեմ մինչև որ սլաքը որոշեալ ժամուն վրայ գայ, եթէ որոշեալ ժամը կէս օրէն ետք է գունտը դէպ ի արևմուտք դարձնելու է մինչև որոշեալ ժամը միջօրէականին տակ գայ, գնտին այս դիրքը նոյն ժամուն երեւոյթն է նոյն տեղին նկատմամբ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

52. Գնտին միջոցաւ տեղի մը երկայնութիւնը ու լայնութիւնը ինչպէս գտնալու է: Գտիր երկայնութիւնը ու լայնութիւնը Կ. Պոլսոյ, Լոնտրայի, Փարիզի, Վէննայի, Ֆիօրէնցայի, Հռովմի, Մատրիտի, Լիզպօնայի, Էտիմպուրկի, Տուպլինի, Ռիօ Ժանէյրօյի, Բէթրսպուրկի, Կալկաթայի, Նաբօլիի, Բէքինի, Նորէօրքի, Եւայլն:

Քաղաքի մը երկայնութեան ու լայնութեան աստիճանները գիտնալով ինչպէս գտնալու է գնտին վրայ նոյն քաղաքին տեղը: Գտիր գնտին վրայ այն տեղերը որ ունին արեւմտեան երկայնութիւն 2° 27′ եւ հիւս. լայն. 51° 30′,

Արեւել. երկայ. 14° 2′ եւ հիւս. լայն. 48° 12′.
Արեւել. երկայն. 26° 36′ եւ հիւս. լայն. 41° 1′.

Երկու քաղաքներուն հեռաւորութիւնը ինչպէս

որոշելու է գնտին վրայ. Տաճկի, Անգղիոյ, Աշխարհագրական, Գերմանական, եւայլն, մղոններով: Գտիր Տաճկի մղոնով Կ. Պոլսոյ եւ Քահիրէյի հեռաւորութիւնը. Անգղիական մղոնով Լոնտրայի եւ Փարիզի հեռաւորութիւնը, եւայլն:

Քաղաքի մը համեմատ գունտը ինչպէս ճշտելու է: Ճշտէ գունտը Կ. Պոլսոյ, Փարիզի, Լոնտրայի համեմատ:

53. Արեգակին եւ աստղի մը ուղիղ ելքը եւ խոնարհումը ինչպէս գտնալու է երկնագնտին վրայ: Գտիր արեգակին ուղիղ ելքը յուլիսի 15 ին եւ հոկտեմբեր 13 ին: Ցուլին ճակտին վրայ Ալտապերանի ուղիղ ելքը գտիր:

Աստղի մը այս ինչ օր քաղաքի մը արեւելեան, արեւմտեան հորիզոններուն եւ միջօրէականին վրայ երբ գալը ինչպէս գտնալու է: Գտիր որ Առիւծին պոչին վրայի Ռեգիւլոս աստղը Կ. Պոլսոյ հորիզոնէն երբ կը ծագի, երբ կը մտնայ, երբ միջօրէին վրայ կուգայ փետրուար 4 ին: Գտիր որ Հայկին ձախ ոտքին վրայի Րիճել աստղը Փարիզի հորիզոնէն երբ կը ծագի, երբ կը մտնայ, երբ միջօրէին վրայ կուգայ ապրիլ 16 ին:

Կարին յունվար 18 գիշերուան ժամ 6 ին կամ 3 ին կամ 9 ին երկնից երեսը ինչ դիրքով կերեւայ: Վան մարտ 6 գիշերուան ժամ 8 ին կամ 5 ին երկնից երեսը ինչ դիրքով կերեւայ:

ՄԱՍՆ Բ.

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

54. *ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ կը սովրեցնէ, առաջին՝ երկրիս վրայի բնական բաժանմունքը, երեւոյթներն ու անոնց ընդհանուր յատկութիւնները. երկրորդ՝ կենդանական, հանքային ու բուսական բերքերը, որոնք երկրիս մէջ կանին կամ կը շարժին:*

Ա. ԵՐԿՐԻՍ ԲՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ, ՈՒ ԱՆՈՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

55. *Երկիրս կամ հողագունտն երեք գլխաւոր մասի կը բաժնուի,* Ցամաք, Ջուր եւ Օդ:

Ա. ՑԱՄԱՔ

56. *Բոլոր հողագնտիս մակերեւոյթին երեք մասը ջուր և մէկ մասը ցամաք է: Ցամաքին այլեւայլ կտորները կըսուին Լեռ, Դաշտ, եւայլն:*

57. *Երկրիս վրայի բնական կոնաձեւ բարձրութիւնները* Լեռ, *և իրարու կպած լեռները* Գօտի *կամ* Շղթայ լերանց *կըսուին:*

Աշխարհիս ամենէն բարձր լեռներն են Ասիոյ Հիմալայայ լեռներուն մէջ Տավալակերի, որ 8,588 մեթր բարձր է: Հայաստանի Արարատ կամ Մասիս

լեռ, 5,216 մէտր բարձրութիւն ունի: Ամերիկայի Անտեան լեռանց մէջ Նեվատոյ տէ Սօրադայ, 6,488 մէտր: Եւրոպայի Ալպեան լեռանց մէջ Սպիտակ լեռ, 4,813 մէտր: Ափրիկէի մէջ Մուրիա լեռ, 5,000 մէտր:

58. Հրաբուխ *կըսուին կրակ ցատքեցնող լեռները, որ ընդհանրապէս ծովեզերեայ տեղուանք կըլլան: Հրաբուխին պատճառը գետնին տակը եղած հանքային նիւթերն են, որ յանկարծակի կը բռնկին, կը հալին ու սաստիկ ուժով հողը պատըռտելով դուրս կելլեն, կիր եղած քարերով բոցով և մոխրով: Հրաբուխէն դուրս վազած հեղուկը* լաւա *կըսուի:*

Հրաբուխները ամէն ատեն չեն բռնկիր, կան ալ որ բոլորովին մարած են, ինչպէս Մասիս լեռան մարած հրաբուխը:

Ծովային հրաբուխ, *որ ծովուն տակէն կը բըռընկի, որով նոր նոր կղզիներ դուրս կելլեն, ինչպէս է Սանդուրին կղզին և քովի կղզիները, որ* 1707 *ին հրաբուխէ յառաջ եկած են: Բայց* 1866 *ին Սանթուրին դարձեալ հրաբուխով աներևոյթ եղաւ և քովէն ուրիշ կղզի ելաւ:*

59. Գետնաշարժ *կըսուի երկրիս մէկ կտորին դողդղալը, որ շատ անգամ հրաբուխէն կըլլայ կրակը ուժով գետնէն դուրս ելած ատենը գետինը կը թոթվէ: Շատ անգամ ալ գետնին տակի* կազերէն *կըլլայ, որ հողը պատռտելով դուրս ելլելու ատեննին գետինը կը շարժեն:*

60. Դաշտ կըսուի երկրիս շիտակ ու տափարակ տեղուանքը: Մեծ դաշտերն են Կուինէյայի դաշտերը ուր 10 ոտնաչափէն աւելի բարձր խոտ կը բուսնի: Ամերիկայի մէջ Ամազոնեաց գետին քովի դաշտերը 1,000 մղոնի չափ տարածութիւն ունին, ու մէջերնին ամենևին քար չի գտնուիր:

Այն դաշտերն, որ անբեր և աւազուտ են՝ կըսուին անապատ, որոց ամենէն մեծն է Սահրա անապատը, որ գրեթէ երկու երեք ամսուան ճամբայ միակերպ դաշտ է: Անապատներուն մէջ տեղ տեղ բարեբեր երկիրներ կը գտնուին կղզիի պէս, որոնք Ովասիս կըսուին:

61. Յամաքին վրայ եղած խորունկութիւնը կըսուի ձոր, որ երկու լերանց կամ երկու լերանց զօտիներուն մէջ կըլլայ:

62. Այր կամ անձաւ կըսուի երկրիս խորունկը կամ լերանց ժայռերուն մէջ եղած մեծամեծ ծակերը:

Աշխարհիս մէջ ամենէն խորունկ է Անգղիոյ Էլտէն այրը, որ 9,600 ոտնաչափ խորութիւն ունի: Աւստրիոյ մէջ Թրէստի մօտ Ատէլսպերկ այրը ընդարձակութեան կողմանէ անուանի է, 6 մղոնի չափ մեծութիւն ունի:

Շատ տեղ այրեր կան՝ որոց վրայէն կրային ջուր մը կը վազէ, մէջի կիրը կը քարանայ ու սառի ձեւով կը կախուի:

Շան այրը Նաբոլիի մէջ է, ուր շուները եւ ուրիշ ցած կենդանիները կը մեռնին, վասն զի

ասոր գետնէն *ածխային կազ* ելլելով մինչեւ 2 ½ ոտնաչափ բարձր կը մնայ, եւ որովհետեւ այս կազը մահացու է, անոր համար ասոր մէջ կենդանիք չեն ապրիր:

Անուանի է նաեւ Սկովտիոյ մէջ Ֆինկալի այրը որ հոյլի անեն խիստ սաստիկ արձագանգ կընէ եւ ահաւոր ձայներ կը հանէ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

54. Բնական աշխարհագրութիւնը ինչ կը սորվեցընէ:

55. Հողագունդը քանի գլխաւոր մասի կը բաժնուի:

56. Երկրիս մակերեւոյթին որչափը ցամաք եւ որչափը ջուր է: Ցամաքին մասերը ինչ կըսուին:

57. Լեռն ինչ է: Շղթայ կամ Գօտի լեռանցն ինչ է: Աշխարհիս ամենէն բարձր լեռները որն են:

58 Հրաբուխն ինչ է: Հրաբուխները միշտ կը վառին: Մարած հրաբուխ կայ: Ծովային հրաբուխն ինչ է:

59. Գետնաշարժը ինչ է եւ ինչ բանէ յառաջ կուգայ:

60. Դաշտն ինչ է: Ամենէն մեծ դաշտերը որն են: Անապատն ինչ է: Ամենէն մեծ անապատը որն է: Ովասիսն ինչ է:

61. Ձորն ինչ է:

62. Այր կամ Անձաւն ինչ է: Ամենէն խորունկ եւ ընդարձակ այրերը ո՞րն են: Շան այրին վրայ ինչ գիտես:

Բ. ՋՈՒՐ

63. Ջուրը *հեղուկ մարմին է, որ սաստիկ տաքութեամբ գոլորշի կը դառնայ, իսկ սաստիկ պաղութեամբ կը սառի:*

Ջրին եւ ընդհանրապէս ամէն բանի տաքութիւն կրնայ չափուիլ *ջերմաչափ* գործիքով, որ սովորաբար 100 աստիճանի բաժնուած ապակիէ խողովակ մ'է, մէջի սնդիկը տաքութենէն տարածուելով թէ որ 100երորդ աստիճանը բարձրանայ ջուրը եռալու աստիճանը կը ցըցնէ, իսկ պաղութենէն սեղմուելով թէ որ 0 աստիճանը իջնայ ջուրին սառելու աստիճանը կը ցըցնէ:

Երեք տեսակ ջուր կայ հասարակ, հանքային, ծովային:

1° *Հասարակ ջուր*

64. Հասարակ *կամ* անուշ *կըսուի ջուրը, որ աղի չէ և հանքային համ չունի, ինչպէս ընդհանրապէս աղբիւրներուն, գետերուն և լճերուն ջուրերը:*

65. *Վազող ջուրերուն սկսած կամ բղխած տեղը* ակն, ակունք, աղբիւր *կըսուի: Աղբիւրները*

միշտ դէպ ի ցած տեղերը կը վազեն, ուրկէ ջրի ընթացքներ յառաջ կուգայ:

Փոքր ջրի ընթացքները առու կըսուին: Այն ջրի ընթացքները որ սաստկութեամբ կը վազեն կըսուին հեղեղ:

Գետ կըսուի մեծ ջուրերուն ընթացքը, որ ուղղակի ծովը կը վազէ, թափած տեղը գետին բերանը կըսուի:

Վտակ կամ գետակ կըսուի ջրի ընթացք մը, որ գետի մը կամ ուրիշ ջրի ընթացքի մը մէջ կը վազէ:

Այն ջրի ընթացքներն ալ որ ուղղակի ծովը կը վազեն, բայց գետ ըսուելու չափ մեծ չեն, վտակ կըսուին:

Վտակներուն կամ գետերուն իրար խառնուած կամ միացած տեղը գետախառնուրդ կըսուի:

Գետերը շատ անգամ շատ մը ճիւղերու բաժնուած ծովը կը թափին: Երկու ջրի ընթացքներու և ծովի մէջ մնացած ցամաքին մասը տէլթա կըսուի, որ ընդհանրապէս եռանկիւնի ձեւով կըլլայ:

Գետի մը մէջ վազող ջրի ընթացքները, առուները, վտակները գետակից կըսուին:

Ջրի ընթացքի մը աջ ու ձախ եզերքը ըսելով կը հասկցուի մարդ ջրին վազած կողմը իր երեսը դարձնելով իր աջ ու ձախ կողմերը:

Գետի մը աւազանը իր աղբիւրներովը, առուներովը և վտակներովը բռնած զառի վայր միջոցն է:

Ծովու մը աւազանը կամ զառի վայր ցամաքի

այն միջոցն է, ուրկէ կը վազեն իր մէջ Թափող բոլոր ջրի ընթացքները:

Աշխարհիս ամենէն մեծ գետերը Ամերիկայի մէջ են

Միսիսիբի, Անգդիական

Ամերիկայի մէջ	երկայն.	մղոն	3560
Ամազոնեան գետը Ամերիկ. մէջ	»	»	3080
Օպի գետը Սիպերիոյ մէջ	»	»	2320
Նեղոս գետը Ափրիկէի մէջ	»	»	2310
Գանգէս գետը Հնդկաստանի մէջ	»	»	1608
Դանուբ գետը Եւրոպայի մէջ	»	»	1496
Եփրատ գետը Հայաստանի մէջ	»	»	1492

Գետեր կան որ իրենց ընթացքին մէջ տեղ մը ցամքին տակը կանցնին, և ուրիշ տեղ մը դուրս կելլեն: Գետեր ալ կան որ ոսկիի հանքերու մէջէ անցնելով իրենց բերած աւազն ալ ոսկիի հետ խառն է, ինչպէս Զայիրէ ու Կամպիա գետերը:

Սահանք կամ ջրվէժ կըսուի, որ գետ մը լեռնէն վազելու ատեն ժայռի մը հանդիպելով վերէն յանկարծ վար կիյնայ:

Երկրի մը մշակութեանը և առողջութեան վնասակար կայնող ջուրերը վերցնելու և նաւագնացութիւն ընելու և չոր երկիրները ոռոգանելու նպատակաւ ջրանցքներ շինուած կան, որոնք իրենց նպատակին համեմատ անուններ ունին Ցամաքեցնող, Նաւուղղութեան, և ոռոգման ջրանցքներ:

66. Լիճ կըսուի տեղ մը ժողուած ջուրը, որոյ չորս կողմը ցամաք է: Աշխարհիս ամենէն մեծ լիճը

Կասպից ծովն է, որոյ երկայնութիւնը հիւսիսէն հարաւ 800 մղոնի չափ է, և լայնութիւնը 120 էն մինչև 300 մղոնի չափ:

2° Հանքային ջուր

67. Ջրեր կան որ գետնին տակի հանքերուն մէջէն անցնելով անոնց համն ու գոյնը կառնեն և կըլլաուին հանքային ջուր: Բնագէտները փորձած են որ գետնին տակը քանի խորունկը երթցուի այնչափ տաքութիւնը կը շատնայ ամէն մէկ 30 մեթրօ խորութեան վրայ տաքութիւնը մէյմէկ աստիճան կաւելնայ. ասկէ յառաջ կուգայ գետնին տակէն բղխած ջերմուկներուն բնական հանքային տաք ջրերը: Տեսակ մը հանքային ջրեր կան, որ թէպէտ տաք չեն, բայց իրենց մէջ դիւրավառ կազ գտնուելով յանկարծ իրենք իրենցմէ կը բռնկին. Այս ջրերէն շատ կը գտնուին Կասպից ծովուն եզերքը եղած Պաքու քաղաքին քովերը, որ կրակապաշտ Պարսից ուխտատեղի է:

3° Ծովային ջուր

68. Երկրիս վրայ գտնուած աղի ջրերուն տարածութիւնը ծով, և մեծ ծովերը Ովկիանոս կըսուին:

69. Ծովին այն մասը որ դէպ ի ցամաք մտած է ծոց կամ խորշ կըսուի:

70. Նեղուց կըսուի ծովին այն մասը՝ որ երկու

ցամաքի մէջէ անցնելով երկու ծովեր իրար կը միացնէ:

71. Ամէն կողմէն ջրով շրջապատեալ ցամաքը կղզի կըսուի: Իրարու մօտ գտնուած շատ մը կըղզիները խումբ կղզեաց կամ արշիպեղագոս կըսուի:

72. Թերակղզի կըսուի ցամաքին այն մասը. որ միայն մէկ կողմէն ցամաքին կցուած ըլլալով միւս կողմերը ջրով շրջապատած է: Թերակղզին ցամաքին միացնող մասը պարանոց կըսուի:

73. Դէպ ի ծով երկնցած լեռը կամ բլուրը հրուանդան կամ գլուխ կըսուի: Երբոր քիչ բարձրացած է կըսուի սար կամ լեզու կամ գիք:

74. Ցամաքի վրայ քիչ խորութիւն ունեցող ջրի կոյտերը ճահիճ կըսուին:

Ծովալին կըսուի այն տեսակ մը լիճը որ մէկ կողմէն ծովու մօտ ըլլալով անոր հետ հաղորդակցութիւն ունի:

75. Շատ անգամ ծովուն մէջ նաւերու վտանգաւոր ժայռեր կը գտնուի, որոց կըսուի խութք, վիմուտք:

76. Հովերը որ կը փչեն ծովերուն և լճերուն վրայ, յառաջ կը բերեն անոնց մէջ շարժուն բարձրութիւններ, որք կըսուին ալիք, ծփանք:

77. Ծովերուն մէջ տեղ տեղ իրենց դիրքէն ջրի հոսանքներ կան, որ այս ինչ ուղղութեամբ կը վազեն: Հոսանքը ջրի յատակին մէջ ցցուած ժայռերու և խոր տեղերուն հանդիպելով կլոր պտոյտ կընէ, որ կըսուի հորձանք, որուն վրայ ինչ որ հանդիպի կընկղմի:

78. *Արեգական և լուսնի քաշման զօրութեամբը Ովկիանոսը և իր մասերը բարձրանալով կը կոխեն ծովեզերքը, և ցածնալով կը քաշուին փոփոխակի օրը երկու անգամ: Ջուրերուն բարձրանալը մա*կընթացութիւն *և ջուրերուն ցածնալը* տեղատուութիւն *կըսուի:*

ՀԱՐՑՄՈՒՆՔ

63. Ջուրը ինչ է եւ քանի վիճակի մէջ կը գտնուի. Ջերմաչափին ինչ է եւ ինչպէս որոշուած է իր աստիճանները: Ջուրը քանի տեսակ կըլլայ:

64. Հասարակ ջուրը որն է:

65. Աղբիւրն ինչ է: Ջրի ընթացքը ուրկէ յառաջ կուգայ: Առու, հեղեղ, գետ, գետակ կամ վտակ բառերով ինչ կը հասկցուի: Գետախառնունքն ինչ է: Տէլթա ինչ բանի կըսուի: Գետակիցն ինչ է: Գետին աւազանը որն է, ծովուն աւազանը որն է: Աշխարհիս ամենէն մեծ գետերը որոնք են: Աշխարհիս վրայ ինչ տեսակ գետեր կան: Սահանք կամ ջրվէժն ինչ է: Ջրանցքն ինչ է եւ քանի անուն կունենայ:

66. Լիճն ինչ է: Աշխարհիս ամենէն մեծ լիճը որն է:

67. Հանքային ջուրը որն է: Երկիրս բնական տաքութիւն ունի: Ջերմուկները ուրկէ յառաջ կու-

գան : Բուրենող ջուրերը հոն են եւ գլխաւորաբար հուր կը գտնուին :

68 Ծով, Ովկիանոս ըսելով ինչ կը հասկցուի:

69. Ծոցն ինչ է:

70. Նեղուցն ինչ է:

71. Կղզին ինչ է: Արշիպեղագոսն ինչ է:

72. Թերակղզին ինչ է: Պարանոցն ինչ է:

73. Հրուանդանն ինչ է: Սարն ինչ է:

74. Ճահիճն ինչ է: Ծովալիճն ինչ է:

75. Խութ կամ Վիմուտ ըսելով ինչ կը հասկցուի:

76 Ալիքն ինչ է:

77. Հոսանքն ինչ է: Յորձանքը ինչ բանէ յառաջ կուգայ:

78. Մակընթացութիւն եւ տեղատուութիւն ըսելով ինչ կը հասկցուի:

Գ. ՕԴ, ԵՒ ՕԴԵՐԵՒՈՅԹՔ

79. *Երկրիս շուրջը պատող թոյլ ու թափանցիկ մարմինը կըսուի* օդ *կամ* մթնոլորտ, *որուն մէջ* օդերեւոյթներ *կըլլան* :

Մթնոլորտին բարձրութիւնը ընդհանրապէս 70 էն մինչեւ 90 քիլոմէթր է: Մթնոլորտը երկրիս

երեսին մօտ տեղերու մէջ աւելի խիտ է, եւ բարձրերը աւելի անօսր է, անոր համար բարձր տեղերու մէջ մարդս աւելի դժուարաւ շունչ կառնէ: Օդը ուրիշ մարմնոց պէս ծանր է. 1 ոտնաչափ երկայնութիւն 1 ոտնաչափ լայնութիւն եւ 1 ոտնաչափ բարձրութիւն ունեցող ամանի մը 11 տրամի չափ օդ կը պարունակէ: Մարդուս վրայի եղած օդին սիւնակին ծանրութիւնը գրեթէ 315 խանթար կը կարծուի: Բայց մարդ չզգար այս ծանրութիւնը օդը ամէն կողմէն հաւասարապէս ճնշելուն համար:

80. Օդերեւոյթները *կամ* մետէորաները *չորս տեսակ կըլլան*, Օդեղէն, Ջրեղէն, Լուսեղէն *ու* Հրեղէն:

1° *Օդեղէն մետէորայք*

81. Օդեղէն մետէորայ *կըսուին օդին այլեւայլ շարժմունքները. ինչպէս հով, մրրիկ, Թաթառ:*

82. *Օդին շարժումը* հողմ *կամ* հով *կըսուի, որ երկու կերպով կըլլայ. մէկ մը տաքութենէն օդը անօսրանալով կը տարածուի և քովի օդերը մէկզի հրելով օդի շարժում կը պատճառէ. երկրորդ՝ ցրտութենէն օդը կը խտանայ քիչ տեղ կը բռնէ և պարապ եղած տեղերը միւս օդերը վազելով օդի շարժում յառաջ կուգայ:*

Օդին այս շարժմունքը միշտ նոյն արագութիւնը

չունենար: Հովերը իրենց արագութեանը համեմատ հետեւեալ անուններով կըսուին:

Հով քիչ զգալի, որ ունի արագութիւն 1 ժամու մէջ			1800	մէտր
Հով չափաւոր	»	»	7200	»
Հով սաստիկ	»	»	36000	»
Հով խիստ սաստիկ	»	»	72000	»
Մրրիկ	»	»	81000	»
Մեծ մրրիկ	»	»	97200	»
Ուրական	»	»	129600	»
Ուրական, որ շէնքերն ու ծառերն արմատէն կըտապալէ:			162000	»

Շարունակ հովերն անոնք են, որ միշտ նոյն ուղղութեամբ կը փչեն. ինչպէս են տարեւոր հովերը որ կը փչեն անդադար արեւելքէն յարեւմուտս արեւադարձերուն միջոցը, որ երկրիս արեւմուտքէն արեւելք ըրած օրական թաւալումէն յառաջ կուգան, օդը երկրիս շարժմանը արագութեանը չի հասնելով յետախաղաց շարժում մը կընէ.

Հնդկաց Ովկիանոսի մէջ փչող մուսոն ըսուած հովերն ալ շարունակ հովերուն կարգն են, որ ապրիլէն մինչեւ հոկտեմբեր վեց ամիս հարաւային արեւմուտքէն կը փչեն, և վեց ամիս ալ հիւսիսային արեւելքէն: Այսու ամենայնիւ այս հովերը անկանոն կերպով ալ կը փչեն վեց շաբաթի չափ իւրաքանչիւր փոփոխութեան ատեն:

Երբեմն կըլլայ որ երկու հակառակ հովեր իրարու հանդիպելով սաստիկ մրրիկ մը յառաջ կը բերեն,

և ամպերը թանձրացնելով մէջը դատարկ խողովակի կամ կոնոնի մը ձևով մինչև ծովը կամ գետինը կիջեցնեն, որ արագութեամբ յառաջ երթալով ինչ որ ծովուն վրայ կամ գետինը գտնեն կը տապալեն կամ իրենց մէջ առնելով մինչև երկինք կը հանեն ու նորէն ուրիշ տեղ մը կը ձգեն, այս զարհուրելի օդերևոյթը Թաքառ կըսուի:

Խորշակ կըսուի այն ժանտակար հովը, որ ապականեալ լճերու կամ տաք անապատներու վրայէն փչելով, թէ մարդկան և թէ կենդանեաց կը վնասէ:

2° Ջրեղէն մետեորայք

83 Ջրեղէն մետէորայ կըսուին երկրիս գոլորշիներէն յառաջ եկած մետէորաները, որք են Մէգ, Ցօղ, Եղեամ, Ամպ, Անձրեւ, Ձիւն եւ Կարկուտ:

Երկրիս վրայ գտնուած ամէն բան տաքութեամբ քիչ կամ շատ գոլորշիք կուտայ, այս գոլորշին օդին մէջ կը բարձրանայ կը տարածուի և ցրտութեամբ կը խտանայ կը ծանրանայ և զանազան ձևերով երկրիս վրայ կիջնայ:

Երկրիս երեսը տարածուած ու ցրտութեամբ խըտացած մուխի պէս երևցած շոգին Մէգ կամ Մառախուղ կըսուի:

Երբոր այս շոգին գիշերուան ցրտութենէն աւելի խտանալով երկրիս վրայ անձրևի պէս թացութիւն մը յառաջ բերէ, Ցօղ կըսուի, որ աւելի ցրտանալով

կը սառի և մանր սպիտակ փոշիներու պէս երկրիս վրայ կերևայ, և կըսուի եղեամն :

Շոգիները երկրէս աւելի բարձրանալով իրարու հետ միանան և թանձրանան՝ կըսուին ամպ : Ամպերուն բարձրութիւնը մինչև 18000 ոտք կըլլայ, անկէց վեր սաստիկ ցուրտ ըլլալուն համար չեն կըրնար ելլալ :

Ամպերուն վրայ շոգիներ միանալով կը թանձրանան և ծա՛րանալով կաթիլ կաթիլ կըլլան և երկիրս կը թափին և կըսուին անձրեւ : Բայց կըլլայ որ օդին պաղութենէն անձրևի կաթիլները սառին ու անկիւնաւոր ձևերով երկրիս վրայ իջնան, որուն կըսուի ձիւն :

Կարկուտն է ձիւն կամ ձիւնախառն անձրև, որ օդուն մէջ երկու հակառակ ելեքտրականութեամբ մէկ ղիէն մէկալ դին նետուելով կը խոշորնայ և պաղութենէն կարծր սառոյցի կտորներ կըլլայ և ուժով վար կը թափթփի: Մինչև կէս հօխայ ծանրութեամբ կարկուտ եկած է :

3° Լուսեղէն մետէորայք

84. Լուսեղէն մետէորաները արևուն ճառագայթներուն այլևայլ կերպով օդին մէջ գտնուած գոլորշիներուն վրայ զարնելէն յառաջ կուգան, և վեց տեսակ են, Ծիածան, Արշալոյս, Արևապատկեր, Բակ, Զոդիակոսի լոյս, Կրկներևոյթ :

Արեգակին լոյսը եռանկիւնի ապակիին մէջէն անցնելով եօթը գոյն իրարու ետևէ կը շարուին

կարմիր, նարնջի գոյն, դեղին, կանանչ, բաց կապոյտ, մութ կապոյտ, մանուշակագոյն: Անձրեւի առենն ալ երբոր արեգակին շառաւիղները դիմացի անձրեւի կաթիլներուն մէջէն կանցնին եօթը գոյներով կամար մը կը ձեւացնեն երկնից վրայ, որոյ կըսուի **Ծիածան** կամ **Ծիրանի գօտի**: Ասոր ալ նմանը երբեմն քովի ամպերուն վրայ ձեւանալով՝ երկու ծիրանի գօտի կերեւայ:

Առաւօտները երեկոյները քանի որ արեգակը և հորիզոնէն 18° վար է, իր շառաւիղները մթնոլորտին մէջ կոտրտելով լոյսը կը տեսնուի, այս երեւոյթին կըսուի առտուն **Արշալոյս** և երեկոյին **Վերջալոյս**, որոնք երբեմն ժամ ու կէսէն աւելի կը տեւեն:

Երբեմն արեգակին կամ լուսնի լոյսը իր դիմացի ամպերուն վրայ զարնելով անոնց վրայ ուրիշ արեներ կամ լուսիններ կերեւան, որոց կըսուի **Արեւապատկեր** կամ **Լուսնապատկեր**:

Բակ արեւու կըսուի ամառ առենն արեւուն չուրջը երեւցած ծիածանի պէս գոյնզգոյն շրջանակը, որուն պատճառը արեգակին չուրջը գտնուած գոլորշիներն են:

Երբեմն արեւուն վրայի բակը երկու հատ կըլլայ վրայէ վրայ համակեդրոն, բայց դրսի կողմը եղածին գոյները այնչափ փայլուն չեն ըլլար:

Լուսինն ալ երբեմն բակ կունենայ, բայց արեւու բակին պէս գունաւոր չըլլար, միայն ճերմակ կերեւայ, մէկ կողմն ալ քիչ մը կարմրագոյն:

Զոդիակոսի լոյս կըսուի այն տկար լոյսը, որ

մարտ ամսուն սկիզբները արեւը մտնելէն ետեւ երկնից երեսը բուրգի ձեւով կերեւայ :

Ամառը տաք ատեն դաշտերու մէջ եղած շէնքը, կամ ծովու մէջի նաւը վրայէ վրայ երկու հատ կերեւնայ, մէկը միւսին վրայ գլխիվար, ինչպէս ջրի վրայ ցանուած բան մը ջրին մէջ կերեւնայ, այս երեւոյթը կըսուի Կրկնէրեւոյթ :

4° Հրեղէն մետէորայք

85. Հրեղէն մետէորայ կըսուին օդին մէջ երեւցած կրակէ երեւոյթները որ վեց տեսակ են. Փայլակ, Կայծակ, Հիւսիսայգ, Ճրջմոլիկ հուր, Աստղ և Երկնաքար :

Երբոր ապակին կամ սաթը ինչեւիցէ լաթով մը շատ մը շփես, և ետքը մատդ ապակիին կամ սաթին մօտեցնես կայծ մը կելլայ ձայնով, և երբոր նոյն շփուած ապակիին կամ սաթին թեթեւ բամբակի կտոր մը կամ յարդ մը մօտեցնես իրեն կը քաշէ : Կըսեն թէ շփուած ապակիէն կամ սաթէն անկշռելի հեղուկ մը կելլայ ու մօտեցուցած մատիդ, բամբակին կամ յարդին կը հաղորդուի և անկէց յառաջ կուգայ կայծը, ձայնը, և իրեն քաշելու զօրութիւնը. այս անկշռելի հեղուկին կըսուի Ելեկտրականութիւն, որ Յունարէն Ելեկտրոն բառէն եկած է, որ սաթ կը նշանակէ :

Ելեկտրական հեղուկը երկու տեսակ կելլայ դրական և ժխտական : Երկու նոյն տեսակ ելեկտրա-

կանութիւն իրար կը վանեն և երկու հակառակ տեսակ ելեքտրականութիւն իրար կը քաշէն: Երբոր ամպերու մէջ լեցուած երկու տեսակ ելեքտրականութիւն մէկ մէկու հաղորդուելին, ձայն, կրակ և լոյս կը հանեն. ձայնը կըսուի **որոտում**, լոյսը՝ **փայլակ**, կրակը՝ **կայծակ**: Երբեմն առանց որոտմունքի, երբեմն ալ ամպ չեղած ատեն երկինքը փայլակ կըլլայ, սոր պատճառը դեռ գիտցուած չէ: Որոտման ձայնը 30 մղոնէն աւելի հեռուն չերթար: Որոտման ձայնը մէկ երկվայրկենի մէջ 400 Անգղիական ոտք հեռուն կերթայ:

Հիւսիսայգը կամ **Հիւսիսային** լոյսը ցրտային գօտիներուն մէջ կերևնայ, որ գեղեցիկ ու պայծառ տեսարան մ'է. երկնից վրայ ամէն տեսակ գոյներով ճառագայթներ կը ցոլանան գեղեցիկ կամարներ կը ձևացնեն լուսաւոր թագերով զարդարուած համագիր լուսեղէն սիւներու վրայ, և վերջանալու ատենները գիտես թէ բոլոր երկինքը կրակի մէջ է: Ասոր պատճառը մագնիսական ելեքտրականութիւնն է կըսեն:

Տրջմոլիկ հուրը բռնկած գոլորշիներ են, փտափորեան ջրածին կազը օդին հետ հաղորդուելուն պէս կը բռնկի և մինչև որ հատնի կը վառի: Հասարակօրէն գիշերները ճախին տեղերը կը տեսնուի, բայց բան չի բռնկցներ: Ով՛ որ այս թափառական լուսին մօտերը կը վազէ կ'երթայ, օդին մէջ շարժում մը պատճառելով այս լոյսն ալ իր ետևէն կը վազէ, որ երբեմն ալ փախչողին վրայ

նստելով կը մարի, և եղոտ աղտ մը կը ձգէ:

Աստուպ կըսուի այն գոլորշիները որ մթնոլորտին բարձրերը կը վառին և աստղի պէս կերևան ու կը սահին կերթան և երբեմն ալ վար կիյնան, որ երբեմն ալ իրենց ետևէն լուսոյ պոչ մ'ալ կը ձգեն, երբեմն սուլելու ու քիչ անգամ ալ ճայթելու ձայն մ'ալ կուտան: Բնաբաններէն ոմանք կարծիք կընեն որ աստուպները մեր մթնոլորտէն վեր երկրիս վրայ պտըտող մանր մարմիններն են, որ աչքով չեն երևնար. ասոնք երբոր մեր մթնոլորտին հետ սաստիկ կը շփուին լոյս կը հանեն կըսեն:

Երբեմն երկրէս դուրս գտնուած մանր մարմինները երկրիս ձգողութեան սահմանին մէջ մտնալով գետին կիյնան ահագին որոտմամբ և լուսով, որոց կըսուի Երկնաքար կամ շանթաքար: Վերջի յիսուն տարուան մէջ 60էն աւելի երկնաքար ինկած է Եւրոպայի և Ամերիկայի մէջ, ամենէն մեծը Անգղիա ինկած է, որ 27 հօխայէն աւելի կը կշռէ: Երկնաքարերուն դրսի գոյնը հանգածուխի պէս է, բայց մէջը երկաթի պէս փայլուն: Բնագէտներէն ոմանք կըսեն թէ երկնաքարերը հրաբուղխներէն մթնոլորտին մէջ կը բարձրանան ու ուրիշ տեղ մը կիյնան:

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ ՕԴՈՅ

86. Աշունը անձրևոտ ըլլայ, ձմեռը սովորաբար քիչ կ'անձրևէ, գարունն ալ ետ կը մնայ, և բոյսերը ետ կը մնան:

Ամառը շատ անձրևոտ ըլլայ. ձմեռուան ցուրտը սաստիկ է :

Եթէ կռունկները աշնան առեն կանուխկեկ դէպ ի տաք երկիրներն երթան, ձմեռուան ցուրտը սաստիկ կըլլայ :

Ձմեռը անձրևոտ ըլլայ, ամառը չոր է : Աշունն ալ չոր եղած առեն, ձմեռը շատ հով կը փչէ :

87. Այն օրը, որ արևը ելած առենը չափէ դուրս կարմրութիւն ունի և իր սկաւառակը խոշորկեկ է, նշան է որ հով պիտի ելլէ :

Երբոր արևը բակ ունենայ ու արևապատկեր երևնայ, նշան է որ հով ու անձրև պիտի ըլլայ,

Երբոր լուսինը խոշոր ու կարմիր է, չորսդին ալ բակ ունի, հով կելլէ. Թէոր բակը երկու հատ է փոթորիկ կ'ելլէ :

Երբոր առտուն ծովի ճայչունները իրարու քով ջրին երեսը թռչտելով կանչուըռտեն, ան օրը հով կելլէ :

88. Իրիկունը արևը մտնելէն ետքը Հիւսիսային կողմը Թանձր լեռան պէս դիզուած ամպեր ըլլան, այն գիշերը անձրև կուգայ :

Արևը ելլելու առեն թէ որ բոլոր երկնից երեսը բարակ ամպով մը ծածկուած է ու հով չիկայ, այն օրը քիչ մը անձրև կուգայ :

Արևը ելլելէն երեք չորս ժամ առաջ թէ որ անձրև սկսելու ըլլայ, մինչև կէս օր օդը կը բացուի :

Եթէ յանկարծ Հարաւային սաստիկ հով ելլէ, և

երկու երեք ժամ միակերպ անձրևէ, անձրևը մինչև տասնըհինգ տասնըվեց ժամ կը տևէ:

Եթէ ամբողջ ցերեկն անձրևէ և երեկոյին արևմուտքը բաց ըլլայ, կամ արևը կարմիր ամպերու մէջէն վար իջնայ, երկրորդ օրը օդը կը բացուի:

Եթէ լուսինը բակ ունենայ արևմտեան քամիով, երկրորդ օրը անձրև կուգայ:

Օգոստոս ամսուն մէջ լուսնի ծննդեան ու լրման օրերը գրեթէ միշտ անձրև կուգայ:

Ամառ գիշերները թէ որ Արևելեան հով ըլլայ, ու աստղերը սովորականէն աւելի խոշոր ու փայլուն երևնան, քանի մը ժամէն ետքը անձրև կուգայ:

89. Ամառը կէս օրէն ետքը դեղին ու ճերմակ ամպեր վրայէ վրայ լեռան պէս դիզուին ու սաստիկ հովէ ծանր ծանր շարժելով հորիզոնէն վեր բարձրանան, կարկուտի նշան է: Ձմեռը և գիշերը խիստ քիչ անգամ կարկուտ կուգայ:

90. Ծանրաչափ ըսուած գործիքը 30 բթաչափ երկայնութեամբ ապակիէ խողովակ մ'է, մէջը 28 բթաչափ սնդիկով լեցուն, որ օդին ամէն տեսակ փոփոխութիւնները ժամերով առաջ կը ցըցնէ: զոր.

Թէ որ խողովակին մէջի սնդիկը կամաց կամաց վեր բարձրանայ, նշան է որ օդը պիտի շտկուի: Թէ որ ձմեռ ատեն բարձրանայ, ցուրտը կը սաստկանայ:

Թէ որ ծանրաչափին սնդիկը շուտով ցածնայ կամ բարձրանայ, օդն ալ շուտ մը կը փոխուի. Թէ որ խիստ շատ ցածնալու ըլլայ, փոթորիկի նշան է:

Թէ որ Արեւմտեան հովի առեն ծանրաչափը բարձրանայ, օդը կը բացուի, ու հովը Արեւելեան կը դառնայ. Թէ որ Հարաւային քամիով ցածնայ, ձմեռը սառը կը հալի, ամառը փոթորիկ կելլէ, Թէ որ Արեւմտեան հովի առեն ցածնայ, կանձրեւէ:

Ընդհանրապէս ծանրաչափին նշանները գիշերահաւասարներէն 15 օր առաջ՝ 15 օր ալ ետքը ապահով չեն. վասն զի օդը այն միջոցին շատ փոփոխական է:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

79. Օդը կամ մթնոլորտն եւ օդերեւոյթն ինչ է: Մթնոլորտին բարձրութիւնը որչափ է: Օդին ամէն կողմը միեւնոյն խտութիւն ունի՞: Օդը որչափ ծանր է: Մարդուս վրայ ինչ ծանրութեամբ կը կոխէ: Ինչու օդին ծանրութիւնը չենք զգար:

80. Մետէորան ինչ է, քանի՞ տեսակ մետէորայ կայ:

81. Օդեղէն մետէորան ինչ է եւ քանի՞ հատ են:

82. Հովը ինչ է, ինչ բանէ կը պատճառի: Հովին արագութիւնը միշտ նոյն է: Տարուան, տարեւոր, մուսոն ըսուած հովերը ո՞րն են, ինչ կարգով կը փչեն: Թայփունն ինչ է: Խորշակն ինչ է:

83. Ջրեղէն մետէորան ո՞րն է, քանի՞ տեսակ են, ինչպէս յառաջ կուգան: Մառախուղն ինչ է:

Ցօղն ի՞նչ է: Եղեամն ի՞նչ է: Ամպերն ինչպէս կը գոյանան: Ամպերը ո՞րչափ կրնան բարձրանալ: Անձրեւը ինչէն յառաջ կուգայ: Ձիւնը ի՞նչ բանէ կը գոյանայ: Կարկուտը ինչպէս կը շինուի: Կարկուտին ծանրութիւնը ո՞րչափ է:

84. Լուսեղէն մետէորաները ի՞նչ բանէ յառաջ կուգան, եւ քանի՞ տեսակ են: Ի՞նչ է ծիրանի գօտին: Միթէ մէկ ծիրանի գօտի կըլլա՞յ: Արեւուն ո՞ր կողմը կըլլայ ծիրանի գօտին: Արշալոյսը եւ վերջալոյս ինչէն կը պատճառի, մինչեւ քանի՞ ժամ կը տեւէ: Արեւապատկերն ի՞նչ է: Բակն ի՞նչ է: Լուսնի բակ ալ կըլլա՞յ: Զոդիակոսի լոյսն ի՞նչ է: Կրկներեւոյթն ի՞նչ է:

85. Հրեղէն մետէորաներն ի՞նչ բանէ յառաջ կուգան. քանի՞ տեսակ են:

Ելեքդրականութիւնն ի՞նչ է. քանի՞ տեսակ կըլլայ. ի՞նչ գլխաւոր յատկութիւն ունի:

Որոտում, փայլակ, կայծակն ի՞նչ է: Որոտման ձայնը ո՞րչափ հեռու կերթայ, մէկ երկվայրկենի մէջ քանի՞ ոտնաչափ կերթայ:

Հիւսիսայգն ի՞նչ է, ի՞նչ բանէ յառաջ կուգայ, ո՞ւր կըլլայ:

Տրջմոլիկ կամ թափառական հուրն ի՞նչ է, ի՞նչ բանէ յառաջ կուգայ, ո՞ւր կըլլայ, ռամիկները ասկէ ինչու կը վախնան:

Ասուպն ի՞նչ է, ի՞նչ բանէ կը գոյանայ:

Երկնաքարն ի՞նչ է, քանի՞ երկնաքար ինկած է, ի՞նչ մեծութիւն ունին երկնաքարերը:

86. Աշունը անձրեւոտ եղած ատենը ձմեռը ինչպէս կըլլայ, գարունը ինչպէս:

Ամառը անձրեւոտ եղած ատենը ձմեռն ինչպէս կըլլայ:

Ձմեռը անձրեւոտ եղած ատենը, ամառն ինչպէս է: Աշունը չոր եղած ատենը ձմեռն ինչպէս է:

87. Հովի նշանները որն են:

88. Անձրեւի նշանները որն են:

89. Կարկուտի նշանները որն են:

90. Ծանրաչափն ինչ է: Ասով օդի գուշակութիւններն ինչպէս կըլլայ:

Բ. ԵՐԿՐԻՍ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԲԵՐՔԵՐԸ.

1° Ցեղ մարդոյ, ազգ. աշխատութիւն. կառավարութիւն կրօնք, լեզու

91. *Մարդս Աստուծոյ արարչագործութեան ամենէն գերազանց արդիւնքն է. իր մտաւոր բարձր կարողութիւնը եւ միշտ երջանկանալու բաղձանքը յայտնի կը ցցնէ որ անմահ հոգի մը ունի եւ բոլորովին անմահ էակ մըն է եւ աւելի վսեմ եւ յարատեւ ու անփոփոխ աշխարհի մը բնակիչն ըլլալու համար ստեղծուած է: Միայն մարդս է որ աշխարհիս ամէն կողմը ամէն կլիմայի տակ իր բնական հանճարով*

կրցած է բնակելու։ Աշխարհիս վրայ ընդամէնը գրեթէ 1200 միլիոն ժողովուրդ կը գտնուի։ Մարդուս արտաքին կազմուածքը իր բնակած երկրին կլիմային ազդեցութենէն ազատ եղած չէ, գոյնով և կերպարանքով և հետևապէս սովորութեամբ և կրթութեամբը իրարմէ քիչ կամ շատ կը զանազանին, որով երեք գլխաւոր ցեղերու կը բաժնուի։

Ա. Սպիտակ կամ Կովկասեան ցեղ, այս ցեղին սկզբնատիպը Կովկաս լերանց բնակիչներն են. ասոնք սպիտակ և վարդագոյն կըլլան, թէպէտև թխագոյն (էսմեր) ալ կը գտնուի, գլուխնին ձուաձև, աչուընին մեծ, կապոյտ և սև, քթերնին բարակ ու կոր այսինքն արծուական է, բերաննին քիչ ճեղքուած, շրթունքնին պզտիկ, ակռաներնին զագաթնաձևայ է. մազերնին խարտեաշ և սև, երկայն սաստ և կակուղ է, երբեմն ալ գանգրաձևեր. երեսնին երկայն կլոր ու բարեբիկ է։ Այս ցեղին կը վերաբերին հայերը և իրենց երկրին բնակիչները, Եւրոպայիք ու անոնցմէ յառաջ եկած ազգերը և գաղթականները, Ասիոյ արևմտեան, Եւրոպայի Ափրիկէի հիւսիսային կողմին բնակիչները, Ամերիկայի և Ովկիանիայի գաղթականութեանց մեծ մասը սպիտակ ցեղէն են։

Սպիտակ ցեղը աշխոյժ գործունեայ և ճարտար է, այսօր և միշտ այս ցեղին մէջն եղած են աշխարհիս ամենէն աւելի քաղաքակիրթեալ ազգերը։

Բ. Դեղին կամ մողոլեան ցեղ. այս ցեղին բըկըզբնատիպը Մողոլի ազգն է. Ասիոյ արևելեան

և հիւսիսային բնակիչներուն մեծ մասը, Ամերիկայի և Ովկիանիայի բնակչաց փոքր մասը այս ցեղէն են: Ասոնց մորթին գոյնը դեղին կամ աղտոտ Թխագոյն է այսինքն ցորենագոյն, երեսնին մեծ և տափակ, գլուխնին մեծ և կլոր, բերաննին մեծ քթերնին տափակ. աչուընին շատ երկայն բայց շատ նեղ և դուրս ինկած է, մազերնին սև փայլուն և ցցուած է:

Այս դեղին ցեղի ժողովուրդները որ Ասիոյ արեւելեան կողմը կը գտուին շատ դարերէ ի վեր քաղաքակրթեալ են, բայց անոնք որ հիւսիսային կողմը կը բնակին Թշուառ վայրենութեան մէջ են:

Գ. Սեւ կամ Եթովպական ցեղ. ասոնք կը գըտնուին Ափրիկէի և Աւստրալիայի և Ովկիանիայի հարաւային կողմը: Ասոնց գոյնը շատ կամ քիչ սև է, ճակատնին տափակ, ծնօտնին յառաջացած, շրթունքնին հաստը, ակռանին աւելի երկայն, բերաննին մեծ, քթերնին մեծ և վեր տնկուած, մազերնին սև բայց Թաւ է: Այս ցեղը աւելի քիչ քաղաքակրթեալ է. շատ սևեր իբրև գերի կը ծախուին և ճերմակները կառնեն և կը տանին Ամերիկայի գաղթականութեանց մէջ:

Ասոնցմէ զատ ուրիշ երեք ցեղեր ալ կան, որ կըսուին Մալայեան Բօլինեզեան և Ամերիկեան կամ պղնձագոյն ցեղ:

92. Մարդիկ ընկերութեան մէջ միանալու պէտք ունին: Քաղաքակրթութեան մէջ աւելի յառաջացած մարդոց միութիւնը ազգեր կամ ժողովուրդներ յա-

ռաջ բերած է. ինչպէս՝ Հայերը, Գաղղիացիք, Անգղիացիք, եայլն:

Քիչ քաղաքակրթեալ մարդոց միութիւնը խումբեր կը կազմեն, որոնք ընդհանրապէս հաստատուն բնակութիւններ չունին, ինչպէս Քիւրտերը, Գնչուտ-ները, եայլն:

Վայրենի մարդիկ որ ամէն տեսակ ճարտարութենէ զուրկ են, առանձին ընտանիք կը ձեւացնեն, և բնակութիւննին աստանդական է:

93. Ազգերը և ժողովուրդները երեք տեսակ գլխաւոր աշխատութիւն ունին, Արհեստ, Գիտութիւն եւ Վաճառականութիւն:

Թափառական խումբերուն և առանձնական ընտանեաց աշխատութիւնն է որսորդութիւն, ձկնորսութիւն եւ խաշնարածութիւն. բայց կան նաև ասոնց մէջ, որ դժբաղդաբար ասպատակութեամբ կապրին:

94. Քաղաքակրթեալ ազգերը քարէ, աղիւսէ և փայտէ շինուած հաստատուն տանց մէջ կը բնակին: Շատ մը տուներ ի միասին Քաղաք կըսուի, պզտի քաղաքը՝ Աւան, պզտի աւանը՝ Գիւղ, և պզտի գիւղն ալ Շէն կըսուի: Քաղաքը երբոր բերդ ունի, Բերդաքաղաք կըսուի. քաղաքին բերդէն դուրս եղած մասը իր Արուարձանը կըսուի: Քանի մը քաղաք իրենց աւաններով և գիւղերովը Գաւառ կըսուի: Եւ քանի մը գաւառ ի միասին, որ մէկ փոխարքայի մը կառավարութեան յանձնուած է, Նահանգ կըսուի: Աշխարհ կամ Տէրութիւն կըսուի

միևնոյն կառավարութեան տակ եղած երկիրը: **Մայրաքաղաք** կըսուի ուր Թագաւոր կը բնակի, **գլխաւոր քաղաք** կըսուի ուր Նահանգի մը փոխարքան կը բնակի:

Վայրենի խումբերը հողէ, ճիւղերէ, տերևներէ և եղեգներէ շինուած ողորմելի **խրճիթներու** կամ **հիւղերու** և երբեմն ալ **անձաւներու** մէջ կը բնակին: Եւ շատ անգամ ալ կենդանեաց մորթերով կամ հաստը կտաւով ցիցերու վրայ հաստատուած **վրաններու** մէջ կը բնակին:

95. Որովհետև ընկերութեանց մէջ կարգ մը պէտք է, իւրաքանչիւր ժողովուրդ **կառավարութիւն** հաստատած է, որ երեք տեսակ կըլլայ.

Ա. Միապետութիւն, որ միայն մէկ մարդ մը կը կառավարէ, ամէն իշխանութիւնն և օրէնք իր ձեռքն է, որուն կըսուի **Թագաւոր**, **Ինքնակալ**, **Կայսր**. ասի **ազատ միապետութիւն** է: Իսկ երբոր Թագաւորը հաստատեալ օրինաց համեմատ կառավարելու պարտական ըլլայ, անատեն կըսուի **Սահմանադրական կառավարութիւն** կամ **չափաւորեալ միապետութիւն**:

Բ. Ազնուապետութիւն, որ երկրին ազնուականներէն կազմուած ժողովքով մը կը կառավարուի հաստատեալ օրինաց համեմատ:

Գ. Հասարակապետութիւն, որ հասարակութենէն ընտրուած ժողովքով մը կը կառավարուի, ժողովրդէն սահմանեալ օրինաց համեմատ: Ժողովքին գլուխը **Նախագահ** կըսուի:

96. Բոլոր աշխարհք առհասարակ կը հաւատան որ այս տիեզերքին ստեղծումը և կառավարութիւնը գերագոյն կարողութեան մը գործ է, բայց ամենը այս գերագոյն կարողութեան վրայ միևնոյն գաղափարը չունին, և անոր պարտուպատշաճ յարգանքը միօրինակ կերպով չեն կատարեր. ուրկէ զանազան կրօններ յառաջ եկած է: Գլխաւոր երկու կրօնք կայ միաստուածեանք և բազմաստուածեանք:

Ա. Միաստուածեան կրօններն են Քրիստոնէութիւն, Հրէութիւն, Մահմետականութիւն, Պրահմանեան, Պուտեան կրօնները:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ Յիսուսի Քրիստոսի յայտնութեամբը եղած կրօնն է, իր ճշմարտութիւնը բոլորովին երկնային և ամենակատարեալ բարոյականութիւնը ու երջանկութիւնը միայն այս կրօնին մէջ ըլլալով, իրեն հետևող ամէն ժողովուրդ քաղաքակրթութեան և յառաջադիմութեան բարձրագոյն աստիճանը հասած են: Քրիստոնէութիւնը բոլոր լուսաւորեալ ժողովրդոց մէջ տարածուած է, այսօր աշխարհիս բնակչաց երրորդ մասը քրիստոնեայ է:

Քրիստոնէութիւնը իր մէջ երեք մեծ ճիւղ ունի, որք են

1°. Արևելեան եկեղեցի, որ է Մեր, Յունաց և Ռուսաց եկեղեցին և իրենց հետևող ազգաց եկեղեցիները: Այս եկեղեցին ամենէն հին է:

2°. Արևմտեան եկեղեցի, որ է Հռովմէական

եկեղեցի, որուն հոգևոր գլուխն է Հռոմի Պապը:

3°. **Բողոքականութիւն**, *որ շատ տեսակներու կը բաժնուի, որոց գլխաւորներն են* **Լուտերականութիւն** *կամ* **Աւետարանական եկեղեցի**, **Կալվինականութիւն** *կամ* **Նորոգեալ եկեղեցի**, **Անգղիական եկեղեցի** *կամ* **Եպիսկոպոսականութիւն**: *Տակաւին անթիւ տեսակ բողոքականներ կան, ինչպէս՝* **Երիցականք**, **Պարզակրօնք**, **Անկախք** *կամ* **Ժողովականք**, **Գուաքր** *կամ* **Երերականք**, **Միանձնականք** *կամ* **Սոկինեանք**, **Կրկնակնունք**, **Մորավեան եղբարք**, *ևայլն:*

Հրէութիւն. *Հրէից կրօնքն է, որոնք բոլոր աշխարհ ցրուած են և մինչև այսօր կը պահեն Մովսիսական հին օրէնքը: Հրեայք ալ քանի մը տեսակ են, Գարայիմք, Թալմուտականք, Հռեբբեանք:*

Մահմէտականութիւն, *որունհետևողները Արաբացի Մահմէտը իբրև Աստուծմէ ղրկուած մարգարէ կնդունին, որ հին և նոր կտակարանները աղճատելով նոր օրինաց գիրք մը հնարած է, որուն* **Գուրան** *կըսեն: Մահմետականք երկու գլխաւոր ճիւղի կը բաժնուին:*

1°. **Սիւննի**, *որուն հետևողները Գուրանէն զատ* **Սիւննա** *ըսուած աւանդական գիրք մ՚ալ կընդունին:*

2°. **Շիիք** *կամ* **աշակերտք Ալիի**, *որ կը մերժեն Սիւննան:*

Մահմէտական կը համարուին նաև Տիւրզիները, Վահապիները, Եզիտիները, ևայլն:

Պրահմականք, *որ շատ մը տարբակարգեալ աս-*

տուածներու պատիւ կընեն, այսու ամենայնիւ գերագոյն էակի մը գոյութիւնը կընդունին :

Պուտեանք, որ Պրահմաններուն օրինաց գրեթէ շատ կը նմանի, շատ տեղ տարածուած է, և շատ ճիւղերու կը բաժնուի. մէկը՝ գլուխ ունի **Տալայի—Լամա**, որ ըմբռնելով թէ սրբացեալ քահանայ մըն է Աստուծոյ պէս, կըսեն թէ երբէք չի մեռնիր, միւսը՝ Պուտհային **Սօմօնօքօտամ** կըսէ, և ուրիշ մը՝ Չինի մէջ **Ֆօ** ի կրօնք կըսուի: **Շամանիզմ** որ Ասիոյ քանի մը մասերու մէջ տարածուած է, և **Սինթօի** կրօնքը, որուն կը հետևին Ճաբօնցիք: Ասոնց կրնանք յարել նաև Հնդկաստանի **Սէիքի** կրօնքը, և Չինաստանի **Կոնֆիւկիուսի** կրօնքը. որոնք ամենակարող էակի մը երկրպագութիւն կընեն :

Բազմաստուածեանք կամ **Հեթանոսութիւն**, որ ՔՐԻՍՏՈՍԻ մարդեղութենէն առաջ հիներէն ծանօթ բոլոր երկիրներուն մէջ կը պաշտուէր, հիմա գրեթէ անհետացած է բոլոր քաղաքակրթեալ երկիրներէն :

Կռապաշտութիւն, ամենէն աւելի անհեթեթ կրօնքն է, որ շատ աստուածներ կընդունին նիւթական ձևերով: **Կուռք** կըսուին այն ամէն կենդանի և անկենդան առարկաները, որոց երկրպագութիւն կընեն սնապաշտ ժողովուրդները : Կռապաշտութիւնը տարածուած է զանազան ձևերով շատ ժողովրդոց մէջ, որոնք տակաւին վայրենութեան կամ խորունկ տը-գիտութեան մէջ կը գտնուին :

97. Մարդկային ընկերութեան գլխաւոր կայն

է լեզուն: Նախնական լեզուն, *որ* Հայերէնը *եղած ըլլալուն շատ ապացոյցներ ալ ունինք, մինչեւ Բաբելոնի աշտարակաշինութեան ատեն միակ լեզու էր, անկէ ետքը լեզուաց խառնակութիւն ըլլալով մինչեւ հիմա աշխարհիս մէջ բոլորովին իրարու աննման* 2000 *լեզու կայ, բայց* 8000*էն աւելի խօսուած լեզուներ կան, որոնք իրարու քիչ շատ նմանութիւն ունին: Հիմակուան գործածական լեզուներն են,*

Հայերէն, Չինէրէն, Արաբերէն, Թուրքերէն, Պարսկերէն, Եբրայեցերէն, Սանսքրիտ, Գերմաներէն, Անգղիարէն, Գաղղիարէն, Սպանիօլերէն, Լուսիտաներէն, Լատիներէն, Իտալերէն, Յունարէն, Ռուսերէն, Մալայերէն:

Լեզուները գլխաւորապէս երկուքի կը բաժնուին, մայր լեզու, երկրորդական լեզու: *Մայր լեզուները հին լեզուներն են և հիմա ընդհանրապէս միայն նախնի մատենագրաց մէջ կը գտնուին: Երկրորդական լեզուները արդի գործածական լեզուներն են, որ մայր լեզուներէն ելած են:*

ՀԱՐՑՄՈՒՆՔ

91. Ինչ՞ է մարդս. մարդ ամէն կլիմայի տակ կրնա՞յ բնակիլ, բոլոր աշխարհիս վրայ ո՞րչափ մարդ կայ. աշխարհիս ամէն կողմը մարդս բոլորովին նոյն ձեւն ունի՞ն: Մարդիկ գլխաւոր քանի՞ ցեղի կը

բաժնուին: Կովկասեան ցեղը ո՛ր տեղի ժողովուրդ են. ի՞նչ գլխաւոր յատկութիւններ ունին: Սպիտակ ցեղին հանճարն ի՞նչպէս է: Դեղին ցեղը ո՛ւր կը բնակի. ի՞նչ նշաններ եւ յատկութիւններ ունի. այս ցեղին հանճարն ի՞նչպէս է:

Սեւ ցեղը ո՛ր տեղի ժողովուրդ են. ի՞նչ նշաններ եւ յատկութիւններ ունի:

Այս երեք գլխաւոր ցեղերէն զատ ուրիշներ ալ կա՞ն:

92. Մարդիկ քանի՞ կերպ ընկերութիւն ունին:

93. Մարդոց աշխատութիւնը ի՞նչ է:

94. Քաղաք, աւան, գիւղ, շէն, արուարձան, գաւառ, նահանգ, տէրութիւն, մայրաքաղաք, գլխաւոր քաղաք ըսելով ի՞նչ կը հասկցուի:

95. Կառավարութիւնն ի՞նչ է. քանի՞ տեսակ կառավարութիւն կայ:

Ի՞նչ է միապետութիւնը. քանի՞ տեսակ է:

Ի՞նչ է ազնուապետութիւնը. ի՞նչ է հասարակապետութիւնը:

96. Կրօնքն ի՞նչ է: Քանի՞ գլխաւոր կրօնք կայ: Միաստուածեան կրօններն ո՛րն են: Քրիստոնէութիւնը որո՛ւ ձեռքով հաստատուած է: Ի՞նչպէս է այս կրօնը, ո՛րչափ հետեւող ունի, քանի՞ ճիւղի կը բաժնուի:

Արեւելեան եկեղեցին ո՛րն է: Արեւմտեան եկեղեցին ո՛րն է: Բողոքականութիւնը ի՞նչ է. քանի՞ տեսակի կը բաժնուի. ասոնց գլխաւորներն ո՛րն են:

Հրէութիւնն ի՞նչ է. քանի՞ տեսակի կը բաժնուի:

Մահմէտականութիւնն ի՞նչ է. քանի՞ տեսակի կը բաժնուի:

Պրահմանեան, Պուտեան եւ ուրիշ կրօններն ի՞նչ են:

Բազմաստուածեան կրօնը ո՞րն է. կռապաշտութիւնը ի՞նչ է:

97. Լեզուն ի՞նչ է. իրարմէ տարբեր քանի՞ լեզու կայ. մինչեւ երբ մէկ լեզուով կը խօսուէր, եւ այդ նախնի լեզուն ո՞րն էր. հիմակուան գործածական լեզուները քանի՞ հատ են եւ ո՞րն են: Լեզուները գլխաւորապէս քանի՞ բաժանում ունին. ո՞ր լեզուաց մայր լեզու կըսուի, եւ ո՞րոնց երկրորդական:

2°. *Կենդանիք, Հանք եւ Բոյսք*

98. *Երկրիս բնակիչները միայն մարդիկ չեն, Երկիրս ունի շատ տեսակ կենդանիներ, որոնք իրենց ձեւովը կազմութեամբը իրարմէ կը զանազանին, կան որ միայն ցամաքին վրայ կապրին, կան որ միայն ծովուն մէջ և կան որ միայն օդին մէջ: Կարգ մը կենդանիները երկրիս ամէն գօտիներուն մէջ ալ կապրին, ինչպէս՝ ընտանի չորքոտանիները, շուն, կատու, ոչխար, այծ, կով, ձի, խոզ: Վայրի մեծ կենդանիներէն գայլ, արջ, արծիւ, անգղ, որ լերանց բարձր շղթաներու մէջ կը գտնուին:*

Վահանաձուկ (փիսի), *լեզուաձուկ և ուրիշ մար-*

դուս սննդարար շատ մը ձուկեր ամէն ծովի մէջ կը գտնուին: Անուշ ջրի ձուկերն ալ ամէն տեղ կան:

Ցրտային գօտիներուն մէջ ապրող կենդանիներն են սպիտակ արջ, եղջերու, աղուէս, աքիս, սպիտակ աքիս, կուղբ, և ընդհանրապէս բոլոր մուշտակ ունեցող կենդանիները հիւսիսային կողմը կը գտնուին մեծ անտառներով երկիրներուն մէջ և հետևապէս քիչ Թուով:

Սառուցեալ ծովերուն մէջ կը գտնուի կէտ և քանի մը մեծ ձուկեր: Հիւսիսային սառուցեալ ծովուն մէջ ամէն տարի Եւրոպայի, Միացեալ Նահանգներուն և Քամչաթքայի եզերքներուն վրայ անհամար խումբերով կը գտնուի ռինկա ձուկը:

Բարեխառն գօտիներուն յատուկ քիչ կենդանի կայ, ի բաց առեալ այն չորքոտանիները, ինչպէս՝ շուն, ձի, էշ, կով, ոչխար, որ մարդոց գաղթականութեանց հետ ամէն տեղ գացած են: Այս երկիրներուն մէջ քիչ կը գտնուին վնասակար մսակեր կենդանիներէն, արջ, գայլ, արծիւ միայն ատոնք գրեթէ զարհուրելի կերևան հոս: Տկար և անմեղ կենդանիները անթիւ են. ճագար, նապաստակ, եղջերու, շատ տեսակ Թռչուններ կան բաց ի ճանապարհորդ Թռչուններէն, որ ամէն տարի հոս կուգան հարաւէն դէպ ի հիւսիս:

Աւելի տաք երկիրներուն մէջ բնութիւնը ցամաքային զարհուրելի կենդանիներ յառաջ բերած է, առիւծ, վագր, յովազ, բորենի, օձեր, կոկորդիլոսներ: Հոս նաև կայ աւելի մեծ և աւելի գօ-

բուռը, բայց հեզ հանդարտ Թռչուններ և չորքոտանիներ, ինչպէս՝ ջայլամն, գանկուռ, պասկուճ, փիղ, ռնգեղջիւր, ձիագետի, ընձուղտ, վերջապէս ուղտ, որ բարեխառն գօտիին ամէն երկիրներուն մէջ ալ ընտանեցած է: Տաք կլիմաներուն մէջ կը գտնուին նաև աւելի փայլուն ճճիներ և աւելի փառաւոր փետուր ունեցող Թռչուններ, ինչպէս՝ պապկայ, արօրիղոս, դրախտահաւ, ևայլն:

ՂԹ. Բոյսերը ամէն կլիմայի մէջ հաւասարապէս չեն աճիր, իւրաքանչիւր բոյս իրեն համար առանձին բարեխառնուԹեան աստիճան ունի:

Սառուցեալ գօտւոյն մէջ քիչ տեսակ բոյս կայ, առատուԹեամբ կը գտնուի հոս՝ մամուռ, լօռ, պատիչ, Թուփ, նաև քանի մը ծառեր, ինչպէս՝ ցաքասի, ուռի, բայց միշտ կարճ կը մնան: Միայն Լաբոնիայի մէջ յառաջ կուգայ հաճար և ընդեղենք, և եղևինի անտառներ:

Բարեխառն գօտիին մէջ տարածուած են շոճ, եղևին, կուէնի մինչև ցրտային գօտիին սահմանները, անանկ որ դէպ ի հարաւ յառաջանալով կը գտնուի սփի, կաղնի, հացի ծառ, կնձնի, Թմբի, մայր, նոճի, ընկննի: Խնձորենիները կսկսին աճիլ 60° լայնուԹեան վրայ, կեռասենիները բևեռէն շատ հեռու կը բռնեն, ասկէ ետքը կուգան տանձի ծառերը, և միշտ մօտենալով արևադարձներուն, ասոնցմէ ետքը յաջորդաբար կը գտնուի սալորենի շագանակի ծառ, ընկուզի ծառ, որԹ, Թզենի, ձիԹենի, նարնջենի, որ մինչև այրեցեալ գօտին կը

տարածուի և ուրիշ պտղատու ծառերէն աւելի շատ տեղ բռնած է: Յորենի ամէն տեսակներ բոլոր բարեխառն գօտիին մէջ տարածուած են: Բը-րինձը և մորացորենը կը յորդեն հարաւին մէջ:

Այրեցեալ գօտիին մէջ կը տեսնուի աւելի սննդա-բար պտուղներու և ազնիւ ճաշակ ունեցող համեմնե-րու յառաջ գալը: Հոս բոյսերը աւելի զօրաւոր և փայլուն են, հոս ծառեր կը տեսնուի որ մեր կաղնի-ներուն երկու անգամէն աւելի բարձր են, որոնք այն-պէս ծաղիկներով կը զարդարուին, որ մեր շուշան-ներէն շատ գեղեցիկ են: Հոս կանի շաքարի եղեգը, խահվէն, արմաւենին, հացի ծառը, անագին պա-օպապը, կաղամբաւոր արմաւենին, հնդկանուշը, վանիլեան, կինամոմոնը, հնդիկ ընկոյզը, պղպեղը, եայլն:

Տարբեր լայնութեան աստիճանին նայելով բոյ-սերուն դասակարգութիւնը ամէն ատեն ճիշտ չէ. որովհետև այրեցեալ գօտիին մէջ իր դը-րիցը պատճառաւ այնպիսի զով տեղեր կան, ուր բարեխառն գօտիին բոյսերը կը հասնին. և նաև բարեխառն գօտիին մէջ այնպիսի տաք երկիրներ կան, ուր այրեցեալ գօտիին մէկ քանի բոյսերը և ծառերը կրնան յառաջ գալ:

100. Ցամաքը կազմող բոլոր նիւթերը երեք գլխաւոր կարգերու կը բաժնուին, 1°. հող և քար. 2°. մետաղք. 3°. այրելի հանքեր:

1°. Ցամաքին աւելի մեծ մասը կը կազմեն քա-րերը և հողերը, անոնց մէջ աւելի առատութեամբ

տարածուած են, կիր, գաճ, աւազ, կոպիճ, կաւ, կրանիթ, ուրկէ ձեւացած են լերանց մեծ շղթաներուն շարը:

Շատ քիչ կը գտնուի պորփիւր, վանակն, ակատ, ճենապակի հող, աղ, երկաթակուճ՝ որ հրաքուխներէն կը ձեւանայ:

Փոճազմ, երկնագոյն կամ կանանչ յարդագոյն թանկագին քարերը մասնաւորապէս Ասիոյ մէջ կը գտնուին:

Տպազիոն և ուրիշ հասարակաբար դեղին թանկագին քարերը գլխաւորապէս կը պատահին Ասիոյ հիւսիսակողմը և հարաւային Ամերիկայի մէջ:

Զմրուխտ, կանանչ քարեր, կը գտնուին յաճախ հարաւային Ամերիկայի մէջ:

Ասիան կը պատրաստէ նաև կարկէոն՝ որ կարմիր կամ վարդագոյն է, և շափիւղա՝ որ կապուտ գունով գեղեցիկ քար է:

2°. Մետաղներէն բլաթինը կամ լուսնոսկին ամէնէն ծանր և ամէնէն սուղն է, Ուրալ լեռներուն և հարաւային ամերիկայի մէջ կը գտնուի:

Ոսկին կը գտնուի մասնաւորապէս Ամերիկայի, Աւստրալիայի, Նոր Զէլանտի և Ափրիկէի մէջ. կը գոյանայ նաև Եւրոպայի, Ասիայի լերանց մեծ շղթաներուն շատերուն, և մանաւանդ Ուրալ լերանց մէջ:

Ամերիկան արծաթի հանքերու կողմանէ ամէնէն հարուստ է:

Պղինձ առատութեամբ կը գտնուի հիւսիսային և

միջին Եւրոպայի մէջ, Ուրալ լեռները, Ասիայի, հարաւային Ամերիկայի և Աւստրալիայի մէջ:

Սնդիկը միջին Եւրոպիոյ, Սպանիական Թերակղզիին և կրկին Ամերիկաներուն մէջ տարածուած է:

Երկաթը որ ճշմարտապէս մետաղներուն ամենէն օգտակարն է, աւելի առատութեամբ կը գտնուի, Եւրոպայի մէջ հարուստ երկաթի հանքեր աշխարհիս միւս մասերէն աւելի շատ կան:

Մագնիսը, տեսակ մը երկաթ է, որ Սքանտինաւեան Թերակղզիին և Ասիայի հիւսիսակողմը շատ կը գտնուի:

Անագը միջին Եւրոպայի մեծ Բրիտանիայի և Մալագա Թերակղզիին մէջ առատութեամբ կայ:

Կապարը բաւական տարածուած է շատ երկիրներու մէջ, մանաւանդ Եւրոպայի արեւմտեան և միջին ծայրերը:

Ձենքը միջին Եւրոպայի և մեծ Բրիտանիայի մէջ հասարակ է:

Անթիմոնի կամ ծարրաքարը, զառիկը կենդրոնական Եւրոպայի մէջ առատութեամբ կայ:

3° Այրելի մետաղներէն ծծումբը հրաբխային երկիրներուն ինչպէս Սիկիլիայի և Իսլանտայի մէջ առատութեամբ կայ:

Ադամանդը միայն Հնդկաստանի, Պօրնէօյ կղզիին և Պրազիլի մէջ կը գտնուի:

Կուպրը երկու տեսակ նիւթ կը պարունակէ, մէկն է քարաձիւթ, որ դեղին կամ Թուխ աղբիւրի պէս երկիրէս կելլէ, միւսը նաւթ որ կարծր և սեւ է:

Շատ կուպր կայ հարաւային Եւրոպայի և արևմըտեան Ասիոյ մէջ:

Հանքածուխը կը գտնուի ամէն երկրի մէջ մանաւանդ Եւրոպայի արևմտեան հիւսիսային լեռնադաշտերուն մէջ:

Կիզահողը, որ տունկերուն մնացորդներէն ձևացած է, ճախճախուտ երկիրներու մէջ առատութեամբ կայ:

Դեղին յամպերը աւելի Պալթիկ ծովուն հարաւակողմը տարածուած է:

ՀԱՐՑՄՈՒՆՔ

98. Որո՞նք են այն գլխաւոր չորքոտանիները, որ ամէն կլիմայի մէջ ալ կը գտնուին: Ցրտային գօտւոյն մէջ ապրող կենդանիներն որո՞նք են: Բարեխառն գօտւոյն յատուկ եղած կենդանիներն որո՞նք են: Այրեցեալ գօտիին մէջ ապրող կենդանիներն որո՞նք են:

99. Սառուցեալ գօտւոյն մէջ ո՞ր տեսակ բոյսերը կանին: Բարեխառն գօտւոյն մէջ ո՞ր տեսակ բոյսերը կը գտնուին: Այրեցեալ գօտւոյն մէջ ո՞ր բոյսերը յառաջ կուգան:

100. Ցամաքը կազմող նիւթերը քանի՞ տեսակ են: Քար եւ հող գտնուած ցամաքի բաժանմանը

մէջ ո՛ր մետաղները հասարակաբար կը գտնուի ։ տպազիոն, զմրուխտ, կարկեհան, շափիւղա ո՛ւր կը գտնուին ։

Բլաթին, ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, եւայլն մետաղները առատութեամբ ո՛ւր կը գտնուին։

Ծծումբը ո՛ւր կը գտնուի, ադամանդը ո՛ւր շատ կայ ։ Կուպրը, հանքածուխը, կիզահողը, դեղին յամպերը ո՛ւր կը գտնուին ։

ՄԱՍՆ Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

—

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

101. *Քաղաքական Աշխարհագրութիւնը կը սորվեցնէ երկրիս քաղաքական բաժանմունքը բազմամարդութիւնը, ու վրայի այլ եւայլ տեղերուն դիրքըն ու անունը :*

102. *Երկիրս հինգ գլխաւոր մասերու կը բաժնուի.*

	Բնակիչ	Տարած. քիլօմէթր քառ.
Եւրոպա, ունի	290,000,000,	10,000,000,
Ասիա, »	700,000,000,	42,000,000,
Ափրիկէ, »	100,000,000,	30,000,000,
Ամերիկա, »	75,000,000,	40,000,000,
Ովկիանիա »	35,000,000,	10,000,000,
	1,200,000,000,	132,000,000,

Բոլոր երկրիս վրայ 1200 միլիոն բնակիչ կայ, և իր ցամաքի մասին տարածութիւնն է 132 միլիոն քառակուսի քիլօմէթր :

103. *Եւրոպան, Ասիան և Ափրիկէն* հին աշխարհ *և Ամերիկան ու Ովկիանիան* նոր աշխարհ *կըսուի :*

Ա.

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ

—

Ա. ԵՒՐՈՊԱ

104. *Եւրոպան կը բաժնուի 16 գլխաւոր աշխարհներու կամ տէրութիւններու, որոնց 4ը հիւսիսային կողմն է, 7ը մէջ տեղուանքը և 5ը հարաւային կողմը :*

105. *Հիւսիսային 4 աշխարհներն են .*

1°. *Մեծ Բրիտանիա*, *մայրաքաղաքը* Լոնտրա, *գլխաւոր քաղաքները* Մանչէսթըր, Լիվրբուլ, Եորք, Եւայլն:

2°. *Տանիմարքա*, *մայրաքաղաք Քոբէնհակ*:

3°. *Շուէտ*, *մայրաքաղաք*. *Սթօքօլմ*. *գլխաւոր քաղաք* Քրիստիանիա:

4° *Ռուսաստան*. *մայրաքաղաք Ս. Փեթրսպուրկ*. *գլխ. քղք.* Մոսկուա, Ռիկա, Աստրախան, Օտեսսա:

Միջին 7 աշխարհներն են .

1°. *Գաղղիա* , *մայրաքաղաք Փարիզ*. *գլխաւոր քաղաք* Ամիէն, Լիոն, Մարսիլիա, Պօրտօ, Եւայլն:

2°. *Պելճիքա*. *մայրաքաղաք Բրուքսէլ*. *գլխաւոր քաղաք* Անվէրս, Կանտ, Պրիւժ, Լիէժ :

3°. *Հոլանտա* . *մայրաքաղաք Հայկա* . *գլխաւոր քաղաք* Ամստէրտամ, Ռոթէրտամ:

4°. *Զուիցցերիա*. *մայրաքաղաք Պեռնա*, *գլխաւոր քաղաք* Ճինէվրա , Պալ , Ցուրիխ :

5°. *Աւստրիա.* մայրաքաղաք *Վիեննա*, գլխաւոր քաղաք Բրակա, Թրիեսթէ, Վենետիկ, եւայլն:

6°. *Բռուսիա.* մայրաքաղաք *Պերլին.* գլխաւոր քաղաք Քօնիկսպերկ, Տանծիկ, Պրեսլաւ, եւայլն.

7°. *Գերմանական դաշնակցութիւն.* որուն երկրորդական տէրութեանց մայրաքաղաքներն են Համպուրկ, Հանովր, Տրեզտա, Ֆրանքֆօթ—Մայն գետին վրայ, Սթութկար և Մունիք:

Հարաւային հինգ աշխարհներն են.

1°. *Բորթուգալ.* մայրաքաղաք *Լիզպօն.* գլխաւոր քաղաք Օբորթօյ:

2°. *Սպանիա.* մայրաքաղաք *Մատրիտ.* գլխաւոր քաղաք Պարչելոնա, Սարակոսա, եւայլն:

3°. *Իտալիա.* մայրաքաղաք *Ֆիօրէնցա.* գլխաւոր քաղաք Հռովմայ, Թուրին, Նաբօլի եւայլն:

4°. *Տաճկաստան.* մայրաքաղաք *Կոստանդնուպօլիս.* գլխաւոր քաղաք Անդրիանուպօլիս, Կալիբօլի. Սելանիկ, Սօֆիա, Սիլիստրէ, եւայլն:

5°. *Յունաստան.* մայրաքաղաք *Աթէնք:*

106. *Եւրոպան ունի 15 ծով, որոց 3ը մեծ և 12ը փոքր են:*

Երեք մեծ ծովերն են

Սառուցեալ ովկիանոս *հիւսիսային կողմը:*

Ատլանտեան ովկիանոս *արեւմտեան կողմը:*

Միջերկրական ծով *հարաւային կողմը:*

Տասներկու փոքր ծովերն են՝

Սպիտակ ծով՝ *Սառուցեալ Ովկիանոսէն ձեւացած:*

Պալթիկ ծով, Հիւսիսային կամ Գերմանական ծով, Մանշ, Իռլանտայի ծով՝ *Ատլանտեան ովկիանոսէն ձեւացած*:

Ադրիական ծով, Յոնիական ծով, Արշիպեղագոս, Մարմարայի ծով, Սեւ ծով *և* Ազախու ծով՝ *Միջերկրական ծովէն ձեւացած*:

Կասպից ծով՝ *որ ուրիշ ծովերու հետ հաղորդակցութիւն չունի*:

107. *Եւրոպայի մէջ 16 գլխաւոր նեղուց կայ, որոց 9ը հիւսիսային կողմն է և 7ը հարաւային կողմը*:

Հիւսիսային 9 նեղուցներն են Վայկացի նեղուց՝ *Ռուսաստանի հիւսիսային կողմը*:

Սքակերրաք, Քաթէկաթ, Սունտ, Մեծ Պելթ, Փոքր Պելթ՝ *Պալթիկ և Հիւսիսային ծովերուն միջոցը*:

Բա տը Քալէ *կամ* Տուվրի նեղուց՝ *Անգղիոյ և Գաղղիոյ միջոցը*:

Հիւսիսային ջրանցք *և* Սուրբ Գէորգայ ջրանցք՝ *Իրլանտայի ծովուն և Ատլանտեան Ովկիանոսին միջոցը*,

Հարաւային 7 նեղուցներն են՝ Ճիպրալթարի նեղուց՝ *Ափրիկէի և Սպանիոյ մէջ տեղը*:

Պոնիֆաչիոյ նեղուց՝ *Քորսիքա և Սարտենիա կղզիներուն միջոցը*:

Մեսինայի նեղուց՝ *Իտալիայի հարաւային կողմը*:

Օրանթի ջրանցք՝ *Յոնիական և Ադրիական ծովերուն միջոցը*:

Չանաք քալէսի *կամ* Տարտանէլի *կամ* Կալիպօլիի նեղուց՝ *Արշիպեղագոսի և Մարմարայի ծովուն մէջ տեղը :*

Կոստանդնուպօլսոյ նեղուց *կամ* Պօսֆոր՝ *Մարմարայի և Սև ծովուն միջոցը :*

Այս երկու նեղուցները Ասիան կը զատեն Եւրոպայէն :

Եէնի քալէի *կամ* Կէրչի նեղուց՝ *Սև և Ազախու ծովերուն միջոցը:*

108. *Եւրոպայի մէջ 10 երևելի ծոցեր կան :* Պօթնեան, Ֆինլանտեան, Րիկայի կամ Լիվօնեայի ծոցք՝ *Պալթիկ ծովուն մէջ*. Զուիտէրզէյի ծոց՝ *Հիւսիսային ծովուն մէջ*. Կասքօնեան *կամ* Պիսքայի ծոց *կամ* Գասգոնյ ծով՝ *Ատլանտեան Ովկիանոսին մէջ*. Լիօնի *և* Ճենովայի ծոցք՝ *Միջերկրական ծովուն մէջ*. Թարենթի *և* Լէբանթի ծոցք՝ *Յոնիական ծովուն մէջ*. Սելանիկի ծոց՝ *Արշիպեղագոսին մէջ :*

109. *Եւրոպայի մէջ 62 գլխաւոր կղզի կամ կղզեաց խումբ կայ :*

5*ը Սառուցեալ Ովկիանոսին մէջ*՝ Սբիցպէրկ, Նոր-Զեմլա, Վայկաչ, Քալկույէֆ *կղզին և* Լօֆֆօտէն *կղզիները :*

14*ը Ովկիանոսին մէջ, որոց երեք մեծերն են* Իսլանտա, Մեծ Բրիտանիա, *և* Իրլանտա :

11 *փոքր կղզիներն են* Ֆէրօէր, Շէթլանտ, Օրկանեան, Հէբրիդեան, Ուէսան, Կռուա *կղզի-*

նէրը, Պէլ-Իլ, Նուարմութիէ, Իլ-Տիէօ, Ռէ և Օլէրօն կղզին:

11ը Պալթիկ ծովուն մէջ՝ Ալանտ, Տակօ, Էօզէլ, Կօթլանտ, Օլանտ, Պօռնհօլմ, Ռուկէն, Ֆալսթէր, Լալանտ, Զէլանտ և Ֆիօնիա:

3ը Հիւսիսային ծովուն մէջ՝ Սիլթ, Հէլկօլանտ, Թէքսէլ:

3ը Մանշի ծովուն մէջ՝ Ապիտակ, Կէրնէսէյ և Ժէրսէյ:

2ը Իրլանտայի ծովուն մէջ՝ Մէն և Էնկլիսի:

11ը Միջերկրական ծովուն մէջ, որոց 3 մեծերն են Քօռսիքա, Սարտէնիա և Սիկիլիա:

8ը փոքր կղզիներն են Ֆօռմանթէրա, Իվիցա, Մայօռքա, Մինօռքա, որոնք Պալէարեան կղզիք կըսուին, Իէռ, Էլպա, Լիպարեան կղզիները և Մալթա:

1ը Ադրիական ծովուն մէջ՝ Իլիրիէնեան կղզիք:

6ը Յոնիական ծովուն մէջ՝ Գօռֆու, Փաքսօ, Սանթա-Մաւրա, Թէաքի, Քէֆալօնիա և Զանթա:

6ը Արշիպեղագոսին մէջ՝ Լէմնօս, Սքիռօ, Էյրիպօզ կամ Նէկրէփօնթ, Կիւկղադայք, Սէրիկօ և Կրէտէ:

110. Եւրոպայի մէջ 6 գլխաւոր թերակղզի կայ, երեքը մեծ և երեքը փոքր:

3 մեծերն են Շուէտ՝ Ռուսի Լաբոնիայի հետ, Սպանիա՝ Փորթուգալի հետ, և Իտալիա:

3 փոքրերն են Եութլանտ՝ Տանիմարգայի մէջ,

Մոռա կամ Պեղոպոնես՛ Յունաստանի մէջ, Խրիմ՛ Ռուսաստանի մէջ:

111. Եւրոպայի մէջ 2 գլխաւոր պարանոց կայ. Կորնթոսի պարանոց՛ որ կը միացնէ Մոռան ցամաքին հետ, Բերեկոփի պարանոց՛ որ կը միացնէ Խրիմը Ռուսաստանի հետ:

112. Եւրոպայի մէջ 11 երեւելի հրուանդան կայ. Նօրտ-Քին՛ Շուէտի հիւսիսային կողմը, Միզեն՛ Իրլանտայի արեւմտեան հարաւային կողմը, Լենտս—Էնտ՛ մեծ Բրիտանիոյ արեւմտեան հարաւային կողմը, Ֆինիսդերրա՛ Սպանիոյ արեւմտեան կողմը, Սուրբ Վինչենցիոս՛ Փորթուգալի արեւմտեան հարաւային կողմը, Թրաֆալկար՛ Սպանիոյ հարաւակողմը, Քօրս՛ Քօրսիքա կղզին հիւսիսակողմը, Թեվլատա՛ Սարտենիայի հարաւային կողմը, Բասսարօ՛ Սիկիլիայի հարաւային կողմը, Սբարթիվենթօ՛ Իտալիայի հարաւային կողմը, Մաթափան՛ Մօրայի հարաւային կողմը:

113. Եւրոպայի մէջ 18 գլխաւոր լերանց գօտիներ կան, 9ը մեծ և 9ը փոքր:

9ը Մեծերն են Քէօլէն կամ Սքանտինավեան լեռինք՛ Շուէտի և Նորվէկիայի միջոցը, Ուրալ լեռինք Եւրոպիոյ և Ասիոյ միջոցը, Կովկաս՛ Սեւ և Կասպից ծովերուն միջոցը, Պալքան՛ Տաճկաստանի մէջ, Կարպաթ՛ Աւստրիոյ կայսերութեան մէջ. Ալպեան լեռինք՛ Իտալիոյ, Գաղղիոյ, Զուիցերիի և

Գերմանիոյ միջոցը, Ապեննենեան լերինք՝ Իտալիոյ մէջ, Բիրենեան լերինք՝ Գաղղիոյ և Սպանիոյ միջոցը, Իպերեան լերինք՝ Սպանիոյ մէջ:

9ը փոքրերն են Վօսժ, Սեվեն և Օվերնյը լեռները՝ Գաղղիոյ մէջ. Ժիւրա՝ Գաղղիոյ և Զուիցերիի միջոցը. Քանթապր, Սիեռա-Էսթրելլա, Սիեռա-Տ'Օսա, Սիեռա-Մօրէնա և Սիեռա-Նեվատա՝ Սպանիոյ մէջ:

114. Եւրոպայի մէջ 3 մեծ հրաբուխ կայ,
Հեգլա լեռը՝ Իսլանտայի մէջ.
Վեզուվ լեռը՝ Նափոլի քաղքին քով Իտալիոյ մէջ.
Էթնա լեռը՝ Սիկիլիայի մէջ:

115. Եւրոպայի մէջ 23 երևելի լիճ կայ, որոց 9ը հիւսիսային 7ը միջին և 7 ալ հարաւային աշխարհներուն մէջն են:

Հիւսիսային աշխարհաց մէջի 9ը լիճերն են. Վեներ, Վեթեր, Մելար՝ Շուէտի մէջ.

Սայմա, Լատոկա, Օնեկա, Պլանք կամ Պիելոյ, Իլմեն, Բեյփուս՝ Ռուսիայի մէջ:

Միջին աշխարհաց 7 լիճերն են Նէօֆշաթելի, Ժընեվրայի, Լուչերնայի և Ցուրիխի լիճերը՝ Զուիցերիի մէջ. Քօնստանս Զուիցերիի և Գերմանիոյ միջոցը. Նայզիտէլ և Պալաթոն՝ Աւստրիոյ մէջ:

Հարաւային աշխարհաց 7ը լիճերն են Մաժօրէ, Գոմոյ, Կարտա, Բերուզիա, Պօլսենա և Սելանօ՝ Իտալիոյ մէջ, Զանթա լիճը՝ Տաճկաստանի մէջ:

116. Եւրոպայի մէջ 36 գլխաւոր գետ կայ.

1ը Կը Թափի սպիտակ ծովը, որ է Տըվինա.

6ը Կը Թափի Պալթիկ ծովը, Թոռնէա, Նեվա, Տունա, Նիեմեն, Վիսթուլա, և Օտեր.

6ը Կը Թափի Հիւսիսային ծովը, Ելպա, Վեզեր, Ռէն, Մէօզ, Էսքօ, Թամիզ.

1ը Կը Թափի Մանշի ծովը, որ է Սէյն.

10ը Կը Թափի Ովկիանոս. Շէնըն, Սեվրըն, Լուար, Կարոն, Ատուր, Մինիօ, Տուրօ, Թակօ, Կուատիանա, Կուատալքիվիր.

4ը Միջերկրական ծովը, Էպրօ, Ռոն, Առնօ, Տիբերիս.

2ը Ադրիական ծովը, Բօ, Ատիճէ.

3ը Սեւ ծովը, Դանուբ, Տնիէսթէր, Տնիէբէր.

1ը Ազախու ծովը, որ է Տոն.

2ը Կասպից ծովը, Վոլկա, Ուրալ գետերը:

117. Եւրոպայի մէջ 30 գլխաւոր վտակ կայ.

Պուկ՝ որ կը Թափի Վիսթուլա գետը.

Վարդ՝ որ կը Թափի Օտեր գետը.

Աար, Նեքեր, Մէն, Մօզել՝ որ կը Թափին Ռէն գետը.

Սամպր՝ որ կը Թափի Մէօզ գետը.

Եօն, Մարն, Ուազ՝ որ կը Թափին Սէյն գետը.

Ալիէր, Շէր, Վիեն, Մայեն՝ որ կը Թափին Կարոն գետը:

Թարն, Լօ և Տօրտօնյը որ կը Թափին Կարոն գետը:

Սաօն, Իզեր, Տիւրանս՝ որ կը Թափին Ռոն գետը.

Թեզէն՝ որ կը Թափի Բօ գետը.

Իզմիր, Իմն, Տրավ, Սավ, Թէլիս, Բրութ՝ *որ կը Թափին Գանուբ գետը:*

Պերեձիմա, Բրիքեթ՝ *որ կը Թափին Տնիեբեր գետը:*

Քամա՝ *որ կը Թափի Վօլկա գետը:*

ՀԱՐՑՄՈՒՆՔ

101. Քաղաքական աշխարհագրութիւնը ինչ կը սորվեցնէ:

102. Երկիրս քանի գլխաւոր մասերու կը բաժնուի: Բոլոր երկրիս վրայ որչափ բնակիչ կայ, եւ որչափ տարածութիւն ունի:

103. Հին աշխարհը որն է, նոր աշխարհը որն է:

104. Եւրոպայի մէջ քանի տէրութիւն կայ: Ցցուր այս տէրութիւնները աշխարհացոյցին վրայ:

105. Հիւսիսային աշխարհները որն են, Ցցուր այս տէրութիւնները աշխարհացոյցին վրայ, եւ անոնց մայրաքաղաքները: Որն՞ է Ռուսիա, Տանիմարքա . . .

Ցցուր Փէթրսպուրկը, Քօբէնհակը . . . եւայլն:

Բրիտանիան կղզիներուն սահմանները ցցուր, Լոնտրա ուր կիյնայ:

Տանիմարքայի սահմանը որն է, Քոբէնհակ ուր կողմը կիյնայ:

Սթոքոլմ որ տէրութեան մայրաքաղաքն է, որ կողմը կիյնայ:

Միջին աշխարհները ո՞րն են, հարաւային աշխարհները ո՞րն են: Գաղղիոյ մայրաքաղաքը ըսէ եւ ցցո՛ւր տեղը աշխարհացոյցին վրայ . . . եւայլն:

106. Եւրոպայի գլխաւոր ծովերը ո՞րն են: Միջերկրական ծովէն ո՞ր փոքր ծովերը կը ձեւանան: Ատլանտեան ովկիանոսէն ո՞ր փոքր ծովերը կը ձեւանան:

Միջերկրական ծովը Ատլանտեան ովկիանոսին ո՞ր կողմն է:

Միջերկրական ծովը ո՞ր աշխարհներուն սահմանակից է:

Գաղղիոյ սահման եղող ծովերը ո՞րն են, եւայլն:

197. Եւրոպայի մէջ քանի՞ գլխաւոր նեղուց կայ:

Հիւսիսային նեղուցները ո՞րն են: Հարաւային նեղուցները ո՞րն են:

108. Եւրոպայի մէջ քանի՞ երեւելի ծոց կայ:

Պալթիկ ծովուն մէջի ծոցերը ո՞րն են: Հիւսիսային ծովուն մէջի ծոցերը ո՞րն են: Ատլանտեան ովկիանոսին եւ Միջերկրական ծովուն մէջի ծոցերը ո՞րն են:

109. Եւրոպայի մէջ քանի՞ երեւելի կղզի կայ:

Ցցո՛ւր այս կղզիները աշխարհացոյցին վրայ:

Միջերկրական ծովուն մէջի մեծ կղզիները ո՞րն են:

Եւրոպայի վերաբերեալ ամենէն մեծ կղզին ո՞րն է:

Պալէարեան կղզիները ո՞ւր կիյնան, քանի՞ հատ են:

110. Եւրոպայի մէջ քանի գլխաւոր թերակղզի կայ:

Ցցո́ւր աշխարհացոյցին վրայ:

111. Եւրոպայի մէջ քանի գլխաւոր պարանոց կայ:

112. Եւրոպայի մէջ քանի հրուանդան կայ, ըսէ անունները եւ ցցո́ւր աշխարհացոյցին վրայ:

113. Եւրոպայի մէջ քանի երեւելի լեռ կայ, ըսէ անունները եւ ցցո́ւր աշխարհացոյցին վրայ:

114. Եւրոպայի հրաբուխները ըսէ եւ ցցո́ւր աշխարհացոյցին վրայ:

115. Եւրոպայի լիճերը ըսէ եւ ցցո́ւր տեղերը:

116. Եւրոպայի մէջ քանի գլխաւոր գետ կայ, ըսէ անունները եւ ցցո́ւր տեղերը:

117. Եւրոպայի մէջ քանի գլխաւոր վտակ կայ:

Կարոն գետին մէջ թափող վտակները ո́րն են:

Դանուբ գետը թափող ջրերը ո́րն են:

Գծագրէ Եւրոպայի աշխարհացոյցը, նշանակէ տէրութիւնները եւ անոնց մայրաքաղաքները, գլխաւոր քաղաքները, ծովերը, ծոցերը, կղզիները, եւայլն:

Բ. ԱՍԻԱ

118. *Ասիան կը պարունակէ 11 գլխաւոր աշխարհներ, որոց 1ը հիւսիսային կողմը 5ը մէջ տեղուանքը և 5ը հարաւային կողմն է :*

Հիւսիսային 1 աշխարհն է Սիպէրիա կամ Ռուսի Ասիա, երեւելի քաղաքը Թօպօլսք :

Ասիոյ միջին 5 աշխարհներն են.

Հայաստան, գլխաւոր քաղաքներն են, Տաճկաց մասին մէջ՝ Կարին, Վան, Անի, Երզնկա, Խարբերդ, եւայլն. *Ռուսաց մասին մէջ՝* Երեւան. *Պարսից մասին մէջ՝* Դավրէժ, եւայլն.

Տաճկի Ասիա, գլխաւոր քաղաքները Զմիւռնիա, Բերիա, Դամասկոս, Երուսաղեմ, Պակտատ.

Թուրքաստան կամ անկախ թաթարք, գլխաւոր քաղաքը Պուխարա, Սմրղանտ և Խիվա.

Չին, մայրաքաղաքը Բեքին.

Ճաբոն, մայրաքաղաքը Եէտօ.

Ասիոյ հարաւային 5 աշխարհներն են.

Արաբիա, գլխաւոր քաղաքը Մէքքէ, Մէտինէ, Ճիտտէ.

Պարսկաստան, մայրաքաղաքը Թէհրան. *գլխաւոր քաղաքը* Ասպահան, Շիրազ, Համատան, եւն.

Աֆղանիստան, մայրաքաղաքը, Քապուլ, *գլխաւոր քաղաքը՝* Քանտահար, Հէրաթ.

Պէլուչիստան, մայրաքաղաքը Քէլաթ.

Հնդկաստան, գլխաւոր քաղաքը Կալկաթա, Մատրաս, Տէլհի, Բունահ, Քաշմիր, Ավա, Սայկոն, Պանքօք, Մալաքքա :

119. Ասիոյ եզերքը կը ծրջեն 13 ծովեր, որոց 4ը մեծ և 9ը փոքր են:

4 Մեծ ծովերն են, Սառուցեալ Ովկիանոս՝ հիւսիսէն, Միջերկրական ծով՝ արևմուտքէն, Հնդկաց ծով՝ հարաւէն, և Մեծ Ովկիանոս՝ արևելքէն.

9ը Փոքր ծովերն են. Կասպից ծով, Սեւ ծով, Մարմարա, Արշիպեղագոս՝ արևմուտքէն.

Չինաց ծով, Դեղին ծով, Ճաբոնի ծով, Օխոցքի ծով, Պէհրինկայի ծով՝ արևելքէն:

120. Ասիոյ մէջ ինը գլխաւոր նեղուց կայ.

Արևմուտքէն Կոստանդնուպօլսոյ և Չանաք գալէսիի նեղուցները, Տաճկի Եւրոպային և Տաճկի Ասիային միջոցը.

Հարաւէն՝ Պապ իլ մանտէպի նեղուցը, Արաբիոյ և Ափրիկէի միջոցը.

Օրմուզի նեղուցը, Արաբիոյ և Պարսկաստանի միջոցը. Բալքի նեղուցը, Հնդկաստանի հարաւային կողմը. Մալաքքայի նեղուցը, Հնդկա-Չինի հարաւային կողմը.

Արևելքէն՝ Քորէայի նեղուցը, Ճաբոնի և Չինի միջոցը.

Սնգէ Թաթարաց, Զօրա կղզիին և Ռուսի Ասիային միջոցը.

Պէհրինկայի նեղուցը, Ասիոյ և Ամերիկայի միջոցը:

121. Ասիոյ մէջ 10 գլխաւոր ծոցեր կան, այսինքն,

Հարաւային կողմը՝ Արաբիոյ ծոցը կամ Կարմիր ծովը .

Պարսից ծոցը, Օմանի ծոցը, Պէնկալայի ծոցը՝ Հնդկաց ծովէն ձեւացած .

Արեւելեան կողմը՝ Սիամի ծոցը, Թոնքինի ծոցը՝ Չինաց ծովէն ձեւացած. Բէչիլի ծոցը՝ դեղին ծովէն ձեւացած. Քամչաթքայի ծոցը՝ Օխոցքի ծովէն ձեւացած. Անատիրի ծոցը՝ Պեհրինկայի ծովէն ձեւացած .

Հիւսիսային կողմը՝ Օպիի ծոցը, Սառուցեալ ովկիանոսէն ձեւացած :

122. *Ասիոյ մէջ 19 երեւելի կղզի կամ կղզեաց խումբեր կան, այսինքն,*

3ը *Միջերկրական ծովուն մէջ*, Սքօրաս *կղզիները*, Ռոտոս *և* Կիպրոս .

1ը *Պարսից ծոցին մէջ*, *որ է* Պահրէյն *կղզիները*:

6ը *Հնդկաց ծովուն մէջ*, Պօմպայ, Լաքիտիվեանք, Մալտիվեանք, Սէյլան, Անտաման *կղզիք և* Նիքոպար *կղզիք*.

3ը *Չինաց ծովուն մէջ*, Հայնան, Հօնկ-Քօնկ *և* Մաքաօ.

5ը *Մեծ Ովկիանոսին մէջ*, Ֆորմօզա, Լիէու-Քիէու, Ճաբոնի *կղզիք*, Զօքա *կամ* Թարաքայի *կղզին*, Քուրիլեան *կղզիք*.

1ը *Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսին մէջ*, Լիաքօֆ *կամ նոր* Սիպերիա :

123. *Ասիոյ մէջ 8 Թերակղզի կայ, որոց 4ը մեծ և 4ը պզտիկ են: 4 մեծերն են*, Անաթօլի՝

Տաճկաստանի մէջ, Արաբիա, Հարաւային Հընդկաստան, և Հնդկա-Չին:

4 Գզտիկներն են, Կիւզարաթ՝ Հնդկաստանի արևմտեան կողմը.

Մալաքքայի Թերակղզին՝ Հնդկա-Չինի հարաւային կողմը, Քորէա՝ Չինի արևմտեան կողմը, Քամչաթքա՝ Սիպերիոյ արևելեան կողմը:

124. Ասիոյ 7 գլխաւոր հրուանդաններն են, Պապապուռնու՝ Տաճկի Ասիոյ արևմտեան կողմը. Պապ-իւլ-Մանտէպ, Ռազալհաթ՝ Արաբիոյ հարաւային կողմը. Քումորին հրուանդանը՝ Հնդկաստանի հարաւային կողմը. Ռոմանիա՝ Մալաքքա Թերակղզոյն հարաւային կողմը. Արեւելեան գլուխ՝ Սիպերիոյ արևելեան կողմը. Գլուխ հիւսիսային՝ նոյն աշխարհին հիւսիսային կողմը:

125. Ասիոյ մէջ 13 գլխաւոր լեռ կամ լերանց գօտիներ կան.

Արարատ կամ Մասիս՝ Հայաստանի մէջ. Տորոս և Լիբանան՝ Տաճկաստանի մէջ. Կովկաս՝ Սև ծովուն և Կասպից ծովուն միջոցը.

Ուրալ լերինք՝ Ռուսի Եւրոպիոյ և Սիպերիոյ միջոցը.

Ալթա՝ Սիպերիոյ և Չինի կայսերութեան միջոցը:

Պոլոր լերինք՝ Թուրքաստանի և Չինու կայսերութեան միջոցը.

Սունկլինկ, Կատժար լերինք՝ Չինի կայսերութեան մէջ.

Հիմալայա լերինք՝ Չինու կայսրութեան և Հնդկաստանի միջոցը.

Էլվանտ լերինք՝ Տաճկի Ասիոյ և Պարսկաստանի միջոցը.

Էլ ատէս լերինք՝ Արաբիոյ մէջ.

Կաղ լերինք՝ Հնդկաստանի մէջ:

126. Ասիոյ մէջ 13 գլխաւոր լիճեր կան,

Զանի, Պալքաշի և Պայքալ լճերը՝ Սիպերիոյ մէջ:

Վանայ ծովը, Սեւանայ լիճը և Ուրմեայ լիճը Հայաստանի մէջ.

Ասֆալթիթ լիճը կամ Մեռեալ ծովը՝ Ասիոյ Տաճկաստանի մէջ.

Արալ լիճը՝ Թուրքաստանի մէջ.

Սայսան, Խուխունուր, Բայքէ և Թունկ-Թինկ լիճերը՝ Չինաց կայսրութեան մէջ.

Սէրրէն լիճը՝ Աֆղանիստանի մէջ:

127. Ասիոյ մէջ 21 գլխաւոր գետ կը համրուի,

Օպի, Եէնիսէյ, և Լէնա, Սառուցեալ ովկիանոսը կը թափին. Ամուր՝ Օխոցքի ծովը կը թափի.

Հօանկ-Հօ և Քիանկ՝ Դեղին ծովը. Մէյ-Քոնկ և Մէյ-Նամ՝ Չինաց ծովը: Սալուէն, Իրաւատտի, Պրահմապուտրա, Գանգէս, Կօտավէրի, և Քիստնահ՝ Պենկալայի ծովը կը թափին.

Սինտ կամ Ինդոս՝ Օմանի ծոցը կը թափի.

Շաթ-Էլ-Արապ, որ Տիգրիս և Եփրատ գետերէն կը ձեւանայ և կը թափի Պարսից ծոցը.

Երասխ կամ Արաքս որ Հայաստանէն կը բղխի և արևելք ընթանալէն ետքը Կուր գետոյն միանալով Կասպից ծովը կը թափի.

Ճորոխ, Ալիս կամ Գըզըլ Իրմագ՝ Սև ծովը.

Սիհուն և Ջիհուն՝ Արալ լիճը:

128. Ասիոյ մէջ 8 գլխաւոր գետակներ կան.

Թօպոլ և Իրթիշ՝ Օպի գետը կը թափին.

Անկարա՝ Ենիսէյ գետը կը թափի.

Ջեմնա՝ Գանգես գետը կը թափի.

Բենճապ՝ Սինտ գետը կը թափի:

Տիգրիս և Եփրատ, որ Շաթ-Էլ-Արապը կը ձևացնեն.

Ախուրեան գետակ կամ Արփա չայը, որ Անի քաղաքին քովէն անցնելով Երասխ գետը կը թափի:

Գ. ԱՓՐԻԿԷ

129. Ափրիկէն կը բաժնուի 19 աշխարհներու, որոց 3ը հիւսիսային կողմը, 7ը մէջ տեղուանքը և 9ը հարաւային կողմն են:

Ափրիկէի հիւսիսային 3 աշխարհներն են.

Պարպարիա, գլխաւոր քաղաք՝ Մարօք, Ալճէրի, Դունուզ և Դրիբոլի.

Եգիպտոս, մայրաքաղաք՝ Գահիրէ կամ Միսըր, գլխաւոր քաղաք Աղեքսանդրիա կամ Իսքէնտէրիէ.

Սահարա կամ Մեծ անապատ.

7ը Միջին աշխարհներն են.

Սենեկամբիա, գլխաւոր քաղաք Սէնթ-Լուի, Պամպուք և Թիմպօ.

Գուինէա Հիւսիսային, գլխաւոր քաղաք՝ Քումասի, Աբոմէյ, Դենդի և Քաթունկա.

Նիգրիտիա կամ Սուտան, գլխաւոր քաղաք՝ Սեկոյ, Թոմպուքթու, Սաքաթու, Նոր-Պիռնի կամ Պուռնու և Քուքաէ.

Նուպիա, գլխաւոր քաղաք՝ Տոնկոլա, և Սեննար.

Եթովպիա կամ Աբիսինիա, գլխաւոր քաղաք՝ Կոնտար.

Ադէլ, գլխաւոր քաղաք՝ Զէյլա, Բարպերա և Օսսաքիւրէլ.

Այան.

Իր Հարաւային աշխարհներն են.

Գուինէա Հարաւային. գլխաւոր քաղաք՝ Սան-Սալվատոր.

Հոտենթոտաց երկիրը.

Կառավարութիւն գլուխ Բարեյուսոյի. մայրաքաղաք՝ Գլուխ-Բարեյուսոյ կամ Քապ.

Քաֆրաստան. Մոնոմոդափա կամ Սոֆալա, գլխաւոր քաղաք՝ Սոֆալա.

Մոզամպիգ, գլխաւոր քաղաք՝ Մոզամպիք, Մեզիւրէլ և Շիֆօլա.

Զանկեպար, գլխաւոր քաղաք՝ Մելինտա.

Ափրիկէի ներսերը ընդարձակ աշխարհ մը, որ անծանօթ է.

Մատակասքար կղզին, գլխաւոր քաղաք՝ Թանանարիվու և Թամաթավ:

130. Ափրիկէի եզերքը 4 ծովերէ կը թրջի, որ

են, Միջերկրական՝ հիւսիսային կողմը. Ատլանտեան ովկիանոս՝ արեւմտեան կողմը, Մեծ ովկիանոս՝ հարաւային կողմը, Հնդկաց ծով, արեւելեան կողմը:

131. Ափրիկէն 4 գլխաւոր ծոց ունի, Սիրթի եւ Գապէսի ծոցերը՝ Միջերկրականի մէջ.

Կուինեայի ծոցը՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ.

Արաբիոյ ծոցը կամ Կարմիր ծովը՝ Հնդկաց ծովուն մէջ:

132. Ափրիկէի մէջ 13 կղզի կամ կղզեաց խումբ կը համրուի,

7ը Ատլանտեան ովկիանոսին մէջ, որ են, Ասոռեանք, Քանարեանք եւ Մատերա, Դալարի գլխոյ, Կուինեայի ծոցի կղզիները, Համբարձման կղզին եւ Ս. Հեղինէ կղզին:

6ը Հնդկաց ծովուն մէջ, որ են,

Սոքոթրա, Սէշէլեանք, Զանգիպար, Քոմոռիք, Մատակասգար, եւ Մասքարէնեանք, որուն գլխաւորներն են, Պուրպոնի կղզին, Դաղղիոյ կամ Մօրիսի կամ Մաւրիտիոս կղզին, Ռօտրիկէզ կղզին.

133. Ափրիկէն 15 գլխաւոր հրուանդան ունի:

Պօն, Սէօրա հրուանդանները՝ Պարպարիայի մէջ.

Պլանք հրուանդանը՝ Սահարայի մէջ.

Դալարի գլուխը, Ս. Մարիա, Կարմիր հրուանդանները Սենեկամպիոյ մէջ.

Բալմի եւ Երեք-Կէտերու կամ Եռակէտաց հրուանդանները՝ հիւսիսային Կուինէայի մէջ

Լոբէզ և Նեկրոյ հրուանդանները՝ հարաւային Կուինէայի մէջ.

Գլուխ Բարեյուսոյ, և Էկիլեան հրուանդան՝ Գլուխ բարեյուսոյի կառավարութեան մէջ.

Տելկատօի գլուխ՝ Մօզամպիքի հիւսիսային կողմը.

Գլուխ Կարտաֆիւի՝ Ատելի արևելեան կողմը.

Գլուխ Նաթալ՝ Մատակասգարի հիւսիսային կողմը:

134. Ափրիկէի մէջ հինգ գլխաւոր լերանց գօտի կայ.

Ատլաս՝ Պարպարիայի մէջ.

Քոնկ՝ Նիկրիտիոյ և հիւսիսային Կուինէոյ միջոցը.

Լուսնի լեռները՝ Եթովպիոյ հարաւային կողմը.

Լուբաթա լեռները՝ Ափրիկէի արևելեան հարաւային կողմը.

Մատակասգար Համանուն կղզիին մէջ:

135. Ափրիկէի մէջ 6 գլխաւոր լիճ կայ.

Չատ՝ Նիկրիտիոյ մէջ.

Տէմպէա՝ Եթովպիոյ մէջ.

Ուքրէվէ, Թանկանեիքա և Նեասի՝ Անծանօթ կամ քիչ ծանօթ աշխարհին մէջ.

Նկամի՝ Մօզամպիգի արևմտեան կողմը:

136. Ափրիկէի մէջ 7 գլխաւոր գետ կայ.

Նեղոս՝ որ կը թափի Միջերկրական ծովը.

Սենեկալ, Կամպիա, Նիկէր, Զայիրէ, Օրանժ Ատլանտեան ովկիանոսը.

Զամպէզ՝ Հնդկաց ծովը

Դ. ԱՄԵՐԻԿԱ

137. *Ամերիկան կը բաժնուի 2 մեծ մասերու՝* հիւսիսային Ամերիկա, հարաւային Ամերիկա, *որ Բանամայի պարանոցով իրարու կցուած են :*

138. *Ամերիկայի մէջ 16 աշխարհք կայ, որոց՝ 6ը հիւսիսային Ամերիկայի և 10 հարաւային Ամերիկայի մէջ են :*

Հիւսիսային Ամերիկայի 6 աշխարհներն են.

Ռուսի Ամերիկա, *գլխաւոր տեղը* Նոր Արխանկել՝ *Սիդքա կղզիին մէջ.*

Գրէնլանտիա, *գլխաւոր քաղաք* Ֆրետերիկսապ.

Նոր *Բրիտանիա, մայրաքաղաք՝ Քէպէք.*

Միացեալ Նահանգք, *մայրաքաղաք՝ Վոշինկդըն՝ գլխաւոր քաղաք՝* Նոր Եօրք, Ֆիլատելֆիա, Պոսդըն.

Մեքսիքոյ, մայրաքաղաք՝ Մեքսիկոյ.

Կուատեմալայա *կամ* Կեդրոնական Ամերիկա, *մայրաքաղաք՝* Կուատեմալա.

Հարաւային Ամերիկայի 10 *աշխարհներն են.*

Գոլոմպիա որ իրարու դաշնակից երեք հասարակապետութիւն են, Նոր Կրանատա, Վենեզուէլա և Քիդոյ, *գլխաւոր քաղաք՝* Պոկոդա, Քիդոյ.

Կույանա, *գլխաւոր քաղաք՝* Գայէն, Բարամարիպօ.

*Պրազիլ, մայրաքաղաք. Ռի*օ Ժանեյրօ.

Բերու, գլխաւոր քաղաք՝ Լիմա.

Պոլիվիա, կամ Վերին Բերու *մայրաքաղաք Լաբլաթա կամ* Չուքիսաքա.

Բարակուայ, մայրաքաղաք Վերափոխումն.
Ուրակուայի, մայրաքաղաք Մօնթէ-Վիտէօ.
Լա Բլաթա, մայրաքաղաք Պուէնոս-Այրէս.
Գիլի կամ Չիլի, մայրաքաղաք Սանդիակօ.
Բադակոնիա, որ քիչ բնակութիւն ունի:

139. Ամերիկան 6 սահմանակից ծով ունի.
Սառուցեալ ովկիանոս և Պաֆֆինի ծով՝ հիւսիսային կողմը.
Ատլանտեան ովկիանոս ու Անդիլեան ծով՝ արևելեան կողմը.
Մեծ ովկիանոս և Պեհրինկեայ ծով՝ արևմտեան կողմը:

140. Ամերիկայի մէջ 9 գլխաւոր նեղուց կայ.
Պեհրինկայի նեղուց՝ Ասիոյ և Ամերիկայի միջոցը.
Լէնքէսթըր, Տէյվիս, Գըմպըրլէնտ, Հուտսըն՝ Նոր Բրիտանիոյ հիւսիսային կողմը.
Պէլ-Իլի նեղուցը՝ Նոր Բրիտանիոյ արևելեան կողմը.
Պանամայի ջրանցքը՝ Միացեալ նահանգներուն հարաւային կողմը.
Մակեյլանի նեղուցը, և Լըմէր՝ Բադակոնիոյ հարաւային կողմը:

141. Ամերիկայի մէջ 17 գլխաւոր ծոց կայ, որոց 5ը մեծ և 12ը փոքր են:

Ամերիկայի 5 մեծ ծոցերն են,

Հուտսոնի ծոցը՝ Պաֆֆինի ծովէն ձևացեալ.

Սուրբ Լաւրենտիոսի ծոցը՝ Ատլանտեան ովկիանոսէն ձեւացեալ.

Մեքսիկոյի ծոցը, Հունտուռաս ծոցը՝ Անդիլեան ծովէն ձեւացեալ.

Գալիֆոռնիոյ ծոցը՝ Մեծ ովկիանոսէն ձեւացեալ.

Ամերիկայի 12 փոքր ծոցերն են,

Ֆունտի, Տէլավար, և Չէզափէք ծոցերը՝ Միացեալ-Նահանգաց արևելեան կողմը. Ատլանտեան ովկիանոսէն ձեւացեալ.

Տարիէն, Մարաքէյպօ, և Բարիա՝ Գոլոմպիոյ հիւսիսային կողմը, Անդիլեան ծովէն ձեւացեալ.

Ծոց Ամենայն - Սրբոց՝ Պրազիլի արևելեան կողմը.

Ս. Անտոնի ծոցը՝ Լա Բլաթայի հարաւային արևելեան կողմը.

Սուրբ-Գէորգի ծոցը՝ Բաթակոնիոյ արևելեան կողմը, երբեմն ալ Ատլանտեան ովկիանոսէն ձեւացեալ,

Կուայագիլի և Բանամայի ծոցերը՝ Գոլոմպիոյ արևմտեան կողմը.

Սուրբ-Ֆրանչիսկոսի ծոցը՝ Միացեալ-Նահանգաց արևմտեան կողմը, Մեծ ովկիանոսէն ձեւացեալ:

142. Ամերիկայի մէջ 20 գլխաւոր կղզի կամ կղզեաց խումբ կայ.

Կրօէնլանտիա՝ Սառուցեալ ծովուն մէջ.

Պաֆֆինի ծովուն կղզիները՝ Սառուցեալ ծովուն արևմտեան կողմը:

6՝ *Ատլանտեան ովկիանոսին մէջ*, այսինքն Սուրբ-Լաւրենտիոսի ծոցին կղզիները. Լոնկ-Այլենտ, Պերմուտեան, Լուքայեան, Մեծ-Անդիլեան, և Փոքր-Անդիլեան կղզիները.

7՝ *Մեծ ովկիանոսին հարաւակողմը*, այսինքն, Նոր-Գէորգիա, Ֆալքլենտ *կամ* Մալուինեան կղզիները, Մակելլան *կամ* Երկիր-Հրոյ, Աստուածամօր Արշիպեղագոսը, Չիլօէ, Ժուան Ֆերնանտեզ, և Կալլապակոս կղզիները.

6՝ *Մեծ ովկիանոսին հիւսիսակողմը*, Ռէվիլլա-Ճիկետօ կղզիները, Քասրա և Վանգուվեր Արշիպեղագոսը, Քօտիաք կղզին, Ալէութեան կղզիները. Պեհրինկեա ծովուն կղզիները:

143 *Ամերիկայի մէջ 6 գլխաւոր ծերակղզի կայ*.

Լապրատօր և Նոր Սկովտիա *կամ* Ագատիա՝ *Նոր Բրիտանիոյ մէջ*.

Ֆլորիտա՝ *Միացեալ-Նահանգաց արևելեան հարաւային կողմը*.

Հարաւային Քալիֆօրնիա, և Եուքադան՝ *Մեքսիկոյի մէջ*.

Ալասքա թերակղզին՝ *Ռուսի Ամերիկայի մէջ*:

144. *Ամերիկայի մէջ 12 երևելի հրուանդան կայ*.

9ը *Արևելեան կողմը*.

Ֆարուէլ՝ *Կրօէնլանտիայի հարաւակողմը*.

Ռօտղէնինըլ, և Չէրլս՝ *Լապրատօրի մէջ*:

Սապլ՝ *Նոր Սկովտիոյ հարաւակողմը*.

Դանգա՝ *Ֆլորիտայի հարաւակողմը*.

Գադոչ՝ *Եուքադանի արևելեան հիւսիսակողմը*.

Ս. Ռոքս՝ *Պրազիլի արեւելեան կողմը.*

Ֆրօվարտ՝ *Հարաւային Ամերիկայի հարաւածայրը.*

Հօռն՝ *Մակելլանի Արշիպեղագոսին հարաւակողմը.*

Յալ *Արեւմտեան կողմը.*

Պլանգօյ՝ *Բերուի Հիւսիսակողմը.*

Ս. Ղուկաս՝ *Գալիֆոռնիոյ հարաւածայրը.*

Արեւմտեան գլուխ՝ *Ռուսի Ամերիկայի արեւմտակողմը, Ասիայի արեւելեան գլխոյն ճիշտ դիմացը:*

145. *Ամերիկայի մէջ 7 գլխաւոր լեռներու գօտի կայ.*

Ալլէկանի՝ *Միացեալ Նահանգներուն մէջ.*

Ապառաժուտ լերինք, Սիեռռա-Վէրտէ, Սիեռռա-տը Լօ-Միմպրէ, Սիեռռա,տը Լա-Մատրէ, *որոնք հիւսիսային Ամերիկայի մէջ հիւսիսէն դէպ ի հարաւ կը տարածուին.*

Անտ լեռանց *երկայն գօտին, որ կը ձգուին հարաւային Ամերիկայի մէջ հիւսիսէն դէպ հարաւ. և իրենց ամենէն բարձրը* Չիմպօռասօ *կըսուի.*

Պրազիլի լեռները:

146. *Ամերիկայի մէջ 5 անուանի հրաբուղխ կայ.*

Սուրբ-Եղիա լեռը՝ *Ռուսի Ամերիկայի մէջ.*

Բոբաքաղէբէղ՝ *Մեքսիկոյի մէջ.*

Գոբոբաքսի, *և* Բիչինգա՝ *Գոլոմպիոյ մէջ.*

Արեքիբա՝ *Բերուի մէջ:*

147. *Ամերիկայի 11 գլխաւոր լիճերն են.*

Հիւսիսային Ամերիկայի մէջ.

Գերեաց, և Վիննիբեկ լիճերը՝ *Նոր Բրիտանիայի մէջ*.

Վերին լիճ, Միչիկան, Հուրոն, Էրիէ, և Օնդարիոյ՝ *Միացեալ Նահանգաց հիւսիսակողմը*.

Նիգարակուա լիճ՝ *Միջին Ամերիկայի մէջ*.

Հարաւային Ամերիկայի մէջ,

Մարագայիպոյ՝ *Գոլոմպիայի մէջ*.

Տիդիգագա՝ *Բերուի մէջ*.

Բաթոս՝ *Պրազիլի հարաւակողմը*.

148. *Ամերիկայի մէջ 13 գլխաւոր գետ կայ,*

7ը հիւսիսային Ամերիկայի մէջ,

Մաքէնզի՝ *որ դէպ հիւսիս կը թափի*.

Նելսըն՝ *Հուտսոնի ծոցը կը թափի*.

Սուրբ Լաւրենտիոս՝ *Ատլանտեան ովկիանոսը*.

Միսիսիբի, և Ռիոյ-Նորթէ՝ *Մեքսիկոյի ծոցը*.

Գոլոմպիա *կամ* Օրեկոն՝ *Մեծ ովկիանոսը*.

Գոլորատոյ՝ *Գալիֆոռնիոյ ծոցը*.

6ը հարաւային Ամերիկայի մէջ,

Մատելանա՝ *անդիլեան ծովը*.

Օրէնոք, Ամազոնաց գետը, Դոգանդին, Սուրբ-Ֆրանչիսկոյ, և Բլադա՝ *Ատլանտեան ովկիանոսը*:

149. *Ամերիկայի 15 գլխաւոր գետակներն են,*

Միսուրի, Օհիոյ, Արքանսաս, և Կարմիր գետակը՝ *որ կը թափին Միսիսիբիի մէջ*.

Ուքայալէ, Ռիոյ-Նեկրօ, Մատէիրա, Թօբայոս, և Քսինկու՝ *որ կը թափին Ամազոն գետը*.

Քասիքիարէ՝ *որով Օրէնոք գետը Ռիոյ-Նեկրօ*

և *Ամազոն գետերուն հետ հաղորդակցութիւն ունի.*

Արակուա՝ *Դոգանդեն կը թափի.*

Բարակուա, Բարանա, Բիլքօմայօ, և Ուրուկուա՝ *որոնք կը ձևացնեն* Բլադա:

Ե. ՈՎԿԻԱՆԻԱ

150. *Ովկիանիան երեք գլխաւոր մաս կը բաժնուի.*

1°. *Նոդազիա կամ Մալեզիա.*

2°. *Աւստրալիա.*

3°. *Բոլինեզիա կամ Արեւելեան Ովկիանիա:*

151. *Նոդազիան կը պարունակէ* 4 *գլխաւոր կղզեաց խումբեր, որք են,* Սոնտի կղզիները, Ձելեպեան, Մօլուգեան, *և* Փիլիպեան կղզիները.

Սոնտ կղզեաց գլխաւորներն են.

Ճավա՝ *մայրաքաղաք՝ Պաթավիա.*

Սումադրա՝ գլխաւոր քաղաք՝ Աչէմ, Բատանկ, *և* Բալէմպանկ.

Պորնէոյ, Պալի, Սումպավա, Ֆլօրէ, Սումպա, Թիմոր.

Մոլուգեան կղզեաց գլխաւորներն են.

Ճիլօլոյ, Պուրոյ, Սերամ, *և* Ամպոյնա.

Փիլիպեան կղզեաց գլխաւորներն են.

Լուսոն՝ մայրաքաղաք՝ Մանիլա.

Մինտանաօ՝ մայրաքաղաք՝ Մինտանաօ կամ Սելանկան. և Բալաւան կղզին:

Աւստրալիան կը պարունակէ Նոր-Հոլանտա *կամ* Աւստրալիա,

Տիէմէն կղզին, Նոր-Կուինէա, Նոր Իրլանտա, Նոր-Բրիտանիա, Սողոմոնեան կղզիք, Նոր-Հեբրիտեանք, *կամ* Արշիպեղագոս Սուրբ-Հոգւոյ, Նոր-Գալետոնիա, *և* Նոր-Զելանտա:

152. *Բոլինեզիան կը բաժնուի երկուքի,* Միքրոնէզիա *և բուն* Բոլինեզիա.

Միքրոնիզեան կը պարունակէ, կղզիք Պօնէն *և* Կռամբիւս *կամ* Արշիպեղագոս մակեյլանի, Մարիա Աննա, Բելեվ, Գարոլինեան, Արշիպեղագոս Անսօնի, Միւլկրավ, *և* Քինկսմիլ կղզիները.

Բուն Բոլինեզիան կը պարունակէ, կղզիք Սանտուիչ *կամ* Հավայ, Մարգիզ, Նաւորդաց Ֆիժի *կամ* Ֆիճի, Թօնկա *կամ* Բարեկամաց, Ընկերութեան *կամ* Թահիթի, *և* Կղզիք-Պասէս *կամ ստորին՝ որ կը պարունակէ* Վնասակար ծովու Արշիպեղագոսը, *և* Վտանգաւոր Արշիպեղագոսը:

Բ.

ՄԱՍՆԱՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՅ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ՀԻՆԳ ՄԱՍԱՆՑ ԱՇԽԱՐՀԻ

153. *Եւրոպայի սահմանն է արեւելքէն Ուրալ լեռները, Ուրալ գետը և Կովկաս լեռները, միւս կողմերը ծովով շրջապատած է: Եւրոպան արեւմտեան երկայնութիւն 12°էն մինչև արեւելեան երկայնութեան 62°ը, և հիւսիսային լայնութեան 35°էն մինչև 71°ը կը տարածուի: Իր բազմամարդութիւնը 290,000,000 և իր տարածութիւնը, 9,700,000 քառակուսի քիլոմէթր է: Թէպէտև աշխարհիս միւս մասերէն փոքր է, բայց ամենէն աւելի քաղաքականացեալ և համեմատաբար աւելի բազմամարդ է:*

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԵՒՐՈՊԻՈՅ

1°. ԲՐԻՏԱՆԻԱ.

154. **Անգղիան**, *Որ երբեմն Բրիտանիա կըսուէր, Հռովմայեցւոց ձեռքն անցաւ Քրիստոսի 78 Թուականին որոնք 338ին ձգեցին: Բրիտանացիք Սկովտիացւոց ձեռքէն նեղութիւն քաշելով Անկլօ-Սաքսօն ըսուած ազգէն օգնութիւն ուզեցին, որոնք բոլոր երկրին տիրելով, իրենց գլխաւորին անունովը Անգղիա դրին: 1066ին Նորմանդիոյ Գուլիէլմոս*

դուքսը տիրեց Բրիտանիոյ, և Նորմանդիայէն բնակիչներ բերաւ, առկէ ետքը Անգղիան երթալով մեծցաւ և ուռճացաւ. Միացեալ թագաւորութիւն մեծին Բրիտանիոյ:

155. Բրիտանիան Եւրոպայի արևմտեան կողմն է, և ամէն կողմը պատած է Ատլանտեան Ովկիանոսը: Իր բազմամարդութիւնը 30,000,000, և իր տարածութիւնը 304,000 քառակուսի քիլօմէթր է: Չորս գլխաւոր մաս կը բաժնուի, Անգղիա, Սկովտիա, Իռլանտա, և քովի Մանր կղզիները: Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, մանաւանդ Սկովտիան ու Կալլէսի գաւառը: Գլխաւոր գետերն են Թամիզ, Սիվըրն, Տէնըն, Ուզ, Թրենթ, Թուէտ, որ Անգղիան Սկովտիայէն կը զատէ: Կլիման ցուրտ և խոնաւ է, անոր համար խաղող չի հասցնէր. բայց ցորենը և խոտը առատ է: Ձին և ոչխարներուն բուրդը շատ ազնիւ է: Երկաթ, կապար, անագ, պղինձ և հանքածուխ առատութեամբ կը գտնուի հոս: Բազմաթիւ ջրանցքները, մանաւանդ երկաթուղիները այս հարուստ երկրին վաճառականութեանը շատ նպաստած են: Երկրագործութիւնը ճարտարութիւնը վերջին ծայր կատարելութեան հասած է, իրենց ձեռագործները շատ անուանի են և վաճառականութեամբ բոլոր աշխարհի հետ յարաբերութիւն ունենալով, այսօր բոլոր աշխարհիս հարստութեան կեդրոնն ու աղբիւրը Անգղիա եղած է: Կրօնքն է Անգղիոյ մէջ Եպիսկոպոսական և Սկովտիոյ մէջ Երիցական բողոքականութիւն, իսկ Իռլանտայի մէջ Հռով-

մէտականութիւն: Կառավարութիւնը՝ սահմանադրական Միապետութիւն:

Անգղիոյ գլխաւոր քաղաքներն են.

Լոնտրա. (3,000,000 բնակիչ) Տէրութեան մայրաքաղաքն է: Եւրոպայի ամենէն բազմամարդ և բոլոր աշխարհիս մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է, իր նաւահանգստին մէջ շատ անգամ 2000 նաւէն աւելի կը գտնուի: 12 Քիլոմէթր երկայնութիւն և 6 քիլոմէթր լայնութիւն ունի: Երևելի շէնքերն են Ս. Պօղոսի եկեղեցին՝ աշխարհիս մէջ բողոքականաց ամէնէն մեծ և գեղեցիկ եկեղեցին է: Վեսթմինիսթրի եկեղեցին, ուր թագաւորաց և մեծ մարդկանց գերեզմանները կան: Բարլամէնթին պալատը, կամուրջները, գետափունքը և մանաւանդ Թամիզ գետին տակէ մեծագործ ճամբան որ 1300 ոտք երկայնութիւն և 200 ոտք լայնութիւն ունի: Այս քաղաքս Պաքընի, Միլտոնի, և Փոփի հայրենիքն է. Նեվտոն ալ իր կենաց մեծ մասը հոս անցուցած է և իր մարմինը Վեսթմինիսթրի եկեղեցին է:

Մանչեսթր. (400,000 բնակիչ) և **Պիրմինկամ** (233,000 բնակիչ) Լոնտրայէն ետքը այս երկու քաղաքները շատ անուանի են, մանաւանդ իրենց ձեռագործներով ու մետաքսեղէնի ու բամպակեղէնի և երկաթեղէնի գործարաններովը:

Լիվրփուլ. (443,000 բնակիչ) Մերսեյ գետին բերանը, Իրլանտայի ծովուն մօտ, իր ծովային վաճառականութիւնը անհուն է:

Ուրիշ երեւելի քաղաքներն են Պրիսթըլ(154,000) Բօրքսմըթ (93,000) Հըլլ (99,000), Բլիմըթ (63000); եայլն:

Սկովտիայի երեւելի քաղաքներն են.

Էտինպուրկ (160,000), **Գլասկոյ** (330,000) **Տընտի** (79,000), եայլն:

Իրլանտայի երեւելի քաղաքներն են.

Տըպլին (250,000), **Քօրք** (79,000), **Լիմէրիք** (45,000), եայլն:

Բրիտանիոյ մաս եղած կղզիներն են.

Ատլանտեան Ովկիանոսին մէջ՝ Շէթլընտ, Օրկնեան և Հեբրիդեան կղզիները. Իրլանտայի ծովուն մէջ՝ Մէն և Էնկլիսի. Հիւսիսային ծովուն մէջ՝ Հէլկոլանտ. Մանշի մէջ՝ Ուայթ, Կէրնսէյ, և Ժէրսէյ. Միջերկրական ծովուն մէջ՝ Մալթա:

Անգղիոյ Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են.

1°. Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մեծ կտորը, Ցէյլան կղզին, Բիրմանի երկրին քանի մը գաւառները. Մալաքքա, Սինկափուր կղզին, Հօնկ-Քօնկ կղզին՝ Չինու մէջ՝ և Ատէն՝ Արաբիոյ մէջ (185,000,000 բնակիչ):

2°. Ափրիկէի մէջ՝ Կամպիային մէկ մասը, Սիէռռա-Լիօնէ, Բարեյուսոյ գլուխը, Սուրբ Հեղինէ կղզին ու մեծն Նաբոլէօն աքսորուեցաւ 1815ին և մինչև իր մահը հոն մնաց, և Վերափոխման կղզին, Գաղղիոյ կղզին և ուրիշ շատ մանր կղզիներ, (830,000 բնակիչ):

3⁰. Ամերիկայի մէջ՝ Կրէնլանտիայի հիւսիսային կողմը, Նոր Բրիտանիա, Եուգաքանի մէկ կտորը, Կույանայի մէկ կտորը, Կամբինի ծովուն կղզիները, Ս. Լաւրենտիոսի ծոցին կղզիները, Պերմուտեան կղզիները, Լուգայեան կղզիները, Եամայիքա կղզին, Փոքր Անդիլեան կղզիներուն մեծ մասը (3 700,000 բնակիչ)։

4⁰. Ովկիանիայի մէջ՝ Նոր Հոլանտա, Վան-Տիմէն (800,000 բնակիչ)։

Անգղիացոց ձեռքն է նաև Ճիպրալթար քաղաքը (17,000) Սպանիոյ արևմտեան ծայրը,

Ծանօթութիւն. Անգղիացիք քանի մը տարիէն ի վեր է որ նոր հաստատութիւններ կընեն զանազան երկիրներուն մէջ եւ գլխաւորաբար Նոր-Զելանտի մէջ։

2⁰ ՏԱՆԻՄԱՐՔԱ

156. Տանիմարքա, որուն ցամաքային մասը երբեմն Կիմբրեան Քերսոնիսոն ալ կըսուէր, Կիմբրացոց հայրենիքն էր, որ Քրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպա կոխեցին։ 835 էն սկսեալ մինչև 1042 Անգղիոյ վրայ շատ անգամ յարձակեցան և միայն 25 տարի հոն կրցան մնալ։ Հիմա Տանիմարքան ինքնագլուխ միապետութիւն է։

157. Տանիմարքան 2,700,000 բնակիչ և 142,200 քառակուսի քիլոմէթր տարածութիւն ունի, իր սահմանը հիւսիսէն Քաթեկաթի ծոցը, արևելքէն Պալթիկ ծովը հարաւէն Գերմանական դաշնակցու-

Թիւնը և արևմուտքէն հիւսիսային ծովն է: Երկիրը դաշտային և անբեր է, միայն ձին անուանի է:

Կլիման ցուրտ և խոնաւ է, Պալթիկ ծովուն մէջ Տանիմարքայի կղզիները բարեբեր և բազմամարդ են: Կրօնքը Լուտերական բողոքականութիւն է. Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն:

Տանիմարքայի երևելի քաղաքներն են.

Քօբէնհակ. (127,000 բնակիչ) տէրութեան մայրաքաղաքը Զելանտ ու Ամակեր կղզիներուն մէջ Սունտ նեղուցին վրայ շինուած, բանուկ նաւահանգիստ ունի, վաճառականութեան, արհեստի և գիտութեան կողմանէ երևելի է:

Ուրիշ երևելի քաղաքներն են Հելսինկոր, Սալպուրկ, ևայլն:

Տանիմարքայի կղզիներն են,

Պալթիկ ծովուն մէջ՝ Զելանտ, Ֆիւն կամ Ֆիոնիա, Լալանտ, Ֆալսբէր, Պորնհոլմ, Ատլանտեան ովկիանոսին մէջ Իսլանտա և Ֆէրօէր կղզիները:

Տանիմարքային Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են,

Ամերիկայի մէջ՝ Կրէնլանտ, Սուրբ Թովմաս, Սուրբ Յօհաննէս, և Սուրբ Խաչ կղզիները: Կուսանաց կղզիներէն փոքր անգլիեանց խումբը(53,000 բնակիչ):

3° ՇՈՒԷՏ

158. Շուէտի մէջ առաջ կըբնակէին Ֆինք, որոց ցեղը տակաւին կայ Շուէտի և Ռուսիոյ հիւսիս-

յին ծայրը Լափոնիայի մօտ, ետքը Գոթացիք առին: Իսկ Նորվիկեան առնում Տանիմարքայի կտորն էր՝ 1814 ին Շուէտի տէրութեան հետ միացաւ: Հիմա կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն է և կրօնքը Լուտերական.

159. Շուէտի սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է, արևելքէն Ռուսաստանը, հարաւէն Պալթիկ ծովը, արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը: Շուէտը երեք գլխաւոր մաս կը բաժնուի, Բուն Շուէտ, Նորվեկիա և Կղզիները: Տարածութիւնն է 739,000 քառակուսի քիլօմէթր և բնակիչը 5,000,000: Նորվեկիան լեռներով բաժնուած է, և Շուէտի մեծ մասն ալ լիճերով ծածկուած, Կլիման ցուրտ և հողը քիչ բարեբեր է: Երկաթի, պղնձի, արծաթի հանք ունի. փայտը խիստ շատ է. հիւսիսային կողմը շատ կը գտնուի եղնիկ, որ Լափոնիայի գլխաւոր հարստութիւնն է, և ուրիշ մուշտակ ունեցող կենդանիներ:

Շուէտի գլխաւոր քաղաքներն են,

Ստոքհոլմ (117,000 բնակիչ) Մէլարն լճին մէջ քանի մը մանր ու մեծ կղզիներու և երկու Թերակղզիի վրայ գեղեցիկ կերպով շինուած տէրութեան մայրաքաղաքն է, որ աղէկ ձեռագործ, ուսումնական տեղեր, և բանուկ վաճառականութիւն ունի: Կոթենպուրկ, Քարլսքրոնա, Ուբսալա, Ֆալուն:

Նորվեկիայի գլխաւոր քաղաքներն են.

Քրիստիանիա (40,000 բնակիչ) աթոռակի-

երկաթի վաճառականութիւն ունի, համալսարանը անուանի է։

Պէրկէն, Ռէօրոս, Վարտհիւս, ևայլն։

Շուէտի տէրութեան վերաբերեալ
կղզիներն են.

Պալթիկ ծովուն մէջ՝ Կոթլանտ, Օլանտ, և Սառուցեալ ովկիանոսին մէջ Լոֆֆոտէն կղզիները, ասոնց քովերն է Մալէսթրօմ ըսուած սոսկալի յորձանքը որ շատ անգամ նաւեր կընկղմէ, որոյ ձայնը մղոններով հեռու կը լսուի։

Շուէտը Եւրոպայէն դուրս ունի միայն Սուրբ Բարթողիմէոս կղզին յարեւմտեան Հնդիկս, որ փոքր Անթիլեան կղզեաց մին է (10,000 բնակիչ)։

4° ՌՈՒՍԻԱ

160. Ռուսիա Թագաւորութիւնը 900 ին ատենները սկսաւ և բարբարոս ազգ մի էր, բայց մեծն Պետրոս, որ 1700 ին սկիզբները Ռուսաց կայսր եղաւ, տէրութիւնը շատ ընդարձակեց, քաղաքակրթութեամբ, արուեստով և ուսմամբ յառաջացուց։ Ետքը Լեհաստանի մէկ կտորը և ուրիշ երկիրներ ալ միացաւ։ Հին ատենը Ռուսիայի բնակիչներն էին, Սկիւթացիք, Սլաւեանք, Սարմատացիք ու Ֆինլանտացիք, հիւսիսի կողմը կը գտնուին Լապոն ու Սամոյետ ըսուած կարճահասակ ժողովուրդները։ Կառավարութիւնը բացարձակ միապետական է, կրօնքը արևելեան եկեղեցի։

161. Ռուսաստանի սահմանն է հիւսիսէն Սա-

ռուցեալ ծովը, արեւելքէն Ռուսի Ասիան, հարաւէն Սեւ ծովը ու Աւստրիան, արեւմուտքէն Բրուսիան, Պալդիկ ծովը և Շուէտը: Տարածութիւնն է 5.300,000 քիլօմէթր քառակուսի, և բնակիչը 70,000,000: Երկիրը ընդհանրապէս դաշտային է, մէջէն անցնող քիչ լեռունք, որոնք շատ բարձրութիւն չունին, միայն իր սահմաններուն վրայ Ուրալ և Կովկաս լերանց գօտիները կայ: Հիւսիսային կողմերուն հողը անբեր ու քիչ մշակած է, իսկ միջին ու հարաւային կողմերը խիստ պտղաբեր: Գլխաւոր բերքն է երկաթ, կապար, պղինձ, արծաթ, բլաթին, ոսկի՝ որ Ուրալ լեռներէն կելլէ: Շատ անտառներ ունի, ցորենը առատ ու ազնիւ է, մորթը, կաշին և մուշտակները խիստ ընտիր: Այս երկրին հիւսիսային կողմը և Սառուցեալ ովկիանոսին անդրնակ կղզիներուն մէջ նշանաւոր է ճերմակ արջը:

Ռուսիայի գլխաւոր քաղաքներն են.

Ս. Պետերբուրգ. (530,000 բնակիչ) Մեծն Պետրոս շինեց այս մայրաքաղաքը Նեվա գետին բերանը 1703ին, ուր կայ իր պղնձէ ձիաւոր արձանը կրանիտ բարէ ժայռի մը վրայ տնկուած 1,500,000 քիլօկրամ ծանրութեամբ: Եւրոպայի մայրաքաղաքաց մէջ ամենէն աւելի ասոր տեսքը փառաւոր է, փողոցներուն լայնութեամբ և շքեղութեամբ, հրապարակներուն ընդարձակութեամբ, գեղեցիկ կրանիտէ գետափանցը և պալատներու ու հասարակաց և մասնաւորաց շէնքերուն աղուորութեամբ պատճառաւ:

Լազարեան Դպրոցները հոս Հայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շինած են, առենով ալ մեր լեզուովը շատ գրքեր տպուած են աս քաղքիս մէջ:

Մոսկուա. (400,000) Ռուսի առջի մայրաքաղաքը, 1812ին Գաղղիացիք առին, որուն մեծ մասը Ռուսերը այրած էին, բայց ետքերը աւելի փառաւոր շինեցին: Ռուսի կայսերը հոս Թագ կը դնեն: Երեւելի է Քրեմլին Թագաւորական պալատը և Մայր եկեղեցին: Անուանի է Լազարեան իշխանաց հոս հիմնած Հայկազնեան վարժարանը, Մոսկուա երկաթուղիով միացած է Պետրպուրկի հետ:

Վարսավիա, Օտեսսա, Ռիկա, Քիէվ, Աստրախան, Քազան, Քրոնշտատ, Սեվաստոփոլ, եւայլն:

Ռուսի տէրութեան վերաբերեալ կղզիներն են.

Սառուցեալ ովկիանոսին մէջ՝ Սպիցպէրկ, Նոր Զեմլա, Վայկաց, Քալկույէվ: Պալթիկ ծովուն մէջ՝ Ալանտ, Տակոյ, Էօզէլ:

Ռուսիան Եւրոպայէն դուրս ունի Ասիոյ մէջ՝ Վրաստան, Շիրուան, Իմէրէթ, Ապազա, Չէրքէզ, Հայաստանին մէկ մասը և Սիպէրիա (5,000,000 բնակիչ): Ամերիկայի մէջ՝ Ռուսի Ամերիկան որ հիւսիսի ծայրն է (50,000 բնակիչ):

5°. ԳԱՂՂԻԱ.

162. **Գաղղիան** 500 տարիի չափ Հռովմայեցւոց տակն էր, Ե. դարուն առենները Գերմանիայէն Ֆրանքները եկան տիրեցին և անկէ ետքը Իրենց

անունովը Ֆրանսա բռնեցաւ: Առաջին Թագաւորն էր Ֆարամոնտ, Տէրութիւնը ծաղկեցնողն էր մեծն Կարոլոս: 1792ին Մեծ խռովութիւն մը հանելով Թագաւորութիւննին փոխեցին Հասարակապետութիւն ըրին. 1804ին մեծն Նաբոլէոն Կայսր եղաւ, և 1815ին քշուելով, Գաղղիա նորէն Թագաւորութիւն ունեցաւ. 1830ին նոր խռովութենէ մը ետքը՝ Սահմանադրական Թագաւորութիւն հաստատեցին. բայց 1848ին Թագաւորնին փախցնելով նորէն հասարակապետութիւն ըրին, որոյ նախագահ ընտրուեցաւ Լուդովիկոս Նաբոլէոն, որ երեք տարիէն ետև 1851ին ինքզինքը Կայսր հրատարակել տուաւ Նաբոլէոն Գ. անուամբ: Կառավարութիւնն է Սահմանադրական միապետութիւն, կրօնքը Հռովմէականութիւն:

163. Գաղղիոյ սահմանն է հիւսիսէն Պելճիա, Հոլանտա ու Բրուսիա, արևելքէն Գերմանական դաշնակցութիւն, Զուիցցերի ու Սարտենիա, հարաւէն Միջերկրական ծով ու Սպանիա, արևմուտքէն Ատլանտեան ովկիանոս և Մանշ: Տարածութիւնն է 544,500 քիլոմէթր քառակուսի, բնակիչը 37,000,000.

Երկրին արևելեան ու հարաւային կողմերը լեռնոտ են, իսկ հիւսիսային ու արևմտեան կողմերը դաշտային: Կլիման բարեխառն ու առողջ է, հիւսիսային կողմը ցուրտ: Բերքն է երկաթ, պղինձ, հանքածուխ. հողը խիստ աղէկ բանեցուցած է, ձէթն աղնիւ, գինին խիստ անուանի, մանաւանդ Շամբանեա ու Պորտոյ գաւառներուն գինիները, կենդանի-

ները ալ ընտիր են, մանաւանդ եզներն ու ոչխարները:

Աշխուժութիւնը, արուեստները և ձեռագործը մեծ կատարելութեան մէջ են, ուսումը և գիտութիւնը վերջին ծայր կատարելութեան հասած է, երկաթուղիք երկրին ամէն կողմը տարածուած են:

Գաղղիոյ գլխաւոր քաղաքներն են.

Փարիզ. (1.700,000 բնակիչ) մայրաքաղաքը՝ Սէն գետին վրայ, աշխարհիս մէջ առաջին ծաղկած քաղաքն է ամէն կողմանէ, երկաթուղիներով Պելճիքայի, Բրուսիայի, Գերմանիոյ հետ միացած է: Հասարակաց շէնքերը, պարտէզները, ուսումնական Թանգարանները, ամէնն ալ շատ փառաւոր են, համալսարանը աշխարհիս մէջ մէկ հատիկ, Թագաւորական գրատունն ալ ամենէն հարուստն է: Հոս մեռաւ մեր Ռուբինեանց վերջին Թագաւորը Լեւոն Զ. 1391ին. և հոս հաստատուած է մեր ազգային Մուրատեան վարժարանը 1845ին:

Լիոն, Մարսիլիա, Պորտօ, Ռուան, Նանդ, Թուլուզ, ևայլն:

Գորսիքա կղզին ալ Գաղղիացւոց ձեռքն է և ասոր մէջ անուանի է Այաչչիօ քաղաքը, ուր ծնաւ մեծն Նաբոլէոն.

Գաղղիոյ Եւրոպայէն դուրս եղած երկիրներն են,

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ կտոր, գլխաւոր քաղաքը Բոնտիշէրի (228.000 բնակիչ): Աֆրիկէի մէջ՝ Ճէզայիր կամ Ալճէրի, Սենեկալին

մէկ կտորը Կորէա և Պուրպոն կղզիներ (3,300,000 բնակիչ): Ամերիկայի մէջ՝ Սուրբ Պետրոս և Միքելոն կղզիները՝ Ս. Լաւրենտիոսի ծոցին մէջ, Կուատա-լուբբա և Կույանա Գաղղիական (300,000 բնակիչ): Ովկիանիայի մէջ՝ Մարքիզ կղզիները, Թայի-թի և Նոր Գալէտոնիա (80,000 բնակիչ):

6°. ՊԵԼՃԻՔԱ

164. Պելճիքան երկար ատեն Աւստրիոյ կայսեր ձեռքն էր, անցեալ դարուն վերջերը Գաղղիա-ցիք առին, բայց 1814ին զատ թագաւորութիւն եղաւ, որ Հոլանտային հետ Օրանժ Նասաւեանց Տէրու-թեան կ'իշխուէր: 1830ին Պելճիքան Հոլանտայէն բաժնուելով առանձին թագաւորութիւն եղաւ: Կա-ռավարութիւնն է Սահմանադրական միապետու-թիւն: Կրօնքը՝ մեծ մասը Հռովմէական: Լեզուներն Գաղղիերէն և Ֆլաման, որ Գերմաներէնի մէկ տե-սակն է:

165. Պելճիքայի սահմանը հիւսիսէն Հոլանտան է, արեւելքէն Գերմանիան, հարաւէն Գաղղիան և արեւմուտքէն հիւսիսային ծովը: Տարածութիւնն է 29,400 քիլօմէթր քառակուսի, բազմամարդութիւնը 4,585,000: Երկիրը դաշտային է, քանի մը լեռ-ներ միայն արեւելեան կողմը կայ: Բերքն է երկաթ, հանքածուխ, փայտ, արմտիք, աղէկ ձեռագործ: Երկաթուղիներն ալ շատ են:

Պելճիքայի գլխաւոր քաղաքներն են,

Պրիւքսել (252,000 բնակիչ) մայրաքաղաքը

Խարօյին հաղորդուած ջրանցքին վրայ շինուած է, սոր արևելեան հարաւային կողմը 13 քիլօմէթր հեռու Վաթերլոյ գիւղն է ուր մեծն Նաբոլէոն յաղթուեցաւ դաշնակից զօրքերէն 1815 ին:

Կանտ, Անվէրսա, Պրուժ, Լիէժ, Նամուր, և այլն:

7°. ՀՕԼԱՆՏԱ

166. Հօլանտացիք Սպանիացւոց տակն էին, 1579 խռովութիւն մը հանելով զատ հասարակապետութիւն եղան շատ ճարտար և հարուստ: Անցեալ դարուն վերջերը Գաղղիացիք յաղթեցին, բայց 1815ին Հօլանտան ու Պելճիքան ի միասին թագաւորութիւն մը ձևացան Ստորին Նահանգաց Տէրութիւն անունով, և 1830 ին իրարմէ զատուեցան: Կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն, կրօնքը բողոքականութիւն: Հօլանտական Լուքսեմպուրկը և Լիմպուրկը Գերմանական դաշնակցութեան մաս են:

167. Հօլանտային սահմանը հիւսիսէն ու արևմուտքէն Հիւսիսային ծովն է, հարաւէն Պելճիքան արևելքէն Գերմանիա: Տարածութիւնն է 34,200 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 3,500,000: Երկիրը ընդհանրապէս ծովէն ցած ըլլալուն համար մեծամեծ թումբեր շինած են ջուրը բռնելու: Օդը խոնաւ, փոփոխական և անառողջ է: Հողը ցած ու ջրոտ ըլլալուն՝ խիստ պտղաբեր չէ: Բերքն է հանքածուխ, կտաւ, կաշի, կարմիր ներկ ու աղէկ

ձեռագործ ։ Խիստ ընտիր են կովերն ու ոչխարները, և անոնց պանիրը ։ Շատ երկաթուղիներ ունենալով վաճառականութիւնը շատ ծաղկած է ։

Հոլանտայի գլխաւոր քաղաքներն են,

Հայգա (66,000 բնակիչ) հիմակուան մայրաքաղաքը Հիւսիսային ծովուն մօտ Հոլանտայի էն գեղեցիկ քաղաքն է ։

Ամսդերտամ (270,000 բնակիչ) հին մայրաքաղաքը, մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի, ատենով հոստեղի Հայոց տպարանը անուանի էր ։ Ռոթերտամ, Ուտրեխթ, Լէյտա, Հարլէմ, ևայլն ։

Հոլանտայի կղզիներն են,

Զույտերզէի, ծոցին մէջ հիւսիսի կողմին վրայ գրեթէ կղզիներու շղթայ մը ծածկած է, որոց գլխաւորն է Թեքսէլ ։

Զելանտի նահանգը Էսքօ և Մէօզ գետերուն բերաններէն ձևացած կղզեաց խումբ մըն է ։

Հոլանտացւոց Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են.

1°. Ափրիկէի մէջ՝ Սուրբ Գէորգ, հիւսիսային Կուինէային մէջ ։ 2°. Ամերիկայի մէջ՝ Կույանայի մէկ կտորը, Բարամարիպօ գլուխը՝ Սուրինամ գետին վրայ, Սուրբ Մարտինոս կղզոյն արևելեան հարաւային մասը Սուրբ Եւստաթէոս և Քուրասաօ կղզիները, որ փոքր Անդիլեան կղզիներուն քովերն

են. Քուրասաօի մօտ Պօնէր և Արիւպա: 3° Մալէզիայի մէջ՝ Սումատրա կղզին մէկ մեծ մասը, Պանգա ու Պէլիդօն կղզիները, Ճաւա կղզին մէկ կտորը մայրաքաղաքը Պաթավիա, Փոքր Մոլուքեան կղզիները, և Ամպոյնա կղզին: (17,500,000 բնակիչ):

8°. ԶՈՒԻՑԵՐԻ

168. Զուիցցերին առենով Հելվետիա կըսուէր: Այս երկրին բնակիչները միշտ իրենց քաջութեամբը անուանի եղած են: Յուլիոս Կեսարի առեն Հռովմայեցւոց տակն էին, ետքը Գաղղիացւոց անցաւ, ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ, 1308 էն զատ հասարակապետութիւն եղան, որոյ վրայ Նաբոլէոն ալ մէկ քանի նահանգներ աւելցուց: Հիմա 1815 էն ի վեր կառավարութիւննին է հասարակապետութիւն 22 նահանգի որ իրարու դաշնակից են, ու զատ զատ կառավարութիւն ունին, Քանի որ ընդհանուր ժողով չըլլար, բոլոր հասարակապետութեան գլխաւոր կառավարութիւնը խորհուրդ կը կազմէ այս երեք քաղաքներուն մէկուն մէջ Ցուրիք, Պերնա, Լուչերնա:

169. Զուիցցերիին սահմանը հիւսիսէն Գերմանիան է, արևելքէն Աւստրիան, հարաւէն Իտալիան, արևմուտքէն Գաղղիան: Տարածութիւնն է 39,000 քիլոմէթր քառակուսի, բնակիչը 2,400,000: Կրօնքը մեծ մասը Բողոքական և մնացածը Հռովմէական. լեզունին տեղ տեղ Գերմաներէն, և տեղ տեղ Գաղղիերէն: Կլիման ընդհանրապէս ցուրտ է,

բայց առողջ: Հողը շատ բարեբեր ու աղէկ մշակած է: Շատ հանքային ջրեր ունի, գետեր ալ կան որ աւազնին ոսկիով խառն է: Բերքն է կտաւ, արմտիք, մոմ, ընտիր են կովերն ու ոչխարները, և մանաւանդ ձեռագործները:

Զուիցցերիի գլխաւոր քաղաքներն են.

Ժընեւրա (32,000 բնակիչ) ամենէն երևելի քաղաքն է նոյն անունով լճին վրայ, Ռոն գետին ելած տեղը: Ձեռագործները, մանաւանդ ժամացոյցը և ուրիշ ոսկիէ ու արծաթէ բանուածները շատ յարգի են:

Պազիլիա կամ **Պալ**. (28,000), Ռէնի վրայ երկրին ամենէն վաճառաշահ քաղաքն է: Կըսեն Թէ Թուղթ շինելու արհեստը հոս գտնուած է:

Լուկեռնա (8,500 բնակիչ), այս քաղաքին քովերը ահագին առիւծ մը կայ լեռան մը կողէ փորած հին ատենէ ի վեր:

Պերնա, Ցուրիխ, Լոզանն, Շաֆֆուզ, Նէօշաթէլ, Ալրուռ, Սիոն, *ևայլն*:

9°. ԱՒՍՏՐԻԱ.

170. *Աւստրիոյ կայսերութեան մէջ երկիրներ կան, որոնք առաջները կըսուէին* Ռէթի, Նորիք, Բաննոնի *և* Տաքի: *Մեծն Կարոլոս երբ Նորիքը առաւ, անունը* Աւստրիա *դրաւ որ կը նշանակէ արեւելեան երկիր, իր տէրութեան այսինքն Գաղղիոյ և Գերմանիոյ արևելեան դին ըլլալուն համար. Աւստրիոյ կայսերը որ 1806էն առաջ Գերմանիոյ կայսր*

էին, մեծն Կարոլոսին և Հռովմի կայսրութեանց յաջորդը կը համարուէին: 1500ին Մաճառաց և Պօհեմիոյ Թագաւորութիւնները իրենց երկրին միացուցին: 1772ին Լեհաստանէն Կալիցիան իրենց բաժին ինկաւ: 1814ին Լիւրիւկէն, Տալմացիան, Լոմպարտիան և Վենետիկը իրենց եղաւ: Բայց 1859ին Լոմպարտիան պատերազմաւ կորուսին և Սարտենիոյ միացաւ:

Կառավարութիւնը Միապետական է, կրօնքը Հռովմէական բայց տեղ տեղ Արևելեան եկեղեցիի հետեւող և Բողոքական ալ կայ:

171. Աւստրիոյ սահմանն է հիւսիսէն Բրուսիան և Լեհաստանը, արևելքէն Ռուսաստանը և Մոլտավիան, հարաւէն Պոսնիան, Սերվիան, Ադրիական ծովը և Հռովմայ տէրութիւնը. արևմուտքէն Սարտենիան ու Պաւիերան: Տարածութիւնը 644,000 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 37,000,000, որոց լեզուն տեղ տեղ Գերմաներէն, Իտալերէն, Սլաւերէն ու Մաճառերէն է: Երկրին մեծ մասը լեռնոտ և բարեբեր է: Կլիման ընդհանրապէս բարեխառն և առողջ է: Բերքն է երկաթ, պղինձ, կապար, աղ. Մաճառիստանի մէջ ոսկիի հանք ունի, որուն նմանը ուրիշ տեղ չիկայ, շատ արծաթ ու սնդիկ կելլէ Աւստրիայէն, անուանի է Դոքայի գինին, Պոհեմիայի ապակին: Քաղաքականութիւնը, ճարտարութիւնը և վաճառականութիւնը այս վերջի տարիներուս մէջ շատ առաջ գացած են, ինչպէս նաև երկաթուղիները:

Աւստրիոյ կայսրութիւնը 12 գլխաւորմասի կը բաժնուի, Եր Գերմանական դաշնակցութեան մէջ, այսինքն .

1°. Արշիդքսութիւն Աւստրիոյ, որոյ գլխաւոր քաղաքներն են

ՎԻԵՆՆԱ. (600,000 բնակիչ) մայրաքաղաք, Գերմանիոյ աւելի մեծ քաղաքն է: Երկու անգամ տաճկի պաշարմանը դէմ կեցած է 1529ին, 1683ին, բայց 1809ին Գաղղիացիք առին: 1814 և 1815ին տէրութեանց ժողովները հոս եղան, ուր որոշուեցան Եւրոպայի կառավարութեանց սահմանները: Անուանի է կայսերական գրատունը, զինարանները, Թանգարանը, համալսարանը և ուրիշ ուսումնական տեղուանքը. հոս է Մխիթարեանց հայոց վանքը որ Թրեստէն 1811ին հոս փոխադրուած է:

Լինց, Սալցպուրկ, ևայլն:

2°. Իսթիրիա, գլխաւոր քաղաք՝ Գրաց:

3°. Իլիրիէ, գլխաւոր քաղաքները Լուպիանա, կամ Լայպախ, Թրիեստ, ևայլն:

4°. Թիրոլ, գլխաւոր քաղաքները՝ Ինսբրուք, Պրիքսէն, Թրէնթ, ևայլն,

5°. Պոհեմիա. գլխաւոր քաղաքները՝ Բրակայ, Ռայխենպերկ, Բուդդենպերկ ևայլն

6°. Մորաւիա, գլխաւոր քաղաքները՝ Պրիւն, Բրոզնից, Օլմից, ևայլն:

Եր Գերմանական դաշնակցութենէն դուրս:

1°. Կալիցիա, գլխաւոր քաղաքները՝ Իլվով, Դրագովիա, Պրոտի, ևայլն:

2°. Մաճառաստան, գլխաւոր քաղաքները՝ Պուտա, Բրեսպուրկ և Բեշթ, եայլն:

3°. Թրանսիլվանիա, գլխաւոր քաղաքները՝ Հերմանշթատ, Քլաուզենպուրկ, եայլն:

4°. Խրվաթիա և Սքլավոնիա գլխաւոր քաղաքները՝ Ակրամ, Ֆիում, Վարաստին, եայլն:

5°. Տալմացիա, գլխաւոր քաղաքները՝ Զարա, Սբալաթրոյ, Րակուզ, եայլն:

6°. Վենետիկ, գլխաւոր քաղաքները՝ Վենետիկ. Վերոնա, Մանդուա, եայլն:

Աւստրիոյ կը վերաբերի միայն Իլիրիէնեան կղզիները որ Ադրիական ծովուն արեւելեան հիւսիսակողմը կ'իյնան, որոց գլխաւորներն են Շերսօ, և Վեյլիա Լիբուռնիկէի մէջ. Արպօ, Բակօ, Կրօսա; Պռացցա, Լեցենա, Քորցօլա և Մելիտա Տալմացիայի մէջ:

10°. ԲՐՈՒՍԻԱ

172. Թէատոնեան ասպետները ԺԳ դարուն ըսկիզբները տիրեցին այս երկրին արեւելեան կողմին, Բրուսիոյ մեծնալը 1700 էն եղաւ, որ ատեն իրենց Փրետերիկոս Թագաւորը Լեհաստանի մէկ կտորին ալ տիրեց: Ետքէն նաև առացան արեւմտեան Բրուսիոյ մէկ մասը և Բոզէնի մեծ դքսութիւնը: Կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է: Կրօնքը Լուտերականութիւն, բայց շատ Հռովմէականներ ալ կան:

173. Բրուսիոյ սահմանը հիւսիսէն Պալթիկ

ծովն է, արեւելքէն Լեհաստան, հարաւէն Աւստրիա, արեւմուտքէն Գերմանիա: Տարածութիւնը 276,000 քիլոմէթր քառակուսի. բնակիչը 17,200,000: Երկիրը գրեթէ դաշտային և ջրոտ է, հիւսիսի կողմը շատ լիճեր կան: Կլիման ցուրտ է անոր համար շատ պտուղ չի հասնիր հոս: Բերքն է ամէն տեսակ հանք, կտաւ, աղէկ ձեռագործ, յախճապակ, ոչխար, ազնիւ բուրդ, և չուխայ: Քաղաքականութիւնը և արուեստները շատ ծաղկած, երկաթուղիները և վաճառականութիւնը շատ յառաջ գացած են:

Բրուսիոյ Թագաւորութիւնը 8 նահանգի կը բաժնուի, 6ը Գերմանական դաշնակցութեան մէջ և 2ը Գերմանական դաշնակցութենէ դուրս:

Գերմանական դաշնակցութեան մէջ եղած 6 նահանգներն են.

1°. **Բրանտէպուրկ**. Գլխաւոր քաղաքները.
Պերլին (455,000 բնակիչ) տէրութեան մայրաքաղաքը, Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է:
Երկաթէ ու յախճապակէ բանուածքը խիստ ազնիւ է: Անուանի է համալսարանը:
Բոցդամ. Քիւսթրէն, Ֆրանքֆորթ Օտէր գետին վրայ:

2°. **Բոմերանիա**, գլխաւոր քաղաք Սթեթին:

3° **Նահանգ Սաքսոնիայի**, երեւելի քաղաք Մակտէպուրկ, հոս ծնած է Ոթոն՝ շնչելոյզ մեքենան հնարողը:

4°. **Միլէզիա**, *երևելի քաղաք* Պրեսլաւ:

5°. **Վեսբվալիա**, *երևելի քաղաք* Միւնսթէր:

6°. **Նահանգ Ռենանի**, *որ կը պարունակէ* Գլէվպերկի *դքսութեան երևելի քաղաքը* Գոլոնիա, Գլէվըս, Վեզել, Տիւսելտօրֆ *և* Պօն:

Սաորին Ռէնի *դքսութիւնը*, *երևելի քաղաք* Գօպլենց:

Գերմանական դաշնակցութենէ դուրս եղած 2 նահանգներն են.

1°. **Ռուն Բրուսիա**, *գլխաւոր քաղաքները* Գօնիկսպերկ, Տանցիկ:

2°. **Բօզենի** *մեծ դքսութիւն. գլխաւոր քաղաքը* Բօզեն:

Բրուսիան քանի մը կղզի ունի Պալթիկ ծովուն մէջ, որոց գլխաւորն է Ռուկեն կղզին, *գլխաւոր քաղաքը* Պերկեն (2,200 *բնակիչ*):

ԺԱ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԳԵՐՄԱՆԻԱ

174. *Գերմանիան ամբողջապէս երբէք Հռովմայի տակ չի գտնուեցաւ, զանազան բարբարոս ժողովրդոց ձեռքն էր, որոնք շատ անգամ Եւրոպան կաւրշտկէին, մինչև որ մեծն Կարոլոս իններրորդ դարուն մէջ բոլորովին նուաճեց, և իր յաջորդները Գերմանիոյ կայսր ըսուեցան. բայց* 1806 *Ֆրանչես*

կոս Բ. կայսրը պարտաւորեցաւ հրաժարիլ աւագութենէ (այսինքն Գերմանիոյ կայսր ըսուելէ), անկէ ետքը միայն Աւստրիոյ կայսր ըսուեցաւ. և Գերմանական հին դաշնադրութիւնը աւրելով՝ Ռէնի դաշնադրութիւնը կազմուեցաւ Գաղղիոյ պաշտպանութեանը տակ: Բայց 1814ին Վիեննայի ժողովին մէջ հաստատուեցաւ այս օրուան Գերմանական դաշնակցութիւնը որ 35 տէրութիւններէ կը բաղկանայ, որոնք իրարմէ անկախ կառավարութիւն ունին, միայն արտաքին յարձակմանց դէմ փոխադարձ իրար պաշտպանելու համար միացած են: Այս դաշնակցութեան գլխաւոր տէրութիւններն են իրենց առաջնութեան կարգաւը, Աւստրիոյ կայսրը. Բրուսիոյ, Պաւերայի, Սաքսոնիայի, Հանովերի և Վիւրդեմպերկի Թագաւորները: Գերմանիոյ մէջ կրօնքըն ազատ է, հիւսիսի մէջ Բողոքականութիւնը և հարաւի մէջ Հռովմէականութիւնը կը տիրէ:

175. Գերմանական դաշնակցութեան սահմանը հիւսիսէն Պալթիկ ծովն ու Տանիմարքան է, արեւելքէն Բրուսիան ու Լեհաստանը, հարաւէն Աւստրիան ու Զուիցցերին, արևմուտքէն Գաղղիան ու Հոլանտան: Տարածութիւնն է 644,034 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 44,000,000: Երկրին հարաւի կողմը լեռնոտ ու անտառներով լեցուն է, և հիւսիսի կողմը դաշտային ու ջրոտ: Բերքն է ամէն տեսակ հանք, մանաւանդ արծաթ ու կապար, որ Սաքսոնիայէն կ'ելլեն: Բոյսերուն մէջ անուանի են ցորենը, Պտուղները, ծխախոտը, կանեփը և

ցեղախմբերը. կենդանիներուն մէջ ալ ձին։ Ճարտարութիւններն ու գիտութիւնները շատ առաջ գացած են, և երկաթուղիներն ալ ամէն կողմ տարածուած։

ԱՂԻՒՍԱԿ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ	ՄԱՅՐԱՔԱՂԱՔՔ
1. Աւստրիա	Վիեննա.
2. Բրուսիա	Պերլին.
3. Պավերա	Միւնիխ.
4. Սաքսոնիա	Տրեզտա.
5. Հանովր	Հանովր.
6. Վիւրդեմպերկ	Սթիւթկարտ.
7. Պատ	Քարլսրուհ.
8. Հեսս-Էլէքթորալ	Քասել.
9. Հեսս-Տարմշթատ	Տարմշթատ.
10. Հոլշթայն-Լաուենպուրկ..	Քիէլ-Լաուենպուրկ
11. Լուքսենպուրկ եւ Լիմպուրկ	Լուքսենպուրկ.
12. Սաքս Վայմար........	Վայմար.
13. Սաքս-Ալթենպուրկ.....	Ալթենպուրկ.
14. Սաքս-Մայնինկեն	Մայնինկեն.
15. Սաքս-Գոպուրկ-Կոթա ..	Գոպուրկ.
16. Մեքլենպուրկ-Շվերին ..	Շվերին.
17. Մեքլենպուրկ Սթրելից ..	Սթրելից.
18. Պրունսվիք	Պրունսվիք.
19. Նասաու	Վիսպատեն.

20. Անհալթ-Տեսավ-Կօթեն . Տեսավ.
21. Անհալթ-Պեռնպուրկ ... Պեռնպուրկ.
22. Շուարցպուրկ—Սոնտէր-հաուզէն............ Սոնտէրհաուզէն.
23. Շուարցպուրկ–Ռուտօլշ-թատ .... Ռուտօլշթատ.
24. Հոլշթայն-Օլտենպուրկ .. Օլտենպուրկ.
25. Լեխթենշթայն .... Լեխթենշթայն.
26. Վալտէք .... Գորպախ.
27. Ռայս-Կրայց .... Կրայց.
28. Ռայս-Շլայց .... Շլայց.
29. Լիբբէ-Տեդմոլտ....... Տեդմոլտ.
30. Լիբբէ-Շաումպուրկ ... Պուքէպուրկ.
31. Հէս-Հոմպուրկ........ Հոմպուրկ.

ԱԶԱՏ ՔԱՂԱՔՔ

32. Ֆրանքֆօրթ-Մայն գետին վրայ.
33. Լիւպէք.
34. Պրեմա.
35. Համպուրկ.

Պաւերայի *Թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին. կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն է. իր բնակչացը երկու երրորդը Հռովմէական են: Պավերան երկուքի կը բաժնուի, մէկը՝* բուն Պավերա *Գերմանիոյ կեդրոնը, միւսը՝* Պավերա Ռենան, *Ռեն գետին ձախ եզերքը:*

Գլխաւոր քաղաքներն են.

Մոնախոյ *կամ* Միւնիխ (137,000 *բնակիչ*) *մայ-*

բաքաղաք, Գերմանիոյ գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մէկն է. հոյակապ է Թագաւորական պալատը, համալսարանն ալ անուանի:

Նուրեմպէրկ (60,000 բնակիչ), հոս շատ ծաղկած են ձեռագործները, որուն համար մեծ առուտուր կըլլայ. ծոցի ժամացոյցը հոս գտնուած է:

Ուրիշ երեւելի քաղաքներն են Աւկսպուրկ, Ռաթիսպոնա, Վիցպուրկ, եայլն:

Սաքսոնիայ Թագաւորութիւնը 1806ին հաստատուեցաւ. ժողովրդեան մեծ մասը Բողոքական բայց Թագաւորը Հռովմէական է:

Գլխաւոր քաղաքներն են,

Տրեզտա (120,000), Էլպա գետին վրայ, Գերմանիոյ գեղեցիկ և աւելի ճարտար քաղաքներէն մէկն է. երեւելի է գետին վրայի կամուրջը, և մայր եկեղեցին, ուսման կողմանէ ալ Գերմանիոյ Աթէնքն ըսուած է:

Լիբսիայ կամ Լայբցիկ (70,000), անուանի է անոր համալսարանը և մեծ տօնավաճառը և գրքի առուտուրը: Լայպնից փիլիսոփան ալ հոս ծնած է:

Ուրիշ երեւելի քաղաքներն են,

Շեմնից, Ֆռայպերկ, Պաւցեն:

Հանովր 1814ին ձեւացաւ Սահմանադրական Թագաւորութիւն մը. կրօնքը Բողոքական:

Գլխաւոր քաղաքներն են.

Հանովր կամ Անովեր, (50,000), մայրաքաղաք,

հոս բարձրացած է Լայպնիցի արձանը, և հոս է Հէրշել աստղաբաշխին հայրենիքը:

Օսնապրիւք (12,000), 30 տարուան պատերազմէն վերջը այս քաղաքիս մէջ Վեսթֆալիայի խաղաղութիւնը եղաւ:

Ուրիշ երևելի քաղաքներն են,

Կոդդինկա որոյ համալսարանը երևելի է. Գլաւսթալ, ևայլն:

Վիւրթեմպերկ 1806 ին Սահմանադրական Թագաւորութիւն եղաւ, իր բնակչացը երկու երրորդը Բողոքական է:

Գլխաւոր քաղաքներն են,

Սթիւթկարտ (50,000) մայրաքաղաք, Նէքէր գետին վրայ, ուսմունքն ու արուեստները շատ ծաղկած են:

Ուլմ (22,000) Դանուբին վրայ Գերմանիոյ ամուր ու անուանի բերդաքաղաքներէն մէկն է:

Երևելի են նաև Լուտվիկսպուրկ, Էսլինկէն, Հայլպրոն, ևայլն:

Գերմանական դաշնակցութեանց ուրիշ գլխաւոր քաղաքներն են.

Համպուրկ (170,000 բնակիչ) ազատ քաղաք, Էլպա գետին վրայ, Գերմանիոյ առաջի վաճառաշահ քաղաքն է. անուանի է շաքարի գործարանները:

Ֆրանքֆորթ, Մայն գետին վրայ (70,000), ա-

փառքաղաք, Գերմանական դաշնակցութեան ժողովի տեղն է. մեծագործ է հասարակաց ժողովարանը, ուր Գերմանիոյ կայսերաց ընտրութիւնը կ'ըլլար և հոն կը տեսնուէր կայսերաց Սահմանադրութիւնը պարունակող ոսկի հրովարտակը. երևելի է նաև Հռովմէականաց Սուրբ Բարթողիմէոսի եկեղեցին որոյ մէջ կայսրը կօծուէր:

Պրեմն, (60,000) ազատ և վաճառաշահ քաղաք Վիզէրի վրայ:

Մայնցա, կամ **Մայնց** (35,000), Գերմանիոյ խիստ ամուր քաղաքն է, հոս ծնած է Յովհաննէս Կուդդէնպէրկ տպագրութեան գտնողը:

Ուրիշ երևելի քաղաքներն են,
Պրունսվիք, Լիւպէք, Եէնա, ևայլն:

ԺԲ. ԲՈՐԴՈՒԳԱԼ

176. Բորդուգալի հին անունը Լուսիտանիա կըսուէր, 712 էն մինչև 715 Մաւրիտանացւոց (Արաբացւոց) ձեռքը մնաց: Ալֆոնս Հենրիկոս՝ Միւսլիմանից վրայ մեծ յաղթութիւն մը ընելով Բորդուգալի Թագաւոր հրատարակուեցաւ 1139 ին, բայց 1580 էն մինչև 1640 Սպանիացի դատաւորաց ձեռքը մնաց, որ ատեն Յովհաննէս Դ. Թագաւոր եղաւ Բորդուգալցոց: Կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն, կրօնքը Հռովմէական:

177. Բորդուգալի սահմանը հիւսիսէն և արևելքէն Սպանիան է, հարաւէն ու արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը: Տարածութիւն է 94,800

քառակուսի քիլօմէթր, բնակիչը 3,300,000:

Երկիրը լեռնոտ, ջրոտ ու բարեբեր է, բայց քիչ մշակած: Կլիման բարեխառն ու առողջ: Բերքն է ամեն տեսակ հանք, մանաւանդ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, աղ, մարմարիոն. պտուղներն են լիմոն, նարինջ, խաղող, մետաքսն ալ ազնիւ է:

Գլխաւոր քաղաքներն են,

Լիզպօնա (260,000 բնակիչ) մայրաքաղաք, Թակոի բերնին վրայ Եւրոպայի մեծ ու գեղեցիկ նաւահանգիստներէն մէկն է, երեւելի է Ալգանթարայի ջրանցքը որ 35 կամարի վրայ շինուած է ճերմակ մարմարիոնէ, 1735 ի երկրաշարժէն գրեթէ բոլորովին կործանեցաւ:

Ուրիշ երեւելի քաղաքներն են Օբօրթօ, Էլվաս, Գոյիմպրա, Պրակա, եայլն:

Բորդուգալի Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են,

1°. Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի Տիու և Կօա քաղաքները, Մաքաոյ կղզին ի Չին (400.000 բնակիչ).

2°. Ափրիկէի մէջ՝ Ասօրեան կղզիները, Մատէրա և Սուրբ Թովմաս կղզիները, Գալարի գըլխոյ կղզիները, Սենեկամպիոյ արեւմտեան կողմը՝ Կեպա քաղաքը, ի Գոնկոյ՝ Անկոլա ու Պէնկուելա, Մոզամպիք, և ի Մոնոմոդափա՝ Զանկեպարին ծովեզերքը այլեայլ տեղուանք (1.058,000 բնակիչ).

3°. Ովկիանիայի մէջ՝ Դիմորի մէկ կտորը (918,000):

ԺԳ. ՍՊԱՆԻԱ

178. Սպանիան առենով Հռովմայեցւոց ձեռքն էր. ութերորդ դարուն սկիզբները Արաբացիք տիրեցին մինչև որ 1492 ին Ֆերտինանտոս և Իզապել կրանատան առնելով վանեցին զանոնք: Քիչ մը ետքը Քրիստափոր Քոլոմպոս Ճենովացի նաւապետին ձեռամբ Ամերիկան ալ գտնուելով, Սպանիացիք խիստ մեծցան ու հարուստ Թագաւորութիւն մը եղան: Բայց այս դարուս սկիզբները Գուպա, և Բորթօ Րիքօ կղզիներէն զատ միւս Ամերիկայի երկիրները կորուսին: Իրենց ծովային զօրութեան տկարութիւնը ալ չիներեր ուրիշ գաղթականութեանց հետ յարաբերութիւններ ունենալու: Երկրին կառավարութիւնը Սահմանադրական միապետութիւն է, կրօնքը Հռովմէական. Եւրոպիոյ մէջ միայն այս երկիրն է ուր հարտարութիւնը քիչ յառաջ գացած է:

179. Սպանիոյ սահմանը հիւսիսէն Գաղղիան է, արևելքէն ու հարաւէն Միջերկրական ծովը, արևմուտքէն Բորդուգալը: Տարածութիւնն է 454,250 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 15,000,000: Ծովեզերքին օդը տաք է, մէջ տեղուանքը բարեխառն: Հողը քիչ մշակած է: Գլխաւոր բերքերն են, երկաթ, սնդիկ, կապար, պղինձ, ոսկւոյ հանքը առենով առատ էր, բայց հիմայ երեսէ ձգուած է, արծաթի

ձանք ալ քիչ ունի: Գինին խիստ ազնիւ է. ունի նաև լիմոն, նարինջ, ձէթ, շաքար, բամպակ, մեղր, մետաքս: Անուանի է Անտալուսիա գաւառին ձին, և Մերինոս ըսուած ոչխարը, որ խիստ բարակ բուրդ ունի:

Սպանիոյ գլխաւոր քաղաքներն են,

Մատրիտ (300,000 բնակիչ) Մանզանարէի վրայ մայրաքաղաք 1563 էն ի վեր:

Պարսելոնա (250,000 բնակիչ) Միջերկրականի վրայ, երկրին ամուր քաղաքն է, նաւահանգիստը խիստ գեղեցիկ·

Սեւիլիա (150,000 բնակիչ), Վալենցիա (140,000), Կրանատա (100,000) Մարխտանացւոց ատքի մայրաքաղաքն էր. Կարդագինէ, Բալոս՝ այս պզտի նաւահանգիստէն ճամբայ ելաւ Քրիստափոր Գոլոմպոս 1492 ին Ամերիկան գտնելու համար:

Սպանիոյ Եւրոպայէն դուրս ունեցած երկիրներն են,

1°. Ափրիկէի մէջ՝ Սեօդա, Մելիլեա, Գանարեան կղզիները և Կուինէայի ծոցին մէջ մէկ քանի մանր կղզիներ (275,000 բնակիչ).

2°. Ամերիկայի մէջ՝ Գուպա և Բօրթօռիքօ կղզիները (1.800,000).

3°. Ովկիանիայի մէջ՝ Փիլիպեան և Մարիա-Աննա կղզիները (2,700,000 բնակիչ),

ԺԴ. ԻՏԱԼԻԱ

180. Հռովմի հիմնարկութիւնը Քրիստոսէ 753 տարի յառաջ էր, որ ատեն Թագաւորներով կը կառավարուէր, անկէ ճիշտ 243 տարի ետքը հասարակապետութիւն եղաւ, որ երթալով մեծցաւ և հին աշխարհին մեծ մասին տիրեց, Քրիստոսէ 30 տարի յառաջ Օգոստոս կործանեց հասարակապետութիւնը և ինքզինք կայսր հրատարակեց, որոյ յաջորդները հասարակապետութեան բոլոր նահանգները մինչև 400 տարի անկորուստ պահեցին: Հինգերորդ դարուն մէջ բարբարոսները Հռովմի կայսրութիւնը բաժնեցին և Իտալիան գրաւեցին, առաջ Գոթացիք և ետքը Լոմպարտացիք, 774 ին մեծն Կարոլոս զանոնք նուաճեց, իր մահուընէն ետքը Իտալիան զանազան տէրութեանց բաժնուեցաւ, շատ անգամ ալ մեծ մասը Գերմանացւոց, Գաղղիացւոց ու Սպանիացւոց ձեռքն անցաւ: ԺԸ դարուն վերջերը Գաղղիացիք առին բայց 1814 ին մեծին Նաբոլէոնի անկմանը հետ Իտալիան 9 տէրութեանց բաժնուեցաւ, Թագաւորութիւն Սարտենիոյ, երկու Սիկիլիա, Լոմպարտիա և Վենետիկ, Թոսքանայի մեծ դքսութիւն, Եկեղեցւոյ տէրութիւն. Բարմայի, Մօտենայի. Լուքայի և Մասսա-Քարրարայի դքսութիւնք: 1859 ին միայն Վենետիկը Աւստրիոյ ձեռքը մնաց և Լոմպարտիան անցաւ Սարտենիայի Թագաւորութեանը, որոյ հետ

միացաւ նոյն տարին նաև Բարմա, Մօտենա, Թոսքանա, Լուքքա, և Մասսա-Քարրարա, Երկու-Սիկիլեան և Եկեղեցւոյ տէրութեան մեծ մասը և լսուեցաւ ամենը **Միացեալ թագաւորութիւն Իտալիոյ**

Որոյ մայրաքաղաքը եղաւ 1865ին **Ֆլորէնցա** Իտալիան Գաղղիոյ Թողուց Սաւոյեան և Նիսի կոմսութիւնը:

181. Իտալիոյ սահմանը հիւսիսէն Ալպեան լեռներն են, արևելքէն Ադրիական ծովը, հարաւէն ու արևմուտքէն Միջերկրական ծովը և Գաղղիան: Տարածութիւնն է 286,000 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 25.000,000. կրօնքը Հռովմէական: Կլիման տաք և ընդհանրապէս առողջ է: Գլխաւոր բերքերն են ազնիւ քար, երկաթ, պղինձ, բամպակ, շաքար, մեղր, ձէթ, նարինջ, լիմոն, բրինձ: Անուանի է մետաքսէ բանուածքը, ապակին, յախճապակը: Վաճառականութիւնն ու արուեստները ընդհանրապէս ետ մնացած են, միայն արձանագործութիւնը, պատկերհանութիւնը, ճարտարապետութիւնը և երաժշտութիւնը անուանի եղած է:

Իտալիոյ գլխաւոր քաղաքներն են,

Թոսքանայիմեծ դքսութեան մէջ, **Ֆլորէնցա** (120,000 բնակիչ) Իտալիոյ մայրաքաղաքը, **Առնօին** վրայ, մեծագործ և անուանի է մայր եկեղեցին, Ս. Լաւրենտիոսի եկեղեցին, Մետիչիներ-

բուն մատուռը, Բիդդի պալատը, հնութեանց և բնական պատմութեանց պահարանը: Հոս ծը- նած է Տանթէ բանաստեղծը, և Ամերիկոս Վես- բուչչի:

Լիվորնօյ (90,000) ամուր քաղաք, Իտալիոյ երևելի նաւահանգիստներէն մէկն է և արևելքի հետ ունեցած վաճառականութեան կեդրոնը:

Լուքքա (25,000 բնակիչ), հին մայրաքաղաք փոքր տէրութեան մը որ 1847 ին Թոսքանայի միացաւ:

Սիենա (30,000). Բիզա (25,000) Առնօին վը- րայ, ատենով ծաղկեալ հասարակապետութիւն էր, համալսարան ունի: Անոր մայր եկեղեցւոյն զանգակատունը 15 ոտք ծռած է, գերեզմանոցին հողը Հրէաստանէն բերած են քաղաքացիք 50 նա- ւով. հոս ծնած է Գալիլէոս փիլիսոփան.

Սարտենիայի մէջ,

Թուրին (180,000) Բօին վրայ Սարտենիայի հին մայրաքաղաքը, անուանի է բազմաթիւ տպա- րանները, համալսարանը, ճեմարանը, և Եգիպ- տոսի հնութեանց Թանգարանը:

Միլան (200,000) գեղեցիկ քաղաք, բրինձի ու մետաքսի մեծ առուտուր ունի, անուանի է Սուրբ Ամբրոսիոսի եկեղեցին, ու Սքալա ըսուած Թատ- րոնը:

Ճէնովա (120,000) ամուր քաղաք, նաւահան- գիստը մեծ և բանուկ, ատենով Ճենովացւոց հըռ-

չակաւոր հասարակապետութեան մայր քաղաքն էր: Այս քաղքիս քովերը ծնած է Քրիստափոր Գոլոմպոս

Փարմայի և Մօտենայի հին դքսութեանց մէջ.

Բարմա (40,000) Թատրոնը Եւրոպայի Թատրոնաց ամենէն ընդարձակն է, անուանի է Գոտոնեան տպարանը:

Մոտենա (32,000) մեծագործ է դքսին պալատը:

Անուանի է նաև Բիաչենցա (32,000), Ռէճճիօ (18,000), Քարրարա (7,000), ասկէց գեղեցիկ սպիտակ մարմարիոն կելլէ:

Նաբոլի Երկու-Սիկիլիայի մէջ (414,000) Իտալիոյ ամենէն մեծ քաղաքն է, գեղեցիկ նաւահանգիստ և երևելի շէնքեր ունի, համալսարանը և հնութեանց պահարանը անուանի է. ոսկիէ արծաթէ մետաքսէ բանուածքները շատ ազնիւ է, դիրքը, բարեբերութիւնը, օդը շատ զուարճալի է: Ասոր քովերն են Պոմպէա և Հէրքուլանօն հին քաղաքները որ Քրիստոսէ 79 տարի ետքը Վեսուվ լեռան մոխիրովը ու լավայովը ծածկուած էին և 100 տարիէն ի վեր մինչև հիմա կը փորեն ու կը բանան:

Սիկիլիա կղզոյն մէջ (2,300,000 բնակիչ): Երևելի քաղաքներն են,

Բալերմօ (200,000), Մեսինա (85,000) մեծ և գեղեցիկ նաւահանգիստ ունի, Սիրակուսա (20,000)

Հին ու անուանի քաղաք է, կէսէն շատը աւերակ, հոս ծնած է Արքիմետէս երկրաչափը:

Եկեղեցւոյ տէրութեան մէջ (3,000,000)։ Երևելի քաղաքներն են,

Հռովմ (180,000) հնութեանց ու գեղարուեստից կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է. եզական շէնքեր են Սուրբ Պետրոսի տաճարը, և Վատիկանի պալատն ու գրատունը.

Պոլոնիա, Անգոնա, Բերուճիա ասոր մօտ է որ Անիբաղ Հռովմայեցւոց յաղթեց:

Ֆերրարա, Չիվիթավեքքիա Միջերկրականի եզերքը նաւահանգիստ է:

Վենետիկի նահանգին մէջ, որ տակաւին Աւստրիոյ ձեռքն է, երևելի քաղաք են,

Վենետիկ (106,000) երևելի հասարակապետութեան մը հին մայրաքաղաք, 72 կղզիներու վրայ շինուած: Հոս բացուեցաւ 1836 ին Հայոց Ռափայելեան վարժարանը, մանր կղզի մըն է Սուրբ Ղազար Հայոց Մխիթարեանց երևելի մայրավանքը որ հիմնեց անուանի Մխիթար Աբբա հայրը 1717 ին:

Վերոնա, Մանդուայ, Բատուա, ևայլն:

Սարտենիա կղզին, որոյ գլխաւոր քաղաքն է, Գալիարի (35,000), և ուրիշ կղզիները, որ Իտալիոյ շուրջն են, Իտալիայի միացեալ Թագաւորութեան մաս են:

ԺԵ. ՏԱՃԿԱՍՏԱՆ

182. Տաճկաստան առնում Հռովմայեցւոց կայսե-

րութեան մասն էր, Տաճկլըները Յունաց վրայ յարձակեցան ԺԵ երրորդ դարուն մէջ և միշտ յաղթեցին, և դրացի երկիրներ գրաւեցին: Օսմանեան տէրութիւնը 1300ին սկսաւ Սուլթան Օսմանէն Բիւթանեայի կողմերը, քիչ ատենէն ետքը Պրուսան, Էտիրնէն ու Կոստանդնուպոլիսն առնելով տարածուեցաւ մինչև Մաճառստան ու Գերմանիա: Բայց ԺԸ երրորդ դարուն մէջ Ռուսերը առին Սև ծովուն հիւսիսի եզերքը գտնուած երկիրները, և ԺԹ երրորդ դարուն մէջ ալ Յոյները անկախ տէրութիւն մը կազմեցին Տաճկաստանի հարաւային կողմը հին Յունաստանի և Արշիպեղագոսի մէկ քանի կղզիներուն մէջ: Մոլտավեան, Վալաքեան, Սերվիան, ու Մօնթէնեկրօն անկախ իշխանութիւններ ձևացան: Տաճկաստանի կառավարութիւնը բացարձակ միապետական է: Տէրութեան կրօնքը Մահմէտական և ժողովրդեան մեծ մասը Քրիստոնեայ է, Արևելեան եկեղեցի: Մահմետականք և ընդհանրապէս Տաճկաստանի ժողովուրդները տգէտ են, մինակ լեզու կը սորվին, գիտութիւն և արուեստ սորվելու անփոյթ են: Այսու ամենայնիւ քանի մը տարի կայ որ Տաճկաստան քաղաքակրթութեան մէջ յառաջ կերթայ:

183. Տաճկաստան երկուքի կը բաժնուի Եւրոպայի Տաճկաստան (Ռումէլի), Ասիոյ Տաճկաստան (Անատօլու): Եւրոպիոյ Տաճկաստանի սահմանն է հիւսիսէն Ռուսաստան, արևելքէն Սև ծովը ու Ասիան, հարաւէն Արշիպեղագոսն ու Յունաստան, արևմուտքէն Աւստրիա: Տարածութիւն է 521,200 քի-

լոմէթր քառակուսի, բնակիչք 15,500,000 ։ Գլխաւոր լեռներն են Պալքան՝ որոյ ճիւղերն են Տեսփոթ տաղը, Զարտաղը, Տինարեան լեռները. Պինտոս լեռը, Ոլիմպոս կամ Լաքա. Պանեաոս և Քիմերեան լեռները։ Գլխաւոր գետերն են Դանուբ՝ Սև ծովը կը թափի, Տրին՝ Ադրիական ծովը կը թափի, Մերիճ՝ Արշիպեղագոսը կը վազէ. Մորաւա, Ալութա, Սերեթ՝ Դանուբ գետը կը թափին։ Երկիրը շատ լեռնոտ է, մանաւանդ հարաւի կողմը, անոր համար սաստիկ ցուրտ կըլլայ։ Հողը բարեբեր է, բայց քիչ մշակած, շատ տեսակ հանք ունի, բայց քիչ բանեցուցած։ Գլխաւոր բերքն է ցորէն, բրինձ, խաղող, նարինջ, ձէթ, բամպակ, մետաքս, քրքում և ծխախոտ։ Արհեստն ու ճարտարութիւնը հիմա առաջ երթալու վրայ են։ Անուանի են մետաքսէ բանուածքները, դիպակը, շալն ու կաշին։

Գլխաւոր քաղաքներն են,

Կոստանդնուպոլիս (1,000,000 բնակիչ) Մայրաքաղաք, Սև և Մարմարա ծովերը միացնող Պոսփոր նեղուցին վրայ, դիրքը եզական, նաւահանգիստը փառաւոր և ընդարձակ, որ 1200 նաւէն աւելի կառնէ. վաճառականութիւնը խիստ բանուկ. Այս քաղաքը՝ իբրև մայրաքաղաք Հռովմայի կայսերութեան՝ Մեծն Կոստանդիանոս հիմնեց 330ին հին Բիւզանդիոնի աւերակացը վրայ. քաղաքիս դրսի տեսքը զարմանալի շքեղութիւն մը ունի, բայց փողոցներուն

նեղութեան և շէնքերուն անկանոն կերպով ըլլալուն պատճառաւ ներսէն շատ տգեղ կերևայ:

Շէնքերուն մէջ երևելի են մի քանի մզկիթներ մանաւանդ Այասոֆեան որ Յուստինիանոս կայսրը շինած է: Անուանի է նաև փողերանոցը, Թագաւորին պալատները նոր բացուած գործարանները ևայլն: Ֆաթիհ Սուլթան Մէհմէտը 1453ին առաւ այս քաղաքը: Բուն քաղաքը, շուրջը 8 քիլօմէթր երկայնութեամբ պարիսպի մը մէջ է, բայց շատ ու ընդարձակ արուարձաններ ունի:

Անդրիանուպոլիս կամ Էտիրնէ, (130,000 բնակ.), Մարիցա գետին վրայ, 1453էն առաջ տէրութեան մայրաքաղաքն էր. անուանի է Սուլթան Սէլիմին մզկիթը:

Ուրիշ երևելի քաղաքներն են,

Ֆիլիպէ, Սելանիկ, Վառնա, Սիլիստրէ, Ռուսճուգ, Վիտին, Պօսնա, Սօֆիա, Եանեա, Լարիսա, ևայլն:

Տաճկաստանի հարկատու և անոր պաշտպանութեան տակ գտնուող իշխանութիւններն են,

1°. **Ղարատաղ** կամ **Մօնթէնէկրօ**, որոյ մայրաքաղաքն է Չեդդինա.

2°. **Սերվիա**, որոյ մայրաքաղաքն է Պելկրատ, (32000 բնակիչ)

3°. **Դանուբեան իշխանութիւնք** կամ Ուլահ Պուղտան, և Մոլտօ-Վալաքիա,

Պուքրէշ (106,000 բնակիչ) Վալաքիոյ կամ Ուլահի մայրաքաղաքը:

Եաշ (54,000 բնակիչ) Մոլտավիոյ կամ Պուղտանի մայրաքաղաքը:

Եւրոպայի Տաճկաստանի վերաբերեալ կղզիներն են,

Թասոզ, կամ Թասոս, Սամոթրակէ կամ Սեմէնտ-րէ, Լեմնոս կամ Լիմնի՝ որոյ լաբիւրինթոսը անուանի էր, Կրէտէ կամ Քանտիա.

ԺԶ. ՅՈՒՆԱՍՏԱՆ

184. Հին ատենը Յունաստանը գրեթէ իրարու դաշնակից զանազան հասարակապետութեանց բաժնուած էր արուեստներն ու գիտութիւնները շատ ծաղկած էր. Ետքերը Հռովմայեցւոց իշխանութեան տակ ինկան, բայց երբ Կոստանդիանոս իր աթոռը Կոստանդնուպօլիս փոխադրեց, քիչ քիչ Հռովմայեցւոց կայսրութիւնը Յունաց ձեռքն անցաւ և ըսուեցան Հոռոմ: Ետքը տէրութիւնին Վենետիկցւոց ու Օսմանցւոց ձեռքն անցաւ: 1830ին Եւրոպացի տէրութիւններուն պաշտպանութեամբը միապետական նոր թագաւորութիւն ունեցան, որ 1842ին սահմանադրական միապետութեան փոխեցին, մինչև 1863 իրենց թագաւորը՝ Պաւիերայի թագաւորին տղան Օթօն էր, բայց աս ալ վռնտելով հիմա իրենց թագաւոր ընտրուեցաւ Տանիմարքայի թագաւորին տղան: Կրօնքը Արևելեան եկեղեցի:

185. Յունաստանի սահմանը հիւսիսէն Եւրոպայի Տաճկաստանն է, արևելքէն Արշիպեղագոսը հարաւէն Միջերկրական ծովը, արևմուտքէն Յոնիական ծովը: Տարածութիւնը 48,000 քիլոմէթր քառակուսի. բնա-

կիչը 1,000,000: Գլխաւոր գետերն են Օֆիէ կամ Րուֆիա՝ որ Արկադիոյ ծոցը կը Թափի, Իրին կամ Եւրոտա՝ որ Մանեայի ծոցը կը վազէ, Պամիսոս՝ որ Մեթոնի քովը կը Թափի: Հողը բարեբեր է և ամէն տեսակ հանք ունի.

Յունաստանի երևելի քաղաքներն են,

Աթենք, (50,000 բնակիչ), մայրաքաղաք, հին ատենը արուեստից և գիտութեանց հայրենիքն էր: Հոս ծնած են Սողոն, Միլտիաթէս, Թեմիստոկլէս, Արիստիտէս, Պերիկլէս և ուրիշ շատ երևելի մարդիկ:

Երևելի են Նաւպլիա, Թիւա, Կորնթոս, Թրիպոլիսա, Մեթոն, Նաւարին, ևայլն:

Յունաստանի գլխաւոր կղզիներն են,

Նեկրոփոնտ կամ Եղրիպոս, Շիրա, Նաքսա, Իդրա, ևայլն:

Յոնիական կղզիներն ալ 1864 մայիս 21ին Յունաստանի միացան:

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՍԻՈՅ

186. Ասիոյ սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է, արևելքէն Մեծ Ովկիանոսը, հարաւէն Հնդկաց ծովը, արևմուտքէն Ուրալ լեռները, Ուրալ գետը, Կասպից ծովը, Կովկաս լեռները, Սև և Մարմարա ծովերը, Արշիպեղագոսը, Միջերկրական ծովը, Սուէզի ջրանցքը և Կարմիր ծովը: Ասիան արևելեան երկայնութեան 23° էն մինչև 188° և հիւսիսային լայնութեան 1° էն մինչև 78°ը կը տարածուի: Իր բազմամարդութիւնը 700,000,000 իր տարածութիւնը 42,000,000 քառակուսի քիլոմէթր է: Աշխարհիս հինգ մասերուն ամենէն մեծն է և հին ատենէն ի վեր անուանի, որովհետև մարդկային ազգը այս մասին մէջ ստեղծուած և անկէ ցրուած է ամէն կողմ:

1°. ՌՈՒՍԻ ԱՍԻԱ

187. Ռուսի Ասիան երկու մաս կը բաժնուի, **Սիպերիա և Կովկասու Երկիրներ**: Սիպերիոյ բնակիչները շատ անգամ Եւրոպան ու Ասիան կոխեր էին, բայց իրենց երկիրը մինչև 1500 թուականը անծանօթ էր Եւրոպացոց. անկէ ետքը Ռուսերը տիրեցին, և յանցաւորները հոն աքսորելով շէնցուցին: Կովկասու երկիրներուն մէկ մասը ատենով Պարսից ձեռքն էր մէկ մասը Օսմանցոց, մէկ քանի տեղեր ալ ինքնագլուխ էին, մօտ տարիներս Ռուսերը ամէնուն ալ տիրեցին:

188. Ռուսի Ասիոյ սահմանն է՝ հիւսիսէն Սառուցեալ ծովը, արեւելքէն Պեհրինկայ նեղուցը, հարաւէն Տաճկաստան, Պարսկաստան, և Թուրքաստան, արեւմուտքէն Ուրալ լեռները: Տարածութիւնն է 13.000,000 քառակուսի քիլօմէթր և բնակիչը 6,000,000, Ռուս, Հայ, Վրացի, Մկրել, Ապազա, Չէրքէզ, Թաթար եւայլն: Կրօնքնին քրիստոնէութիւն, մահմետականութիւն և կռապաշտութիւն: Սիպերիան ամբողջ Ասիոյ երրորդ մասին չափ է և Եւրոպայէն մեծ է, բայց բնակիչը քիչ. օդը ցուրտ, երկրին մեծ մասը անապատ ու քիչ մշակուած. բերքը արծաթ, երկաթ, մագնիս, պղինձ և ազնիւ քարեր և մանաւանդ ազնիւ մորթեր: Կովկասու երկիրները լեռնոտ ու խիստ քարերբեր են. օդը առողջ, բերքը ամէն տեսակ պտուղ և արմտիք:

Սիպերիոյ գլխաւոր քաղաքներն են,

Թոպոլսք (25,000 բնակիչ), ամուր քաղաք Թոպոլի և Իրթիշի գետախառնուրդին վրայ, Չինաստանէն և Սիպերիայէն Եւրոպա գացող վաճառաց գլխաւոր տեղն է:

Իրքութսք (25,000 բնակիչ), Պայքալ լճին քովը ամուր ու վաճառաշահ քաղաք է, չուխայի գործարան ունի:

Ուրիշ երեւելի քաղաքներն են,

Տոմսք, **Եէնիսէյսք**, **Ներչինսք**, **Քեախթա**, եւայլն:

Կովկասու երկիրներուն գլխաւոր քաղաքներն են,

Տփղիս կամ **Թիֆլիզ** (30,000 բնակիչ), Վրաստանի նաքի մայրաքաղաքն էր, նոր շինուած մասը խիստ գեղեցիկ է, շատ հանքային ջրեր ունի, Կովկասու երկիրներուն կուսակալանիստ քաղաքն է, վաճառականութիւնը խիստ ծաղկած ։

Մծխիթա՝ Վրաստանի հին մայրաքաղաքը, Գանձակ կամ Եղիսաւէթբօլ՝ հին ատենը Աղուանից թագաւորութեան մայրաքաղաքը, Ախալցխա, Խութայիս, Կիւմրի կամ Աղեքսանդրուպօլիս ևայլն։

Ռէտուդգալէ, Սոխումգալէ, Անաբա, բանուկ նաւահանգիստներ են Սև ծովուն վրայ ։

Այս տեղուանքը և ներսերը Տաղստանին մէջ կը բնակին Ապազա, Չերքէզ, Լեզկի, Մնկրել և ուրիշ Կովկասային ազգեր ։

Տաղստանի ուրիշ երևելի տեղուանքն են,

Դարբանդ կամ Դուռն Ճորայ, Մոզդոք, Ղըզլար, Դարֆու, և Սդաւրոբոլ ։

2º ՀԱՅԱՍՏԱՆ

189. Դրախտը Հայաստանի մէջ ըլլալուն և Նոյի՝ տապանը Մասիս լեռանը վրայ իջնալուն համար ջրհեղեղէն թէ առաջ և թէ ետքը աշխարհիս առաջին ծաղկած տեղը Հայաստանն էր ։

Հայաստանի առաջին տէրողը եղաւ ՀԱՅԿ նահապետը, որ Նոյի թոռանը թոռն էր, և իր անունովը մեր Ազգն ալ ՀԱՅ ըսուեցաւ. բայց օտարազգիք մեզ Արմէնիան կամ Էրմէնի կ'անուանեն մեր Արամ նահապետին անունովը ։

Հայկայ և իր ցեղին Թագաւորութիւնը, որ ՀԱՅԿԱԶԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ կ'ըսուէր, տևեց 2,000 տարիէն աւելի, և Քրիստոսէ 328 տարի առաջ վերջացաւ: 179 տարի կէս մը ինքնիշխան և կէս մ'ալ Սելևկիացոց տակ կը կառավարուէր; Անկէ ետքը սկսաւ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ. որ տևեց 580 տարի և վերջացաւ 430 ին: 885ին ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ հաստատուեցաւ. որ տևեց 160 տարի, մինչև 1045: Անկէ 35 տարի ետքը, այսինքն 1080 ին սկսաւ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ Կիլիկիոյ մէջ և տևեց 295 տարի, մինչև 1375: Անկէ ետքը Ազգերնիս օտար Ազգաց բռնութենէն ցրուեցաւ և հիմա Հայաստանի մէկ մասը Ռուսաց, մէկ մասը Պարսից, և մեծագոյն մաս մ'ալ Օսմանցոց ձեռքն է:

190. Հայաստանի սահմանը հիւսիսէն Սև ծովը ու Վրաստանն է. արևելքէն Կասպից ծովը ու Պարսկաստանը. հարաւէն Միջագետք Ասորոց, արևմուտքէն Փոքր Ասիա և Միջերկրական ծովը:

Հայաստանի տարածութիւնը 385,000 քառակուսի քիլօմէթր է:

Հայկազանց իշխանութեան և Արշակունեաց Թագաւորութեան ատեն Հայաստանը աւելի ընդարձակ և բազմամարդ էր, բայց հիմա նոյն բազմամարդութիւնը չունի. և բոլոր աշխարհիս վրայ հազիւ թէ 4,000,000 հայ կը գտնուի:

Հայաստանի գլխաւոր լեռներն են,

Այրարատեան լեռները, որոց ամենէն բարձրն է Մասիսը որ մեր Անմահ Նահապետին անունովը

կոչուած է, Տաճիկները կ'ըսեն Ախըր տաղ՝ Ձերիս Ակոռի գիւղին անունէն առնելով.

Տօրոս լեռները, որ ըսել է Ցուլ. Հայաստանի արեւմտեան հարաւային կողմը.

Կորդուաց լեռները, որ Կորդուք գաւառին անունով կոչուած են, արեւելեան հաւաւային կողմը.

Մոսխիկեան, Պարխար, Կղարջք եւայլն լեռները՝ արեւմտեան հիւսիսային կողմերը.

Անտիտաւրոս, որ Տօրոսին մէկ ճիւղն է.

Սեաւ լեռ, որ Յոյները Մաւրոս կ'ըսեն, Տօրոսին մէկ մասն է.

Սրբոյն Բարսղի լեռ կամ Երկորեակ, երկու ճիւղ բաժնուած ըլլալուն համար, Կեսարիոյ հիւսիսակողմն է, և կ'ըսուի հիմա Ալի տաղ.

Ուրիշ լեռներն են, Աղու, Առիւծ Ավոս կամ Պինկէօլ, Արայի, Բարդող, Գեղամայ. Գրգուռ, Նեբրովթայ, Ծաղկէ կամ Շահապիվան, Արագած, Արգէոս, (Էրճիաս), Սուկաւէտ, (Բէօսէ տաղը), Վարազ եւայլն լեռները,

Հայաստանի գլխաւոր գետերն են,

Եփրատ, տաճկերէն Մուրատ, որ երկու ճիւղ բաժնուած է, մէկը կ'բղխի Կարնոյ լեռներէն և Տաճկերէն կ'ըսուի Գարա սու. մէկալը Ծաղկէոյ լեռներէն, որ կ'ըսուի Արածանի, և այս է բուն Մուրատ սույու. այս երկու ճիւղերը իրարու հետ միանալով Եփրատացիք, Միջագետք աշխարհներէն և Ասորեստանէն անցնելով, Պաղտատէն վար Տիգրիս գետին հետ

Շաղ կամ Տիգրիս գետոյն կը միանայ և երկուքը ի միասին մէկ գետ կը ձևանայ և կըսուի, Շաղ-Իւլ-Արապ, և Պասրա քաղքին քով այլ և այլ բերաններով Պարսից ծոցը կը թափի:

Տիգրիս կամ Դիգլաթ, տաճկերէն, Շաթ, այս ալ երկու մեծ ճիւղերէ կը բաղկանայ.

Երասխ կամ Արաս որ կը բղխի Կարնոյ լեռներէն, և մէջը շատ վտակներ առնելով կը միանայ Կուր գետոյն հետ և կը թափի Կասպից ծովը: Ընթացքը սաստիկ է և ջուրը անուշ, մէջը մեծ ձկեր կան և վրան կամուրջներ շինուած են, որոց մէկն է Չօպան Քէօփրիւսի՝ Հասան Ղալա քաղքին մէջ: Այս գետը Աստուածաշունչին մէջ Գեհոն ըսուած է:

Ճորոխ, տաճկերէն Չորուգ սույու, Բաբերդի մօտ Սպերու լեռներէն կը բղխի և կը թափի Սև ծովը: Այս գետը Աստուածաշունչին մէջ Փիսոն ըսուած է:

Ասոնք Աստուածաշունչի մէջ յիշուած Դրախտէն բղխող 4 գետերն են,

Կուր գետ, տաճկերէն Քիւր, որոյ մէկ ճիւղը կը բղխի Կարնոյ և Տայոց մէջի լեռներէն, միւսը Փառաւան լճէն Ախալ քելեքին մօտ:

Ճապսար գետ, Պարխար լեռներէն կը բղխի և կը թափի Սև ծովը:

Ալիս գետ, Տաճկերէն Գըզըլ ըրմաք. Սեբաստիոյ քովէն անցնելով կը թափի Սև ծովը:

Իրիս գետ Տաճկերէն Եէշիլ ըրմաք, որ կըսուի նաև Թօզաթ սույու, Ամասիա սույու երկու մեծ

վտակներէ կը միանայ․ մէկը կըսուի Լիզու կամ Գայլ գետ և միւսը Իրիս :

Առետ, Թուխ, Մարմետ գետերը կը թափին Բզ-նունեաց ծովը:

Հայաստանի գլխաւոր գետակները և վտակներն են:

Գայլ, Մանանաղի, Մեղու (Քարասու) Եփրատ գետը կը թափին :

Ազատ, Ախուրեան, Կարմիր, Հրազդան, Մեծամօր, Մուրց, Ոաճ, Որոտան, Քասաղ, կը թափին Երասխ գետը:

Աղստեւոյ գետակը կը թափի Կուր գետը:

Ջաւզետ կամ Զապ կը թափի Տիգրիս գետը:

Հայաստանի գլխաւոր լճերն են:

Բզնունեաց ծով, որ կըսուի նաև Վանայ ծով կամ լիճ, Ռշտունեաց ծով, ծով Վասպուրականի, ծով Տոսպայ եւայլն․ այս լիճը չորս կղզի ունի իր մէջը, Աղթամար, Առտեր, Կտուց, Լիմ:

Գեղամայ կամ Սեւանայ ծով, որուն մէջ Սեւան կղզին կայ և ջուրը անուշ է:

Կապուտան կամ Ուրմեայ լիճ, մէջը կղզի մը ունի Թելա :

Ծով Գայլատոյ, մէջէն կելնէ Պայլըգ Զայ բաւած գետը:

Ծով Կարնոյ, Կարին քաղքին մօտ, ուր շատ ձկներ և թռչուններ կըլլան:

Փալաք լիճ, իր մէջ ունի կղզի մը Փալաք:

Ծովակ Հիւսիսոյ կամ Փառախնի (Չըլտըր)

Այրարատ նահանգին հիւսիսային կողմերը, ասկէ փոքր մը կելնէ և կը Թափի Կուր գետը:

Խարբերդու ծովը. Արղնոյ ծովակ, ևայլն:

191. Հայաստանի օդը շատ առողջարար է, ամառը զուարճալի և ձմեռը սաստիկ ցուրտ է, բնակիչները առողջ կազմուածք ունին և առոյգ ու զօրաւոր են:

Հայաստան բարեբեր դաշտեր ու հովիտներ շատ ունենալով ընդհանրապէս իր հողը բերրի և պարարտ է:

Հայաստանի բերքն է գրեթէ ամէն տեսակ պտուղ, արմտիք, կենդանիներ, հանք: Պտուղներուն մէջ խաղողը ազնիւ է և շատ տեսակներ ունի, անուանի է ծիրանը, որոյ նման ուրիշ տեղ չի գտնուիր, դեղձը, սալորը, տանձ, խնձոր, սերկևիլ, Թութ, ընկոյզ, շագանակ, կաղին, նուռ, Թուզ, ձմերուկ, սեխ, վարունգ ևայլն: Ցորենը առատ է, ունի նաև հաճար, գարի, սիսեռն, ոլոռն, բակլայ, բրինձ, ևայլն: Հոս նաև յառաջ կուգայ մեղր, գազպէ; խաշնդեղ, փուշ, կանեփ, բամբակ, բուրդ, ազնիւ բանջարեղէնք, ու տեսակ տեսակ ազնիւ և գոյնզգոյն ծաղիկներ: Ընտանի կենդանեաց մէջ անուանի է արջառ, այծ, ոչխար, որոյ դմակը մինչև 12 կամ 15 հօխայ կը կշռէ՛ նաև անուանի է ձին, ջորին, ևայլն: Ոսկիի, արծաթի, պղնձի, երկաթի, և ուրիշ տեսակ տեսակ հանքեր ալ ունի:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

192. *Հին Հայաստանը գլխաւորապէս երկու մաս կը բաժնուէր*, Մեծ Հայք և Փոքր Հայք. *ասոնց վրայ կաւելնան նաև եօթն Հայաստանի միացած նահանգները, որոնք շատ ժամանակ Հայոց Թագաւորութեան երկիր եղած են:*

Ա. ՄԵԾ ՀԱՅՔ

193. *Մեծ Հայք 15 նահանգներու և 190 գաւառներու կը բաժնուէր, այսինքն,*

1°. **Բարձր Հայք**, *որ ունի 9ը գաւառ՝* Դարանաղի, Առիւծ, Մնձուր, Եկեղիք, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղգոմք, Կարին.

2°. **Չորրորդ Հայք**, *ունի 8ը գաւառ՝* Խորձեան, Հաշտեանք, Պաղնա-տուն, Բալահովիտ, Ծոփք, Հանձիթ, Գորէք, Դեգիք.

3°. **Աղձնիք**, *որ ունի 10 գաւառ՝* Արզն, Նփրկերտ, Քեղ, Կեթիկ, Տատիկ, Ազնուաձոր, Խերհետք, Գզեղ, Սալնոյ ձոր, Սասուն.

4°. **Տուրուբերան**, *որ ունի 16 գաւառ՝* Խոյթ, Ասպականունիք, Տարօն, Արշամունիք, Մարդաղի, Դասնաւորք, Տուարածատափ, Դալառ, Հարք, Վարաժնունիք, Բզնունիք, Երիվարք, Աղիովիտ, Ապահունիք, Կորի, Խորխոռունիք.

5°. **Մոկք**, *որ ունի 9ը գաւառ՝* Իշայր, միւս Իշայր, Իշոց գաւառ, Առուենից ձոր, Միջայ,

առանձնակի Մոկք, Արճայից գաւառ, Արգաստո-վիտ, Ջերմաձոր.

6°. **Կորճայք**, *որ ունի 11 գաւառ*՝ Կորդաք, Վերին Կորդիք, Միջին Կորդիք, Ներքին Կորդիք, Այտուանք, Այգառք, Մոթողանք, Որսիրանք, Կարթունիք, Ճահուկ, Փոքր Աղբակ.

7°. **Պարսկահայք**, *որ ունի 9ը գաւառ*՝ Այլի *կամ* Կուրիճան, Մարի, Թրաբի, Ագուերս, Առնայ, Տամբերս, Զարեհաւան, Զարեւանդներ, Հեր.

8°. **Վասպուրական**, *որ ունի 36 գաւառ* Ռշտունիք, Տոսպ, Բզնունիք, Արճիշանովիտ՝ Աղովիտ, Կուղանովիտ, Առբերանի, Գառնի, Բուժունիք, Առնոյոտն, Անձեւացիք, Արպաստու-նիք, Երուանդունիք, Մարդաստան, Արտազ - Ակէ, Աղբակ մեծ, Անձախաձոր, Թոռնաւան, Ճուաշռոտ, Կրճունիք, Մեծնունիք, Պալունիք, Գուկան, Աղուանդռոտ, Պատսպարունիք, Ար-տաշէսեան, Արտաւանեան, Բաքան, Գաբիթեան, Գազրիկան, Տանկրիայն, Վարաժնունիք, Գողթն, Նախճաւան, Մարանդ.

9°. **Սիւնիք** *կամ* **Սիսական**, *որ ունի 12 գաւառ*՝ Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղար-քունի, Սոտք, Աղահէճք, Ծղուկք, Հաբանդ, Բաղք, Ձորք, Արեւիք, Կուսական.

10°. **Արցախ**, *որ ունի 12 գաւառ*՝ Միւսհա-բանդ, Վայկունիք, Բերձոր, Մեծկուանք, Մե-ծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարծ-

կանք, Սիսական, Բուստիփառնէս, Կողբ.

11°. **Փայտակարան**, *որ ունի 12 գաւառ՝* Հրաքոտպերոժ, Վարդանակերտ, Եօթնփորակեան բագինք, Ռոտիբաղա, Բաղանռոտ, Առոսպիժան, Հանի, Ալի, Բագաւան, Սպանդարանպերոժ, Որմզդպերոժ, Ալեւան.

12°. **Ուտի**, *որ ունի 8 գաւառ՝* Առանռոտ, Տռի, Ռոտպացեան, Աղուէ, Տուչքատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի առանձնակ.

13°. **Գուգարք**, *որ ունի 9ը գաւառ՝* Ձորոփոր, Ծոբոփոր, Կողբոփոր, Տաշիր, Թռեղք, Կան-գարք, Արտահան, Ջաւախք, Կղարջք.

14°. **Տայք**, *որ ունի 9ը գաւառ՝* Կող, Բեր-դացփոր, Պարտիզացփոր, Ճակատք *կամ* Ճակք, Բուխա, Ոքաղէ, Ազորդ, Կաւփոր, Առսեաց-փոր.

15°. **Այրարատ**, *որ ունի 20 գաւառ՝* Բասեան, Գաբեղեանք, Աբեղեանք, Վահեւունիք, Արշա-րունիք, Բագրեւանդ, Ծաղկոտն, Շիրակ, Վա-նանդ, Արագածոտն, Ճակատք, Մասեացոտն, Կոգովիտ, Աշոցք, Նիգ, Կոտայք, Մազազ, Վարաժնունիք, Ոստան, Դուին:

194. Բարձր Հայոց Դարանաղի *գաւառին մէջն է* Սեպուհ *լեռը*, *և* Մանեայ այրք *ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ վախճանեցաւ*:

Եկեղեաց *գաւառին մէջն է* Երզնկայ *քաղաքը՝ ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ չարչարուեցաւ*:

Սպեր գաւառին գլխաւոր քաղաքներէն մէկն է Բաբերդ քաղաքը :

Չորրորդ Հայոց Բալահովիտ գաւառին մէջն է Բալու քաղաքը, և Հանձէթ գաւառին մէջն է Խարբերդ ամրոցը, Ճապաղ ջուր բերդը, Հաւաւ քաղաքը և Էկիլ ամրոցը :

Նոյն նահանգին ամենէն մեծ գաւառն է Ծոփք, որուն գլխաւոր տեղերն են Մարտիրոսաց քաղաք կամ Նփրկերտ, Խոզան գիւղաքաղաքը և Չմշկածագ քաղաքը :

Աղձնեաց նահանգին երեւելի քաղաքն է,

Տիգրանակերտ՝ Սասուն գաւառին մօտ, որ Տիգրան Ս. շինեց Տիգրիս գետին եզերքը Քրիստոսէ գրեթէ 560 տարի առաջ :

Տուրուբերանի Տարոն գաւառին գլխաւոր քաղաքն է,

Մուշ, որոյ մօտ եղած Ս. Կարապետի վանքը երեւելի է, որուն առաջ Գլակայ վանք կըսուէր : այս վանքին հիմը Ս. Գրիգոր Լուսաւորիչ դրաւ, և տասներկու գեղ անոր կալուած Թողուց, որոց միայն եօթնին մէջ 14,370 տուն կար :

Հարք գաւառին գլխաւոր քաղաքն է,

Մանաւազակերտ, Հայկաշէն՝ որ մեր Հայկ Նախահօրը առաջին շինած տեղն է :

Բզնունիք գաւառը Վանայ ծովուն քով կիյնայ, և անոր համար Բզնունեաց ծով ալ կըսուի, այս գաւառին մէջ է Բաղէշ, որ վաճառաշահ քաղաք մ՚ է

Կորճայք նահանգին Կորդուք գաւառը գինաւէտ ու բարեբեր երկիր մ'էր և բնակիչներն ալ շատ զօրաւոր. կը կարծուի որ ասոր ժողովուրդը Մարաց հետ խառնուելով նոր ազգ մը կազմած են և իրենց անունն ալ գաւառին անունովը Քուրդ լսուած է:

Կորդրիք գաւառին մէջն էր Սաղամաս քաղաքը, որ հիմայ Սալմաստ կըսեն, Ուրմեայ լճին քով: Նոյն լճին քով շինուած է Ուրմեայ քաղաքը:

Պարսկահայոց Հեր գաւառին գլխաւոր մէկ քաղաքն է Խոյը:

Հայաստանի ամենէն մեծ նահանգն է Վասպուրականը, որ ունէր 4400 գիւղ և 72 բերդ և իր մէջ 900 վանք կը համրուէր, ասոր երևելի գաւառներն են,

Ռշտունիք գաւառը՝ որ Վանայ ծովուն մօտ կիյնայ, և իր գլխաւոր քաղաքներն են Մանազկերտ, Ոստան և այլն. հոս է նաև Նարեկայ վանքը:

Տոսբ գաւառը Բզնունեաց ծովուն արևելեան կողմն է, ասոր մէջ երևելի է Վան քաղաքը, որ առաջ Շամիրամակերտ կըսուէր, Ասորեստանեայց Շամիրամ Թագուհին շինած ըլլալուն համար:

Այս գաւառիս մէջն է, Վարագ լեռը և նաև Աղթամար կղզին, որ Վանայ ծովուն մէջն է, և տասներորդ դարէն ի վեր մեր Կաթողիկոսաց մէկը հոս կը նստէր:

Արտազ կամ Շաւարշան գաւառը Այրարատ լեռանց արևելեան հարաւային կողմը կիյնայ, ասոր մէկ գլխաւոր գիւղն է Աւարայր:

Գողթն գաւառը Երասխ գետին քով է, շատ գինի ունի, հոս է Ջուղա քաղաքը, որ հիմա հին Ջուղա կըսուի:

Նախճաւան՝ որ Երասխ գետին հիւսիսակողմը Մասիս լեռանը մօտ կիյնայ, իր համանուն քաղաքը երևելի է, Նոյ Նահապետը տապանէն ելնելէն ետքը հոս բնակելուն համար:

Տայք նահանգին երևելի տեղերն են,

Առաճեղ գիւղ՝ ուրկէց էր Գիւտ Կաթողիկոսը, Թուղարս Անառիկ բերդը՝ Ճորոխ գետին վրայ շինուած, Ուխտիք կամ Օլթի բերդաքաղաքը, Մամրուան աւանը՝ որ հիմայ Նարիման կըսուի, Իշխանաց գիւղը՝ որոյ մօտ է Սամցխէ՝ որ վրացերէն երեք բերդ ըսել է, Տայոց մաս կերևայ Ախլցխա քաղաքը, որ վրացերէն Նոր բերդ ըսել է:

Այրարատ նահանգը միւս նահանգներուն մէջ տեղը իյնալուն համար Միջնաշխարհ կըսուի, ասոր գլխաւոր քաղաքներն են,

Բասեան գաւառին մէջ, Վաղարշաւան՝ Մուրց գետին Երասխին հետ խառնուելու տեղը շինուած էր, հիմայ աւերակ է, և քովը պզտիկ գիւղ մը կայ Քէօփրիւ Քէօյիւ ըսուած.

Լեւոնդուպոլիս կամ Յուստինիանուպոլիս՝ որ կերևայ թէ հիմակուան Հասանղալա ըսուած քաղքին տեղն է: Այս քաղքիս մօտ է Երասխ գետոյն վրայ շինուած եօթն կամարով կամուրջը Չօպան Քէօփրիւսիւ ըսուած, որուն հիմը կըսեն թէ Հայ հովիւ մը դրած է:

Արշարունիք կամ Երասխաձոր գաւառին մէջ Երուանդաշատ՝ որ հիմայ աւերակ է և կըսուի Գարա գալէ:

Երուանդակերտ կամ Մարմետ, Բագարան, Արտագերս բերդ, Կաղզուան քաղաք, ևայլն:

Բագրեւանդ գաւառին մէջ Վաղարշակերտ բերդաքաղաքը, որ հիմայ կըսուի Ալաշկերտ.

Բագուան մեծ աւանը, որ Նպատ լեռանը վրայ շինուած էր, և որուն ոտքէն կանցնէր Եփրատ գետը: Զարեհաւան, Վանանդակերտ, ևայլն: Ծաղկոտն գաւառը հիմայ Տիատին կամ Նահիէ կըսուի:

Շիրակ գաւառին մէջ, որ շատ բարեբեր է,

Անի՝ հռչակաւոր քաղաք, միլիոնէն աւելի բնակիչ ունէր, մէջը 1001 եկեղեցի կար, հիմայ աւերակ է, և իր աւերակները յայտնի կը ցըցնեն Թէ աշխարհիս երևելի քաղաքներէն մէկն եղած է:

Վանանդ գաւառին մէջ, Կարս քաղաքը, որ 960 ին ասոր բնակիչները փոքր Թագաւորութիւն մը ունեցան, որ կըսուէր Թագաւորութիւն Կարուց:

Արագածոտն գաւառը՝ Արագած լեռան ստորոտն է, ասոր մէջ անուանի է Օշական գիւղը Վաղարշապատի մօտ, ուր Թաղուած է Սուրբն Մեսրոպ կամ Մաշտոց. Փարպի գիւղը, ասկէ է Ղազար պատմիչը:

Մասեացոտն գաւառին մէջ երևելի է Ակոռի գիւղը, ուր Նոյ նահապետ նախ այգի տնկեց: Այս գիւղը 1840ին Մասիս լեռան հրաբուխին բռնկելովը, անկէ ելած քարերուն և մոխիրներու տակ ծածկուեցաւ մէջի բնակիչներովը:

Կողովիս գաւառին մէջ, երևելի է Բագարան գեղը, Արշակաւան, Դարոյնք անառիկ բերդը, որ հիմայ կըսուի Պայեզիտ:

Վաղարշապատ քաղաքն ալ Այրարատ նահանգին մէջն է, որ Հայաստանի երևելի Թագաւորանիստ քաղաքներէն մէկն էր: Առջի անգամ Արտիմէդ կըսուէր, բայց ետքը Վաղարշ Թագաւորը պարսպով պատելուն համար Վաղարշապատ ըսուած է: Այս քաղաքս հիմայ գիւղի նման է, և ասոր մէջն է Էջմիածնայ վանքը, որուն եկեղեցին տեղը յայտնուեցաւ տեսիլքով մեր Ս. Գրիգոր Լուսաւորչին: Այս վանքը ամենայն Հայոց Կաթողիկոսարանն է, ուր կը նստին մեր Սրբազան Կաթողիկոսները, որ է Ս. Գրիգոր Լուսաւորչի յաջորդութիւնը:

Բ. ՓՈՔՐ ՀԱՅՔ

195. Փոքր Հայք երեք մաս կը բաժնուի, **Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք**:

Առաջին Հայոց գլխաւոր քաղաքներն են.

Կեսարիա՝ Քրիստոսէ 2000 տարի յառաջ մեր Արամ նահապետին Մշակ կուսակալը շինած է Արգէոս լերին ստորոտը, որ իր անունովը առաջները Մաժաք կըսուէր: Ատեն անցնելէն ետքը Մեծին Միհրդատայ որդին փոքր Միհրդատ Քրիստոսէ 40 տարի առաջ այս քաղաքը ընդարձակեց, մեծցուց և

պարսպով շրջապատեց և ի պատիւ Յուլիոս կայսեր, անունը Կեսարիա *դրաւ:*

Եւդոկիա՝ *Իրիս գետոյն մօտ, որոյ վրայ հինգ կամարով քարաշէն կամուրջ մը կայ քաղքին դիմացը:*

Առաջին Հայոց ուրիշ երևելի քաղաքներն են.

Նազիանզ, Նիոկեսարիա, Նիկոպօլիս, Նիսսա *կամ* Նիւսա, Կոմանա, Ծամնդաւ, Զելա, *ևայլն:*

Երկրորդ Հայոց գլխաւոր քաղաքներն են.

Սեբաստիա՝ Ալիս *գետին քով շինուած*, Լառիսա, Աւարա, Տիւրիկէ *կամ* Տիբրիկէ, Տարանտա, Ակն, Զիմարա, Արաբկեր, Արօրակ, Ագշար՝ *որ է Ագշար դաշտին մէջ:*

Երրորդ Հայոց գլխաւոր քաղաքներն են.

Մելիտինէ՝ *Տաճկերէն* Մալաթիա, Սամուտիա, Քեսուն, Բարձր բերդ, Հըսնիմանսուր, Ռապան, Ուլնի:

Զահան *գաւառը Երրորդ Հայոց հարաւային կողմը կինայ, ուրկէց կը բղխի Պիւռամոս կամ Նահուն Տաճկերէն Ճիհան գետը, որ Կիլիկիայէն անցնելով կը Թափի Միջերկրական ծովը:*

Գ. ԵՏՔԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑԱԾ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

196. *Ա.* **Ատրպատական**, *որոյ երևելի քաղաքներն են.*

Դաւրէժ, Արտաւիլ, Մարաղա, Էնատ, Էրճագ, *և* Գառնին *գաւառը:*

Բ. Ադուանք. *Գլխաւոր քաղաքները՝*

Դարբանդ *Կասպից ծովուն մօտ որոյ բռնած է նաև* Թուռն *կամ* Պահակ նորայ *կամ* Հոնա, *Դարպկերէն՝* Տէրպէնտ, Շամախի, Շիրուան:

Գ. Վրաստան. *Գլխաւոր քաղաքները՝*

Մըծխիթա, Տփխիս *կամ* Թիֆլիզ, Կորի, Թելաւ, *և այլն*:

Դ. Խաղտիք. *Գլխաւոր քաղաքները՝*

Տամբուր *հիմայ կըսուի* Համշէն, Պաթում, Խօփա, Օֆ:

Եգեր, *կամ* **Կողքիսացիք** *որ չորս գաւառ ունի* Միւռնիսա *կամ* Մեկռել, Եգրեւիկա, Ղազիւ *կամ* Լազք, Ճանիկա, *գլխաւոր քաղաքները՝* Դիոսկուրիաս *ետքերը* Սեւաստուպօլիս *ըսուեցաւ և հիմա* Իսքուրիա *կըսուի*, Արքէոպօլիս, Պէտրէ:

Ե. Պոնտոս. *Գլխաւոր քաղաքները՝*

Տրապիզոն, Կիւմիւշխանէ, Պողէմոնիոն *հիմայ կըսուի* Ֆաթսա, Ամասիա, Թէմիւսկիւրա *հիմայ կըսուի* Թէրմէ, Նիքսար, Սեւաստոպօլիս *կամ* Թերհալա, Կերասոն, Սինոպ, Ամիսոս *կամ* Սամսոն, Տրապօլիս, Թիզէ:

Զ. Միջագետք Հայոց. *որոյ երևելի քաղաքներն են*.

Մծբին, Եդէսիա, Խառան, Բիրղա՝ *Տաճկերէն Պիրէճիկ*, Մերտին, Ջաբբա-Գզիրա՝ *հիմայ կըսուի* Ճէզիրէ, Ռաքքա, *և այլն*.

Է. **Եփրատացիք**. *Գլխաւոր քաղաքները՝*

Գերմանիկ *կամ* Մարաշ, Անթափ *հին անունը կըսուէր* Անտիոք առ Տօրոսի, Կարկառ, Կիւրին, Թլպաշար *այժմեան* Բլուր աւետեաց՝ Հռոմկլայի *մօտ*, Պեսնու *բերդը*, Զեւգմա, Հռոմկլայ:

Ը. **Կիլիկիա**. *Գլխաւոր քաղաքները՝*

Տարսոն, Անաւարզա, Սիս՝ *մեր Կաթողիկոսաց մէկն ալ հոս կընստի*, Իսոս՝ *որոյ մօտ շինուեցան վերջերը* Այաս *և* Բայաս, Ադանա, Մամեստիա՝ *հիմայ կըսուի* Մսիս, Մլուն *սար մօտ է* Թագաւորաշէն *աւանը*, Հարզան՝ *հիմայ կըսուի* Հաճին, Կոռոմազոլ *գեղ*, Վահկայ *բերդ*, Լամբրոն *բերդ*, *ևայլն*:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

197. *Հայաստան հիմա երեք տէրութեանց ձեռքը ըլլալով երեք մաս կը բաժնուի* Օսմանեան Հայաստան, Ռուսի Հայաստան, Պարսից Հայաստան:

Ա. ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

198. *Օսմանեան Հայաստանին մէջ կիյնայ Մեծ Հայոց* Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորդուք, Մոկք, *Տուրուբերան և Վասպուրականի ու Այրարատայ արևմտեան կողմը* Գուգարք *և* Տայք *նահանգները*, Միջագետք *և* Կիլիկիա. *և ուրիշ մասերը: Հիմայ Տաճկի տէրութիւնը զանազան նահանգներու կամ վիլայէթներու բաժնած է:*

Մեծ Հայոց մէջ 6 *նահանգ կամ փաշալըք կայ*.

Ա. **Էրզրումի** *նահանգ, որոյ գլխաւոր քաղաքներն են,*

Կարին *կամ* Էրզրում, Սպեր *կամ* Իսպիր, Բաբերդ *կամ* Պայպուրտ, Երզնկա, Կամախ *կամ* Քեմախ՝ *որ հին ատենը նաև* Անի *կըսուէր*, Կեղի, Բասեն *գաւառ՝ որուն գլխաւոր քաղաքն է* Հասան Ղալա, Թէօփրիւ Քէօյիւ *կամ* Վաղարշաւան, Խորասան, Տուժիկ *գաւառ*:

Բ. **Չըլտըր**, *որոյ գլխաւոր քաղաքներն են*,

Արտանուշ, Արդուին, Արտահան, Օլթի՝ *հին անունը* Ուխտիք, Նարիման *հին անունը* Մամրուան, Բերդագրակ, Խոտրջուր:

Գ. **Կարս**, *գլխաւոր քաղաքներն են*,

Կարս, Կաղզուան, Անի, *ևայլն. Անոյ հարաւային կողմը կիյնայ* Մրեն *ու* Բագարան *քաղաքներուն աւերակները որ հիմա կըսուին* Ղարապաղ *ու* Բագրան:

Դ. **Պայեզիտ**, *գլխաւոր քաղաքները*,

Պայեզիտ, *հին անունը* Դարոյնք, Տիատին *այս քաղաքիս մօտ է* Ալա տաղը *կամ* Ծաղկաց լեռ, Թօփրագ գալէ *կամ* Վաղարշակերտ *որոյ մօտ է* Քէօսէ տաղը *կամ* Սուկաւէտ լեռը, Խամուր:

Ե. **Վան**, *գլխաւոր լեռներն են*,

Նեբրովքայ լեռ, Գրգուռ լեռ, Սիփան լեռ, Վարագ՝ *որոյ վրայ* 12 *եկեղեցի կայ և աւագ* *Ա.*

Նշանի վանքը, Կապուտկող լեռ կամ Ընձախիար. գլխաւոր գետերն են՝ Տիգրիս, և Վանայ ծովը Թափուող գետակները ինչպէս Անգղ, Մարմեդ կամ Խօշապ և այլն: Այս ծովակին մէջ չորս կղզի կայ, Աղթամար՝ որ տասներորդ դարէն ի վեր մեր Կաթողիկոսաց մէկը հոս կը նստի, աոր մէջ անուանի է Սուրբ Խաչի փառաւոր վանքը զոր Գագիկ Արծրունի թագաւորը շինեց, Առտեր կղզին Նարեկայ գիւղին դիմացը կիյնայ և հիմայ անբնակ է. Կտուց՝ աոր մէջ է Ս. Կարապետի վանքը, Լիմ՝ որ ամենէն մեծ կղզին է և իր մէջ ունի Ս. Գէորգայ վանքը:

Գլխաւոր քաղաքները,

Վան, Խօշապ, Ապագա, Ոստան, Բերկրի, Արճէշ, Արծկէ, Խլաթ, Բաղէշ կամ Պիթլիզ, աոր մօտ են Գրգուռ լեռները, Ծուղամերկ, Մոկս, Սասուն, Մուշ, Մելազկերտ:

Զ. **Տիարպէքիր**, գլխաւոր քաղաքները՝

Ամիթ կամ Տիարպէքիր կամ Տիգրանակերտ, Միւֆարղին հին անունը Նփրկերտ կամ Մարտիրոսաց քաղաք, Անղ, Բալու, Խարբերդ կամ Քարփութ, Կապան, Արղնի, Մեծկերտ, Պաղին, Խզու:

Փոքր Հայոց մէջ 5 գլխաւոր նահանգ կամ փաշայութիւն կայ, Սըվազ, Գայսերի, Նիգտէ, Մալաթիա, Տապան զատանիար: Գլխաւոր քաղաքները՝ Սըվազ կամ Սեբաստիա, Թօգաթ կամ

Եւդոկիա , Զիլէ , Նիկսար , Շապին Գարա հիսար *կամ* Նիկօպօլիս , Ախսար-օվա , Տիվրիկ , Տէ-րընտէ , Կիւրին , Արաբկեր , Ակն , Պիրինիկ , Հոռմկլա , Մալաթիա *կամ* Մելիտինէ , Սամսատ , Հըսնիմանսուր , Պեհեսնի , Գայսերի *կամ* Կեսա-րիա *կամ* Մաժաք :

Միջագետաց *կամ* **Էլճէզիրէի** *մէջ գլխաւոր քաղաք՝* Ուրֆա *կամ* Եդեսիա , Ռաքքա , Մերտին, Մծբին *կամ* Նիսիբին , Ճէզիրէ :

Կիլիկիոյ *քաղաքները*, Ասանա՝ Սեյհուն *գետակին քով* , Սիս՝ *մեր Կաթողիկոսաց մէկն ալ հոս կը նստի* , Անարզաբա , Մսիս՝ *մէջէն* Ջիհան *գետը կանցնի*, Թերսիս *կամ* Տարսոն՝ Կիւդնոս *կամ* Գարասու *գետոյն բերանին մօտ*, *որուն նաւահանգիստն է* Մերսին *գիւղը* , Նեմրութ Գալէ *կամ* Լամբրոն բերդը, Այաս *կամ* Բայաս , Պէյլան *կամ* Պէլինկ , Մարաշ *կամ* Գերմանիկ , Անթափ , Զէյթուն , Ուլնի *գեղ*, *որ Զէյթունէն* 6 *ժամ հեռու է*, Ֆռնուզ Աւան :

Բ. ՌՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

199. *Ռուսի Հայաստանը կը պարունակէ իր մէջ Հին Հայաստանի մեծ Հայոց* Սիւնիք , Արցախ , Ուտի, Փայտակարան *նահանգները*, Այրարատ *և* Գուգարք *նահանգներուն մէկ մասը*, Երեւան, Նախիջեւան : *Ռուսի տէրութիւնը հիմա հետեւեալ նահանգներուն բաժնած է* :

Ա. **Թիֆլիզ**, *որոյ հետ են* Ախըլցխա, Ախալքալաք, Դմանիս, Լոռի։

Բ. **Գանձակ** *և* **Գարապաղ**, *որոյ գլխաւոր տեղուանքն են*, Գանձակ *կամ* Կենճէ *կամ* Եղիսաբէթուպօլիս, Շուշ, Շամքոր, Կիւրիւս, *ևայլն*։

Գ. **Երևան**, *գլխաւոր քաղաք՝* Երևան, Կիւմրի *կամ* Ալէքսանդրուպօլիս, Սարտարապատ, *ևայլն*։

Դ. **Էջմիածին**, *տաճկերէն* Իւչ Քիլիսէ. *Վաղարշապատ քաղքին քովն է, հոս կը նստի մեր Սըրբազան Կաթողիկոսը, ասոր մօտ է* Օշական *գիւղը*։

Ե. **Նախիջևան**, *գլխաւոր տեղուանքը*, Նախիջևան, Ջահուկ, հին Ջուղա, *ևայլն*։

Դ. ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

200. *Պարսից հայաստանը կը պարունակէ մեծ Հայոց* Այրարատ, Վասպուրական, Փայտակարան, *և* Պարսկահայք *նահանգներուն մասերը*։

Գլխաւոր քաղաքներն են,

Դավրէժ, Արտավիլ, Մարաղա, Ուրմիա, Սալմաստ, Խոյ, Մարանդ, Ահէր, Սիրաս, Մակու *ասոր քովերն է* Արտազու *դաշտը ուր նահատակեցան Ս. Վարդանանք*։

3°. ՏԱՃԿԻ ԱՍԻԱ

201. *Տաճկի Ասիոյ մէջ հին ժամանակը զանազան զօրաւոր ու հարուստ տէրութիւններ կային*,

ինչպէս Բաբելացիք, Ասորեստանցիք, Հայերն ու Հոռոմները, եօթներորդ դարուն մէջ Մահմէտական խալիֆաները տիրեցին և իրենց կայսրութեան մայրաքաղաք ըրին Բաբելոնը. 1300ին Օսմանցիք փոքր Ասիոյ մեծ մասը առնելով և ետևէ ետև զօրանալով իրենց երկիրը ընդարձակեցին:

Տաճկի Ասիոյ սահմանն է հիւսիսէն Սև ծովը և Կովկասու երկիրները, արևելքէն Ռուսի Ասիան և Պարսկաստանը, հարաւէն Արաբիան, արևմուտքէն Միջերկրական ծովը և Արշիպեղագոսը: Տարածութիւնն է 1,190,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 15,600,000, Տաճիկ, Հոռոմ, Հայ, Հրեայ, Ասորի Քաղդէացի: Օդը բարեխառն և շատ առողջ է, ամէն տեսակ արմտիք և պտուղ կը հասնի, բայց հողը քիչ մշակած է: Երկրին բերքն է ամէն տեսակ հանք, ազնիւ պտուղներ, մետաքս ու բամպակ:

Տաճկի Ասիան եօթը գլխաւոր աշխարհագրական մասի կը բաժնուի: Փոքր Ասիա կամ Անատօլու, Հայաստանին մէկ կտորը, Քիւրտիստան, Միջագէտք, Ասորիք, Իրագարապի և կղզիները:

Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքներն են,

Կուտիեա կամ Քէօթահիա (70,000) դիրքը խիստ աղէկ, բովերը հանքային ջրեր ունի:

Զմիւռնիա (130,000) Տաճկաստանի ամենէն վաճառաշահ քաղաքն է.

Պրուսա (100,000) Ողիմպոս լեռան տակը, Օսմանցւոց առջի մայրաքաղաքն էր մինչև 1360, շատ

ջերմուկներ ունի, և մէկ քանի մեծագործ մզկիթներ:

Գարահիսար, Նիկոմիդիա, Եդովկիա, Սեբաստիա, Ամասիա, Կեսարիա, Տրապիզոն (50,000) Սև ծովուն վրայ վաճառաշահ ու անուանի քաղաք է, 200 տարիի չափ Յունաց կայսերաց մէկ ճիւղը հոս կը թագաւորէր մինչև Կ. Պոլիս Օսմանցւոց առնելը: Անկուրիա, Իւսկիւտար, Սինոպ, Տարսոն, Սիս ևայլն:

Քիւրտիստանի գլխաւոր տեղուանքն են,

Բաղէշ կամ Պիթլիզ, Ճեզիրէ, Ամատիա, Ճուլամերկ, և Գարաճոլան:

Միջագետաց կամ Էլճեզիրէի գլխաւոր քաղաքներն են,

Եդեսիա կամ Ուրֆա՝ մեր Աբգար թագաւորը շինած է, Մերտին, Հռոմկլա՝ հոս է Սուրբ Ներսէս շնորհալիին գերեզմանը, Մծբին կամ Նիսիբին՝ հոս է Սուրբ Յակոբայ գերեզմանը, Մուսուլ, Նունիա՝ հին Նինուէ քաղքին տեղը գիւղ մըն է, Ալքոշ՝ Եզիտիներուն տեղը ասոր մօտ է, Մատէն՝ տէրութեան ամենէն առատ պղնձահանքն է:

Ասորեստանի գլխաւոր քաղաքներն են,

Բերիա կամ Հալէպ (150,000) տէրութեան մեծ ու հարուստ քաղաքներուն մէկն է. Համա, Անտիոք կամ Անդաքիա՝ առենով Սելևկիացւոց մայրաքաղաքըն էր, անուանի են ջերմուկները, Թարապլուս, Պէյրութ հիմա վաճառականութեան մէջ շատ ծաղկած է, ասոր մօտ է Լիբանանու լեռը, ուր է ազգա-

յին Հռովմէականաց Կաթողիկոսարանը, Սուր ու Սայտա՝ որ Տիւրոս ու Սիդոն քաղաքներուն տեղը պզտի գեղեր են։

Երուսաղէմ՝ աշխարհիս ամենէն հռչակաւոր քաղաքը, ամենայն Քրիստոնէից մեծ ուխտատեղին է, ասոր քովերն են Քրիստոսի տնօրինական տեղերը Բեթղեհէմ, Նապլուս կամ Սիւքէմ, Երիքով, Յոպպէ կամ Եաֆա, Գալիլ, Գազա, Կեսարիա Պաղեստինոյ, Սեբաստիա՝ հին Սամարիային տեղը, Սաֆէտ, Նազարեթ, Կանանա, Տիբերիա, Կափառնաում, Բեթանիա, Թափօռ լեռը, Ձիթենեաց լեռը, ևայլն։

Իրաք Արապիի գլխաւոր քաղաքներն են,

Պակտատ (100,000). Տիգրիսի վրայ ամուր ու վաճառաշահ քաղաք է, քովերն են Բաբելոնի, Սելևկիոյ, Տիզբոնի և հին Պաղտատի աւերակները, Պասրա (60,000). Տաճկի Ասիոյ կղզիներն են Կիպրոս՝ միջերկրականի մեծ կղզիներէն մէկն է, անուանի է գինին բամպակը և ուրիշ բերքերը, գլխաւոր քաղաքն է Նիկոսիա կամ Լեֆքօշիա (16,000)։

Ռոտոս, Մարմարա, Լեսբոս կամ Միտիլլի, Քիոս կամ Սաքըզ, Սամոս կամ Սուսամ։

Դ. ԱՐԱԲԻԱ

202. Արաբիոյ մէջ միշտ այլևայլ բնակիչներ կը բնակին վրանաբնակ։ Եօթներորդ դարուն մէջ Մէհմէտ ասոնց ամենը իր կրօնքովը միացուց, զօրաւոր տէրութիւն մը ձևանալով շուտով տարածուեցան և նուաճեցին Ափրիկէի ամբողջ հիւսիսի

կողմը և մինչև Սպանիա մտան: Գիտութիւնները, և գրականութիւնը և արուեստները շատ ծաղկած էին Մահմէտին յաջորդ Քալիֆաներուն ատենը, որ դեռ Եւրոպայի մեծ մասը բարբարոսութեան մէջ էր: Օսմանցիք այս տէրութիւնը բոլորովին վերցուցին, հիմայ Արաբիոյ բնակիչներէն ոմանք Ֆել·լահ կըսուին որ երկրագործութիւն կընեն, ոմանք ալ Պետէվի որ վրանաբնակ հովիւ են: Երկրիս մեծ մասը Օսմանցոց ձեռքն է, մնացածը այլ և այլ շէյխերու և իմամներու ձեռքով կը կառավարուին:

203. Արաբիոյ սահմանը հիւսիսէն Ասիոյ Տաճկաստանն է, արևելքէն Պարսից ծոցը, հարաւէն Հնդկաց ովկիանոսը, արևմուտքէն Կարմիր ծովը: Տարածութիւնն է 2,800,000 քիլոմէթր քառակուսի. բնակիչը 12,000,000. կրօնքը Մահմէտական, Օդը չոր ու խիստ տաք է մանաւանդ հիւսիսի կողմը, ուր շատ խորշակ կըլլայ և խիստ քիչ կանձրևէ: Երկիրը ընդհանրապէս դաշտային ու աւազուտ է, երկու անուանի լեռ կայ Սինա և Քորեբ. հողը անբեր է, բայց Եմէն գաւառը սաստիկ պտղաբեր ըլլալուն Երջանիկ Արաբիա կըսուի: Գլխաւոր բերքն է խնկեղէն, ձէթ, շաքարի եղէգ, բամպակ, ազնիւ խահվէ, արմաւ, թուզ, բալասան: Կենդանիներէն ալ շատ անուանի է ձին, ունի նաև ուղտ, ջայլամ, կապիկ. Կարմիր ծովէն աղէկ բուստ (մերճան), Պարսից ծոցէն ալ մարգրիտ կելլէ:

Գլխաւոր քաղաքներն են,

ՄԵՔՔԷ, (34,000) Մեհմէտին հայրենիքն է, Տաճ-

կաց մեծ ուխտատեղին է, Քեապէն տեսնալու համար հոս կուգան:

Մետինէ, (6,000), հոս մեռաւ Մեհմէտ. և Մեքքէէն 622 ին հոս փախաւ, և անկէ կ՚սկսի իրենց Հիճրէթ ըսուած Թուականը, որ փախուստ կ՚նշանակէ:

Մասկաթ (60,000) Եօմենի ծոցին վրայ Արաբիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է, քովերը կապարի հանք կայ:

Ճիտտէ (15,000) Կարմիր ծովուն վրայ, Մեքքէյի նաւահանգիստն է:

Երևելի են նաև Մոխա, Ադեն ուր հաստատուեցան Անգղիացիք 1838 ին. Կարմիր ծովուն քովերն է Սինա լեռը որուն վրայ բերդի նման հռոմի վանք մը կայ՝ Սուրբ Կատարինէ անուամբ:

Ե. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

204. Պարսից Թագաւորութիւնը հին ատենը աշխարհիս մէջ շատ հարուստ զօրաւոր և ահարկու էր, եօթներորդ դարուն մէջ Արաբացիք առին Պարսկաստանը, ու իրենց հաւատքը Պարսից սովրեցուցին: Քիչ ատենէն Պարսիկք զօրանալով իրենց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեցին: 1747 ին բոլոր երկիրը երկու տէրութիւն բաժնուեցաւ, Իրան կամ բուն Պարսկաստան, Աֆղանիստան որոյ մէջն է Խորասան և Պելուճիստան:

205. Պարսկաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանը, Կասպից ծովն ու Թուրքաստանն է, Արևելքէն Աֆղանիստան, Խորասան ու

Պելուճիստան, հարաւէն Ծոմէն ու Պարսից ծոցը, արեւմուտքէն Ասիոյ Տաճկաստան: Տարածութիւնն է 1,300,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 10,000,000, մեծ մասը Պարսիկ, մնացածը Տաճիկ. Քիւրտ, Թիւրքմէն, Հրեայ, Հայ: Կրօնքը Մահմէտականութիւն Ալիին աղանդը: Կառավարութիւնը ազատ միապետական:

Գլխաւոր քաղաքներն են,

Թեհրան (130,000) Պարսից շահը հոս կը նստի 1794 էն ի վեր. ամառուան օդը վնասակար է:

Թաւրէժ (230,000) Կասպից ծովուն մօտ Պարսկաստանի ամենէն վաճառաշահ ու բազմամարդ քաղաքն է:

Սպահան (200,000) առջի մայրաքաղաքը, արեւելքի մեծ ու գեղեցիկ քաղաքներէն մէկն է: Քովն է Նոր Ջուղան՝ որ հին Ջուղայէն քշուած Հայերուն բնակած տեղն է:

Երեւելի են նաեւ Շիրազ, Համատան, Գազպին, Եզտ, Պենտէրապասի:

Զ. ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

206. Աֆղանները հին Աղուանք ազգն են, որ Թաթարները Հայաստանէն հոս քշեր ու Տաճկըցուցեր են: Ասոնք առենով Պարսից տակն էին, բայց 1747 ին ինքնագլուխ տէրութիւն ունեցան:

207. Աֆղանիստանի սահմանը հիւսիսէն Պարսկաստանն է, Արեւելքէն Հնդկաստան, հարաւէն

Հնդկաց ծովը, արեւմուտքէն Պարսկային ծոցը: Տարածութիւնն է 700,000 քիլոմէթր քառակուսի, բնակիչը 9,000,000, Աֆղան, Պարսիկ, Հնդիկ: Կրօնքը Մահմէտական: Օդը առողջ և հողը շատ բարեբեր է: Բերքն է ամէն տեսակ պտուղ, կենդանի, ունի նաև ոսկի, վագր, ընձառիւծ, բորենի, գայլ և արջ:

Գլխաւոր քաղաքներն են,

Քապուլ, (80,000), վաճառքն է աղէկ ձի:

Քանտահար, (100,000) ամուր բերդով, երկրին հին մայրաքաղաքն է:

Հերաթ, (100,000), Խորասանի ամենէն մեծ քաղաքն է:

Քելադ, (20,000), Պելուճիստանի գլխաւոր քաղաքն է:

Է. ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

208. Թուրքաստանի կամ անկախ Թաթարաց մէջ ատենով այլ և այլ ազատ ցեղեր կը տիրէին, առնցմէ ելան ժամանակ ժամանակ Օսմանցիք, Հոնք, Թաթարները և Լենկթիմուրը՝ որ մէկ կողմէն մինչև Չինու պարիսպը միւս կողմէն մինչև Միջերկրական ծովը տիրեց: Այժմեան բնակիչներն են Իւզպէք, Պուխարացի, Թիւրքմէն և Խրղըզ:

209. Թուրքաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է, արևելքէն Չինու երկիրը, հարաւէն Պարսկաստանը, արևմուտքէն Կասպից ծովը: Տարածութիւնն է 1,200,000 քիլոմէթր քառակուսի:

բնակիչը 7,000,000: Կրօնքը Մահմէտական, կառավարութիւնը չորս գլխաւոր ազատ խաներու ձեռք է: Թուրքաստան չորս գլխաւոր մասի կը բաժնուի, **Երկիր Խորըզմաց**, **Իշխանութիւն Խիվայի**, **Մեծ Պուխարա**, **Խանութիւն Խոքանդի**: Կլիման բարեխառն և առողջարար է: Աղի լճեր, լեռներ շատ ունի, երկիրը խիստ բարեբեր է, բայց քիչ մշակած: Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, յակինթ, մետաքս ու բամպակն ալ ազնիւ է:

Գլխաւոր քաղաքներն են.

Պուխարա (100,000) հին ու վաճառաշահ, Թուրքաստանի ամենէն ծաղկած քաղաքն է:

Սըմըրղանդ (10,000) վաճառաշահ քաղաք է, Լէնկթիմուր իր աթոռը հոս դրեր էր, և մինչև հիմա մէջը իր գերեզմանը կայ յասպիս քարէ:

Երևելի են նաև **Խիվա**, **Խոքանդ**, **Բալխ** կամ **Պալխ՛** որ երբեմն Բակտրիոյ թագաւորութեան մայրաքաղաքն էր:

Ը. ՀՆԴԿԱՍՏԱՆ

210 Հնդկաստանի մէջ ժամանակաւ այլ և այլ ինքնագլուխ տէրութիւններ կային, 1193ին Մահմէտականութիւնը այս երկիրը մտաւ, անկէ քիչ առաջ Աֆղանները տիրեցին հիւսիսային կողմերուն, ետքը Լէնկթիմուրը, ասոր թոռներէն մէկը 1520ին Մողոլի տէրութիւնը հաստատեց: 1739ին Պարսից Նատըր շահը մէկ մասին տիրեց, ետքը Եւրոպացիք ոտքերնուն տեղ ընել սկսան: 1700ին վերջերը

Անգղիացի վաճառականները Կալկաթա և Մատրաս քաղաքներուն տիրեցին, որոնք 1803ին Մողոլի տէրութիւնը ջնջեցին, Մահրաթները նուաճեցին, 1812ին գրեթէ բոլոր արևելեան Հնդկաստանի տիրեցին: Հիմայ Հնդկաստանի մեծ մասը Անգղիոյ Թագաւորութեան ձեռքն է:

211. Հնդկաստանի սահմանը հիւսիսէն Չինու երկիրն է, արևելքէն Չինու ծովը, հարաւէն Հընդկաց Ովկիանոսը, արևմուտքէն Աֆղանիստանը: Տարածութիւնն է 6,058,000 քիլօմէթր քառակուսի բնակիչը 220,000,000. կրօնքը Բրահմականութիւն բայց 16,000,000ի չափ Մահմէտական. 8,000,000ի չափ Սեիք. 2,000,000ի չափ ալ Քրիստոնեայ կայ:

Հնդկաստանը երկու գլխաւոր մասի կը բաժնուի, մէկը Բուն Հնդկաստան կամ յայս կոյս Գանգեսի, միւսը Հնդկա Չին կամ յայնկոյս Գանգեսի: Կլիման չոր ու տաք, ձիւն գրեթէ ոչ երբէք կուգայ, անձրևներն ալ կանոնաւոր ժամանակ ունին որ ամիսներով կուգան: Հողը ընդհանրապէս խիստ բարեբեր է, Գլխաւոր բերքերն են առատ ոսկի և ադամանդ, Կոլգոնտ գաւառին ու Բիրմանի տէրութեան մէջ: Սեյլան կղզին քովերէն ազնիւ մարգարիտ կելլէ: Մալտիվեան կղզիներուն քովէն ալ տեսակ մը ոստրէ կելլէ որ Հնդկաստանցիք դրամի տեղ կը գործածեն: Բոյսերուն գլխաւորներն են. բրինձ, պանան, շաքար, խնկեղէն, աֆիոն, ազնիւ բամպակ ու մետաքս, արմաւ. պամպու բուսած եղէգը, Թուզ և ազնիւ փայտ: Կենդանիներէն ալ կը

գտնուին ուղտ, վայրի այծ, փիղ, ռնգեղջիւր, վագր, առիւծ, պօա օձ, կապիկ, սիրամարգ և դրախտահաւ:

Թ. ՑԱՑՍԿՈՅՍ ԳԱՆԳԵՍԻ

112- Գանգեսէն անդին եղած երկիրները չորս կտոր կը բաժնուի Անգղիացոց Հնդկաստան, Անգղիացոց հարկատու երկիրներ, Ազատ Հնդկաց երկիրներ և Եւրոպայի այլ և այլ ազգաց տեղուանք:

1º Անգղիոյ Հնդկաստանի գլխաւոր քաղաքներն են,

Կալկաթա (1,000,000) Գանգեսի վրայ, Թէ գիտութեան և Թէ արուեստից կողմանէ շատ անուանի է: Անգղիական կառավարութեան գլուխը հոս կը նստի, մեր Ազգէն ալ բաւական բազմութիւն կայ:

Տըլհի (200,000) Մողոլի Թագաւորութեան մայրաքաղաքն էր:

Մատրաս (502,000) Պենկալայի ծոցին վրայ շատ վաճառաշահ քաղաք է. բամպակի ու ապակիի գործարաններ ունի, մեր ազգէն ալ երևելի վաճառականներ ու ժողովուրդ կայ:

Երևելի են նաև Ակրա (100,000), Պէնարէս, Տաֆֆա, Պոմպայի, Աճմիր, Սուրադ, Բունա, Սէյլան կղզին ալ (1,500,000) Անգղիացոց ձեռքն է, գլխաւոր քաղաքն է Գոլոմպոյ:

2º Անգղիացոց հարկատու երկիրներուն գլխաւոր քաղաքներն են,

Լուքնով (300,000) Մողոլի տէրութիւնը վերնալէն ետքը Հնդկաստանի ծաղկած քաղաքն է:

Ուճէն (160,000) *ուխտատեղի է Հնդկաց բազմաթիւ բոկոտներուն համար:*

Հայտէրապատ (200,000), Կոլգոնտ՝ *ադամանդի մեծ վաճառականութիւն ունի,* Աւրէնկապատ, պէնաբուր, Մայսուր. Գոզէն, Նակբուր, Պարոդա. Լագէտիւեան *կղզիներն ալ Անգղիացոց պաշտպանութեան տակ են, թէ և տեղացի իշխան մը ունին:*

3° *Հնդկաց ազատ երկիրներն են,*

Լահոռ (100,000) *ոչխարներուն բուրդը բարակ և ազնիւ է.* Փեշաւէր (70 000) *ունի բամպակի և մետաքսի գործարան և պալատ արքունի.* Ամրեդսիր (100,000) *ամուր ու վաճառաշահ քաղաք.* Մուլթա (60,000) *արուեստի կողմանէ ծաղկած, անուանի է մահմէտական ուսումնարանը.* Քաղմանբու (20000) Նեբալի *թագաւորութեան մայրաքաղաքը շատ կռատուններ կան մէջը.* Գաւլիր (150000) *անուանի և ազնիւ շալ ունի.* Մալտիվեան *կղզիները հազարաւոր մանր ժայռերէ ձևացած են, որոց մէջ 40 կամ 50ը աւելի մեծ ըլլալով բարեբեր ու բազմամարդ են և թագաւոր մ'ունին, որ* Մալէ *կղզին կը նստի.*

4° *Եւրոպայի այլևայլ ազգաց տեղուանքը,*

Բոնդիշէրի (25,000), Չանտէրնակորի (30,000) *երկուքն ալ Գաղղիոյ ձեռքը վաճառաշահ քաղաքներ են:*

Կոա (30,000) *Բորդուգեզներուն ձեռքը ամուր քաղաք է, ապահով և բանուկ նաւահանգիստ ունի:*

Ժ. ՀՆԴԿԱ-ՉԻՆ ԿԱՄ ՅԱՅՆԿՈՅՍ ԳԱՆԳԵՍԻ

213. Գանգեսէն անդին եղած երկիրը 6ի կը բաժնուի Պիրման, Սիամ, Մալաքքա, Աննամ, Անգլիացոց երկիրներ և Կղզիներ. Այս Թագաւորութեան ամէնն ալ ազատ միապետական են և կռապաշտ:

1° Պիրմանի տէրութիւնը առաջ Բէկուի Թագաւորութեան էր. բայց հիմա ազատ է. բնակիչք շատ պատիւ կընեն ճերմակ փղի մը, որ Թագաւորին պալատին քովը մեծ պալատ մ'ունի, կըսեն թէ իրենց Թագաւորին հոգին այն փղին փորը պիտի մտնէ. վերջերը Անգղիացիք այս երկրին հարաւային մասին տիրեցին. բնակիչը 4,000,000:

Աւա (40,000) մայրաքաղաքն է. Ամարաբուրա, Սայկան՝ այս երկու քաղաքները Աւային այնչափ մօտ են, որ անոր մասը կրնան համարուիլ:

Բէկու ատենով զատ Թագաւորութիւն էր, անուանի է ասոր բրգաձև կռատունը 300 ոտնաչափ բարձր:

2°. Սիամի Թագաւորութիւնը ատենով փոքր էր, բայց հիմա խիստ ընդարձակ է: Բնակիչը 5,000,000:

Պանքոք (160,000) Սիամի մայրաքաղաքն է, որոյ բնակչաց մեծ մասը Չինացի են, անուանի է մեծ կռատունը, ուր 1500 կուռք կայ:

3°. Մալագգա Թերակղզին (1,000,000) արևմտեան կողմը հիմա Սիամի տէրութեան ձեռքն

նացած է, հարաւի բնակիչները վայրենի ու Թափառական են, այլևայլ իրարմէ անկախ իշխաններ ունին. իսկ հիւսիսակողմը Անգղիացոց ձեռքն է, ինչպ՛ս նաև Մալագգա քաղաքը (60,000):

4°. Աննամ (12,000,000), Չինաց լեզուն և ապանդն ունին և շատը գետերու վրայ կը բնակին նաւակներով:

Գլխաւոր քաղաքներն են,

Հուէ (100,000), խիստ ամուր և վաճառաշահ:

Քաչաոյ (80,000), Սայկոն (180,000), մեծ մեծ քաղաքներ են:

5°. Անգղիացոց երկիրներուն բնակիչներէն ոմանք ինքնագլուխ են և ոմանք հարկատու: Արագան (100,000), Սինկաբուր (24,000), խիստ վաճառաշահ քաղաքներ են:

6°. Գանգեսէն անդին եղած կղզիներն են Անտաման և Նիգոպար կղզիները, ասոնց բնակիչները քիչւոր և ինքնագլուխ են:

ԺԱ. ՉԻՆ

214. Հին ատենէն ի վեր աշխարհիս ծաղկեալ տէրութիւններէն մէկն է Չինը: Թաթարաց յարձակմունքէն ազատ մնալու համար՝ իրենց երկրին հիւսիսային կողմը պատ մը քաշած են: Եօթնևտասներորդ դարուն մէջ Մանչու Թաթարները տիրեցին Չիներուն, և հիմակուան Չինու Թագաւորը

անոնց ցեղէն է: Կառավարութիւնը բացարձակ միապետական: Կայսրը, և իշխանները՝ որ Մանճարին կրօնքին Կոնփուկիոսի աղանդին կը հետեւին, հասարակ ժողովուրդը Ֆօ ի աղանդին: Չինացիք դժուարութեամբ օտարականները իրենց երկիրը կընդունին: Քանդոնի նաւահանգիստը երկար ժամանակէ ի վեր է որ Եւրոպացոց համար բաց է: 1842էն ի վեր է որ օտար վաճառականաց առ հասարակ թոյլտուութիւն եղաւ մտնալու Էմուէ, Ֆուչէու, Նինկբօ և Շանկհաւ: 1860էն ետքը շատ նաւահանգիստներ ալ ազատ ձգեցին օտարաց համար:

215. Չինու սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է, արեւելքէն Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Հնդկաստան, արեւմուտքէն՝ Թուրքաստան: Տարածութիւնն է 14,000,000 քիլոմէթր քառակուսի, բնակիչը 415,000,000: Տէրութիւնը հինգ գլխաւոր մաս կը բաժնուի, բուն Չին, Չինու Թաթարստան, Քորէա, Չինաց հարկատու երկիրներ և կղզիներ: Երկիրը ընդհանրապէս դաշտային ու աղէկ մշակուած է: Հողը խիստ բարեբեր է: Գլխաւոր բերքն է չայ, քափուր, մետաքս, բամպակ, վերնիճ, յախճապակ, մուշկ, այծի բուրդ և Թանաք: Ճերամի որդը և ոսկեգոյն կարմրախայտ ձուկը Չինէն Եւրոպա եկած են:

Գլխաւոր քաղաքներն են,

Բէքին (1,700,000) երկու մասեր կը բաժնուի,

մէկուն մէջ Թաթարները և միւսին մէջ Չիները կը բնակին. այս երկու քաղաքները իրենց 12 զիւղերովը աշխարհիս ամենէն ընդարձակ քաղաքն է: Թագաւորին պալատը իրեն վերաբերեալ շէնքերովը 8 քիլօմէթր շրջապատ ունի: Չինաց մասին մէջ կայսրը ամէն տարի հանդէսով քիչ մը տեղ կը հերկէ երկրագործութեան պատիւ ընելու համար:

Քանթոն (850,000) վաճառաշահ քաղաք, 60,000 բնակիչ քաղաքիս քովէն անցնող գետին մէջ նաւերով կը բնակին:

Նանքին (800,000), մինչև 1421 Չինու մայրաքաղաքն էր, անուանի է աշտարակը որ 9 յարկ ունի 100 արշն բարձրութեամբ, որ բոլորովին յախճապակով զարդարուած է:

Մաքաօ, Լասսա, Սուչէու, Հիամէն, Նինկբօ, ևայլն:

Քորէան բազմամարդ երկիր մըն է, ութը գաւառ կը բաժնուի, բայց Եւրոպացիք խիստ քիչ տեղեկութիւն ունին վրան:

Հոնկքոնկ (30,000) կղզեակ մըն է Գանդոն գետին բերանը, 1842էն ի վեր Անգղիացոց ձեռքն է երևելի վաճառականի մը ստացուածքն է, գլխաւոր քաղաքն է Վիկդորիա (13,000):

Չինու անուանի կղզիներն են Հայնան, Ֆորմօզա, Բեսքատօրես:

ԺԲ. ՃԱՊՈՆ

216. Ճարոնները Չիներուն մէկ ցեղը կը կարծուին, հիմա Չինէրէն աւելի յառաջացած են քաղաքականութեան, արուեստի և պատերազմի մէջ: Օտարք չէն կրնար մտնել իրենց երկիրը, և իրենք ալ իրենց երկրէն դուրս չեն կրնար ելնել, ելնողին պատիժը մահ է:

217. Ճարոնի տէրութիւնը չորս գլխաւոր կըղզիներէ ձևացած է:

1°. **Նիփոն**, մայրաքաղաք Եէտօ, գլխաւոր քաղաքները Միաքօ և Օսաքա.

2°. Սիքօքճ, գլխաւոր քաղաքը Ավա և Իծօ.

3°. Քիուսիու, մայրաքաղաքը Նանկասաքի.

4°. Եէսոյ, մայրաքաղաք Մացմայ, ասոնց չորս կողմը պատած է արևելեան Ովկիանոսը, որ մեծ Թաթարստանին արևելեան կողմն է: Տարածութիւնն է 500,000 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 30,000,000: Կառավարութիւնը միապետական է և երկու հոգւոյ ձեռք է. մէկը Տայիրի կըսուի որ կրօնական բաներուն կը խառնուի. միւսը Քուպայ, որ տէրութիւնը կը կառավարէ: Կրօնքը Պուտեան և Սինթոյի աղանդը:

Գլխաւոր քաղաքներն են,

Եէտօ (1,500,000) Ասիոյ մեծ ու գեղեցիկ քա-

ղաքներէն մէկն է. հոս կը նստի իրենց Քուպոյ կամ Սեսկուն Թագաւորը:

Միաքոյ (600,000) ուսման կողմանէ Ճաբոնի ամենէն երևելի քաղաքն է, Տայիրին հոս կը նստի:

Նանկասաքի (50,000) օտարք այս քաղաքս կըր նան մտնել վաճառականութեան համար: Ուրիշ երկու նաւահանգիստ ալ կայ օտարներուն բաց:

Լիու Քիու կղզիներն ալ Ճաբոնի մաս կը համարուին, բայց առանձին Թագաւոր մ'ունին Ձինի և Ճաբոնի հարկատու:

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՓՐԻԿԷԻ

218. Ափրիկէի սահմանը հիւսիսէն՝ Միջերկրական ծովն է, արեւելքէն՝ Կարմիր ծովն ու Հնդկաց ովկիանոսը, հարաւէն՝ Հարաւային ովկիանոսը: Ափրիկէն կը տարածուի, հիւսիսային լայնութեան 37°էն մինչեւ հարաւային լայնութեան 35°ը և արեւելեան երկայնութեան 49°էն մինչեւ արեւմտեան երկայնութեան 20°ը: Տարածութիւնը 30,000,000 քառակուսի քիլոմէթր է. բնակիչը 100,000,000: Հասարակածը Ափրիկէի մէջէն անցնելով մեծ մասը այրեցեալ գօտիին տակն է և գրեթէ երկու եղանակ ունի, մէկը չոր՝ և միւսը անձրեւային, վասն զի վեց ամիս գրեթէ միակերպ անձրեւ կուգայ: Երկիրը դաշտային է և շատ տեղ մեծ մեծ անապատներ կան հողը ընդհանրապէս անբեր է բաց ի գետերուն քովերէն որ շատ պտղաբեր են: Գետեր կան որ աւազնին ոսկիով խառն է: Ափրիկէի մեծ մասը բարբարոսութեան մէջ մնացած է հարկաւոր եղած արուեստներն ալ չեն գիտեր, բաց ի Միջերկրականի ծովեզերքէն ուր քաղաքականութիւնը յառաջ երթալու վրայ է:

Ա. ԵԳԻՊՏՈՍ

219. Եգիպտոս հին ատենը աշխարհիս առաջին ծաղկած երկիրներէն մէկն է Ցոյները անկէ առին գիտութիւնները և արուեստները: Մէջը

շատ մեծաշէն քաղաքներ կային և թագաւորութիւնը զօրաւոր ու անուանի էր: Երկու հազար տարիէն աւելի է որ երթալով տկարացաւ, առջի մեծութիւնը գրեթէ ամենևին չի մնաց: Եօթներորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ հռչակաւոր գրատունը այրեցին. ետքը անցաւ Մեմլուք ըսուած Չերքեզներուն, անոնցմէ ալ Օսմանցոց. 1798ին Գաղղիացիք առին, բայց խիստ քիչ կեցան. ետքը Մեհմէտ Ալի փաշան ծաղկեցուց Եգիպտոսի մէջ արուեստներն ու վաճառականութիւնը ուր կը տիրէ հիմա իր ընտանիքը:

220. Եգիպտոս Միջերկրականին ու Կարմիր ծովուն մէջ տեղն է: Տարածութիւնն է 474,000 քիլօմէթր քառակուսի, բնակիչը 5,125,000, Ղփտի՝ հին Եգիպտացիքն են, Տաճիկ, Արաբացի, Հայ և Հրեայ կրօնքը գլխաւորապէս Մահմէտական: Օդը խիստ տաք, երկիրը աւազոտ, բայց Նեղոսի եզերքը խիստ պտղաբեր բերքն է բրինձ, արմաւ, մորացորեն, բամպակ, շաքար. կենդանիներու մէջ անուանի է հիլոս ըսուած մուկը, որ կոկորդիլոսին թշնամի է, ու քաջահաւ թռչունը՝ որ օձերը կ՚սպաննէ:

Գլխաւոր քաղաքներն են,

Գահիրէ կամ **Մըսըր** (300,000) Նեղոսի վրայ, մեծ ու վաճառաշահ քաղաք, անոր մօտ են երեք անուանի բուրգերը որոց մեծին բարձրութիւնն է

428 ռոնաչափ, և մեծ գետափոր գերեզմաննոցը՝ որոյ մէջ 3000 տարուան մումեաներ կան:

Աղեքսանդրիա կամ Իսքէնտէրիյէ (400,000), առենով Եգիպտոսի մայրաքաղաքն էր, հիմա աշխարհիս վաճառաշահ քաղաքներէն մէկն է:

Րաշիտ կամ Ռօզէթթա (15,000) Նեղոսին բերանը, բանուկ նաւահանգիստ է, երևելի են նաև Տամեաղ, Սիութ, Սիւվէյիս՝ համանուն ջրանցքին վրայ, Ճիզէ՝ քովն է Մեմփիս քաղաքին աւերակները, Լուքսոր՝ Թեբէ քաղաքին աւերակներուն մէջ պզտի գիւղ մ՚է, Սիեն, Սիուահ, համանուն Ոասիսին մէջ, Եգիպտոսի արևմտեան կողմը, Ամոնի հին Ոասիսը աս ըլլալ կը կարծուի:

Բ. ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

221. Պերպերիստան կամ բարբարոսաց աշխարհ կըսուի Ափրիկէի հիւսիսային ծովեզերքը Եգիպտոսէն մինչև Ատլանտեան ովկիանոս, հիները գիտէին Եգիպտոս և միայն Ափրիկէի այս մասը որ շատ ժամանակ Կարքեդոնացոց ձեռքն էր, ետքը Հռովմայեցոց անցաւ, անկէց ալ ետքը Արաբացոց ձեռքը հիմա մէկ մասը այլևայլ իշխանութեանց տակ է, մէկ մեծ մասն ալ Գաղղիացոց ձեռքը:

222. Պերպերիստանը արևելքէն արևմուտք կը կտրուի Ատլաս լեռներէն, որ երկու գլխաւոր մաս կը բաժնէ: Տարածութիւնն է 2,470,000:

Բնակիչը 20,000,000. Կրօնքը Մահմետական: Օդը բարեխառն է, երկիրը բարեբեր: Բերքն է բրինձ, ցորեն, շաքար, ձի, ուղտ, առիւծ:

Գլխաւոր քաղաքներն են Գաղղիացոց ձեռքը, Ալճերի կամ Ճեզայիր (52,000) նաւահանգիստ Միջերկրականի վրայ, երկար ատեն քովի երկիրներովը Օսմանցոց հարկատու էր, 1830էն ետքը Գաղղիացոց անցաւ:

Օրան, Կոստանդինա՝ բուն հնոց Սիրթա և հայրենիք Մասինիսայի և Եուգուրթայի, Պօն՝ մօտ Հիպպոնա քաղքին աւերակացը՝ որոյ եպիսկոպոս եղած է Սուրբն Օգոստինոս 395էն մինչև 430, Դլեմսեն, Մոստանկանեմ, Ֆիլիփ-վիլ, Սետիֆ, Մասգարա, Շերշել, ևայլն:

Մարոքի կայսերութեան ձեռքը, Ֆէս (100,000) ատենով արուեստի և գիտութեան կողմանէ ծաղկած քաղաք էր, Մարոքի և Մերաքեշի կայսերութեան գլխաւոր քաղաքն է:

Մարոք (70,000) Մարոքի կայսերութեան մայրաքաղաքը՝ շատ վաճառաշահ, կաշին ազնիւ է:

Մեքինեզ, Մոկատոր, Նոր-Սալէ կամ Ռապաթ, Դիդուան, Դաֆիլէթ՝ կայսերութեան հարաւակողմը՝ անկախ տէրութեան մը մայրաքաղաք է:

Թունուզի իշխանութեան ձեռքը, Թունուզ (100,000) Կարքեդոնի աւերակացը մօտ մեծ քաղաք է, վաճառականութիւնը և արուեստները ծաղկած, սոր Պէյը կամ իշխանը Օսմանցոց հարկատու և հպատակ է: Գաիրվան, Գապէս:

Դարապլուս կամ Դրիբոլի (25,000) համանուն փաշայութեան գլխաւոր քաղաքը Միջերկրականի քով, վաճառականութ,ւնը և ճարտարութիւնը ըստ կարի ծաղկած է:

Գ. ՍԱՀՐԱ ԿԱՄ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

223. *Սահրան ընդարձակ և մեծ անապատ մըն է. և Պէրպէրիստանի հարաւային կողմը կիյնայ: Տարածութիւնն է 5,136,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 1,000,000, բոլորն ալ վայրենի և զուր մարդկային զգացմունքէ, կրօնքը Մահմետական և կռապաշտ:*

Գլխաւոր քաղաքներն են,

Հոտեն, Դակազզէ, Դապու, Առնա, Ակապլի եւ Պիլմա:

Դ. ՍԵՆՆԵԿԱՄՊԻԱ

224. *Իր մէջէն անցնող Սեննեկալ ու Կամպիա գետերուն անուամբը Սեննեկամպիա ըսուած է, որ Սահրային հարաւակողմը կիյնայ. տարածութիւնն է 1,067,000 քառակուսի քիլօմէթր, բնակ. 12,000,000 կռապաշտ: Երկիրը ընդհանրապէս աւազուտ է, օդը խիստ տաք. յուլիսէն մինչև նոյեմբեր միակերպ անձրև կուգայ զարհուրելի փոթորիկներով: Բերքն է առատ ոսկի, խնկեղէն, պղպեղ, ջայլամի փետուր, փղոսկր և պաօպապ ծառը՝ որ մինչև 90 ոտնաչափ*

հաստութիւն կունենայ: Կենդանիներէն ալ տաք երկրի գազաններուն ամէն տեսակէն ալ ունի:

Գլխաւոր քաղաքներն են,

Պամպուք՝ մեծ ոսկիի հանք ունի. Դիմպու՝ բոլոր երկրին կրթուած մարդիկը հոս են. Բաճէօ՝ Անգղիացոց ձեռքն է. Ս. Լուդովիկոս՝ Գաղղիացոց ձեռքն է պզտի կղզւոյ մը վրայ Սենեկալի բերանը. Սենդ Լէյոն՝ այս երկրին մէջ Անգղիացոց գլխաւոր քաղաքն է: Գաղղիացոց ձեռքն է նաև Կորէա կղզին՝ Դալարի գլխոյն մօտ:

Ե. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ ԿԱՄ ՈՒԱՆԳԱՐԱ

225. Կուինէան Սենեկամպիոյ հարաւակողմի ծովեզերքն է, որոյ մեծ մասին Եւրոպացիք տիրած են: Օդը տաք, թաց ու վնասակար է: Բերքն է բամպակ, շաքար, լեղակ և ոսկիի աւազ, փիղ, վագր, առիւծ, ռնգեղջիւր և մեծամէծ օձեր: Տարածութիւնն է 2,470,000. բնակիչը 10,000,000, կռապաշտ, որ մարդակեր ալ կըլլան:

Գլխաւոր մասերն են,

1° Թագաւորութիւն Աշանդիեացոց, մայրաքաղաքը Քումասի.

2° Թագաւորութիւն Տահոմէի, մայրաքաղաքը Ապոմէյ.

3° Թագաւորութիւն Էյոացոց.

4° Թագաւորութիւն Պենենի.

Ֆրէթօւն և Գլուխ Գորսի քաղաքը՝ Անգղիացոց ձեռքն է. Մին՝ Հոլանտացոց ձեռքը. և Կրանտ-Պասամ՝ Գաղղիացոց ձեռքը:

Զ. ՆԻԿՐԻՏԻԱ, ՍՈՒՏԱՆ ԿԱՄ ԹԱՔՐՈՒՐ

226. Նիկրիտիան Սահրային հարաւային կողմն է. տարածութիւնն է 3,600,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 20,000,000 կրօնքը կռապաշտ և Մահմետական, քաղաքականութեան մէջ յառաջ գացած: Երկրին մեծ մասը աւազուտ անապատ: Բերքն է ոսկի, արծաթ, արմաւ, բրինձ, բամպակ ու վայրի գազաններ:

Գլխաւոր քաղաքներն են,

Սաքքադու (80,000) Ֆելլադա բռնած Կայսերութեան մայրաքաղաքը. Էնկոռնու (50,000), Սեկոյ, Տոմպօքդու, Պօռնու, Քուքա, Հինպօռնու, Քոպպէ եւ Իւպէյիր:

Է. ՆՈՒՊԻԱ

227. Նուպիան Եգիպտոսէ հարաւակողմը կիցնայ. և հիմա Եգիպտոսի կուսակալին ձեռքն է. տարածութիւնն է 1,200,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 2,000,000 Մահմետական, կռապաշտ և Քրիստոնեայ: Երկիրն աւազուտ, քարոտ և անբեր է: Բերքն է ոսկի, փղոսկր, եբենոս և արմաւ և ամէն տեսակ վայրի գազաններ:

Գլխաւոր քաղաքներն են,

Սենաար (9,000), Նեղոսին վրայ վաճառաշահ քա-

ղաք է. Նոր Տոնկոլա կամ Մարաքա՝ Նեղոսին ձախակողմը. Հին Տոնկոլա՝ գրեթէ աւերակ. Սուաքէմ Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է Մերքէ գնացող կարաւանաց :

Ը. ԵԹՈՎՊԻԱ ԿԱՄ ԱՊԻՍԻՆԻԱ

228. Ապիսինիան Ափրիկէի քաղաքակրթութեան օրօրոցն եղած է, Քրիստոնէութիւնը Դ. դարուն մէջ հոս մտած է, բայց հիմայ տէրութիւնը տկարացած է, և դրացի ազգերը արգելք եղած են իրենց յառաջդիմութեանը :

Եթովպիան՝ Նուպիոյ հարաւակողմը ընդարձակ երկիր է, այլ և այլ ինքնագլուխ տէրութեանց բաժնուած է: Տարածութիւնն է 780,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 4.000,000 Քրիստոնեայ Եւտիքական: Երկիրը լեռնոտ ու բարեբեր: Բերքն է ցորեն, բրինձ, շաքար, խահվէ, բամպակ. Եզները խիստ խոշոր են, գազաններ ալ շատ կայ :

Գլխաւոր քաղաքն է Կօնտար (50,000). Ամհարայի Թագաւորութեան մայրաքաղաքն է: Միւս տէրութեանց գլխաւոր քաղաքներն են Անքոպէր, Աքսում, Տոպարվա, Արքիքօ:

Թ. ԱՏԷԼ

229. Ատէլը Եթովպիոյ արևելեան կողմը փոքր տէրութիւն մըն է: Տարածութիւնն է 240,000 քա-

ռակուսի քիլօմէթր. բնակիչը 200,000, Մահմետական։ Երկիրը թաց, օդը վնասակար, բերքն է ոսկի, կնդրուկ, խէժ, մոմ և փղոսկր։

Գլխաւոր քաղաքներն են,

Չէյլա՝ Պապիւլմանտեպի նեղուցին մէջ կղզի է։ Պարպորա, Աւսակուրէլ՝ Ատելի մայրաքաղաքն է։ Հուրուր՝ պզտի տէրութեան մը մայրաքաղաքն է։

Ժ. ԱՅԱՆ

230. Այանի ներսի կողմը անբնակ անապատ է։ Տարածութիւնն է 220,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 150,000, Մահմետական և կռապաշտ։ Երկիրը աւազուտ բայց պտղաբեր է. բերքն է ոսկի, դեղին սաթ, փղոսկր, խունկ և խէժ։

ԺԱ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԷԱ ԿԱՄ ԳՈՆԿՈՅ

231. Հարաւային Կուինէան լեռնոտ ու բարեբեր երկիր է, Ափրիկէի հարաւակողմը։ Տարածութիւնն է 990,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 5,000,000, կռապաշտ, բայց շատերը քրիստոնէութեան հակամէտ։ Հոս երևելի է Պօա ըսուած անագին օձը. և ուրիշ շատ վնասակար ճճիներ, տեսակ մը մժեղ կայ, որ խայթելուն պէս կը մեռցնէ կըսեն. տեսակ մը խոշոր մրջիւն՝ Դմսոնդսի ըսուած, որ փղին պատիճը կը մտնէ՝ կը կատղեցնէ ու կ'սպաննէ. տեսակ մ'ալ որդ, որ ամէն վաճառք և կարասիք կրծելով փոշի կը դարձնէ։

Գլխաւոր տեղուանքն են,

Լօանկոյ՝ մայրաքաղաքը Պուալի. Գոնկոյ՝ մայրաքաղաքը Սան-Սալվատոր. Ենկոլա՝ մայրաքաղաքը Լոանտա. Պենկելա՝ մայրաքաղաքը Պենկելա:

ԺԲ. ՀՈԹԵՆԹԱՑՈՑ ԵՐԿԻՐ

232. Հոթենթացիք բնակութեան քաղաք չունին, տեղ տեղ խումբ խումբ բաժնուած կը բնակին: Տարածութիւնն է 600,000 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 200,000, բնութեամբ վայրենի են աւազակաբարոյ, աղէկ վազող և Թունաւոր նետ կը բանեցնեն:

ԺԳ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅԻ

233. Բարեյուսոյ գլուխը Աֆրիկէի հարաւածայրն է, Անգղիացոց ձեռքը: Տարածութիւնն է 520,000 քառակուսի քիլոմէթր. բնակիչը 260,000, կէսը սպիտակ, կէսը սև: Օդը բարեխառն, երկիրը բարեբեր է: Աֆրիկէի բոյսերուն ամենն ալ յառաջ կուգայ, վայրի գազանները խիստ քիչցած են, ոչխարները խոշոր դմակ ունին, ծովեզերքէն ալ շատ կէտ կամ պալենա կելլէ:

Գլխաւոր քաղաքն է Գլուխ Բարեյուսոյ (20,000), Եւրոպայէն Հնդկաստան գացող եկող նաւերը հոս կը կենան:

ԺԴ. ՔԱՖՐԱՍՏԱՆ

234. Քաֆրաստանի մեծ մասը լեռնոտ է, մնացածը աւազուտ, բայց բարեբեր: Տարածութիւնն է 1,200,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 2,000,000, սև, կտրիճ, աղէկ վազող և վարպետ որսորդ:

Քաֆրաստանը կը պարունակէ բուն Քաֆրաստանը կամ Նաթալի երկիրը, Պարօլուսի երկիրը, Պեքյուանայի երկիրը՝ մայրաքաղաքը Լիթագու կամ Քուրուման: Անգղիացիք Նաթալի գաղթականութիւնը առին: Պօէր, Հոլանտացոց հին գաղթականութիւնները՝ ներքին Քաֆրաստանի մէջ երկու հասարակապետութիւն կազմած են:

ԺԵ. ՄՈՆՈՄՈԹԱՓԱ

235. Մոնոմոթափա առենով ընդարձակ կայսերութիւն մըն էր, հիմա մանր տէրութիւններու բաժնուած, և ծովեզերքը Բորդուգէզներու ձեռքն է: Տարածութիւնն է 320,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 1,400,000: Օդը բարեխառն, հողը բարեբեր, ոսկին ու արծաթը շատ, շատ գետեր կ՚ոռոգանեն այս երկիրը, մեծ արօտներ և գեղեցիկ անտառներ ունի, որոց մէջ կայ շատ վայրի գազաններ և փիղ. շաքարի եղէգը հոս բնականէն կանի:

ԺԶ. ՄՈԶԱՄՊԻԳ

236. *Մոզամպիգը Բորդուգեզներուն ձեռքն է, բայց բնակիչները ինքնագլուխ են: Տարածութիւնն է* 590,000 *քառակուսի քիլօմէթր, բնակիչը* 2,600,000. *Բերքն է ոսկի, արծաթ, փղոսկր: Գլխաւոր քաղաքն է* Մոզամպիգ (3,000), *Լակոա գետէն մինչև Տելկատօի գլուխը Աֆրիկէի արևելեան կողմը Բորդուգեզներուն բոլոր երկիրներուն մայրաքաղաքն է:*

ԺԷ. ԶԱՆԿԵՊԱՐ

237. *Զանկեպարը Լուբամա լեռներուն արևելեան կողմը ծովեզերեայ ցած երկիր մ'է, օդն ալ անառողջ: Տարածութիւնն է* 600,000 *քառակուսի քիլօմէթր, բնակիչը* 1,000,000, *կէսը Արաբացի Մահմետական, կէսը տեղացի կռապաշտ: Բերքն է խէժ, փղոսկր, ծարիր և կապոյտ արջասպ: Գլխաւոր տեղուանքն են* Մակատօքսոյ, Գրավա, Քիլօա, Մոնկալլոյ, Մոմպազա, Մէլինտա:

ԺԸ. ԱՆԾԱՆՕԹ ԱՇԽԱՐՀ

238. *Նիկրիտիոյ և Հոթենթացւոց երկրին մէջ ընդարձակ աշխարհ մը կայ, որ դեռ անծանօթ է: Մէջը շատ վայրենի ու բարբարոս ժողովուրդներ կան, որ ատեն ատեն արշաւանքներ կընեն դրացի երկիրներուն վրայ: Տարածութիւնն է* 7,400,000 *քառակուսի քիլօմէթր:*

ԺԹ. ԱՓՐԻԿԷԻ ԿՂԶԻՆԵՐԸ

239. *Ափրիկէի կղզեաց բոլորին տարածութիւնն է* 590,000 *քառակուսի քիլօմէթր. բնակիչը* 4,100,000:

Անգղիացոց ձեռքը եղած կղզիներուն բնակչաց թիւն է 218,000:

Ֆերնանտօբոյ (30,000) *Կուինէայի մէջ.* .

Վերափոխումն (7,000) *ապառաժ ու անբեր կղզի մ'է.*

Սուրբ Հեղինէ (7,000), *հոս մեռաւ Նափոլէոն Ա.* 1821*ին.*

Մորիս *կամ* Գաղղիոյ կղզի (168,000), *առաջ Գաղղիացոց ձեռքն էր,* 1814*ին Անգղիոյ անցաւ.*

Ռոտրիկէզ, *Գաղղիացիք Անգղիոյ ձգեցին.*

Սեշելեան *կղզիները* (6,000) *երկու խումբերու կը բաժնուին:*

Գաղղիացոց ձեռքը եղած կղզիներուն բնակչաց թիւն է 112,000:

Պուրպոնի կղզի (110,000) *Հնդկաց ծովուն մէջ, խանձէն ու շաքարը ազնիւ է.*

Մայոդդա' *Գոմորեանց մէջ, և* Նոսսի-Պէ *ու* Ս. Մարիամ' *Մատակասգարի մօտ, Գաղղիացոց ձեռքն են:*

Բորդուգէզներուն ձեռքը եղած կղզիներուն բնակչաց թիւն է 440,000:

Ազորեան *կղզիները* (235,000), *գլխաւորներն*

են Դերչեյրա, Սուրբ Միքայէլ, Սուրբ Մարիամ, Բիքո և Ֆլորես կղզին:

Մատեյրա (120,000), *գինին շատ անուանի է, ատենով բոլոր կղզին անտառ էր, Բորդուգէզները 1431ին այրեցին, հիմա շատ բարեբեր է:*

Դալարի գլխոյ *կղզիները* (80,000), Ս. Մատթէոս, Ս. Թովմաս, Իշխանի կղզի:

Սպանիացոց ձեռքը եղած կղզիներուն բնակչաց թիւն է 237,000:

Գանարեան *կղզիները* (200,000) *գլխաւորներն են* Գանարիա, Դեներիֆֆա, Բալմա, Երկաթի կղզին, Ֆօրթվենթուրա, *որոց գլխաւոր բերքն է ազնիւ գինի.*

Աննա-Պոնա (1,200) *Գուինէայի ծոցին մէջ.*

Եւրոպացոց ձեռքը չեղած կղզիներուն բնակչաց թիւն է 3,200,000:

Մատակասգար (3,000,000), *Ափրիկէի կղզիներուն մեծն է, ծովեզերքը միայն ծանօթ է, օդը թաց և վնասակար: Կըսեն թէ ներսերը աղէկ մշակած է: Ծանօթ գլխաւոր քաղաքներն են* Դանանարիվոյ, Մուզանկայէ, Բօմպէթօք, Ֆուլ-Բուէն, Դամադավ և Անտէվուրանգ:

Սոքոթրա (100,000), *բնակիչները Արաբացի են:*

Զանզեպար. *Զանկեպարին ծովեզերքն է, գլխաւոր վաճառքն է խէժ և փղոսկր, մայրաքաղաքը Զանզիպար՝* 10,000 *բնակիչ ունի:*

Քոմորեան *կղզիները* (20,000), *Արաբացոց ձեռքն են:*

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ԱՄԵՐԻԿՈՅ

240. Ամերիկան երկար ատեն անծանօթ էր հին աշխարհի բնակչաց, Քրիստափոր Գոլոմպոս Ճենովացի նաւապետը Սպանիոյ Թագաւորութեան կողմանէ յայտնեց, նախ 1492 հոկ. 12 գտաւ Կուանահանի կամ Սանսալվատոր կղզին, որ Լուքայեան կղզիներուն մէկն է. ետքը Ամերիկոս Վեսբուչչի Իտալացին այն երկրին մէկ մասը պտըտելով անոր ստորագրութիւնը հրատարակեց և իր անուամբը այս նոր աշխարհը ըսուեցաւ Ամերիկա:

Ամերիկան Եւրոպայի արևմտեան կողմը կիյնայ, հիւսիսէն պատած է հիւսիսային սառուցեալ ծովը որ կը միացնէ իրարու Ատլանտեան և Խաղաղական ովկիանոսները, արևելքէն Ատլանտեան Ովկիանոսը, հարաւէն Հարաւային Ովկիանոսը, արևմուտքէն Խաղաղական Ովկիանոսը: Եւ կը տարածուի արևմտեան երկայնութեան 20°էն մինչև 171° և հիւսիսային լայնութեան 78°էն մինչև հարաւային լայնութեան 56°ը: Իր մակերևոյթն է 40,000,000 քառակուսի քիլօմէթր, և իր բնակչաց թիւը 75,000,000.

1. ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱՅ

241. Ռուսի Ամերիկան, Ռուսաց կայսրը վաճառականներու ընկերութեան մը յանձնած է, բայց

բնակչաց մեծ մասը դեռ ինքնագլուխ են, ասոնց մէկ ցեղին շրթունքը երկուքի ճեղքուած անասնաբարոյ մարդիկ են։

Ռուսի Ամերիկային միայն ծովեզերքը յայտնի է, ան ալ գրեթէ միշտ ձիւնով ծածկած, ներսերը անծանօթ։ Տարածութիւնն է 1,400,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 50,000, կռապաշտ։ Գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ մորթ ու պալենա ձուկը։ Գլխաւոր քաղաքն է Նոր Արխանկել (1000), Սիդքա կղզին մէջ։

2. ԿՐԵՆԼԱՆՏԻԱ

212. Կրենլանտիան Ամերիկայի հիւսիսային ծայրն է, բոլորովին սառնապատ, միայն ծովեզերքը ծանօթ։ Տարածութիւնն է 2,000,000 քառակուսի քիլօմէթր. բնակիչը 22,000, գրեթէ ամենքն ալ քրիստոնեայ։ Օդը ցուրտ, մինչև երեք ամիս շարունակ գիշեր և շարունակ ցերեկ կունենայ։ Բերքն է ամբանդ, հանքային ածուխ, կրանիդ և ուրիշ քարեր։ Բնակիչները Եսքիմացիք կըսուին, որ հասակով պզտիկ մարդիկ են, որսորդութեամբ կապրին. ձմեռը գետնափոր տեղուանք կը բնակին իսկ ամառը ծովու շան կաշիէ շինած վրանի տակ։ Այս երկիրը Տանիմարգացիք գտան 983ին, բայց հիմայ կէսը Անգղիացւոց ձեռքն է։

3. ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

213. Նոր Բրիտանիայի մեծ մասը առաջ Գաղ-

ղիացոց ձեռքն էր, 1760ին Անգղիացիք առին անունն ալ դրին Նոր Բրիտանիա: Որոյ մեծ մասը անծանօթ է: Տարածութիւնն է 9,700,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 2,500,000, շատը Եւրոպացի Հռովմէական, մնացածն ալ տեղացի կռապաշտ, օդը ցուրտ միայն հարաւի կողմը բարեբեր է: Գլխաւոր քաղաքներն են Քեպէք (40,000), Գանատային մէջ:

Մոնրէալ (44,000), մորթի վաճառք ունի. Հելիֆէքս (15,000) նաւահանգիստ է: Ֆրետերիքդըն. Ս. Յովհաննէս, Սիտնեյ և Լուիզպուրկ:

4. ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

244. Միացեալ նահանգներուն արևելեան մասը առաջ Անգղիացւոց էր, 1773ին գաղթականները խռովութիւն հանեցին և Գաղղիոյ ու Սպանիայի թագաւորաց պաշտպանութեամբը 1782ին իրենց անկախութիւնը ճանչցաւ Անգղիան, ետքը ուրիշ նահանգներ ալ աւելցնելով հիմայ 33 նահանգի և 5 գաւառի Հասարակապետութիւն կազմած են իրարու դաշնակից, անանկ որ իւրաքանչիւր նահանգ իրեն առանձին վարչութիւն ունի և ընդհանուր գործոց համար 4 տարին անգամ մը փոփոխելի նախագահով և ժողովքով մը կը կառավարուին: Հոս կրօնքը ազատ է, բայց ընդհանրապէս բողոքական են զանազան տեսակ: Քաղաքականութիւնը, արուեստները և երկաթուղիները շատ յառաջ գացած են:

Այս ընդարձակ երկիրը, որ Ատլանտեան Ովկի-

անտուէն մինչև մեծ Ովկիանոս , Մեքսիկոյի նեղուցէն ալ մինչև Ս. Լաւրենտիոսի գետը կերթայ , ունի տարածութիւն 8,000,000 քառակուսի քիլօմէթր , և բնակիչ 32,000,000 . շատը Եւրոպացի գաղթական: Օդը տեղ տեղ ցուրտ և տեղ տեղ ալ տաք է, և հարաւային կողմի օդը խոնաւ ու վնասակար է: Բերքն է բամպակ, շաքար, ծխախոտ, քաքաոյ, լեղակ:

Գլխաւոր քաղաքներն են,

Վաշինկթըն (40,000) Բոթոմագի վրայ. Նոր-Եորգ (623,000) Հուտսոնի բերանը. Ֆիլատելֆիա (410,000) Տելավարի վրայ . Պոսթըն (140,000) հոս ծնած է Ֆրանգլին բնագետը՝ որ Ամերիկայի ազատութեան հիմնարկուներէն մէկն է . Պալթիմոր (170,000) նաւահանգիստը 2000 նաւ կրնայ առնել . Նոր-Օրլէան (135,000) բնակչացմեծ մասը գաղղիացի են:

Սան-Ֆրանչէսկոյ (60,000) գեղեցիկ ծոցի մը վրայ նոր շինուած քաղաք է , որոյ բնակիչները շուտով կը շատնան :

5. ՄԵՔՍԻԿՈՅ

245. Մեքսիկոյի երկիրը 1521ին Սպանիոյ ձեռքն անցաւ , բայց 1820ին զատ հասարակապետութիւն եղան իրարու դաշնակից . 1864ին Գաղղիոյ բանակին զօրութեամբը կայսրութիւն եղաւ, որոյ ինքնակալ որոշուեցաւ Աւստրիոյ Մաքսիմիլիանոս իշխանը: Տարածութիւնն է 2,000,000 քառակուսի քիլօմէթր , բնակիչը 8,000,000 , Հռով-

մէջական: Երկիրը ընդհանրապէս լեռնոտ և շատ հրաբուխներ ունի: Բերքն է արծաթ, ոսկի, բամպակ, շաքար, ծխախոտ, ցորեն, լեղակ, որդնուկ՝ որ ծիրանի ներկ կըլլայ: Օդը ներսերը բարեխառն, իսկ ծովեզրը տաք, թաց ու վնասակար:

Գլխաւոր քաղաքներն են,

Մեքսիկոյ (250,000) Ամերիկայի ամենէն մեծ և ամենէն գեղեցիկ քաղաքն է, մայր եկեղեցին մեծագործ ու հարուստ, փողերանոցը շատ երեւելի, ասոր մօտ եղած լճերուն վրայ եղէգներով շինած շարժական պարտէզներ կան:

Բուէպլա Տէլոս Ա.նճելէս, Կուանա Խուադոյ, Քերէդարոյ, Ուախաքա, Ս. Լուիս Բոդոսի, Գամբեչէ, Չոլուլա, Վ.Երա Գրուզ:

6. ԿՈՒԱԴԵՄԱԼԱ ԿԱՄ ՄԻԱԲԱՆԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿԱՅ

246. Կուադեմալան երկար ատեն Սպանիացոց ձեռքն էր, 1821ին զատ հասարակապետութիւն եղաւ 5 անկախ տէրութիւններէ ձևացած, Կուադեմալա, Սան-Սալվատոր, Հոնտուրաս, Նիգարակուա, Գոստարիգա: Այս հասարակապետութիւնը Մեքսիկոյէն մինչև Բանամայի պարանոցը կերթայ: Տարածութիւնն է 500,000 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 2,000,000 Հռովմէական: Երկիրը լեռնոտ է, հողը բարեբեր, օդը բարեխառն՝ բայց վնասակար, շատ հրաբուխներուն

համար գետնաշարժը անպակաս է: Բերքն է մըսրացորեն, բամպակ, շաքար, լեղակ և ազնիւ փայտեր:

Գլխաւոր քաղաքներն են,

Կուադեմալա (60,000) ասոր տեղ ուրիշ քաղաք մը կար նոյն անունով որ 1777ին գետինը անցաւ. Վերապազ կամ Գոբան (12,000) տարին ինը ամիս միակերպ կանձրեւէ. Գարդակոյ (20,000) ծովեզերքէն տեսակ մը ոսպէ կելլէ, որ փորուն մէջ կարմիր ներկ ունի:

7. ԳՈԼՈՄՊԻԱ

247. Գոլոմպիացիք 1811ին Սպանիացիներէն գլուխ քաշելով երեք հասարակապետութիւն եղան իրարու դաշնակից. Նոր Կրանատա, Վենեցուելա և Քիդոյ:

Գոլոմպիան Բանամայի Պարանոցէն մինչև Կույանա ու Բերու կերթայ և իր Տարածութիւնն է 2,800,000 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 4,800,000 կրօնքը Հռովմէական: Երկիրը լեռնոտ է ու շատ հրաբուղխներ ունի: Օդը բարեխառն տեղ տեղ ալ ցուրտ, ծովեզերքի օդը վնասակար: Բերքն է ոսկի, արծաթ, փլադին, պղինձ, ազնիւ քարեր, քաքաոյ, ծխախոտ ու քինա:

Գլխաւոր քաղաքներն են,

Պոկոդա (40,000) դիրքը խիստ բարձր է, օդը

բարեխառն, մօտերը մեծ ջրվէժ մը կայ որ 550 ոտնաչափ բարձրութենէն վար կիյնայ։

Քիդոյ (70,000) աշխարհիս մէջ ամենէն բարձր դիրք ունեցող քաղաքն է, ծովուն երեսէն 2885 մէթր բարձր գեղեցիկ ձորի մը մէջ շինած, անոր համար օդը տաք չէ՝ թէպէտև գրեթէ հասարակածին տակ կիյնայ։ Գարդաճենա, Գարագաս, Բանամա, Վարինաս։

8. ԿՈՒՅԱՆԱ

248. Կույանան Օրէնօք ու Ամազոնաց գետերուն մէջ կիյնայ։ Տարածութիւնն է 400,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 326,000, կրօնքը Հռովմէական։ Ծովեզերքը շատ լճեր կան։ Օդը բարեխառն է. տարին ութ ամիս միակերպ անձրև գալէն ետքը, չորս ամիս անանկ չոր ու տաք կըլլայ, որ կենդանեաց շատը անօթի ծարաւ կը ջարդուին։ Բերքն է խահվէ, շաքար, խէժ, քօքոյ, բամպակ ու պղպեղ։ Երկրին մեծ մասը Գոլոմպիոյ ու Պրազիլի կտորը կը համարուի, մնացածին մէկ կտորը Հոլանտացոց ձեռքն է, մէկը Անգղիացոց, մէկն ալ Գաղղիացոց. Ներսի կողմերը դեռ անծանօթ են։

Գլխաւոր քաղաքներն են,

Բարամարիպոյ (20,000) Հոլանտացոց գլխաւոր քաղաքն է։ Ճորճդորվն կամ Սդապրուք (20,000) Անգղիացոց ձեռքը վաճառաշահ քաղաք է. Գայէն

(5,200) Գաղղիոյ ձեռքը՝ համանուն կղզիին մէջ, առուտուրի ազատ է :

9. ՊՐԱԶԻԼ

249. Պրազիլը մինչև 1822 Բորդուգեզներուն ձեռքն էր, երբ Բորդուգալի Թագաւորին տղան ինքնագլուխ կայսր եղաւ. բայց 1835 էն ի վեր Սահմանադրական կառավարութիւն եղաւ :

Պրազիլի երկիրը հարաւային Ամերիկայի արևմտեան կողմը կիյնայ , տարածութիւնն է 7,800,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 8,000,000 Հռովմէական: Այրեցեալ գօտոյն տակն ըլլալուն համար խիստ տաք է. բայց ամիսներով կանձրևէ: Հողը շատ պտղաբեր, բերքն է ոսկի, պղինձ, ադամանդ, և ուրիշ ազնիւ քարեր ու փայտեր, մանաւանդ Պրազիլի փայտ ըսուածը՝ որ աղէկ կարմիր ներկ կըլլայ. նաև բրինձ, բամպակ ծխախոտ, շաքար, կապիկ, կոկորդիլոս, ջայլամ, օձ ու գեղեցիկ Թիթեռնիկներ :

Գլխաւոր քաղաքներն են ,

Ռիոյ-Ժանէյրօ , Պահիա, Բեռնամպուգոյ , Վիլլառիգա, Ս.Պօղոս:

10. ԲԵՐՈՒ

250. Ամերիկան գտնուելէն առաջ Բերուի Թագաւորութիւնը շատ զօրաւոր ու հարուստ եղած է. 1821ին Բերուի բնակիչները ապստամբելով Սպա-

նիացիներէն՝ զատ հասարակապետութիւն եղան :

Բերուն Գոլոմպիոյ հարաւակողմը մեծ Ովկիանոսին ծովեզերքն է: Տարածութիւնն է 1,400,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 2,500,000 Հռովմէական բայց կռապաշտ լեռնցիներ ալ կան: Երկիրը շատ տեղ աւազուտ է, ոչ անձրեւ կուգայ եւ ոչ կորտայ : Բերքն է ոսկի, արծաթ, սնդիկ, զմրուխտ, գինի, օղի, շաքար, բրինձ, բուրդ, լամա ըսուած վայրի կենդանին ոչխարի նման: Խոնաւ տեղերը ահագին օձեր ու անթիւ ճճիներ կը գտնուին. տեսակ մը ճճի ալ կայ Սուսբելլօ ըսուած՝ որ թղթի նման բոյն կը շինէ:

Գլխաւոր քաղաքներն են,

Լիմա (70,000) անկէ երեք փարսախ հեռու է իր նաւահանգիստը Գալեաօ. Գուզգոյ՝ Բերուի Թագաւորութեան հին մայրաքաղաքն է, Արեքիբա, Դրուխիլլոյ, Կուանքաւելիգա :

11. ՊՈԼԻՎԻԱ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԲԵՐՈՒ

251. Պոլիվիան 1825էն ի վեր ինքնագլուխ հասարակապետութիւն մըն է: Տարածութիւնն է 1,300,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 2,000,000 Հռովմէական: Երկրին մէջ տեղերը լեռնոտ, արեւելեան կողմը բարեբեր, արեւմուտքը անբնակ անապատ է : Բերքն է գինի ձէթ ու ազնիւ փայտեր :

Գլխաւոր քաղաքներն են,

Լաբլաթա կամ Չուքիսաքա՝ բովերը հարուստ

արծաթահանք կայ. Լա Փազ՝ ոսկեհանքն անուանի է. Բաղոսի՝ աշխարհիս մեծագոյն արծաթահանքներէն մէկն է :

12. ԲԱՐԱԿՈՒԱ

252. Բարակուան առենով Սպանիացոց ձեռքն էր, այս երկրիս հնդկաց մէկ մասը Կարանի բռուած Յիսուսեան քարոզիչներուն ձեռքով շատ կրթուեցան 1767ին. երբոր անոնք հեռացան. ժողովուրդը շատ պակսեցաւ: Հիմա ինքնագլուխ հասարակապետութիւն է: Տարածութիւնն է 230,000,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 1,300,000 Հռովմէական: Երկիրը դաշտային ու խիստ բարեբեր. Բերքն է չայ, ծխախոտ, բամպակ, շաքար: Գլխաւոր քաղաքն է Վերափոխումն:

13. ԼԱԲԼԱԹԱ

253. Լաբլաթացիք 1810ին Սպանիացիներէն ապստամբելով ինքնագլուխ հասարակապետութիւն եղան Արժանթինա անուամբ : Տարածութիւնն է 2,250,000 քառակուսի քիլօմէթր. բնակ. 2,000,000 Հռովմէական : Երկրին մեծ մասը թաց է. օդը տաք բերքն է գինի , ձէթ, բամպակ , շաքար և լամայի ազնիւ բուրդ :

Գլխաւոր քաղաքներն են

Պուէնոս Այրէս (90,000) Բլաթա գետին վրայ. օդը գեղեցիկ. վաճառաշահ քաղաք է. Մենտոզա՝ ազնիւ գինի ունի. Գորտովա՝ մեծ վաճառականութիւն ունի :

14. ՈՒՐՈՒԿՈՒԱ

254. Ուրուկուան Սպանիոյ իշխանութեան տակ Լաբլաթայի փոխարքայութեան մաս էր: Պրազիլացիք 1821ին առին բայց քանի մը տարիէն կորսուցին: 1828ին հասարակապետութիւն մը կազմեցին: Կը բաժնուի 9 գաւառներու: Տարածութիւնն է 260,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 300,000 որուն մէկ ութերորդը հազիւ Եւրոպացի են: Գլխաւոր քաղաքն է Մօնթէ-Վիտէօ (30,000) Բլաթա գետին ձախ կողմը իր բերնին մօտ, գեղեցիկ նաւահանգիստ է, 20 տարիէն ի վեր է որ Պուէնոս-Այրէսի հետ կը մրցի:

15. ՔԻԼԻ ԿԱՄ ՉԻԼԻ

255. Քիլիի ժողովուրդը 1818ին զատուեցան Սպանիացիներէն և հասարակապետութիւն եղան: Քիլին Բերուի հարաւակողմը՝ Կորտիլեան լեռներուն և Խաղաղական Ովկիանոսին մէջ կինայ: Տարածութիւնն է 300,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 1,500,000 Հռովմէական: Երկիրը լեռնոտ ու ջրոտ է, օդը բարեխառն, բերքն է պղինձ, ոսկի, արծաթ ու ազնիւ քարեր:

Գլխաւոր քաղաքն է Սանդ-Իակոյ (80,000) որոյ նաւահանգիստն է Վալբարաիզոյ: Վալդիվիա՝ գեղեցիկ նաւահանգիստ է:

16. ԲԱԴԱԿՈՆԻԱ

256. Բադակոնիան Ամերիկոյ հարաւածայրն է,

գրեթէ բոլորն ալ անծանօթ: Տարածութիւնն է 1,000,000 քառակուսի քիլոմէթր, բնակիչը 200,000, բարձրահասակ և հիւրասէր մարդիկ, բնակութեան քաղաք չունին, խումբ խումբ դաշտերու մէջ կը կենան: Արևելեան ծովեզերքը տաք ու աւազուտ է և անուշ ջուր չունի:

17. ԱՆՏԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ

257. *Անտիլեան կղզիները, որ* Արեւմտեան Հընդկաստան *ալ կըսուի, քիչ քիչ Սպանիացոց ձեռքն անցաւ. որոնք 10 տարուան մէջ մեծ Անտիլեաններուն բնակիչները ջնջեցին որ երկչոտ մարդիկ էին: Փոքր Անտիլեաններուն բնակիչները, որ* Քարայիպ *կըսուէին, կորիծ ըլլալով՝ Սպանիացոց դէմ դրին, մինչև 1600ին ատենները ուրիշ Եւրոպացիները զանոնք ալ ջնջեցին:*

Անտիլեան կղզիները հիւսիսային և հարաւային Ամերիկոյ մէջ տեղը կիյնան. որոնք երեք գլխաւոր խմբերու բաժնուելով կը զատուին, Մեծ Անտիլեանք, Փոքր Անտիլեանք *և* Լուքայեան *կամ* Պահամա կղզիներ:

Մեծ Անտիլեաններն են Գուպա, Ճամայիգա, Հայիդի *կամ* Ս. Դոմենիկոս *և* Բորթօ-Ռիգոյ:

Փոքր Անտիլեան կղզեաց գլխաւորներն են, Ս. Խաչ, Ս. Բարթողիմէոս, Ս. Լուչիա, Ս. Վինչենցիոս, Կրանատա, Կուատալուբա, Մարթինիկէ, Ս. Եւստաթէոս *և* Քուրասաոյ:

Լուգայեան կղզիները մանրեն Անգղիացոց ձեռքը, որոց մէջ անուանի է Կուանահանի կամ Սան-Սալվատոր կղզին որ Գոլոմպոսի առջի գտած տեղն է:

Տարածութիւնն է ընդամենը 240,000 քառակուսի քիլօմէթր, բնակիչը 3,650,000: Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, շատ հրաբուխներ ունի: Օդը տաք ու թաց է, հոկտեմբերէն մինչև ապրիլ չոր կըլլայ, մնացած ամիսները միակերպ կ'անձրևէ: Սաստիկ մրրիկներ շատ կըլլայ այս կղզիներուն մէջ, մինչև իրենց տուները և շէնքերը կը փլցնեն:

Հողը շատ պտղաբեր է, բերքն է լեղակ, բամպակ, շաքար, ծխախոտ, խնկեղէն, Ափրիկէի և Ասիայի ամէն բերքերը, Եւրոպայի բոյսերն ու կենդանիները հոն երթալով քիչ ատենի մէջ ցեղերնին կը փոխեն:

Գլխաւոր քաղաքներն են,

Հաւանա (112,000) Գուպա կղզիին մէջ. Քինկսդըն (33,000) Ճամայիգայի մէջ. Բորդօ-Բրէնս Հայիդի կայսերութեան մայրաքաղաքն էր, աղէկ է նաւահանգիստը և բանուկ վաճառականութիւն ունի. Ս. Պետրոս՝ Մարթինիքայ կղզիին մէջ. Սուրբ Դոմինիկոս՝ Հայիդիի մէջ Դոմինիկեան հասարակապետութեան մայրաքաղաքն է, այս քաղաքը Գոլոմպոսի եղբայրը շինեց:

Բուէնդ-ա-Բիթր՝ Կուատալուբայի մէջ, նաւահանգիստը բանուկ 1842ին երկրաշարժէն մեծ մասը կործանեցաւ:

Ֆոր-Րուայալ՝ Մարթինիկէի մայրաքաղաքն է:

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ ՈՎԿԻԱՆԻՈՅ

258. *Ովկիանիան Եւրոպացոց ծանօթացաւ գրեթէ Ամերիկայի հետ, որկէ առաջ 1,400ին առեններն Արաբացիք առոր* Հարաւային Ասիա *ըն-ուած կողմը գացեր ու իրենց հաւատքը տարածեր էին, բայց Բորդուգեզներ գիրենք հալածեցին:* Ետքը *Հոլանտացիք, Սպանիացիք և Անգղիացիք այլ և այլ գաղթականութիւններ հաստատեցին հոս:*

Ովկիանիա կըսուի հարաւային Ովկիանոսին մէջ ցրուած կղզիները, որ ամէնը մէկէն Եւրոպայէն մեծ է: Տարածութիւնն է 10.500,000 *քառակուսի քիլոմէթր, բնակիչը* 35,0·0,000 *շատը սև, վայրենի, անկիրթ, ու պակասամիտ, մինչև գետին բանելն ալ չեն գիտեր. հիւղերու մէջ կը բնակին, որսորդութեամբ կապրին, ոմանք ալ մարդակեր են: Օդը ընդհանրապէս տաք է, բայց ծովեզերքը բարեխառն· Մեծ մասը լեռնոտ է. ծովեզրն ալ շատ տեղ ժայռերով լեցուն. գլխաւոր բերքն է հացի ծառ, քոքոյ, գետնախնձոր և ամէն տեսակ խնկեղէն:*

Ովկիանիայի մեծ մասը գրեթէ եւրոպացոց ձեռքն է:

Ա.

ԿԱՂՈՒԱԾՔ ՀՈԼԱՆՏԱՑՈՑ

Ճավա (8,000,000) *Ովկիանիայի ամենէն բազմամարդ և ամենէն ծաղկած կղզին է, և գրեթէ*

բոլոր Հոլանտացոց իշխանութեան տակն է: Մայրաքաղաքն է Պաթավիա (53,000) որ Մալեզիայի մէջ հոլանտացոց ամէն կալուածոցը գլխաւոր տեղն է և կեդրոն վաճառականութեան. օդը վնասակար:

Ուրիշ երևելի քաղաքներն են,

Չերամ, Չերիպոն, Սամարանկ, Սուրուպայա, Չուգլուգարդա և Սուրուգարդա, այս երկու քաղաքները որ կղզոյն ներսերն են բնիկ Սուլթաններուն ձեռքն է, բայց հարկատու Հոլանտացոց, կրօնքնին մահմետական և կռապաշտ:

Սումադրա (5,000,000) Սունտեան նեղուցով կը բաժնուի Ճավայէն և երկու մաս ունի:

1° Անկախ՝ որ հիւսիսի կողմն է և գլխաւոր քաղաքն է Աչէմ, Սիաք:

2° Հոլանտացոց ձեռքը՝ որ հարաւի կողմն է գլխաւոր քաղաքն է Բատանկ, ուր կը նստի հոլանտացի Կուսակալը: Բալամպանկ մայրաքաղաք համանուն տէրութեան մը, զոր գրաւեցին Հոլանտացիք 1821ին:

Ճավայի և Սումադրայի մերձակայ կղզիներուն շատը Հոլանտացոց ձեռքն է, որոց մէջ նշանաւոր են Պանգա՝ անագի հարուստ հանք ունի, Պիլլերոն, Սումպավա, Ֆլորես և Տիմոր:

Պոռնէոյ (4,000,000) Գաղղիոյ երկու մեծութիւնը ունի, մէկ մասին Հոլանտացիք կը տիրեն, մեծագոյն

մասը դեռ անկախ է. Նշանաւոր է Պոռնէոյ (10,000) *ուր Սուլթան մը կը նստի, որ առենով կղզիին մեծագոյն մասին կը տիրէր:*

Չէլեպէս (3,000,000) *գրեթէ բոլորովին հոլանտացոց տակն է:*

Դեռնատ *փոքրիկ կղզի յարևմուտս Ճելոլոյի, ուր կը նստի Սուլթան մը հարկատու Հոլանտացոց:*

Պանտա *փոքր կղզի, ուր Հոլանտացիք Հնդկաստանի ընկոյզ կը մշակեն:*

Ամպոյնա՝ *հոս կը նստի Մոլուգեան կղզեաց Հոլանտացի Կուսակալը, մեխակի ծառ ունի:*

Բ.

ԿԱԼՈՒԱԾՔ ՍՊԱՆԻԱՑՈՑ

Փիլիպեան կղզիք (4,500,000) *ըստ մեծի մասին Սպանիացոց իշխանութեան տակն են և կը բաղկանան հազարաւոր մանր կղզիներէ, որոց գլխաւորներն են.*

1° Լուսոն (2,300,000) *մեծագոյն մասը Սպանիոյ տակ է, երևելի է* Մանիլէ (100,000) *մեծ քաղաք բազմահարուստ և վաճառաշահ ծոցի մը մօտ, նաւելի գետի մը վրայ:*

2° Մինտանաօ (1,200,000) *որոյ գլխաւոր քաղաքներն են* Սամպօանկան՝ *կղզիին Արևմտեան կողմը Սպանիացի ստացուածոց գլխաւոր տեղն է,* Սալանկամ (10,000):

3°. Բալաուան *քիչ ծանօթ մեծ կղզի մըն է:*

4°. Մարիանեան *կամ* Աւազակաց *կղզիք* (6000) *Միքրոնէզիոյ մէջ. Սպանիացոց իշխանութեան տակն են, երեքին են* Կուահան՝ *կուսակալը հոս կը նստի, և* Տինիեան: *Այս կղզիներուն հիւսիսի կողմը անագին ժայռ մը կայ բրգաձև, որ* Ղոյլտայ կին *կըսուի:*

Գ.

ԿԱԼՈՒԱԾՔ ԳԱՂՂԻԱՑՈՑ

Դահիդի *կղզիք* (135,000) *որոց մէջ գլխաւոր են* Դահիդի, Թեբիւրօա, Հուահինէ *ևայլն:*

Մարքիզեան *կղզիք* (40,000) *որոց մէջ գլխաւորն է* Նուքահիվա :

Նոր Գալէտոնիա (40,000) *Գաղղիացիք գրաւեցին* 1853*ին* :

Դ.

ԿԱԼՈՒԱԾՔ ԲՈՐԹՈՒԳԱԼԱՑ

Բորդուգեզներն՝ որ ամէն եւրոպացի ազգերէն առաջ Ովկիանիոյ մէջ հաստատուեցան. հիմա միայն Տիմօր *կղզոյն մէկ մասն ունին. որոյ գլխաւոր տեղն է* Տիլի (2000) *և* Քլոր *կղզին մէկ մասը :*

Ե.

ԿԱԼՈՒԱԾՔ ԱՆԳՂԻԱՑՈՑ

Նոր Հոլանտա *կամ* Աւստրալիա (800,000) *այնչափ ընդարձակ է այս կղզին որ շատ աշխարհագիրք նոր ցամաք մը կը համարին. ներսերը ըստ մեծի մասին դեռ անծանօթ են. և ծովեզերքի վրայ այլ և այլ գաղթականութիւններ հաստատեցին Անգ-*

գիտցիք ինչպէս Հարաւային Նոր Կալլես՝ *գլխաւոր քաղաքն է* Սիտնէյ (20.000) :

Վիկտորիա՝ *գլխաւոր քաղաքն է* Մելպուռն (25000)

Հարաւային Աւստրալիա՝ *գլխաւոր քաղաքն է* Ատելայիտէ (15000).

Արեւմտեան Աւստրալիա՝ *գլխաւոր քաղաքն է* Բերդն.

Վիկտորիա գաւառը քան զամէնն աւելի ոսկեբեր է. բայց Նոր Ուէյլզի ու հարաւային Աւստրալիոյ մէջ ալ ճոխ ոսկեհանք կան. վերջերս արեւմտեան Աւստրալիոյ մէջ ալ առատ ոսկի գտնուեցաւ :

Վան-տիեմին *կղզի* (45000) *առատ երկաթի հանք ունի. գլխաւոր քաղաքն է* Հոպարդ-Թօվն (16000)

Նորֆօլք *ուր յանցաւորները կաքսորուին* :

Նոր Զելանտա *կամ* Դասմանիա *երեք կղզի են. երկուքը շատ մեծ որ* Գուքի *նեղուցով իրարմէ կը բաժնուին* Եհինոմովի, Դավայի-Բունամմու :

Լապուան՝ *պոռնէոյի հիւսիսային ափանցը մօտ փոքր կղզի մըն է. զոր վերջերս Անգղիացիք գրաւեցին* :

Զ.

ԱՆԿԱԽ ԿՂԶԻՔ

Նոդագիայի *մէջ* Սուլու *կղզիք, ատոնց Սուլթանը կիշխէ նաև* Պոռնէոյ *և* Բալաուան *կըղզեաց մէկ մասին, և մօտաւոր քանի մը մանր կղզիներու* :

Աւստրալիայի *մէջ* Նոր-Կուինէա *կամ* Բա-

բուագիա (500,000) *կղզեաց խումբ մ'է, ուր կը գտնուի Գանկուռ, բնաբանա, սև կարապ և դրախտահաւ*: Նոր-Բրիտանիա և Նոր-Իրլանտան (65,000) *որոց միայն քանի մը ծովեզերեայ տեղերը ծանօթ են*: Սողոմոնեան *կղզիք* (100,000) *որոնք կրնուին նաև* Կղզիք Արշակունեաց և Նոր-Գէորգիա.

Արշիպեղագոս Լա Բերուզիոյ (50,000) *յորոց մէկուն քով նաւաբեկեցաւ Լա Բերուզ գաղղիացի նաւապետը 1788ին*:

Նոր-Հեբրիտ (150,000) *բնակիչները սև են, որոց մէջ մարդակերներ ալ կան*: *Ասոնց էն մեծը կրնուի* կղզի Հոգոյն Սրբոյ:

Միքրոնեզիայի *մէջ* Մակեյլանի Արշիպեղագոսը (1,000), *բազմաթիւ կղզեաց խումբեր, կը բաղկանայ*: Բելեվ *կամ* Բալաոս *կղզիք* (10,000), *թաւ անտառներով ծածկուած են*: Կարոլինեան *կղզիք* (50,000), *բազմաթիւ կղզեաց խումբեր են*: Միւլկրավ *կղզիք' որ երկու խումբ կը բաժնուին* Ռատաք և Ռալիք: Գիլպերտ' *մանր կղզիներ են*:

Բոլինեզիայի *մէջ* Սանտուիչ *կամ* Հավայի *կղզիք* (150,000), *ուր քաղաքականութիւնը և քրիստոնէութիւնը ծաղկած է, և կանոնաւոր կառավարութիւն, դպրոցներ ու ընդարձակ վաճառականութիւն ունի*: *Այս կղզիներէն մէկուն մէջ սպաննեցին Գուք նաւապետը*:

Նաւորդաց կղզիք (160,000)՝ որ կըսուին նաև Համուա կամ Պուկինվիլ։

Վիդի կամ Ֆինի կղզիք (85,000) երկու մեծամեծ կղզիներ ունի։

Տոնկա կղզիք (200,000) քրիստոնէութիւնը հոս յառաջ երթալու վրայ է. Գուք զասոնք Կղզիք բարեկամաց կը կոչէ, բնակիչներէն տեսած մարդասիրութեանն համար։

Սօրին կղզիք կըսուին հարաւային և վեանգաւոր կոչուած Արշիպեղագոսները, որոց կղզիները մանր և ցած են և մեծ մասամբ անբնակ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱ

Աշխարհք. *Բորթուկալ*, Լուսիտանիա: *Սպանիա*, Իբերիա *կամ* Եսպերիա վերջին: *Իտալիա*, Եսպերիա փոքր *կամ* Աւսոնիա *կամ* Սատուռնիա, (*որ կը պարունակէր* Գաղղիա Այսրալպեան, Լիգուրիա, *Թոսգանա*՝ Ետրուրիա, Ումբրիա, Պիկենոն, Սաբինիա, Լատիոն, Կամպանիա, Սամնիոն, Ապուլիա, Լուկանիա, Բրուդիոն): *Յունաստան* (*որ կը պարունակէր*, Ակառնանիա, Ետոլիա, Լոկրիս, Փովկիս, Բէովտիա, Ատտիկէ, Մեգարա, Աքայիա, Եղիս, Արկադիա, Արկողիդա, Մեսինէ, Լակոնիա): *Ալպանիա*, Եպիռոս: *Ռումելի*՝ Թեսսաղիա, Մակեդոնիա, Թրա-

կիա: *Սերվիա և Պուլղարիա*, Մեսիա: *Վալաքիա և Թրանսիլվանիա*, Դակիա: *Հունգարիա*, Պաննոնիա: *Շուրջ Աւստրիոյ*, Նորիկոն: *Տալմաթիա*, Լիւրիկէ: *Զուիցերի՝* Հռեթիա, Հելուեթիա: *Գավերիա*, Վանդալիկա: Գերմանիա: *Պելճիա*, Բելգիա: *Հոլանտա*, Պաթավիա: *Մեծ Բրիթանիա*, Բրիտանիա (*որ կը պարունակէր Անգղիա*, Ալպիօն. *Սկովտիա*, Կալետոնիա): *Իռլանտա*, Իբերնիա: *Տանիմարքա*, Կիմբրիան Քերոնիսոն: *Շուէտ և Նորվեկիա*, Սկանտինավիա: *Ռուսիա*, *Բօլանտ*, *Ռուսիոյ մէկ մասը*, Սարմադիա:

Կղզիք: *Մայորքա*, *Մինորքա*, Եւողեանք *կամ* Լիպարեանք: *Իվիցա*, Պիտիուսեան: *Իեր*, Ստիկադի: *Էլպա*, Իլվա *կամ* Եթողիա, Կորսիկա, Սարդենիա, Սիկիլիա: *Մալթա*, Մելիտէ: *Քանդիա*, Կրետէ: *Նեկրոփոնտ*, Եւբիա: *Քորֆու*, Կորկիւրա: *Ս. Մաւրա*, Լեւկադիա: *Թէաքի*, Իթակէ: Կեփաղոնիա: *Զանթա*, Զակիւնթոս: *Քոլուրի*, Սաղամիս: *Ձերիկոյ*, Կիւթէրէա: Կիւկլադայք:

Թերակղզիք: *Մօրա*, Պելոպոնես: *Խրիմ*, Տաւրիկեան-Քերոնիսոն: *Եութլանտ*, Կիմբրեան-Քերոնիսոն:

Լերինք: Բիրենեան, Ալբեան, Ապենինեան:

Պալքան, Էմոս: Կարպատեան: *Տեսբող տաղը*, Հռոդոպէ: *Բուռնար տաղը*, Պանգէոս: Պինդոս, Ոլիւմպոս, Եուրա:

Ծովք, *Ծոցք*, *Նեղուցք*: *Պալթիկ*, Ծոց Գոթայի: *Նեղուց Քալէի*, Անցք Գաղղիոյ կամ Բրիտանիոյ: *Ծոց Կասգոնեան*, Ծոց Կանտաբրիոյ: *Նեղուց Ճիպրալթարի*, Նեղուց Հերակլեան *կամ* Գադեան: *Ծով Միջերկրական*, Մեծ ծով *կամ* Ներքնածով: *Ծոց Լիոնի*, Ծոց Գաղղիոյ: *Ծոց Ճենովայի*, Ծոց Լիգուրիոյ: *Նեղուց Պոնիֆաչիոյ*, Նեղուց Տաբրաս *կամ* Ֆօսա: *Նեղուց Մեսինայի*, Նեղուց Սիկիլիոյ: *Ծոց Թարենթեայի*, Ծոց Տարենտայ *կամ* Աւսոնիոյ: *Ծով Արշիպեղագոսի*, Ծով Եգեան: *Նեղուց Տարտանէլի*, Նեղուց Ելլեսպոնտեան: *Ծով Մարմարայի*, Ծով Պրոպոնտոս: *Նեղուց Կ. Պոլսոյ*, Վոսփոր Թրակեան: *Սեաւ ծով*, Եւքսինեան Պոնտոս: *Նեղուց Քէրչէի կամ Ենիքալէի*, Վոսփոր Կիմերեան: *Ծով Ազախու*, Մէոտիս:

Լիճք: *Ճինեվրա*, Լեմանոս: *Քոնսթանս*, Պրիկանտիօն: *Մաճիօրէ կամ Մեծ լիճ*, Վերբանոս: *Կոմոյ*, Լարիոս: *Կարտա*, Բենակոս: *Բերուճիա*, Տրասիմէն: *Պօլսենա*, Վուլսինեան: *Կոպոլիաա*, Ասպայիս:

Գետք: *Դակոյ*, Տակոս: *Կուստիանա*, Անաս: *Էպրոյ*, Իբերոս: *Ռոն*, Հռոդանոս: *Լուառ*, Լիգեր: *Սէյն*, Սեկուանա: *Ռէն*, Հռենոս: *Էլպա*, Ալպիս: *Օտեր*, Վիատրոս: *Բօ*, Բատօս *կամ* Երիդանոս: *Դանուբ*, Իստեր: *Վոլկա*, Ռա: *Տոն*, Տանայիս: *Տնիեպեր*, Պօրիսթեն:

ԱՍԻԱ

Աշխարհք: *Տաճկի Ասիոյ մէջ*, *փոքր Ասիա* (*որ կը պարունակէր նահանգ Բիւթանիոյ*, Միւսիա *որոյ մասն են* Տրովադա, *Եւոլիտէ*: Լիւդիա *որոյ քաղաք են Զմիւռնիա*, *Աք հիսար*, Թիւատիր, *Այատուլուգի մօտ* Եփեսոս: Կարիա: Լիւկիա: Պամփիլիա *որոյ մէջն է Քարա Հիսար*՝ Պերգա: Պիսիտիա: Կիլիկիա, *որոյ մէջն են Ատանա և Մարաշ*: *Կապադովկիա որոյ մէջն են Մաժակ կամ Կեսարիա*, *Սեբաստիա*, *Տիվրիկ*՝ Նիկոպոլիս: Փռիւգիա *որոյ մէջն է Էսկի շեհիր*՝ Անտիոք Պի-սիտեայ, *Քոնեայ*՝ Իկոնիոն: *Էնկիւրիւ*՝ Գաղա-տիա: Բիւթանիա *որոյ մէջն է Պրուսա*, Նիկիա, Նիկոմիդիա, Քաղկեդոն, Խրիսուպոլիս: Պափղա-գոնիա, *որոյ մէջն է Ինեպոլի*՝ Յոնուպոլիս, *Սինոպ*, *Քաստէմունի*՝ Գերմանիուպոլիս: Պոնտոս, *որոյ մէջն է Սամսոն*՝ Ամիսոս, *Քերասուն*՝ Կերա-

սոնտ, *Տրապիզոն*, *Օսմանճըք*՝ Պիմոլիս, *Մարսը-վան*՝ Փաղեմոն, Ամասիա, *Նիքսիսար*. Նիոկեսարիա)։ *Բարաշամ*՝ Ասորիք, *որոյ մէջն է* Պաղեստին և Փիւնիկէ, *Սուրբ գրոց մէջ կըսուին* երկիր Արամայ, *ուրիշները կըսեն* Սիրիա, *ասոնց երևելի քաղաքներն են Երուսաղէմ*, *Շամ*՝ Դամասկոս. *Պէրութ*՝ Պերիթոս, *Սայտա*՝ Սիդոն, Տիւրոս։ Միջագէտք։ Բաբելոն։ Ասորեստան, *որոյ մէջն է Մուսուլ*՝ Նինուէ։ Մարք։ Արաբիա։ Պարսկաստան։ Հնդկաստան Յայսկոյս Գանգեսի։ Հնդկաստան Յայնկոյս Գանգեսի *կամ* Արեւելեան Թերակղզի։ *Թաթարք*՝ Սկիւթիա։ *Ռուսի Ասիա*՝ Սարմատիա ասիական։

Կղզիք։ *Եգեան ծովուն կղզիները*, *Պոզչա*՝ Դենեդոս. *Միտիլլի*՝ Լեսպոս, *Սամոս*՝ Պարթենիա, Պատմոս, Հռոդոս, *Կիպրոս*։ *Սեյլան*՝ Տափռոպանիա, *Անտաման*՝ Սալինէ, *Սումաղրա*, Բարեբաղդ կղզի։

Թերակղզի։ *Մալաքքա*՝ Աւրէա Քերսոնիսոն։

Լերինք։ Կովկաս, Տորոս, Լիբանան և Հակալիբանան, Պիլլոր տաղը և Ալթեան լերինք՝ Իմաւուս, Հիմալայա՝ Եմոդեան լերինք։

Ծովք եւայլն։ *Կարմիր ծով*՝ Ծոց Արաբիոյ *կամ*

Երիարեան ծով։ *Նեղուց Պապ-Իւլ-Մանտէպի'* Տիրոն։ *Ծով Արաբիոյ*, Երիբրէոն։ *Պարսից ծոց*։ *Պէնկալա'* *ծոց* Գանգեսեան։ *Կասպից ծով'* Հիրքանոն։

Գետք։ *Վոլկա'* Լիւկոս։ *Ջիհոն*, Օքսիւս։ *Սիհոն*, Եաքսարթես։

ԱՓՐԻԿԷ

Աշխարհք։ *Եգիպտոս* (*որ կը պարունակէր* Թէբայիդ. Եօրնանահանգ, Տելթա)։ *Պարսա'* Լիբիա։ Թրիբոլի։ *Թունուզ'* Ափրիկէ առանձնակ։ *Ալճերի կամ Ճեզայիր'* Նումիդիա։ *Մաղրըպ կամ Մարոք և Ֆէս'* Մաւրիտանիա։ *Նուպիա և Աբիսինիա'* Եթովպիա։ *Սահարա*, *Նայլն'* Կէթուլիա, Ներքին Լուբիա։

Կղզիք։ *Մատերա'* Բրբբրարիա։ *Քանարեանք'* կղզիք Երանելեաց։

Լերինք։ *Ատլաս*։ Լուսնի լերինք։

Ծոցք։ *Սիտրա'* Մեծ Սիրթի։ *Քապէս'* Փոքր Սիրթի։

Գետք։ *Նեղոս*։ *Նիկեր*։ *Ասդապոս Վտակ*։

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՐԷԱՍՏԱՆԻ

Անունք: Քանանու երկիր. Պաղեստին. Աւետեաց երկիր. Եբրայեցոց աշխարհ. Իսրայէլի երկիր. Յուդայի երկիր. Եհովայի երկիր. Սուրբ երկիր:

Սահմանք: Հիւսիսէն՝ Ասորիք. արեւելքէն՝ Ասորիք և Արաբիա. հարաւէն՝ Արաբիա. արեւմուտքէն՝ Միջերկրական ծով:

Պաղեստին կը տարածուի հիւսիսային լայնութեան 31°էն մինչև 33° 35′. և արեւելեան երկայնութեան 32°էն մինչև 34° 30′. Մեծագոյն երկայնութիւնն է գրեթէ 321 քիլօմէթր և լայնութիւնը 160 քիլօմէթր: Դաւթի ժամանակ բնակիչը գրեթէ 5,000,000 էն աւելի էր:

Նախկին բնակիչք: Յորդանան գետին երկու կողմին վրայ՝ Ամօրհացիք. Մեռեալ ծովուն արե-

մտեան կողմը բլուրի մը մէջ Երովմայեցիք կամ որդիք Երովմայ. դէպ ի հիւսիս՝ Յեբուսացիք· Յորդանանի և Միջերկրական ծովուն մէջ Քանանացիք. Գալիլեայի և Միջերկրական ծովուն մէջ Փերեզացիք. Գալիլեայի ծովին արևմտեան կողմը Գերգեսացիք. Լիբանանի և Հերմոնի ստորոտը Իտուրացիք. Արևմտեան-Հիւսիսի կողմը ծովեզրին վրայ Սիդոնացիք. Արևմտեան-Հարաւի կողմը ծովեզրին վրայ Փղշտացիք:

Ցեղք: *Յորդանանի արևելեան կողմը*, 1. Ռուբէն. 2. Գադ. 3. Մանասէի կէս ցեղը: *Մեռեալ ծովուն և Միջերկրականին մէջ*, 4. Յուդայ. 5. Շմաւոն. 6. Դան: *Յորդանանի արևմտեան կողմը*. 7. Բենիամին. 8. Եփրեմ. 9. Մանասէի կէս ցեղը. 10. Իսաքար: *Գալիլեայի ծովուն արևմտեան կողմին վրայ*, 11. Զաբուղոն. 12. Նեփթաղիմ: *Արևմտեան հիւսիսային կողմը Միջերկրականին վրայ*, 13. Ասեր:

Նահանգք: *Հիւսիսի կողմը* Գալիլեա *կը պարունակէ Ասերի, Նեփթաղիմի, Զաբուղոնի և Իսաքարի ցեղերը. կը բաժնուի* վերին Գալիլեա *և* ստորին Գալիլեա: *Միջին կողմը*՝ Սամարիա, *կը պարունակէ Եփրեմ, Մանասէի կէս ցեղը*: *Հա-*

րաւի կողմը՝ Հրէաստան, կը պարունակէ Բենիամին, Դան, Շմաւոն և Յուդայի մեծագոյն մասը: Արեւելեան-Հարաւային կողմը Եդովմայեցիք, կը պարունակէ Յուդայի հարաւակողմը և Արաբիոյ մէկ մասը: Արեւելքի մէջ՝ Պերէա, կը պարունակէ Ռուբէն, Գադ, Մանասէի կէս ցեղը և Ասորիքի մէկ մասը. կը բաժնուի Աբիլենիա, Տրաքոնիա, Իտուրիա, Գաղանիդ, Օրանիա, Բասան, ևայլն:

Գետք: Յորդանան՝ Հակա-Լիբանանի ստորոտէն կելլէ Մարոնայ լճին և Գալիլեայի ծովուն մէջէն անցնելով կը թափի Մեռեալ ծովը: Առնոն՝ Ռուբէնի ցեղին հարաւային կողմէն անցնելով Մեռեալ ծովը կը թափի: Հեղեղատ Յաբոկայ՝ Գադի ցեղէն անցնելով Յորդանան կը թափի: Հեղեղատ Քերաթու՝ Բենիամինի արեւելքէն անցնելով կը թափի Յորդանան: Հեղեղատ Կիսոնի՝ Զաբուղոնի և Իսաքարի մէջէն անցնելով Աքքի ծոցը կը թափի: Գանան՝ կը զատէ Եփրեմի ցեղը Մանասէի կէս ցեղէն: Գայասու՝ Եփրեմը կը զատէ Դանէն: Բոսոր՝ Շմաւոնի հարաւակողմէն կանցնի:

Հեղեղատ Եգիպտոսի՝ Սուրբ երկրին արեւմտեան հարաւային սահմանը կը ձեւացնէ: Հեղեղատ Կեդրոնի Երուսաղէմի մօտերէն անցնելով Մեռեալ ծովը կը թափի:

Լիճք: Յուդայի ցեղին արեւելեան կողմը Սոդոմի լիճը կամ մեռեալ ծովը: Զաբուղոնի և Մանասէի կէս ցեղին միջոցը Գալիլեա ծովը Գեննեսարի լիճը կամ Տիբերիոյ ծովը: Դէպ ի հիւսիս Նեփթաղէմի և Մանասէի կէս ցեղին միջոցը Մարոնայի լիճը: Գադի հարաւակողմը Հազեսայ լիճը:

Լեռինք: Լիբանան՝ Քանանու հիւսիսային սահմանը կը ձեւացնէ, կը բաժնուի երկու գօտիներու, Լիբանան՝ արեւմտեան կողմը. Հակա-Լիբանան՝ արեւելեան կողմը: Բահաղ, Հերմոն՝ Մանասէի կէս ցեղին մէջ: Գաղաադ՝ Գադի ցեղին մէջ: Աբարիմ լեռները որոյ բարձր մասերն են Բաալ, Պիսգահ, Պէօր, Նեբօ: Կարմէղոս՝ Մանասէի կէս ցեղին արեւմտեան հիւսիսակողմը: Թաբոր՝ Զաբուղոնի ցեղին հարաւակողմը: Գեղբուա՝ Իսաքարի հարաւակողմը: Լեառն Եփրեմայ, Եբաղ, Գերիզիմ, Գաազ, Եփրեմի ցեղին մէջ: Ոփմոնի ժայռը՝ Բենիամինի ցեղին մէջ: Մորիահ՝ կամ Սիօն՝ Երուսաղէմի պարիսպներուն մէջ: Ձիթենեաց լեռ՝ քաղաքին արեւելեան կողմը: Գարանբան՝ Երուսաղէմի և Երիքովի մէջ: Հէղլահ՝ Յուդայի արեւելեան-հարաւակողմը մեռեալ ծովուն մօտ:

Ջուրք, Դաշտք, *եայլն*: Սոդոմի ձորը: Ռուբենի ցեղին մէջ՝ մեռեալ ծովուն արեւելեան հիւսիսային կողմը

Մովաբի դաշտերը և Շիթիմի դաշտը: Մեռեալ ծովուն հարաւակողմը Եդոմի մէջ Աղի ձորը: Մեռեալ ծովուն արեւմտեան կողմը Յուդայի ցեղին մէջ Մաոնի անապատները, Տէքուայի անապատները, Բերաաահի ձորը: Բեթղեհեմի հարաւակողմը Հարէթի անտառը: Հեբրոնի մօտ Մամրի դաշտը: Յուդայի արեւմտեան հիւսիսի կողմը Զեբաթայի ձորը: Դէպ ի հիւսիս Ելահի ձորը: Յուդայի և Բենիամինի սահմաններուն վրայ Ռէֆիամինի ձորը: Արեւմտեան հիւսիսի կողմը Այալոնի ձորը: Երուսաղէմի հարաւակողմը Հեննոմի ձորը: Դէպ ի արեւելք Սավէյի ձորը: Մեռեալ ծովուն արեւմտեան եզերքին և Յորդանանի ընթացքին վրայ Յուդայի անապատը: Բենիամինի ցեղին արեւմտեան կողմը Աքօր ձորը: Դէպ ի հիւսիս Շիլոհի մօտ Բօշեմի ձորը: Եփրեմի ցեղին հիւսիսակողմը Մորեհի դաշտը: Գադի հիւսիսային կողմը Յորդանանի արեւելեան կողմը Եփրեմի անապատը: Միջերկրականին եզերքը Սարոնի դաշտը: Իսաքար և Զաբուղոնի ցեղերուն մէջ Կիսոն գետին ընթացքին վրայ Յեզրէէլի կամ Եսդրաէլոնի դաշտը:

ՔԱՂԱՔՔ

1°. Ռուբէնի մէջ: Արեւելեան կողմը Հիսպոն. դէպ ի հարաւ Մեդեբա. աւելի հեռու Եահազ. Բեզեր կամ Բեզրահ:

2°. Գաղ: Ռամօթ-Գիլէտ. արևմտեան հիւսիսի կողմը Յորդանանի վրայ Սուքոթ. Յապոկի վրայ Բանուէլ. դէպ ի հիւսիս Մահանայիմ. արևելեան հիւսիսի կողմը Թեպիր կամ Լօտեպար. դէպ ի հիւսիս Միզբեհ. դէպ ի արևմուտք Եապես-Գիլէտ:

3°. Մանասէի կէս ցեղը: Գօլան. արևելեան հիւսիսակողմը Իդրա. արևմտեան հիւսիսակողմը Գադարա. Գալիլեայի ծովուն վրայ Գերգեսիա. հիւսիսի կողմը Բեթսայիդա կամ Եուլիաս. Գեսուր. արևմտեան հիւսիսային կողմը Յորդանանի աղբիւրներու մօտ Լայիսա կամ Դան կամ Փիլիպեան-Կեսարիա:

4°. Յուդա: Քեբրոն՝ քաղաք ամուր. դէպ ի հիւսիս Բեթղեհեմ. արևմտեան հիւսիս Ափեկ. դէպ ի հարաւ Օդողամ. արևելեան հարաւակողմը Մակեդա. դէպ ի հիւսիս Բեթսամիւս. աւելի հիւսիս Կարիաթարիմ. դէպ ի հարաւ Լաքիս. արևմտեան հիւսիսակողմը Ղերնա. դէպ ի հարաւ Կէիլա. Բեթղեհէմի արևելեան հարաւակողմը Թեկուա Կադէս Բառնիա:

5°. Շմաւոն: Հարաւակողմը Բերսաբէ, արևմտեան հիւսիսակողմը Գերարա. Հերմա. Սիկե-

լակ. Միջերկրականին եզերքին շատ մօտ, Գազա. Ասկեղոն :

6°. Դան : Արեւմտեան հարաւակողմը Ազովտոս. դէպ ի հիւսիս Ակկարոն. դէպ ի արեւմուտք Յուդայի եզերաց վրայ Զորահ. Գէթ. Թամնա. դէպ ի հիւսիս Եղոն. Արիմաթիա կամ Ռամլա. դէպ ի ծովեզրը Յոպպէ կամ Եաֆա :

7°. Բենիամին : Յուդայի սահմաններուն վրայ Երուսաղէմ. դէպ ի արեւելք Բեթփայիգտ. Բեթանիա. դէպ ի հիւսիս Անաթօթ. արեւմտեան հիւսիս Կեբայիա. արեւմտեան հարաւ Մեզպեհ. արեւմտեան հիւսիս Էմմաուս. արեւելեան հիւսիս Գաբաւոն. Ռամահ. դէպ ի արեւելք Երիքով. Գաղգաղա. արեւմտեան հիւսիս Եփրեմի սահմանաց վրայ Բեթել :

8°. Եփրեմ : Հիւսիսի կողմը Մանասէի սահմանաց վրայ Սամարիա. դէպ ի հարաւ Սիւքէմ կամ Նապլուս՝ քաղաք ամուր. Սելով. Գազեր. դէպ ի արեւմուտք Դանի սահմանաց վրայ Լիւդդա. Անտիպատրոս :

9°. Մանասէի կէս ցեղը : Ծովեզրը՝ Կեսարիա Պաղեստինոյ. Թերսա. Թեբես. արեւմտեան հիւ-

ախակողմը Դովդայիմ. դէպ ի արևելք Եփրա. դէպ ի հիւսիս Եէնոն :

10°. Իսաքար : Յեզրայէլ, Յաբէք. Յեկնամ. Նաին Մակեդդով. Ենդոր. Բեթսան կամ Սկիթօպոլիս, որ Մանասէին կէս ցեղին կը վերաբերի :

11°. Զաբուղոն : Նազարէթ. Կանա. Գալիլեայի ծովեզրը՝ Տիբերիա :

12°. Նեփթաղիմ : Կադես-Նեփթաղեայ. Կափառնաում. Քորազին և Բեթսայիդա :

13° Ասեր : Միջերկրականի ծովեզրին վրայ՝ Պտղոմայիս կամ Աքքեա. Տիւրոս, Սարեփթա. Սիդոն :

ՑՈՒՑԱԿ ԳՐԵԱՆՑ

ԳՐԱՏԱՆ ՓԱՐԻԶՕԻ

Ռու Ջուն-Զարէք թիւ 300

Բառգիրք Հայ. Գաղ. եւ Տաճ. **Ճ. Ա.**
Դաստարան Հայկազն մանկանց մեծ եւ փոքր
Դասերք Առաքինիք (Թարգմանութիւն)
Եզնիկ
Եղիշէ (Անձեռացեալ ձեռագիր)
Ընդունելութիւն ընծայի **Թ. Աշխաքիկեան**
Ընդարձակ Քերականութիւն **Ա. Միքայէլեան**
Հատոր Ա. եւ Բ.
Համառօտ Քերականութիւն **Ա. Միքայէլեան**
Խնդիր միութեան Հայոց
Համառօտ. Բառարան. Հայ. Գաղ. եւ Տաճ. **Ճ. Ա.**
Հազար եւ մէկ գիշեր (Թարգմ.)
Նարէկ մեծագիր եւ փոքր պատկերազարդ.
Վ.ոճառակականութիւն նախնեաց (Թարգմ.
Սաղմոս փոքրագիր պատկերազարդ.
Փէլիքս եւ Պօղինէ. (Թարգմ.)

Կը ծախուին նաեւ Կ. Վ. Շահնազարեանի եւ բոլոր Հայ մամուլէ ելած Պատմական, Առակեսականի եւ Ուսումնական գրանք: Նաեւ ազգային դպրոցներու մէջ գործածուելիք ամէն տեսակ Գաղղիերէն դասագրքեր եւ զանազան տեսակ գրի եւ նամակի թղթեր: